

Հարգելի՛ ընթերցող,
«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության յոթուկես տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:



Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 12.100-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 5.770-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱԲ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than four dozen programs during the seven and a half years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 12.100, and the number of authors of materials - 5.770.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» (ОМУСА) в течение своей семи с половиной лет деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 12.100, а количество авторов материалов - 5.770.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(13), 2022

№ 2(13), 2022

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ
№ 2(13), 2022

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրոյթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:
«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The journal «**Scientific Artsakh**» is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The journal «**Scientific Artsakh**» is posted on www.elibrary.ru website.

Журнал «**Научный Арцах**» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).
Журнал «**Научный Арцах**» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2022

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ
ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Վաստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գայանե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեդրակ ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈՒ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊՆԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏՅԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Լազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ամիր ՉԱԲՐԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Եյու Յորք, ԱՄՆ**)

Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր (**Եյուրեքերգ, Գերմանիա**)

Հայկ ՍԱՐԳՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Քրիստին դը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Լոնդոն, Մեծ Բրիտանիա**)

Գարիկ ԶԵՆՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(13), 2022, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2022,
292 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2022 թ. 2-րդ (13-րդ) համարի տպագրությանն աջակցել է «Hi-Am» բարեգործական հիմնադրամը:

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor
--

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D. in Philology, Associate Professor

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor
Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Amit CHHABRA, Doctor of Law, Professor (New York, USA)
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (Lviv, Ukraine)
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor
Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) (Nuremberg, Germany)
Ruben SAFRASYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor
Christian de VARTAVAN, Doctor of History (London, Great Britain)
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 2(13), 2022, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2022, 292 pages.

The publication of the 2nd (13th) 2022 Journal «Scientific Artsakh» was supported by «Hi-Am» Charity Foundation.

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук (Лондон, Великобритания)
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, доктор культурологии, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук (Нюрнберг, Германия)
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Рубен САФРАСЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор
Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор (Нью-Йорк, США)

Научный Арцах, № 2(13), 2022, Ереван, Издательство «АРЦАХ», 2022, 292 страниц.

Публикация 2(13) номера 2022 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии благотворительного фонда «Hi-Am».

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ  **CONTENTS**  **СОДЕРЖАНИЕ**

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արման Եղիազարյան. Երևանը Բագրատունիների դարաշրջանում (հայերեն).....9
Arman Yeghiazaryan. Yerevan in the Age of Bagratids (in Armenian)
Арман Егиазарян. Ереван в эпоху Багратидов (на армянском)

Գևորգ Ստեփանյան. Հայերի Էթնիկ գտումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI-XX դդ.) (Գ մասի շարունակություն) (հայերեն).....25
Gevorg Stepanyan. The Stages of Implementation of the Policy of Ethnic Cleansing and Genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus (11th-20th cc.) (Continuation of the Third Part) (in Armenian)
Геворг Степанян. Этапы осуществления этнических чисток армян и геноцидальной политики в Восточном Закавказье (XI-XX вв.) (Продолжение третьей части) (на армянском)

Վիկտոր Հակոբյան. Յուրայինների մեջ օտարը օտար Է. Լևոն Միրզոյան (ռուսերեն).....42
Victor Akopyan. A Stranger among his Own, a Stranger among Strangers: Levon Mirzoyan (in Russian)
Виктор Акопян. Чужой среди своих, чужой среди чужих: Левон Мирзоян (на русском)

Միքայել Մալխասյան. Ժողովրդագրական ներկա իրավիճակը ՀՀ-ում (Covid-19 համավարակի և 2020 թ. Արցախյան պատերազմի ժողովրդագրական հետևանքների պայմաններում) (հայերեն).....62
Mikayel Malkhasyan. The Current Demographic Situation in Armenia (In Conditions of Demographic Consequences of Covid-19 Pandemic and the 2020 Artsakh War) (in Armenian)
Микаэл Малхасян. Текущая демографическая ситуация в Армении (в условиях демографических последствий пандемии Covid-19 и Арцахской войны 2020 года) (на армянском)

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Արփինե Առաքելյան. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը ՀՀ-ում իրավաստեղծ գործունեության նկատմամբ (հայերեն).....78
Arpine Arakelyan. Impact of Judgments of the European Court of Human Rights on the Law-Making Activities of Armenia (in Armenian)
Арпине Аракелян. Воздействие решений Европейского суда по правам человека на законодательную деятельность Республики Армения (на армянском)

Էդգար Ավետիսյան. Տեղեկատվության ազատության՝ որպես մարդու հիմնական իրավունքի տեսաիրավական հիմքերն ու առանձնահատկությունները (հայերեն).....91
Edgar Avetisyan. The Theoretical Basis and Features of Freedom of Information as a Fundamental Human Right (in Armenian)
Эдгар Аветисян. Теоретические основы и особенности свободы информации как основного права человека (на армянском)

- Ալեքսանդր Կոչուբայև.** Բնական իրավունքի տեսության ծագման նախադրյալները և զարգացման միտումները (հայերեն).....101
Alexander Kochubayev. Background of the Origin of the Theory of Natural Law and the Trends of its Development (in Armenian)
- Александр Кочубаев.** Предпосылки происхождения теории естественного права и тенденции ее развития (на армянском)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
 ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

- Վիկտորյա Մելքոնյան.** Տեղեկատվական հասարակության փոխակերպման հիմնախնդիրները Հայաստանում (հայերեն).....112
Viktorya Melkonyan. The Issues of Transformation of Informative Society in Armenia (in Armenian)
- Виктория Мелконян.** Проблемы трансформации информационного общества в Армении (на армянском)
- Տիգրան Մուղնեցյան.** Ժողովրդավարության անկման ինստիտուցիոնալ պատճառները (Վեյմարյան Հանրապետության օրինակով) (անգլերեն).....121
Tigran Mughnetsyan. Institutional Determinants of Democratic Breakdown (The Case of Weimar Republic) (in English)
- Тигран Мугнецян.** Институциональные причины демократического упадка (пример Веймарской Республики) (на английском)

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY,
 ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

- Թեմինա Մարության.** Ղևոնդ Ալիշանը Հակոբ Օշականի գնահատմամբ (ռուսերեն).....128
Tehmina Marutyun. Ghevond Alishan Appraised by Hakob Oshakan (in Russian)
- Теймина Марутян.** Гевонд Алишан в оценке Акопа Ошакана (на русском)
- Լևոն (Ներսեհ Արդ.) Ալոյան.** Դավաճանները Ծերենցի պատմավեպերում (հայերեն).....141
Levon (Archimandrite Nerseh) Aloyan. Traitors in Tserents's Historical Novels (in Armenian)
- Левон (Архимандрит Нерсе) Алоян.** Предатели в исторических романах Церенца (на армянском)
- Օվսաննա Խաչատրյան.** Որոշ յուրօրինակ կաղապար-հիշատակարաններ հայերեն ձեռագրերում (հայերեն).....156
Ovsanna Khachatryan. Some Unique Colophon-Exemplares in Armenian Manuscripts (in Armenian)
- Овсанна Хачатрян.** Некоторые уникальные колофоны в армянских рукописях (на армянском)

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

- Հրանտ Ավանեսյան, Իրինա Բաբաջանյան.** Արտակարգ իրավիճակներում հոգեբանների գործնական փորձի և տեսական մոտեցումների կիրառման վերլուծություն (հայերեն).....164
- Hrant Avanesyan, Irina Babajanyan.** Analysis of the Application of Practical Experience and Theoretical Approaches of Psychologists in Emergency Situations (in Armenian)
- Грант Аванесян, Ирина Бабаджанян.** Анализ применения практического опыта и теоретических подходов психологов в экстремальных ситуациях (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

- Սամվել Ավետիսյան, Սարիաննա Խաչատրյան.** Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը և դրանց արդյունքները (հայերեն).....174
- Samvel Avetisyan, Marianna Khachatryan.** Agriculture State Support Programs and Their Results (in Armenian)
- Самвел Аветисян, Марианна Хачатрян.** Программы государственной поддержки сельского хозяйства и их результаты (на армянском)
- Աննա Հակոբջանյան, Նարինե Միրզոյան.** Վարկանշումը որպես ֆինանսական համակարգում իրացվելիության ռիսկի կառավարման գործիք (հայերեն).....187
- Anna Hakobjanyan, Narine Mirzoyan.** Rating as a Liquidity Risk Management Tool in the Financial System (in Armenian)
- Анна Акопджанян, Нарине Мирзоян.** Рейтингование как инструмент управления риском ликвидности в финансовой системе (на армянском)

- Լուիզա Սարաֆյան.** Պետական գնումների միջազգային առաջավոր փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում (հայերեն).....197
- Luiza Sarafyan.** Opportunities for Location of International Public Procurement Experience in Armenia (in Armenian)
- Луиза Сарафян.** Возможности размещения международного опыта госзакупок в Армении (на армянском)

- Լուսինե Ծպնեցյան.** Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կատարելագործման հնարավորությունները (հայերեն).....207
- Lusine Tspnetyan.** Opportunities for Improving the State Policy of Increasing the Competitiveness of Agriculture (in Armenian)
- Лусине Цпнецян.** Возможности совершенствования государственной политики по повышению конкурентоспособности сельского хозяйства (на армянском)

- Դավիթ Քարամյան, Տիգրան Քարամյան.** Կոնֆորմերի վրա հիմնված խոսքի ավտոմատացված ճանաչում հայերենի համար (անգլերեն).....224
- Davit Karamyan, Tigran Karamyan.** A Conformer Based Automated Speech Recognition for Armenian Language (in English)
- Давид Карамян, Тигран Карамян.** Автоматическое распознавание речи на армянском языке на основе конформеров (на английском)

ԱՐՇԵՍ, ИСКУССТВО, ART

Մարիաննա Տիգրանյան, Լինդա Սարգսյան. Մաթևոս Մուրադյանի «Ղարաբաղ-58» գիտարշավը (հայերեն).....	230
Marianna Tigranyan, Linda Sargsyan. Matevos Muradyan's Scholarly Expedition «Karabakh-58» (in Armenian)	
Марианна Тигранян, Линда Саргсян. Научная экспедиция Матевоса Мурадяна «Карабах-58» (на армянском)	
Ռուզաննա Միքայելյան. «Նաիրի» կինոթատրոնի ինտերիեր-դիզայնը (հայերեն).....	242
Ruzanna Mikayelyan. The Interior Design of the Nairi Cinema (in Armenian)	
Рузанна Микаелян. Дизайн интерьера кинотеатра «Наири» (на армянском)	

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Սարենիկ Թարվերդյան. Այսպես կոչված «Կարմիր Զրոստանի» վերականգման փորձերը (1988-1992) (հայերեն).....	248
Satenik Tarvedian. The Recovery Attempts of the So-Called «Red Kurdistan» 1988-1992 (in Armenian)	
Сатеник Тарвердян. Попытки восстановления так называемого «Красного Курдистана» 1988-1992 (на армянском)	
Լամիռա Խաչատրյան. Հոգեբանի դերը անչափահասների մասնակցությամբ հարցաքննությունների ժամանակ (հայերեն).....	264
Lamira Khachatryan. The Role of a Psychologist during Minor Participation Investigations (in Armenian)	
Ламира Хачатрян. Роль психолога в процессе допроса с участием несовершеннолетнего (на армянском)	

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, РЕЦЕНЗИИ, REVIEWS

Գագիկ Հարությունյան. Համառոտ նկատառումներ Արթուր Ղամբարյանի «Հայոց պետականության պահպանման սահմանադրափրավական ուղիները» գրքի աննչությունը (հայերեն).....	275
Ռաֆիկ Խանդանյան. Համառոտ ակնարկ Ա. Ղամբարյանի «Հայոց պետականության պահպանման սահմանադրափրավական ուղիները» գրքի վերաբերյալ (հայերեն).....	277

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

Մերի Հովհաննիսյան. Արամ Հրաչիկի Սիմոնյան (1955-2022)՝ հայագիտության երախտավորը (հայերեն).....	281
--	-----

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները	284
The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»	286
Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»	287

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ**ԵՐԵՎԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ * 1**

ՀՏԴ 93

DOI: 10.52063/25792652-2022.2.13-9

ԱՐՄԱՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի

«Սիյունքագիտություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար,
 «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
 պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armanyeghiazaryan@ysu.am

Հոդվածի նպատակը Բագրատունիների դարաշրջանում (IX-XI դդ.) Երևանի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությունն է:

Խնդիր է դրվել քննության առնելու և ներկայացնելու Երևանի՝ որպես ավատատիրական քաղաք ձևավորվելու գործընթացի ժամանակն ու հանգամանքները: Խնդրի արդյունավետ իրականացման համար ի մի են բերվել և վերլուծվել Երևանի պատմության՝ խնդրո առարկա շրջանին վերաբերող ողջ աղբյուրային նյութը և թեմայի առնչությամբ ուսումնասիրողների իրարամերժ տեսակետները: Արդյունքում հանգամանորեն ներկայացվել են Երևանի միջնադարյան պատմության այդ կարևոր շրջանի հիմնական իրադարձությունները և դրանց բովանդակությունը:

Ուսումնասիրության հիմքում պատմաքննական մոտեցումն է, որով փորձ է կատարվել պարզելու IX-XI դդ. Երևանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունների հավաստիությունը և վերականգնելու պատմական իրողությունները: Պատմաճագումնաբանական մեթոդի կիրառմամբ ներկայացվել ու լուսաբանվել են Երևանի՝ Բագրատունիների դարաշրջանում որպես քաղաք ձևավորման գործընթացը և արքունի տիրույթ լինելու իրողությունը:

Հստակեցվել է, որ Բագրատունիների դարաշրջանի Երևանի պատմության ուսումնասիրությունը հույժ կարևոր է մի կողմից՝ նրա զարգացման ընթացքի ամբողջական և համակողմանի լուսաբանման, իսկ մյուս կողմից՝ որպես քաղաք ձևավորվելու ժամանակի հստակեցման տեսանկյունից:

Հիմնավորվում է, որ Երևանը, դեռևս VII դ. կեսերից ձևավորվելով որպես քաղաքագյուղ, իսկ Բագրատունիների դարաշրջանում լինելով արքունի տիրույթ և գտնվելով միջազգային նշանակության մայրուղիների վրա, Էապես զարգացել է և ձեռք բերել ավատատիրական քաղաքին բնորոշ բոլոր հատկանիշները:

* Հոդվածը ներկայացվել է 13.04.2022թ., գրախոսվել՝ 20.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հիմնաբառեր՝ սկզբնաղբյուրներ, Երևան, քաղաք, Հովհաննես Դրասխանակերտցի, ձևավորում, Ճիծեռնակաբերդ, բյուզանդական բանակ, Բագրատունիների դարաշրջան:

Երևանի հիշատակությունները IX-XI դարերում

Երևանի VIII դ. պատմության մասին սկզբնաղբյուրներում հիշատակություններ չեն պահպանվել: Խնդիրն այն է, որ այդ ժամանակ Հայաստանում հաստատվել էր արաբական տիրապետությունը, և պատմիչների ուշադրության կենտրոնում երկրում տիրող ծանրագույն իրավիճակն էր, երկրի ասպատակությունը, ժողովրդի հարստահարություններն ու հալածանքը: Այդ իսկ պատճառով ոչ միայն Երևանի, այլ նաև Հայաստանի բազմաթիվ քաղաքների վերաբերյալ VIII դ. տեղեկություններ չեն պահպանվել:

IX դ. վերջի և X դ. սկզբին Հովհաննես Դրասխանակերտցին (հայոց կաթողիկոս՝ 898-925 թթ.) VII դ. երկրորդ կեսին վերաբերող մի հիշատակության մեջ Երևանը կոչում է քաղաքագյուղ: Սկզբնաղբյուրներում օգտագործվում է նաև այդ եզրույթի «գյուղաքաղաք» տարբերակը (Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց 567; Սամուէլ Անեցի եւ շարունակողներ 182), որ միևնույնն է: Խոսելով հայոց Անաստաս կաթողիկոսի (661-667) աթոռակալության և Գրիգոր Սամիկոնյանի իշխանության շրջանի (662-685) իրադարձությունների մասին՝ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ «Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն, որ ի քաղաքագիւղն Երեւանի, զոր եւ բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս՝ որ նախ քան զնեզ զնա պատմագրեցին» (Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց 414): Այդ իրադարձության մասին պատմող մյուս միջնադարյան հեղինակը՝ Սամվել Անեցին, չի նշում, թե ինչ բնակավայր էր Երևանը (Սամվել Անեցի և շարունակողներ 152):

IX դարից սկսած Երևանը, պայմանավորված Բագրատունիների վերելքով, շարունակում էր կարևոր դեր խաղալ Հայաստանի կյանքում: Գեղարքունյաց ծովի կղզու Ս. Առաքելոց եկեղեցու 874 թ. արձանագրությամբ Սյունյաց տիկին Մարիամը հայտնում է, որ Նորակառույց եկեղեցուն նվիրաբերել է ի թիվս այլոց նաև «այգի ի Գառնի եւ յԵրեւան» (Մելիքսեթ-Բեկ 117-118): Միևնույն արձանագրության տեքստը մեջ է բերում նաև Ստեփաննոս Օրբելյանը, բայց այստեղ խոսքը ոչ թե այգու, այլ այգիների մասին է. «այգիս ի Գառնի և յԵրևան» (Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց 174): Պատմիչը, որ տեղյակ էր արձանագրության բովանդակությանը, դժվար թե իրականությանը հակասող հիշատակություն թողներ, ուստի կարելի է համոզված ասել, որ Երևանից եկեղեցուն նվիրաբերվել է ոչ թե մեկ այգի, այլ այգիներ, ինչը վկայում է նրա՝ այգեգործությամբ հարուստ բնակավայր լինելու մասին:

Հույժ կարևոր է նաև Մաքենիս վանքին Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանի նվիրաբերությունների մասին 901 թ. տեղեկությունը: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ իշխանը «գարդարե զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանե բազում ընչիւք. նա և գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս»: Այնուհետև նա մեջ է բերում նաև վանքի պատին արված արձանագրության տեքստը, որով իշխանը հայտնում է, որ, ի թիվս այլոց, վանքին «...ետու և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս» (Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց 179; Վիմական տարեգիր 5): Հետաքրքրական է այն, որ պատմիչը, ի տարբերություն իր իսկ կողմից մեջբերված արձանագրության, հիշատակում է վանքին Գառնիում, Երևանում և այլ վայրերում նվիրաբերված գյուղերի, ագարակների ու այգեստանների մասին: Հավանաբար նրան հայտնի էր, որ բացի այգիներից Երևանում ու Գառնիում վանքին են նվիրաբերվել նաև գյուղեր ու

ագարակներ, թեև արձանագրության մեջ նվիրաբերված գյուղերի ու ագարակների մասին խոսք չկա:

Երևանը հիշատակված է նաև Աշոտ Գ Ողորմած արքայի (953-978) դստեր՝ Յոհաննանի՝ Ս. Նախավկայի վանքին տրված 981 թ. կալվածական ընծայագրում: Վանքին նվիրաբերվում են կալվածքներ, ի թիվս այլոց, նաև «հանդեպ Երևանու» (Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր 11): Այս ընծայագրում հիշատակված է նաև «Երևանի ճանապարհը» (Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր 11): Ավնիայո Է, որ Երևանի՝ X դարի վերջին տնտեսապես բարգավաճ քաղաքագյուղ լինելու պատճառով էլ ճանապարհը կոչվում էր նրա անունով:

Երևանի կարևորագույն հիշատակություններից մեկը Բագրատունիների շրջանում վերաբերում է Գագիկ Ա-ի գահակալության (990-1018) շրջանին: Ըստ Սամվել Անեցու՝ «...ասեն եկե(ա)լ ի Յայս Վա[սի]լ կայսրն [և ուն]ել ընդ ինքե[ա]յն գիաչն փրկչական եւ զպատկե[րն] տիրական զսուրբ Ամենափրկիչն եւ պարգեւ[եաց] արքային Գա[գկայ] շահանշահի եւ թագ[աւորն] պարգեւե(ա)ց Գեորգայ իշխ[ան]ին///զարեգակն/// մ[ե]ծ մ[ե]նարանն եւ խաչն մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս/// յԵրեւան գեղա[ք]աղաքն, որ ասեն երկ[ու]լ/// եւ ի սուրբ նշան եւ Է անունն ///այ Տերունական սուրբ նշանն» (Սամվել Անեցի և շարունակողներ 182):

Այս տեքստից հեռուն գևացող եզրակացություններ կատարելը դժվար է, քանի որ այն խիստ վնասված է, առավել ևս, որ Ստեփաննոս Օրբելյանից հայտնի է, որ Գագիկ Ա-ն Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ-ից (976-1025) ստացված փրկչական խաչի մասունքը, որի վրա պահպանվել էր Յիսուս Քրիստոսի արյան հետքը, նվիրել էր Սյունիքի Յովհաննես եպիսկոպոսին (Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց 304): Կարելի է ենթադրել, որ Երևան գյուղաքաղաքում էին պահվում քրիստոնեության կարևոր երկու սրբությունները՝ փրկչական խաչի մասունքն ու Յիսուս Քրիստոսի պատկերը, որ կոչվում էր Ամենափրկիչ (Սամվել Անեցի և շարունակողներ 388, ծանոթագրություն 217): Դա ցույց է տալիս, որ XI դարի սկզբին Երևանը, որ դարձյալ հիշատակված է որպես գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ, կարևորություն էր ձեռք բերել Յայոց թագավորության ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր կյանքում:

Դատելով Մխիթար Այրիվանեցու մի տեղեկությունից՝ XI դարում Երևանում գործունեություն է իրականացրել այնպիսի մի նշանավոր իշխան, ինչպիսին էր Բյուզանդիայից մագիստրոսի կոչում ստացած Գրիգոր Ապիրատը: Նա XI դ. սկզբին «շինեաց գԿեչառուն և եհան գառուն Երեւանայ» (Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն ժամանակագրական 73): «գԿեչառունսի» ներքո պետք է հասկանալ Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին (Մաթևոսյան 7, 34):

Խնդրո առարկա ժամանակաշրջանում բյուզանդական աղբյուրում հիշատակվում է նաև Երևանի ամրոցը՝ Ծիծեռնակաբերդը, որը, դատելով հնագիտական պեղումների արդյունքներից, իր կարևորությունը չի կորցրել ողջ Բագրատունիների դարաշրջանում և հետագայում՝ մինչև XVII դ. (Բաբայան և ժամկոչյան 6): 1046-1047 թթ. բյուզանդացիները նվաճում էին տարածաշրջանի բերդերը, այդ թվում՝ փորձ կատարելով գրավել Խելիդոնիոնը կամ թարգմանաբար՝ Ծիծեռնակաբերդը (Օտար աղբյուրները Յայաստանի և հայերի մասին 356, ծանոթագրություն 533; John Skylitzes 413, ծանոթագրություն 80; Honigmann 176; Minorsky 53-54; Grousset 584; Юзбашян 88), «որը գահավեժ լեռան վրա է կառուցված և գտնվում է Դվինից ոչ հեռու»: Ըստ Յովհաննես Սկիլիցեսի՝ բյուզանդացիներն «...այդ բերդը խրամատներով ու ցանկապատներով օղակի մեջ առնելով, ջանում էին [երկարատև] պաշարմամբ տիրանալ. պաշարյալները պարենի պակաս էին զգում, անակնկալ հարձակման պատճառով նրանք չէին հասցրել իրենց պարենով ապահովել»: Թեև պատմիչը փորձում է այնպես ներկայացնել, որ բյուզանդական

բանակը «համարյա գրավել էր բերդը», սակայն, ի վերջո, թիկունքում ապստամբության բռնկման պատճառով, պաշարումը դադարեցվեց և, «խելիդոնիոնն ահա այսպես խույս տվեց գրավումից» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 149-150):

Հաշվի առնելով ասվածը՝ կարելի է ենթադրել, որ նույն Ծիծեռնակաբերդն է, որ 650 թ. արաբները գրավել չկարողացան (Պատմութիւն Սեբեոսի 220; Մանանդյան 528-536; Եղիազարյան, *Երևանի հիշատակությունը* 3-13):

Երևանում գտնված՝ Բագրատունիների ժամանակաշրջանին վերաբերող դրամները ցույց են տալիս, որ այն նաև հանդիսացել է կարևոր հանգույց առևտրական ճանապարհների վրա: Ըստ որում, VII դ. երկրորդ կեսին, երբ Հայաստանում դեռ վերջնականապես չէր հաստատվել արաբական տիրապետությունը, Երևանում շրջանառվում էին բյուզանդական, իսկ VIII դ. սկզբից՝ նաև արաբական դրամներ, որոնք գերակշռող էին: IX դարի վերջերից, երբ հիմնադրվեց Բագրատունիների թագավորությունը, Երևանում դարձյալ սկսում են, ի թիվս այլոց, շրջանառվել բյուզանդական դրամներ, որոնք քանակությունը հատկապես ավելանում է X դարից (Մուշեղյան 30-31): Դրա պատճառն այն էր, որ 893 թ.–ին հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորը (891-914) դաշինք կնքեց Բյուզանդիայի հետ (Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ 455-456), ինչի շնորհիվ վերականգնվեցին երկար ժամանակ դադարած առևտրական կապերը Փոքր Ասիայի տարածքով, ընդհանուր առմամբ՝ Արևելքի ու Արևմուտքի և մասնավորապես՝ Հայաստանի ու Բյուզանդիայի միջև (Եղիազարյան, *Մետաքսի ճանապարհը* 3):

Նշված ուղղակի և անուղղակի տեղեկությունները հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ Երևանը Բագրատունիների վերելքի շրջանում Հայաստանի նշանակալից բնակավայրերից էր: Այն անշեղորեն բռնել էր մեծ քաղաքի վերածվելու ճանապարհը, և պատահական չէ, որ VII դարի դեպքերի մասին պատմող Հովհաննես Դրասխանակերտցին, հաշվի առնելով ինչպես օգտագործած աղբյուրների տեղեկությունները, այնպես էլ, անկասկած, իր դարաշրջանի (IX դարի վերջ և X դարի սկիզբ) իրողությունները, այն կոչում է քաղաքագյուղ: Որպես կանոն, դատելով «քաղաքագյուղ» եզրույթից՝ հայկական պատմագրության մեջ այդպես են կոչվել քաղաքի վերածվող բնակավայրերը, որտեղ, չնայած քաղաքային մշակույթի, տնտեսության ու կենսակերպի ձևավորմանը, դեռևս զգալի տեղ ունեւ գյուղատնտեսությունը: Այդպես էր նաև իրավիճակը միջնադարյան Եվրոպայում (Առաքելյան, հ. I 25-32; Town and Country in the Middle Ages 7-22, 111-197, 229-250, 275-292; Город в средневековой цивилизации Западной Европы, I 9-41, 150-160, 169-187, 251-271; Город в средневековой цивилизации Западной Европы, II 8-35, 279-293): Բ. Առաքելյանը նաև հստակեցնում է, որ գյուղաքաղաքները «գավառական փոքրիկ և զուտ տեղական նշանակություն ունեցող կենտրոններ էին: Կային և խոշոր քաղաքների մերձակայքում գտնվող գյուղաքաղաքներ, որտեղ արհեստներն ու առևտուրը նշանակալից զարգացում չունեցան, բայց որոնք ոչ միայն սպասարկում էին տվյալ խոշոր քաղաքը մթերքներով և հումքով, այլև ունեին իրենց արհեստանոցներն ու շուկան» (Առաքելյան, հ. I 84):

Երևանի՝ քաղաքի վերածվելու ժամանակի խնդիրը պատմագրության մեջ

Երևանի՝ Բագրատունիների շրջանի պատմությունը և զարգացման փուլերը հետաքրքրել են բազմաթիվ հետազոտողների, որոնք, ուսումնասիրելով հիմնահարցը, հանգել են տարաբնույթ եզրակացությունների:

Ղ. Ալիշանը, խոսելով Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած կռվի մասին, ուղղակի արձանագրում է, որ Երևանը VII դ. կեսերին եղել է քաղաքագյուղ (Այրարատ բնաշխարհի Հայաստաննայց 300):

Ե. Շահագիզը Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկության հիմամբ կարծում է, որ «...յոթներորդ դարու սկզբից մինչև ԺԵ դարու կեսը Յերեվանը յեղել է մի փոքրիկ գյուղաքաղաք» (Շահագիզ 71):

Լ. Մելիքսեթ-Բեկը կարծում է, որ IX դ. վերջին Երևանը «այգեպատ» բնակավայր էր (Մելիքսեթ-Բեկ 117):

Ս. Բարխուդարյանը համարում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին պարզապես կրկնել է Սեբեոսի տեղեկությունն արաբների կողմից Երևանի 650 թ. կռվի մասին: Նա կարծում է, որ Երևանը Նախքան IX դարը չի եղել նշանավոր կենտրոն և քաղաքատիպ վայր, քանի որ IX դ. հեղինակ Բալագուրին, որը իր աշխատության՝ Հայաստանի նվաճման հատվածում հիշատակում է երկրի քիչ թե շատ կարևոր բնակավայրերը, Երևանը չի հիշատակում: Բացի այդ, 901 թ. Մաքենիս վանքին կատարած նվիրատվությունների արձանագրության մեջ Գառնին հիշատակված է որպես գյուղաքաղաք, իսկ Երևանը՝ ոչ, ինչը, ըստ նրա, նշանակում է, որ Երևանը գյուղաքաղաք չի եղել: Ավելին՝ ըստ նրա՝ հատկանշական է այն, որ Երևանից նվիրաբերվել են այգիներ, քանի որ Երևանը գերազանցապես այգեգործական վայր էր (Բարխուդարյան 70): Ուսումնասիրողը հավելում է, որ միայն Հովհաննես Դրասխանակերտցին է, որ հիշատակում է Երևանը որպես քաղաքագյուղ (Բարխուդարյան 70), փաստորեն, համարելով, որ Երևանը քաղաքագյուղ է դարձել X դարում, իսկ քաղաքի է վերածվել XIV դ. (Բարխուդարյան 71):

Տեսակետը, որ Երևանի մասին հիշատակությունը Հովհաննես Դրասխանակերտցին վերցրել է Սեբեոսից, կրկնում է նաև կաթողիկոս-պատմիչի աշխատության անգլերեն թարգմանությունն իրականացրած և ծանոթագրած Կ. Մակսուդյանը (Drasxanakertc'i 45), սակայն ոչինչ չի ասում Երևանի՝ քաղաքի վերածվելու գործընթացի մասին:

Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ V-VII դդ. Երևանը աղբյուրներում հաճախ չի հիշատակվում: Այն գյուղաքաղաք չէր, բայց մեծ բնակավայր էր և զգալի դեր է խաղացել երկրի քաղաքական ու ռազմական անցուղարձի մեջ (Ղաֆադարյան, *Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին* 12-14): Պատահական չէ, որ V դ. այնտեղ գոյություն ուներ եռանավ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (Ղաֆադարյան, *Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին* 12; Ղաֆադարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 77):

Թ. Հակոբյանը սխալ է համարում որոշ ուսումնասիրողների այն տեսակետը, թե Հովհաննես Դրասխանակերտցին Երևանը քաղաքագյուղ է կոչել՝ ելնելով իր ժամանակաշրջանի իրողություններից, իսկ VII դ. Երևանը քաղաքագյուղ չէր: Իրականում, ըստ Թ. Հակոբյանի՝ Հովհաննես Դրասխանակերտցին արաբական արշավանքների շրջանի կռիվները ներկայացրել է ոչ թե իր ժամանակաշրջանի իրողությունները նկատի ունենալով, այլ օգտագործած աղբյուրների հիման վրա, ուստի Երևանը քաղաքագյուղ է եղել դեռևս VII դարից՝ զարգանալով Դվին-Պարտավ ճանապարհի այն հատվածի վրա, որն անցնում էր Երևան-Սևան-Գավառ-Մարտունի-Սոթքի լեռնանցք-Պարտավ ուղեգծով (Հակոբյան, *Երևանը VII-IX դարերում* 22-24): Ըստ հեղինակի դիպուկ դիտարկման՝ որպես կանոն, հայկական պատմագրության մեջ քաղաքագյուղ են կոչվել այն քաղաքային բնակավայրերը, որտեղ մեծ տեղ էր հատկացված գյուղատնտեսական ճյուղերին և մասամբ՝ արհեստներին ու առևտրին (Հակոբյան, *Երևանի պատմությունը* 283): Ուսումնասիրողը նկատել է նաև այն իրողությունը, որ Երևանը, որպես քաղաքագյուղ, 901 թ. արձանագրության մեջ հիշատակված է ոչ թե գյուղերի (Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուռեաց տափ, Բողաշեն, Դեղձանագետ, Կեթիկ, Ամմեռ), այլ Անի քաղաքի և Գառնի ու Եղեգիս քաղաքագյուղերի մեջ (Հակոբյան, *Երևանի պատմությունը* 201):

Հաշվի առնելով եղած տվյալները [Երևանում հիշատակվող խանութները, Երևանին առնչվող՝ հարուստների գործարքները, քաղաքում և նրա շրջակայքում հայտնաբերված մոնղոլական շրջանի տարբեր երկրների մեծ թվով դրամները

(Մուշեղյան 31) և այլն՝ Թ. Հակոբյանը ենթադրում է, թե Երևանը քաղաք է դարձել XIII-XIV դարերում (Հակոբյան, *Երևանի պատմությունը* 209):

Ա. Սիմոնյանն ու Թ. Հակոբյանը իրենց համատեղ՝ «Երևան 2750» աշխատության մեջ, խոսելով այն մասին, որ աղբյուրային կյուրից դատելով՝ Երևանը IX դարում արդեն գյուղաքաղաք էր, հավելում են. «Հավանաբար, նա գյուղաքաղաք է համարվել նաև VII դարում» (Հակոբյան և Սիմոնյան 31):

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ուսումնասիրությամբ զբաղված Բ. Առաքելյանը կարծում էր, որ Երևանը IX-X դդ. Երևանը կարևոր ու հայտնի բնակավայր էր՝ հայտնի իր այգիներով (Առաքելյան, հ. II 86): Այն քաղաք է դարձել XII դարից սկսած (Առաքելյան, հ. II 87): Ըստ նրա՝ XII-XIII դարերում Հայաստանում առաջացել է չորս քաղաք, որոնցից առավել աչքի էր ընկնում Երևանը (Առաքելյան, հ. II 86):

Վիմագիր արձանագրություններում Երևանի հիշատակություններին անդրադարձած Ա. Հարությունյանը նշում է, որ վիմագրերում Երևանը հիշատակվում է IX դ. սկսած՝ մինչև XIII-XIV դդ. ներկայացվելով որպես այգեգետ բնակավայր: Հեղինակը, սակայն, համոզված է, որ Երևանը որպես քաղաք ձևավորվել է առնվազն XI-XII դդ. (Հարությունյան 247-248):

Ու. Բ. Ֆիշերը և Կ. Է. Բոսվորթը, խոսելով XI դ. իրողությունների մասին, Երևանը Դվինի ու Անիի հետ միասին ներկայացնում են այն քաղաքների թվում, որոնք գտնվել են պատերազմների թատերաբեմում (Fisher, et al. 268-271):

Փաստորեն, ուսումնասիրողների շրջանում միասնական տեսակետ չկա Երևանի՝ քաղաքի վերածվելու և, մասնավորապես, Բագրատունիների դարաշրջանում կարգավիճակի վերաբերյալ:

Երևանի՝ քաղաքագյուղից քաղաքի անցումը Բագրատունիների դարաշրջանում

Վերևում ներկայացվածը փաստում է, որ հայագիտական միտքը Երևանի՝ որպես քաղաք հանդես գալու ժամանակաշրջանի առումով երկփեղկված է. ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ այն քաղաք է դարձել խնդրո առարկա ժամանակաշրջանում, իսկ մյուս մասը՝ ավելի ուշ: Խնդիրն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Երևանը ներկայացնում է որպես քաղաքագյուղ, իսկ որպես քաղաք այն հիշատակվում է XIII դարից սկսած: Վարդան վարդապետի XIII դարի «Աշխարհացոյց»-ում Երևանը հիշատակված է որպես քաղաք: Այնտեղ կարդում ենք. «Կոտայք Երևան քաղաքն է իւր վիճակովն...» (Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի 31): Փաստորեն, Երևանն այդ շրջանում արդեն ոչ միայն քաղաք էր, այլև վերոհիշյալ տեքստի տրամաբանությամբ՝ նաև Կոտայք գավառի կենտրոնը:

Երևանի՝ որպես քաղաքի վերաբերյալ մնացյալ հիշատակությունները վերաբերում են նշված և ավելի ուշ շրջաններին: 1336 թ. մի ձեռագրի հիշատակարանում գրված է. «Ի քաղաքէն այն պատուական, որ իր անունն է Երևան» (ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 287, 288, 329): Ավնհայտ է, որ «պատուական» բառի ներքո հասկացվում էր թե՛ քաղաքի մեծությունը և թե՛ կարևորությունը:

Հայտնի է, որ զարգացած միջնադարում երկրի քաղաքական կենտրոն եղած որոշ ավաններ ու քաղաքագյուղեր այդպես էլ քաղաքի չվերածվեցին: Դրանցից հատկապես նշելի են Բագարանը (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց 478) և Երազգավորսը (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց 436, 471, 544): Վերջիններիս աճն ու կարևորությունը հատկապես ընդգծվել է այն պատճառով, որ հանդիսացել են արքայանիստ քաղաքագյուղեր, սակայն արքունի նստոցի տեղափոխությունը կասեցրել է դրանց զարգացումը: Խնդիրն այն է, որ այդ քաղաքագյուղերը

Հայաստանի կարևոր առևտրական կենտրոնների շարքին երբեք էլ չեն դասվել, այլ միայն եղել են արքայանիստ կենտրոն (Առաքելյան, հ. I 85, 124):

Երևանն այս առումով շահեկանորեն տարբերվում էր նրանցից: Գտնվելով առևտրական մայրուղիների խաչմերուկում՝ նրա զարգացումն ու քաղաքի վերածվելու գործընթացը կախում չունեցրեց երկրի քաղաքական կյանքում ունեցած կարևորությունից: Ուստի պատահական չէ, որ այստեղ արդեն XI դարում գործունեություն են սկսում իրականացնել նշանավոր իշխաններ, որոնցից էր Գրիգոր Ապիրատը, որ 1031 թ.–ին զարկ էր տվել Երևանի գյուղատնտեսությանը՝ առու կառուցելով (Մխիթարյ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական 58): Կ. Մաթևոսյանը Մխիթարյ Այրիվանեցու տեղեկությունից եզրակացրել է, որ Գրիգոր Ապիրատ իշխանը Երևանում ջրանցք է կառուցել (Մաթևոսյան 15-16, 34), իսկ Թ. Հակոբյանը ենթադրել է, որ Երևանը Գրիգոր Ապիրատի տիրոջն էր (Հակոբյան, *Երևանի պատմությունը* 212): Անկախ ամեն ինչից, անհայտ է մնում Երևանի կարգավիճակը այդ շրջանում: Ինչպես տեսանք, Գագիկ Ա-ի թագավորության շրջանում այն հիշատակված է որպես գյուղաքաղաք, սակայն դա մատնանշում է, որ մեծ քաղաքի վերածվելու ուղին բռնած Երևանում արդեն առկա են քաղաք համարվելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Հավանական է թվում, որ Երևանի՝ քաղաքագյուղից անցումը քաղաքի պետք է տեղի ունենար հենց Բագրատունիների դարաշրջանի ավարտին, երբ ստեղծված էին բոլոր պայմանները դրա համար: Այդ են վկայում վերջին շրջանի հնագիտական պեղումները, որոնց արդյունքները հնարավորություն են տալիս Երևանի՝ որպես քաղաքի հանդես գալը թվագրել XI-XII դարերով (Բաբայան և Ժամկոչյան 9), այսինքն՝ այդ գործընթացը հասցնելով Բագրատունիների դարաշրջան:

Այլ բան է, որ այս շրջանի սակավ հիշատակություններում չկա Երևանի՝ որպես քաղաքի վերաբերյալ որևէ ուղղակի հիշատակություն, սակայն այդ երևույթը չի վերաբերում միայն Երևանին: Աղբյուրների տեղեկությունները, որպես կանոն, կենտրոնացել են երկրի քաղաքական կյանքի համար կարևոր իրադարձությունների շուրջ, իսկ Երևանը դուրս է մնացել այդ շրջանակից: Սակայն նշվածը բոլորովին էլ չի նշանակում, որ քաղաքը դուրս էր նաև երկրի տնտեսական զարգացումներից, քանի որ գտնվելով հարավից հյուսիս և արևմուտք ընթացող և երկրի համար կենսական կարևորություն ունեցող մայրուղիների վրա՝ այն առևտրից քաղում էր մեծ օգուտներ:

Ի դեպ, այս համատեքստում հարկ է նշել, որ Ս. Բարխուդարյանի տեսակետը, թե Երևանը Բագրատունիների դարաշրջանում քաղաքագյուղ չի եղել, քանի որ այգեգործական բնակավայր էր, այնքան էլ հիմնավոր չէ: Խնդիրն այն է, որ Նույնիսկ XIII դարում, երբ Երևանն արդեն քաղաք էր, դարձյալ այստեղ այգիներ կային, որոնք նվիրաբերվում էին: Նման տեղեկություններ են պահպանվել Հռոմեական Ս. Աստվածածին եկեղեցու՝ 1201 թ. արձանագրության մեջ (Դիվան հայ վիմագրության, պրակ X 45, 53), Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու պատին փորագրված 1215 թ. արձանագրության մեջ (Դիվան հայ վիմագրության, պրակ I 63): Ուստի կարող ենք նշել, որ Երևանում այգիների հաճախակի հիշատակությունը չի կարող հիմք դառնալ նրա՝ զուտ այգեգործական բնակավայր լինելու մասին տեսակետի համար: Նույնիսկ շատ ավելի ուշ՝ XVIII դ. սկզբին, ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանն այցի էր ընկնում այգեգործական ընդարձակ գոտիներով: Ըստ պատմիչի՝ «քաղաքի մեջն բովայդակ պարտեզ եւ բուրաստան այ, յայգեստան այ» (Աբրահամ Երևանցի 29) և «...շուրջ քաղաքան էին այգիք եւ ծառատունկք ուռեաց բազում խիտք, զորս ի վաղ ժամանակաց տնկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին» (Աբրահամ Երևանցի 102), այսինքն՝ պտղատու այգիները և ուռիները շրջապատում էին Երևանը և տնկված էին հին ժամանակներում, ըստ որում այնքան խիտ, որ հեղինակն ավելացնում է, թե դրանք «լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին» (Աբրահամ Երևանցի 102): Այսինքն՝ Երևանը, որի՝ մեծ և նշանակալի քաղաք լինելը XVIII դ. սկզբին կասկածից վեր է, այդ ժամանակ դարձյալ լի էր

այգիներով: Ավելին, XIX դ. վերջին ևս Երևանում բնակիչների հիմնական զբաղմունքը մնում էր այգեգործությունը: Երևանի վերաբերյալ 1889 թ.–ին և 1899 թ.–ին տպագրված հայրենագիտական ձեռնարկներում ասված է. «Մեր քաղաքի բնակիչները գիտաևորապես պարապում են այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ, որովհետև Երեւանը իւր կլիմայով ամբողջ Կայսրութեան (Յարական կայսրություն – Ա. Ե.) մէջ առաջին յարմար տեղին է այգեգործութեան համար» (Տեղագրութիւն [հայրենագիտութիւն] Երեւանի 30; Տեղագրութիւն [հայրենագիտութիւն] Երեւանի, 2-րդ հրատ. 34):

Ի վերջո փաստ է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Երևանը հիշատակում է որպես քաղաքագյուղ, այսինքն՝ փաստում, որ առնվազն իր օրոք այն արդեն ձեռք էր բերել միջնադարյան քաղաքին բնորոշ հատկանիշները: Ասողիկը Հայաստանում քաղաքի ձևավորման առումով բերում է ազարակից միևնույն քաղաք անցման բանաձևը. «...ազարակաց աւանացեալ եւ աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ եւ ընչեղութեամբ, միևնույն հովուաց եւ անդերողաց մետաքսեայս զգեալ պատմութեան» (Ասողիկ 742), ասել է՝ ձևավորվող քաղաքներում մեծ հարստություններ են կուտակվում, և նույնիսկ հովիվները մետաքսե պատմութեաններ են հագնում: Փաստորեն, Բագրատունիների շրջանում քաղաքը ձևավորվում էր ավանների զարգացման և ընդարձակման արդյունքում, այն աչքի էր ընկնում մեծ բնակչությամբ և հարստությամբ: Այնհայտ է, որ քաղաքագյուղը, որը բնակավայրի՝ ավանից առաջանցիկ զարգացման հաջորդ աստիճանն է, արդեն իսկ ունի քաղաքին բնորոշ բոլոր հատկանիշները, այնտեղ ծաղկում են արհեստներն ու առևտուրը և աստիճանաբար չքանում են գյուղին բնորոշ երևույթները:

Այն, որ Երևանն արդեն ձեռք էր բերել քաղաքին բնորոշ դիմագիծ, երևում է նաև նրանից, թե ինչպիսի ընդարձակ տարածք էր այն զբաղեցնում: Հիմնվելով ճարտարապետական հին հուշարձանների առկայության վրա՝ կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ քաղաքը Բագրատունիների դարաշրջանում գրեթե նույնությամբ համընկնում էր ուշ միջնադարում քաղաքի ընդգրկած տարածքին: Այն ներառում էր Կոնղը և մայրաքաղաքի ներկայիս կենտրոնական հատվածները՝ Ս. Չորավոր եկեղեցի [եկեղեցու տարածքում էր գտնվում Ս. Անանիայի մատուռը՝ կառուցված Երևանի սահմանին հին դարերում (Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ 225, 294-295)] - Օպերայի և բալետի պետական թատրոն [այստեղ էր գտնվում Գեթսեմանի մատուռը՝ կառուցված XII-XIII դարերում (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 45)] - Աբովյան ու Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկ - [այստեղ է գտնվում Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված Նախքան XIII դարը (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 24, 26), ինչպես նաև այստեղ է եղել V դ. կառուցված եկեղեցի (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 24, ծանոթագրություն 1)] - Մոսկվա կինոթատրոն [այստեղ էր գտնվում Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին՝ կառուցված V-VI դդ. (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 32; Հակոբյան, *Երևանի պատմությունը* 204-205)] գծի (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 16) և Հրազդան գետի միջև (Բաբայան և Ժամկոչյան 6):

Երևանը Բագրատունիների արքունի տիրույթ

Հնագիտական պեղումները ցույց են տվել, որ Երևանի այն բերդը, որ կառուցված էր Հրազդան գետի ափին և զրավել է ռուսական զորքի կողմից 1827 թ.–ին, հիմնվել է XVI դ. վերջին «բլուրովին նոր տեղում, որտեղ նախապես ոչինչ կառուցված չի եղել» (Ղաֆաղարյան, *Երևանի միջնադարյան հուշարձանները* 96-97): Հետևաբար անհրաժեշտ է պարզել, թե Բագրատունիների դարաշրջանում որտեղ էր գտնվում Երևանի բերդը: Ինչպես նշվեց, Հովհաննես Սկիլիցեսը հիշատակում է անառիկ Ծիծեռնակաբերդը, որն էլ, անկասկած, Երևանի հիմնական ամրությունն էր:

Հույժ կարևորվում է նաև պարզելը, թե Բագրատունիների թագավորության անկման շրջափուլում ում էր պատկանում Ծիծեռնակաբերդը, հետևաբար նաև՝ Երևանը: Դա հնարավոր է Հովհաննես Սկիլիցեսի վերոբերյալ՝ Խելիդոնիոն-Ծիծեռնակաբերդի հետ առնչվող իրադարձությունների նկարագրության տվյալներով: Ըստ պատմիչի՝ մինչև Անիի գրավումը բյուզանդացիների կողմից Անիի թագավորության մի քանի բերդ նրանց թույլտվությամբ ռազմակալել էր Դվինի Շադդադյան տիրակալ Աբու ալ-Ասվարը: Անիի Բագրատունի վերջին գահակալ Գագիկ Բ-ն, փաստորեն հարձակման ենթարկվելով բյուզանդացիների և շադդադյանների գործերի կողմից, հուսահատվեց և Անին հանձնեց կայսերը: Դրանից հետո բյուզանդացիներն Աբու ալ-Ասվարից հետ պահանջեցին նրա գրաված բերդերը: Նա հրաժարվեց, և ռազմական գործողություններ սկսվեցին: Դվինի պարիսպների մոտակայքում հայ-բյուզանդական բանակը պարտություն կրեց և նահանջեց (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ 63), որից հետո բյուզանդական զորքը նոր հրամանատարի գլխավորությամբ որոշեց նախ գրավել շադդադյանների տիրացած բերդերը՝ Սուրմարին, Ամբերդը, ինչպես նաև՝ Սուրբ Գրիգորը: Վերջինիս տեղորոշումը հստակ չէ: Փորձ է կատարվել այն նույնացնելու Խոր Վիրապին կամ Փարպիին (Minorsky 53; Տեր-Ղևոնդյան 212) կամ Ամբերդի մոտակա Սուրբ Գրիգոր գյուղին (Юзбашян 88): Հ. Բարթիկյանն այն տեղորոշում է Աշոցքում (Հովհաննես Սկիլիցես 356, ծանոթագրություն 532): Բյուզանդական բանակը պաշարեց ու գրավեց Սուրմարին, Ամբերդը, Սուրբ Գրիգորը, իսկ Աբու ալ-Ասվարը օգնության շտապելիս պարտություն կրեց (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 147-148): Այնուհետև բյուզանդացի հեղինակը նշում է, որ «Նրանք (բյուզանդացիները – Ա. Ե.) եկան նաև Խելիդոնիոն կոչվող բերդը» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 149), որից հետո տեղի ունեցավ վերոհիշյալ անհաջող պաշարումը: Այն ավարտին չհասցվեց Բյուզանդիայում բռնկված ապստամբության պատճառով, ուստի բյուզանդացի հրամանատարը Աբու ալ-Ասվարի հետ հաշտություն կնքեց, թողեց պաշարումն ու հեռացավ կայսերն օգնության (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 149-150): Ա. Տեր-Ղևոնդյանը, հիմնվելով Հովհաննես Սկիլիցեսի տեղեկությունների վրա, կարծում է, որ Ծիծեռնակաբերդ-Խելիդոնիոնը բյուզանդացիների թույլտվությամբ նախապես գրավվել էր Աբու ալ-Ասվարի կողմից, իսկ 1047 թ.–ին դիմացել բյուզանդական բանակի պաշարմանը: 1048 թ.–ին Հայաստան են ներխուժել սելջուկները, որով բյուզանդական հաջորդ արշավանքը կասեցվել է (Տեր-Ղևոնդյան 211-213): Փաստորեն, ըստ ուսումնասիրողի՝ Ծիծեռնակաբերդը գտնվել է Դվինի քուրդ տիրակալի ենթակայության ներքո, որն այն գրավել էր Գագիկ Բ թագավորից: Ծիծեռնակաբերդը գտնվում էր Դվինից ոչ այնքան հեռու՝ նշված բերդերի հետ միևնույն աշխարհագրական միջավայրում, ինչը կարող է հավելյալ հիմնավորում լինել ուսումնասիրողի կարծիքի համար: Սակայն իրականում Հովհաննես Սկիլիցեսի տեղեկությունն այնքան էլ միանշանակ չէ: Նա, որպես Դվինի ամիրային ենթակա, հիշատակում է միայն Սուրմարին, Ամբերդը և Սուրբ Գրիգորը, որոնց Աբու ալ-Ասվարը փորձեց օգնության հասնել բյուզանդական բանակի կողմից պաշարման ժամանակ, իսկ Խալիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պաշարումը ներկայացնում է այդ բերդերի գրավումից հետո միայն: Պատմիչը որևէ կերպ չի հիշատակում Խալիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պատկանելը Դվինի ամիրային, ավելին, վերջինս չի փորձում, ինչպես վերոհիշյալ երեք բերդերի պարագայում էր, օգնության հասնել Երևանի պաշարված բերդին: Իսկ այն, որ Խելիդոնիոն-Ծիծեռնակաբերդի պաշարումը թողնելով՝ բյուզանդական զորավարը հաշտություն է կնքում Աբու ալ-Ասվարի հետ, որևէ կերպ չի հիմնավորում այդ բերդի՝ քուրդ ամիրային ենթակա լինելը, այլ միայն վկայում է այն բանի օգտին, որ հեռանալիս բյուզանդացիները փորձել են ապահովել իրենց թիկունքը: Ուստի Ծիծեռնակաբերդի՝ քուրդ ամիրային պատկանելու տեսակետը հարկ է համարել հավելյալ հիմնավորումների կարոտ: Նույնիսկ եթե այն ճշմարիտ է, կարելի է հստակորեն արձանագրել, որ Երևանը Անիի թագավորների

արքունի տիրույթ էր (Եղիազարյան, *Հայ Բագրատունիների տերությունը*, 81-82, նաև՝ Էջ 81-ին կից քարտեզը), որի պատճառով էլ Անիին տիրանալուց հետո բյուզանդացիները փորձ են կատարել գրավել այն և մերձակա անառիկ Ճիծեռնակաբերդը, սակայն բերդի պաշարման փորձը հաջողություն չի բերել:

Եզրակացություն

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարելի է նշել, որ Երևանը, դեռևս VII դարում լինելով քաղաքագյուղ, Բագրատունիների դարաշրջանում ձեռք էր բերել ավատատիրական քաղաքին բնորոշ հատկանիշներ և աղբյուրներում դարձյալ հիշատակվում է որպես քաղաքագյուղ, այսինքն՝ քաղաքի վերածված, բայց դեռևս գյուղին բնորոշ հասարակական-տնտեսական հարաբերություններ պահպանող բնակավայր: Փաստորեն, Երևանն աստիճանաբար վերածվում էր մեծ քաղաքի և կարևորություն էր ձեռք բերում Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, ինչի պատճառով ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում սկզբնաղբյուրներում: Խնդրո առարկա դարաշրջանում Երևանում հայտնի էր Ճիծեռնակաբերդը, որտեղ բյուզանդական բանակը անհաջողության է մատնվել 1047 թ.-ին: Երևանի տարածքը, որը Բագրատունիների դարաշրջանում մտնում էր արքունի տիրույթների մեջ, ընդարձակ էր. Ընդգրկում էր մի կողմից՝ Հրազդան գետի, իսկ մյուս կողմից՝ Կոնդի, Կաթողիկե և Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիների միջև ընկած տարածքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամ Երևանցի. *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուկ. յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրութիւններ պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ, 1977:*
2. *Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց. տեղագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1890:*
3. *Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի. քննական հրատարակութիւն Հայկ Պերպերեանի, Բարիզ, 1960:*
4. Առաքելյան, Բաբկեն. *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ. հ. Երևան, 1958:*
5. ---. *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ. հ. II. Երևան, 1964:*
6. Բաբայան, Ֆրիւա և Աղավիի Ժամկոչյան. *Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության. Երևան, 2015:*
7. *Դիվան հայ վիմագրության. պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966:*
8. *Դիվան հայ վիմագրության. պրակ X, Շիրակի մարզ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 2017:*
9. Եղիազարյան, Արման. *Հայ Բագրատունիների տերությունը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն). Երևան, 2011:*
10. *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950:*
11. *Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.). առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով, Կազմեց՝ Հար. Աբրահամյան, պրակ I, Երևան, 1941:*
12. Հակոբյան, Թադևոս. *Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ.. Երևան, 1969:*
13. Հակոբյան, Թադևոս և Աբել Սիմոնյան. *Երևան 2750. Երևան, 1968:*

14. Ղաֆադարյան, Կարո. *Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները*. Երևան, 1975:
15. Մանասյան, Հակոբ. *Երկեր*. հատոր Բ, Երևան, 1978:
16. Մաթևոսյան, Կարեն. *Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր մագիստրոս*. Երևան, 2015:
17. *Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական*. ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1867:
18. *Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց*. Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս, 2010:
19. Շահազիզ, Յերվանդ. *Հին Յերևանը*. Յերևան, 1931:
20. *Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ*. Վաղարշապատ, 1896:
21. *Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ*. աշխատասիրութեամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963:
22. *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*. Թիֆլիս, 1910:
23. *Պատմութիւն Սեբեոսի*. քննական բնագիրը՝ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 2004:
24. Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. *Ժամանակագրութիւն Ադամից մինչեւ 1776 թ.*. աշխատասիրութեամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014:
25. *Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց*. կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913:
26. Տարանեցի, Ստեփանոս Ասողիկ. *Պատմութիւն տիեզերական*. Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ. Երևան, 2011:
27. *Տեղագրութիւն [հայրենագիտութիւն] Երեւանի*. աշխատասիրեց Ա. Ադամեանց, Երևան, 1889:
28. *Տեղագրութիւն [հայրենագիտութիւն] Երեւանի*. երկրորդ տպագրութիւն, աշխատասիրեց Ա. Ադամեանց, Վաղարշապատ, 1899
29. Տեր-Ղևոնդյան, Արամ. *Արաբական ամիրայությունները Բագրատունիների Հայաստանում*. Երևան, 1965:
30. *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*. 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979:
31. Draxanakertc'i, Yovhannēs. *History of Armenia*. Translation and Commentary by Rev. Fr. Krikor Vardapet Maksoudian, Atlanta, 1987.
32. Grousset, René. *Histoire de l'Arménie des origines à 1071*. Paris, 1973.
33. Honigmann, Ernst. *Die Ostgrenze des byzantinischen Reiches: von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen*. Bruxelles, 1935.
34. Skylitzes, John. *A Synopsis of Byzantine History 811-1057*. Translated by John Wortley, with Introductions by J.-C. Cheynet and B. Flusin and Notes by J.-C. Cheynet. Cambridge, 2010.
35. Minorsky, Vladimir. *Studies in Caucasian History*. London, 1953.
36. *Town and Country in the Middle Ages: Contrasts, Contacts and Interconnections, 1100-1500*. Edited by K. Giles and Ch. Dyer, Leeds, 2005.
37. *Город в средневековой цивилизации Западной Европы*. в 4-х томах, том 1 и 2. Москва, 1999.
38. Բարխուդարյան, Սեդրակ. «Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ». *ՀՍՍՐ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների*, թիվ 5, 1947, էջ 69-78:
39. Եղիազարյան, Արման. «Երևանի հիշատակությունը VII դարի առաջին կեսին». *Բանբեր Երևանի համալսարանի, «Հայագիտություն»*, N 1, 2018, էջ 3-13:

40. ---. «Մետաքսի ճանապարհը և հայոց թագավորությունը IX դարի վերջին և X դարի սկզբին (ճանապարհային երթուղիների քննություն)». *Բանբեր Երևանի համալսարանի, «Հայագիտություն»,* 137.1, 2012, էջ 3-16:

41. Հակոբյան, Թադևոս. «Երևանը VII-IX դարերում». *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 3, 1968, էջ 14-26:

42. Հարությունյան, Արսեն. «Միջնադարյան Երևանը վիմական արձանագրություններում». *ՎԵՄ համահայկական հանդես*, թիվ 3, 2020, էջ 246-268:

43. Ղաֆադարյան, Կարո. «Երևանի միջնադարյան հուշարձանները». *Լրաբեր հասարակական գիտությունների*, թիվ 1, 1969, էջ 73-93:

44. ---. «Երևան քաղաքի պատմության մի քանի հարցերի մասին». *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 1, 1969, էջ 3-14:

45. Մելիքսեթ-Բեկ, Լևոն. «Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ». *ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի Տեղեկագիր*, թիվ 4-5, 1940, էջ 117-118:

46. Մուշեղյան, Խաչատուր. «Դրամագիտական տվյալներ Երևանի պատմության վերաբերյալ». *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 3, 1968, էջ 27-38:

47. Fisher, William Bayne, et al. "Araxes River". *Encyclopaedia Iranica*, Edited by E. Yarshater, Volume II, Fascicle 3, London, Boston and Henley, 1987.

48. Юзбашян, Карен. «Скилица о захвате Анийского царства в 1045 г.». *Византийский временник*, том 40, 1979, с. 76-91.

WORKS CITED

1. Abraham Yerevants'i. *Patmut'yun paterazmats'n 1721-1736 t'vi. yar'ajaban, bnagir, khmbagir o'rinak ev ts'anot'agrut'yunner patrastets'* H. Sahak Tjhemtjhemean, Venetik. [*History of the War of 1721-1736. The Preface, the Original, the Editor Copy and the Notes were Prepared by H. Sahak Jemjemian, Venice*] 1977. (In Armenian)

2. Ar'aqelyan, Babken. *Qaghaqneri' ev arhestneri' Hayastanum IX-XIII dd.. h. I*, Erevan. [*Cities and Crafts in Armenia in IX-XIII centuries. Vol. I, Yerevan*] 1958. (In Armenian)

3. ---. *Qaghaqneri' ev arhestneri' Hayastanum IX-XIII dd.. h. II*, Erevan. [*Cities and Crafts in Armenia in IX-XIII centuries. Vol. II, Yerevan*] 1964. (In Armenian)

4. *Ashkharhats'oyts' Vardanay vardapeti.* qnnakan hratarakut'yun Hayk Pe'rpe'reani, Bariz. [*Geography of Vardan Vardapet. Examination Edition of Hayk Perperian, Paris*] 1960. (In Armenian)

5. *Ayrarat bnashkxarh Hayastaneayc'.* teghagrec' H. Ghevond V. M. Alishan, Venetik, [*Ayrarat Homeland of Armenians. placed H. Ghevond V. M. Alishan, Venice*] 1890. (In Armenian)

6. Babayan, Frina ev Aghavni Zhamkochyan. *Urvagc'er hin Yerevani patmut'yun ev hnagitut'yun.* Erevan, [*Outlines of Ancient Yerevan History and Archaeology. Yerevan*] 2015. (In Armenian)

7. *Divan hay vimagrut'yun.* prak I, Ani qaghaq, kazmec' H. A. Orbeli, Erevan. [*Corpus of Armenian Inscriptions. Vol. I, Ani city, Compiled by H. A. Orbeli Yerevan*] 1966. (In Armenian)

8. *Divan hay vimagrut'yun,* prak X, Shiraki marz, kazmec' S. G. Barkhudaryan, Erevan, [*Corpus of Armenian Inscriptions. Vol. II, Shirak region, Compiled by S. G. Barkhudaryan, Yerevan*] 2017. (In Armenian)

9. Draskhanakerts'i, Yovhannēs. *History of Armenia.* Translation and Commentary by Rev. Fr. Krikor Vardapet Maksoudian, Atlanta, 1987.

10. Eghiazaryan, Arman. *Hay Bagratunineri terut'yuny' (patmaashkharhagrakan usumnasirut'yun).* Erevan. [*Power of Armenian Badratids (Historical and Geographical Research). Yerevan*] 2011. (In Armenian)

11. Ghafadaryan, Karo. *Erevan. mijnadaryan hushardzannery' ev vimakan ardzanagrut'yunnery'*. Erevan. [*Yerevan: Medieval Monuments and Inscriptions. Yerevan*] 1975. (In Armenian)
12. *Gorod v srednevekovoj civilizacii Zapadnoj Evropy. v 4-h tomah, tom 1 i 2*, Moskva. [*A City in the Medieval Civilization of Western Europe. in 4 volumes, Vol. 1 and 2, Moscow*] 1999. (In Russian)
13. Grousset, René. *Histoire de l'Arménie des Origines à 1071*. Paris. [*History of Armenia from the Origins to 1071. Paris*] 1973. (In French)
14. Hakobyan, T'adevos. *Yerevani patmut'yuny' hnaguyn zhamanakneric minchev 1500 t'.* Erevan. [*History of Yerevan from Ancient Times to 1500. Yerevan*] 1969. (In Armenian)
15. Hakobyan, T'adevos ev Abel Simonyan. *Erevan 2750*. Erevan. [*Yerevan 275. Yerevan*] 1968. (In Armenian)
16. Honigmann, Ernst. *Die Ostgrenze des byzantinischen Reiches: von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen*. Bruxelles. [*The Eastern Frontier of the Byzantine Empire: from 363 to 1071 according to Greek, Arabic, Syriac and Armenian Sources. Bruxelles*] 1935. (In German)
17. *Kalvatsagrer ev tntesakan ayl gorts'arqneri veraberyal arkhivayin vaveragrer (976, 981, 1432, 1564, 1614 ev 1839 t't').* ar'ajabanov, ts'ano't'agrut'yunnerov ev bar'aranov, Kazmec' Har. Abrahamyan, prak I, Erevan. [*Bills of Sale and Various Other Archival Documents on Economic Transactions (946, 981, 1432, 1564, 1614, 1655-1839). With preface, notes and dictionary, Compiled by Har. Abrahamyan, Vol. 1, Yerevan*] 1941. (In Armenian)
18. Manandyan, Hakob. *Erker. hator B*, Erevan. [*Works. Vol. II, Yerevan*] 1978. (In Armenian)
19. Mat'evosyan, Karen. *Anii aznvakanut'yan patmut'yunic' kam ereq Grigor magistros*. Erevan. [*From the History of Nobility of Ani or Three Grigor Magistroses. Yerevan*] 2015. (In Armenian)
20. Minorsky, Vladimir. *Studies in Caucasian History*. London, 1953.
21. *Mkhit'aray Ayrivanetsvoy Patmut'yun zhamanakagrakan.* i loys y'nc'ayec Q. P., S. Peterburg. [*Chronological History of Mkhitar Ayrivanetsi. published by Q. P., S. Petersburg*] 1867. (In Armenian)
22. *O'tar aghbyurnery' Hayastani ev hayeri masin.* 10, «Byuzandakan aghbyurner», G, Hovhannes Skilic'es, t'argmanut'yun bnagric, ar'ajaban ev ts'ano't'agrut'yunner Hrach Bart'ikyani, Erevan. [*Foreign Sources about Armenia and Armenians. 10, "Byzantine sources", III, John Skylitzes, Translation from the Original, Preface and Notes by Hrach Bartikyan, Yerevan*] 1979. (In Armenian)
23. *Patmut'yun Ar'aqel vardapeti Davrizhec'voy.* Vagharshapat, [*History of Arakel Davrizhec'i. Vagharshapat*] 1896. (In Armenian)
24. *Patmut'yun Aristakisi Lastivertc'voy.* ashkhata sirut'yamb` K. N. Yuzbashyani, Erevan. [*History of Aristakes Lastivertc'i. with Diligence K. N. Yuzbashyan, Yerevan*] 1963. (In Armenian)
25. *Patmut'yun nahangin Sisakan arareal Step'annosi O'rbe'lean arqepiskoposi Syuneac'.* T'iflis. [*History of the Province of Sisakan of Archbishop Stepanos Orbelian from Syunik. Tiflis*] 1910. (In Armenian)
26. *Patmut'yun Sebe'osi.* qnnakan bnagiry` G. V. Abgaryani, Erevan. [*History of Sebeos. Examination Original by G. V. Abgaryan, Yerevan*] 2004. (In Armenian)
27. *Samue'l Anets'i ev sharunakoghner, Zhamanakagrut'yun Adamic minchev 1776 t'.* ashkhata sirut'yamb K. Mat'evosyani, Yerevan. [*Chronology from Adam to 1776. with Diligence K. Matevosyan, Yerevan*] 2014. (In Armenian)

28. Shahaziz, Yervand. *Hin Erevany'*. Erevan. [*Old Yerevan*. Yerevan] 1931. (In Armenian)
29. Skylitzes, John. *A Synopsis of Byzantine History 811-1057*. Translated by John Wortley, with Introductions by J.-C. Cheynet and B. Flusin and Notes by J.-C. Cheynet, Cambridge, 2010.
30. Taravnetsi, Step'anos Asoghik. *Patmut'yun tiezerakan*. Matenagirq hayots', ZhE hator, Zh dar, Patmagrut'yun, girq B, Erevan. [*Universal History*. Chronicler of Armenia, Vol. XV, 10th century, Historiography, Book 2, Yerevan] 2011. (In Armenian)
31. *Teghagrut'yun [hayrenagitut'yun] Yerevani*. ashkhatasirec A. Adameanc, Erevan. [*Topography of Yerevan*. with Diligence A. Adameants, Yerevan] 1889. (In Armenian)
32. *Teghagrut'yun [hayrenagitut'yun] Yerevani*. erkrord tpagrut'yun, ashkhatasirec A. Adameanc, Vagharshapat, [*Topography of Yerevan*. Second Edition, with Diligence A. Adameants, Vagharshapat] 1899. (In Armenian)
33. Ter-Ghevondyan, Aram. *Arabakan amirayut'yunnery' Bagratunyac' Hayastanum*. Erevan. [*The Arab Emirates in Bagratid Armenia*. Yerevan] 1965. (In Armenian)
34. *Town and Country in the Middle Ages: Contrasts, Contacts and Interconnections, 1100-1500*. Edited by K. Giles and Ch. Dyer, Leeds, 2005.
35. *Vimakan taregir*, tsutsak zhoghovats'oy ardzanagrut'eanc hayots', kazmeats' K. Kostaneants, S. Peterburg. [*Annal of Inscriptions*. List of Armenian collection of protocols, compiled by K. Kostaneants, S. Peterburg] 1913. (In Armenian)
36. *Yovhannu kat'oghikosi Draskhanakertsvoy Patmut'yun Hayots'*. Matenagirq Hayots', ZhA hator, Zh dar, Patmagrut'yun. Ant'iliac. [*History of Armenia of Catholicos Hovhannis Draskhanakerts'i*. Chronicler of Armenia, Vol. XI, 10th century, Historiography, Antiliac] 2010. (In Armenian)
37. *ZhD dari hayeren dzer'agreri hishatakaranner*. kazmets' L. S. Khachikyan, Erevan. [*Colophons of Armenian Manuscripts of XIV Century*. Compiled by L. S. Khachikyan, Yerevan] 1950. (In Armenian)
38. Barkhudaryan, Sedrak. «Mi qani ditoghut'yunner Yerevani Kat'oghike ekeghetsu ardzanagrut'yunneri veraberyal». *HSSR' GA Teghekagir hasarakakan gitut'yunneri*, tiv 5, e'j 69-78. ["Some Remarks on the Inscriptions of the Catholicos Church of Yerevan". *Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR: Social Sciences*, N 5, pp. 69-78] 1947. (In Armenian)
39. Eghiazaryan, Arman. «Erevani hishatakut'yuny' VII dari ar'ajin kesin». *Banber Yerevani hamalsarani*, «Hayagitut'yun». N 1, e'j 3-13. ["The Mention of Yerevan in the First Half of VII Century". *Bulletin of Yerevan University, "Armenology"*, N 1, pp. 3-13] 2018. (In Armenian)
40. ---. «Metaqsi tjanaparhy' ev hayots' t'agavorut'yuny' IX dari verjin ev X dari skzbin». *Banber Yerevani hamalsarani*, «Hayagitut'yun», 137.1, e'j 3-16. ["The Silk Road and the Armenian Kingdom at the End of IX and at the Beginning of X Centuries". *Bulletin of Yerevan University, "Armenology"*, 137.1, pp. 3-16] 2012. (In Armenian)
41. Fisher, William Bayne, et al. "Araxes River". *Encyclopaedia Iranica*, Edited by E. Yarshater, Volume II, Fascicle 3, London, Boston and Henley, 1987.
42. Ghafadaryan, Karo. «Yerevani mijnadaryan hushardzannery'». *Lraber hasarakakan gitut'yunneri*, tiv 1, e'j 73-93. ["The Medieval Monuments of Yerevan". *Herald of the Social Sciences*, N 1, pp. 73-93] 1969. (In Armenian)
43. ---. «Yerevan qaghaqi patmut'yan mi qani harts'eri masin». *Patmabanasirakan handes*, tiv 1, e'j 3-14. ["On Some Issues of the History of Yerevan". *Historical-Philological Journal*, N 1, pp. 3-14] 1969. (In Armenian)
44. Hakobyan, T'adevos. «Erevany' VII-IX darerum». *Patmabanasirakan handes*, tiv 3, e'j 14-26. ["Yerevan in VII-IX Centuries". *Historical-Philological Journal*, N 3, pp. 14-26] 1968. (In Armenian)

45. Harut'yunyan, Arsen. «Mijnadaryan Yerevany' vimakan ardzanagrut'yunnerum». *Ve'm hamahaykakan handes*, tiv 3, e'j 246-268. ["Medieval Yerevan in Epigraphic Inscriptions". *Vem Pan-Armenian Journal*, N 3, pp. 246-248] 2020. (In Armenian)
46. Juzbashyan, Karen. "Skilica o zahvate Anijskogo carstva v 1045 g.". *Vizantijskij vremennik*, tom 40, s. 76-91. ["Skilitsa about the Capture of the Kingdom of Ania in 1045". *Byzantine Chronicle*, Vol. 40, pp. 76-91] 1979. (In Russian)
47. Meliqset'-Bek, Levon. «Erevani hishatakut'yuny' Sevani 874 t'. ardzanagrut'yan mej». *SSR'M GA haykakan filiali Teghekagir*, tiv 4-5, e'j 117-118. ["The Mention of Yerevan in Sevan Inscription of 874". *Bulletin of the Armenian Branch of the Academy of Science of the USSR*, N 4-5, pp. 117-118] 1940. (In Armenian)
48. Musheghyan, Khachatur. «Dramagitakan t'yalner Yerevani patmut'yan veraberyal». *Patmabanasirakan hands*, tiv 3, e'j 27-38. ["Monetary Data on the History of Yerevan". *Historical-Philological Journal*, N 3, pp. 27-38] 1968. (In Armenian)

YEREVAN IN THE AGE OF BAGRATIDS

ARMAN YEGHIAZARYAN

*Yerevan State University, Faculty of History,
Master's program «Diaspora Studies», Head;
Journal «Scientific Artsakh», Member of the Editorial Board,
Doctor of Sciences, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to study the history of Yerevan in the era of the Bagratids (IX-XI centuries).

The task is to explore the time and circumstances of the process of the formation of Yerevan as a feudal city. To effectively solve the problem, all the material from the primary sources on the history of Yerevan, relating to the period under review, and the conflicting opinions expressed by researchers on the topic were collected and researched. As a result, the main events and their content of that important period of the medieval history of Yerevan were presented in detail.

The study was carried out with a historical-critical approach, within the framework of which an attempt was made to find out the reliability of the information from sources on the history of Yerevan in the 9th-11th centuries, to restore historical realities. With the help of the historical-genetic method, the process of development of Yerevan as a city is presented and highlighted, as well as the fact that in the era of the Bagratids Yerevan was a royal possession.

It has been found out that the study of the history of Bagratid era Yerevan is of great importance, on the one hand, in terms of full and comprehensive coverage of its development, and on the other hand, in terms of clarifying the time of Yerevan's formation as a city.

It is substantiated that Yerevan, having formed as an urban settlement by the middle of the 7th century, in the Bagratid era, being a royal possession and situated on the highways of international importance, developed significantly, acquiring all the features of a feudal city.

Keywords: *sources, Yerevan, city, Hovhannes Draskhanakertsi, formation, Tsitsernakaberd, Byzantine army, Bagratid era.*

ЕРЕВАН В ЭПОХУ БАГРАТИДОВ**АРМАН ЕГИАЗАРЯН**

*руководитель магистерской программы «Диаспороведение»
на факультете истории Ереванского государственного университета,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор исторических наук, профессор,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – изучение истории Еревана в эпоху Багратидов (IX-XI вв.).

Задача, поставленная в статье, состоит в том, чтобы исследовать время и обстоятельства процесса формирования Еревана как феодального города. Для эффективного решения проблемы был собран и изучен весь материал первоисточников по истории Еревана, относящийся к рассматриваемому периоду, и противоречивые мнения, высказанные исследователями по данной теме. В результате были подробно представлены основные события и их содержание этого важного периода средневековой истории Еревана.

Исследование проведено с применением историко-критического подхода, в рамках которого предпринята попытка выяснить достоверность сведений источников по истории Еревана IX-XI веков, восстановить исторические реалии. С помощью историко-генетического метода представлен и освещен процесс развития Еревана как города, а также факт того, что в эпоху Багратидов Ереван был царским владением.

Выяснено, что изучение истории Еревана эпохи Багратидов имеет большое значение, с одной стороны, с точки зрения полного и всестороннего освещения его развития, а с другой стороны, с точки зрения уточнения времени становления Еревана как города.

Обосновано, что Ереван, сформировавшись как городское поселение к середине VII века, в эпоху Багратидов, будучи царским владением и располагаясь на магистралях международного значения, значительно развился, приобретя все черты феодального города.

Ключевые слова: *источники, Ереван, город, Ованнес Драсханакертци, формирование, Цицернакаберд, византийская армия, эпоха Багратидов.*

**ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ՉՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XI-XX ԴԴ.)
(Գ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) * 1**

ՀՏԴ 94 (479.25); 343.412

DOI: 10.52063/25792652-2022.2.13-25

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և
Սփյուռքի պատմության բաժնի վարիչ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sasun-07@mail.ru

Հոդվածի նպատակն է տարաբնույթ սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, թեմային առնչվող գրականություն) հենքի վրա ներկայացնել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, XI-XX դարերի ընթացքում տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված Էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության պատճառներն ու իրագործման փուլերը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության մեթոդների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով:

Փաստերի համադրմամբ տրվում է հիմնահարցի պատմության հետևյալ փուլայնացումը. Արևելյան Այսրկովկասում տեղաբնիկ հայերի Էթնիկ զտումներն ու կոտորածները տակավին իրականացվել են XI-XVIII դարերում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվում էր այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների արշավանքների և տիրապետության տակ (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թեմուր, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղեր և ղզլբաշների արշավանքներ, դրանց հաջորդած թուրք-պարսկական պատերազմներ, սուլնի լեզգիներ, Նադիր շահի ու Աղա Մուհամմադ խանի արշավանքներ): Դրա հետևանքով հայ բնակչության մի որոշ մասը բռնագաղթեցվեց և լքեց հայրենի տարածքները կամ հարկադրաբար ընդունեց նվաճողների մահմեդական դավանանքը: Էթնիկ զտումների ու կոտորածների հաջորդ փուլը հայ-թաթարական ընդհարումների շրջանն էր (1905-1906 թթ.): Հետագայում ցեղասպանական քաղաքականությունը պետական մակարդակով է իրականացվել՝ արդեն արհեստածին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական (1918-1920 թթ.) և վերջում՝ Ադրբեջանի խորհրդային վարչակարգերի ժամանակաշրջաններում (1920-1990 թթ.):

Հոդվածում հիմնավորված է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը Էթնիկ զտումների ու ցեղասպանության

* Հոդվածը ներկայացվել է 05.03.2022թ., գրախոսվել՝ 22.03.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

¹ Հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 21T-6A163 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը: Հետևաբար այդ քաղաքականությունը պետք է որակել որպես հայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Արևմտյան Հայաստանից ու Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Պատմագիտական գրականության մեջ թեև ինդրո առարկա հարցի վերաբերյալ անդրադարձները բազմաթիվ են, սակայն առանձին քննության առարկա չի դարձել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, հայերի էթնիկ գտումների ու ցեղասպանության քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը:

Հիմնաբառեր՝ Արևելյան Այսրկովկաս, Բաքվի նահանգ, Կուրի ձախափնյակ, համաթուրքականություն, էթնիկ գտումներ, այլատյացություն, ցեղասպանություն, բռնագաղթ:

Ուզմանձակատը հայաշատ գավառների բնակավայրերից հեռու պահելու մտադրությամբ Բաքվի կոմունայի գործը հունիսի 5-ին Եվլախ-Գանձակի ուղղությամբ անցավ հարձակման: Հունիսի 10-ին սկսվեցին ռազմական գործողությունները: Հունիսի 12-ին՝ համառ մարտերից հետո, Բաքվի կոմունայի գործը գրավեց Զյուրդամիր կայարանը (Кавказское слово», 1918 թ.): Կարամարյան գյուղի մոտ հունիսի 16-18-ը տեղի ունեցած ճակատամարտերն ավարտվեցին Կոմունայի գործի փայլուն հաղթանակով (Հայաստանի Ազգային արխիվ, [Ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 6]; «Անթել հեռագիրներ»): Սակայն հունիսի 27-30-ը Գյոքչա ավանի մոտ տեղի ունեցած ծանր մարտերից հետո Կոմունայի գործը բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների, թիկունքի անկազմակերպ վիճակի և թուրքական մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով նահանջեց (Ստեփանյան, *Գյոքչայի ճակատամարտի նշանակությունը Նորանկախ Հայաստանի Հանրապետության պաշտպանության համատեքստում* 528): Բաքվի գործի կրած ռազմական պարտությունը զրկեց Բաքվի նահանգի հայ բնակչությանը թուրք-թաթարական միացյալ ուժերից պաշտպանվելու կայուն երաշխիքից: Նահանջի հետևանքով փաստորեն ձախողվեց Բաքվի պաշտպանությունը: Նահանջը ճանապարհի հարթեց թուրք-թաթար հրոսակների Նորանոր բարբարոսությունների համար: Չորքը նահանջում էր՝ իր հետ տանելով նաև գավառների 50.000-ից ավելի տեղահանված հայությունը: Մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին օրը՝ սեպտեմբերի 14-ը, երբ պետք է վճռվեր ինչպես ինքնապաշտպանության, այնպես էլ քաղաքի հայ բնակչության հետագա ճակատագիրը (Շահումյան 225):

Հայկական զորամիավորումների չորսամյա հերոսամարտերից հետո մեծաթիվ թուրք-թաթարական զորամասերը Բաքվի մատուցներում համառ մարտերից հետո՝ 1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ առավոտյան Ժ. 10-ին, թուրքական զորամասերը Նուրի Զուլդուլ փաշայի գլխավորությամբ ներխուժեցին քաղաք (Ա. Հ. Գ., Բազուի անկումը). Բաքուն բռնագավթվեց Կոստանդնուպոլսի՝ 1453 թ. մայիսի 29-ի նվաճման և յուրացման օրինակով: Քաղաքը Նորաթուխ «Ազերբայջան» հորջորջված կազմավորման վարչական կենտրոն դարձնելու միտումով երիտթուրքերը նվիրաբերեցին Ապշերոնյան թերակղզու, մասնավորապես՝ Բաքվի էթնոհոգևոր ակունքների և, առհասարակ, քաղաքակրթական գործընթացների հետ բացարձակապես որևէ աղերս չունեցած և ցայսօր էթնիկ ինքնության և պատկանելության փնտրտուքի մեջ խարխափող անդրալթայան տափաստաններից արշաված վաչկատուն թյուրք-օղուզական ցեղերի հետևորդներին՝ կովկասյան թաթարներին: Չավթելով Բաքուն՝ երիտթուրքերն այն հանձնեցին իրենց հետ Գանձակից բերած մուսավաթական կառավարությանը (Նա-

խագահ՝ Ֆ. Խան-Խոյսկի) և Օսմանյան կայսրությունում հայերի գանգվածային բնաջնջման ծրագիրը մուսավաթականների հետ շարունակեցին արևելահայերի կոտորածներով: 1918 թ. սեպտեմբերի 15-17-ին թուրքական բանակը մուսավաթական կառավարության ակնհայտ համաձայնությամբ ու աջակցությամբ, ի դեմս եղեռնագործության գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Ներքին գործոց նախարար Բեհբուղ խան-Ջիվանշիրի ու քաղաքի ոստիկանապետ Նշանակված իթթիհադական տեսաբաններից արևմտահայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Բեհաեդդին Շաքիրի (Дадриян 450), թուրք-թաթարական մեծաթիվ խաժամուժի հետ Բաքվում կոտորածի մատնեցին ավելի քան 30.000 հայի՝ կողոպտելով նրանց ունեցվածքը (Իշխանեան 185; Հայաստանի ազգային արխիվ [Ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 96-99]; Генцид армян в Османской империи 524): Եվ եթե արևմտահայերի բնաջնջումն իրականացնում էր «Թեշքիլաթը մահուսա»-ն իր թափոփուկներով, ապա Բաքվի նահանգում այդ նպատակով երիտթուրքերի հանգույն ստեղծված և «Մուսավաթ»-ի անմիջական հրահանգավորմամբ և ուղղորդմամբ գործում էր «Ջալլադարը քոմիթեսի» (“Çalladları komitəsi” – Դահիճների կոմիտե) կազմակերպությունը (Հայաստանի Ազգային արխիվ [Ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7]): Այս ամենը մեկ անգամ ևս փաստում է, որ 1918-1920 թթ. արևելահայերի կոտորածների ժամանակ երիտթուրքերի, հետագայում նաև քեմալականների և մուսավաթականների միջև գոյություն ուներ գաղափարական ու գործնական սերտ համագործակցություն:

Բաքվի հայության եղեռնագործության անմիջական կազմակերպիչն ու ոգեշնչող Ադրբեջանի ներքին գործոց նախարար Բեհբուղ-խան Ջիվանշիրն էր: Ահա մի քանի մեջբերումներ հայերի մասին Ջիվանշիրի արտահայտած հայատյաց մտքերից. «Երբ ես խոսում եմ հայերի հետ, իմ մեջ այնպիսի չարություն է բարձրանում, որ ինձ կորցնում եմ... Ես մինիստր եմ դարձել միայն նրա համար, որ հայերի հախիցը գամ» (Արզումանյան 190): Ջիվանշիրի այս խոսքերը դարձյալ պարզորոշ վկայում են այն մասին, որ հայերի ցեղասպանությունը կանխամտածված էր երիտթուրք-մուսավաթականների կողմից, և այն եղել է պետական քաղաքականության հետևանք: Արյունարբու Ջիվանշիրը երիտթուրքական ու մուսավաթական «բարոյականության» կերտվածք էր: Այդ նկատի ունենալով՝ գուր չէ, որ հայերի դեմ գործած այս ոճրագործությունների համար նա ձեռք էր բերել «Ադրբեջանի Թալեաթ» տիրաառչակ անունը (ԱԼՈ 65):

Սպանդ, կոտորած, սրածվող երեխաներ, պատշգամբներից նետվող այրվող մարդիկ, գերեվարում. ահա սա էր 1918 թ. սեպտեմբերյան ջարդերի օրերի եղեռնադժոխք Բաքուն¹: Ընդ որում, ինչպես արևմտահայերի ցեղասպանության ժամանակ, այս անգամ

¹ Պատմական վավերագրերի փաստական նյութի հիման վրա համառոտակի ներկայացնելը այդ եղեռնագործության իրական պատկերը: Համընդհանուր էր կոտորածը, ավերն ու թալանը: Զաղաքի ոչ մի հայ ընտանիք գերծ չմնաց ջարդերից ու կողոպուտից: Բնակչության մի մասը կոտորվեց տեղում՝ հարազատ օջախներում, մյուս մասը՝ փողոցներում և ապաստանած վայրերում: Լիովին ավերվեց հատկապես Հայկավանը, որտեղ անխնա կոտորեցին ծերերին և մինչև անգամ ծծկեր երեխաներին (Բագի մասին): Դեպքերին ակնատես Բ. Բայկովը գրում է, որ թուրքական հրամանատարությունը որևէ կերպ չփորձեց կանխել հայերի կոտորածները, որոնք սոսկայի էին հատկապես Հայկավանում (Байков, 132): Բաքվում հայերի ջարդերի վերաբերյալ առկա են առանձնակի վայրագությամբ իրականացված սպանությունների բազմաթիվ վկայություններ: Գեներալ-մայոր Ա. Բիչերախովի բանակի սպաներից մեկի՝ «Մշակի» խմբագրությանը հայտնած մի վկայության համաձայն՝ «...ինքն իր բնակարանի պատուհանից ակնատես է եղել, թե ինչպես թուրքերը ութ հայի մի տեղ հառաքելով՝ թրերով կտրտել են նրանց լեզուները, և ինչպես վեր են նետել մի երեխայի ու սուհին ծայրը անցրել նրան» (Բագում): Չիմասվեցին Նույնիսկ հիվանդանոցներում գտնվողները (Հայաստան ըստ Ռոհրպախի 1919-ի տեսութեան, 55): Միայն Բալախանի հիվանդանոցում սրախողխող արվեց 360 հիվանդ, իսկ Կոմենդանտսկի փողոցում գտնվող որբանոցի 63 երեխաներին փողոց էին նետել չորորդ հարկից («ժողովուրդ», Երևան, 1918, հոկտեմբերի 18, № 20; «Հորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, № 208): Մ. Թորլաքյանի դատավարության ընթացքում հայկական որբանոցի տնօրեն Ա. Խանեդյանի տված վկայությունում ասվում է, որ կոտորածին զոհ են գնացել շուրջ 500 որբեր

ևս հայերի ջարդերին ներգրավվել էին նաև թուրքերի ձեռքին հայերին ոչնչացնող գործիք դարձած 2000-ի հասնող քրդական ջոկատները (Հայաստանի Ազգային արխիվ [Փ. 1267, ց. 1, գ. 2, թ. 98]; «Աշխատաւոր» [Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140]; «Աշխատաւոր» [Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 16, № 157]; Բագուի կոտորածը), որոնք «...երեք օր իրադրության տերերն էին» (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ; «Աշխատաւոր» [Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140])՝ մեղսակցելով ցեղասպան թուրք-մուսավաթականներին: Չանգվածային կոտորածների հետքերը ծածկելու նպատակով զանազան թաղամասերից հավաքված հայերի դիակների մեծ մասը թուրքական հրամանատարության կարգադրությամբ թափեցին ծովը կամ էլ հրկիզեցին («Աշխատաւոր» [Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 25, № 140]): Արյունահեղությունը շարունակվեց հետագայում ևս: Հայերի կոտորածի 4-րդ օրը Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով արևմտահայերին գաղթի ճանապարհներին կոտորելու քողարկված մեթոդով Մուղանի անապատ՝ տաժանակիր աշխատանքի քշվեց 9000 հայ երիտասարդ, որոնց մեծ մասը ճանապարհին մահացավ սովից, ծարավից, ուժասպառությունից: Նրանց, ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես գնդակահար կամ սվինահար էին անում. հազիվ 400-ը կարողացավ փրկվել (Պեհպուտ խան ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը 21; ԱԼՍ 80):

Վերոբերյալ փաստերից միանգամայն ակներև է, որ ռազմական գործողությունների քողի տակ Բաքվում հայերի նկատմամբ երիտթուրքերն ու մուսավաթականներն իրականացրել են ցեղասպանություն, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ արևելահայության ցեղասպանության քաղաքականությունը ոճրագործ Օսմանյան կայսրության հայասպան ուղեգծի անմիջական շարունակությունն էր (Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում* 31-48): Նպատակը մեկն էր՝ զավթած Բաքուն «Ադրբեջան» արիեստածին կազմավորման կազմում պահելու և այն որպես զուտ թուրք-թաթարական քաղաք դարձնելու միտումով ցեղասպանության ճանապարհով հայրենագրելի Ալաշերտի թերակղզու տեղաբնիկ ժողովուրդներից մեկին՝ հայերին, տիրանալ նրանց՝ Բաքվի հարստության առանցքը կազմող հարստությանը (Ստեփանյան, *Հայերի կոտորածները Բաքվի նահանգում և թուրք-ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը* 125-146): Հայ բնակչության կրած միայն նյութական վնասների գումարը անցնում էր 1 միլիարդ ռուբլուց (Իշխանեան 185): Կոտորելով, ունեզրկելով հայության մի հատվածին, թալանելով նրա ունեցվածքը՝ երիտթուրքերն ու մուսավաթականները, ի հաշիվ հայերի, կարողացան լցնել պետական դատարկ զանձարանը, հոգալ Առաջին աշխարհամարտի ընթացքում առաջացած մեծ ծախսերը:

Ի թիվս այլ վավերագրերի՝ բերված փաստերն առավել քան անհերքելիորեն վկայում են, որ ներկայիս «Ադրբեջան» անվամբ կազմավորումը ստեղծվել է տեղաբնիկ ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի արյան և նրանցից բռնագավթված անբավ հարստության, հատկապես շահութաբեր կապիտալի՝ նավթարդյունաբերության վրա: Հարկավ, այս իրողությունը նկատի ունենալով Ադրբեջանի «պատմության» ինստիտուտի նախկին տնօրեն, հայատյացության անզուսպ մոլուցքով տառապող վայ-ակադեմիկոս

(Պեհպուտ խան ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը, 22): Բաքվի հայերի կոտորածները փաստել են գերմանացի բարձրաստիճան սպաները: Դեպքերի ականատես փոխգնդապետ Պարակեն հայերի դեմ կատարված ոճրագործությունների մասին գեև. լեյտենանտ ֆոն Չեքթիին 1918 թ. սեպտեմբերի 26-ին գրել է. «Գազանությունները մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա, այդ թվում մի քանի երեխա... Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթների հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիահոտ էր փչում» (Մանուկարյան, 84):

Յաղուբ Մախմուդովը, երբ 2019 թ. սեպտեմբերի 10-ին «Агентство Азери-Пресс»-ին տված հարցազրույցում բացելիքաց հայտարարում էր. «Բաքվում պետք է կանգնեցնել թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշայի հուշարձանը՝ Ադրբեջանին մատուցած մեծագույն ծառայությունների համար» (Махмудов Я., Надо поставить в Баку памятник Нурю Паше):

Այսպիսով՝ Բաքվի հայության ինքնապաշտպանության ընթացքում, թեև Բաքվի կոմունակայի զորքին չհաջողվեց իրագործել նախապես մշակված ռազմական ծրագիրը, սակայն աներևակայելի քաջագործություններով առլեցուն 4-ամսյա ինքնապաշտպանական կռիվների արդյունքում մեծաթիվ զոհերի գնով թուրքական զորամասերը մինչև սեպտեմբերի 15-ը գամված մնացին Բաքվի շրջանում, երբ Օսմանյան կայսրության անձնատվությանը հաշված օրեր էին մնացել: Դրանով իսկ թուրքական զորքերը չկարողացան օղակել Հայաստանի Հանրապետությունը և իրագործել արևելահայությանը խապառ բնաջնջելու ճանապարհով «Մեծ Ադրբեջան» պետություն ստեղծելու համաթուրքական ծրագրերը (Ստեփանյան Գ., *Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանական մարտերի դերը Հայաստանի Հանրապետության ստեղծման գործում* 53-64): Կանխելով Արցախի, Սյունիքի ու Երևանի հանդեպ ծրագրվող թուրքական ագրեսիան՝ Բաքվի հերոսամարտը վճռական դեր խաղաց նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության պաշտպանության գործում: Բաքվի հայությունն ինքնապաշտպանական այդ ամիսները վերածեց հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից մեկի: Ինչպես իրավացիորեն գրում է Միք. Վարանդյանը. «Այդ վիթխարի ծրագիրը վիժեցաւ գլխաւորապէս շնորհիւ հայերու, որոնք ամիսներ շարունակ պարտիզանական կռիւներ մղեցին թուրք-թաթարներու դէմ, Բագուէն մինչեւ Գեօքչա եւ Շամախի, մինչեւ Պարսից Ատրպատականը...» (Վարանդեան 327):

Բաքվի նահանգում հայախալած քաղաքականությունը շարունակվեց Ադրբեջանական Հանրապետության գոյության (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28) ամբողջ ընթացքում (Հովսեփյան 5-29; Ղուլյան 3-14): Պետք է նշել, որ ազգային խտրական քաղաքականության մեջ մուսավաթականները հատուկ տեղ էին հատկացրել հատկապես հայերին: Որ թիրախը հայ բնակչությունն էր, փաստում է Բաքվում այդ տարիներին բնակվող ռուս հասարակական-քաղաքական ճանաչված գործիչ Բորիս Բայկովը: Նա վկայում է, որ մուսավաթական կառավարությունը բռնությունները դարձրեց նպատակային և «պատերազմ հայտարարեց հայությանը» (Байков 143): Պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և թուրքական զորքերի՝ Այսրկովկասից հեռանալուց հետո մուսավաթականները շարունակեցին հայախալած քաղաքականությունը: Եռյակ դաշինքի պետությունների պարտությունից հետո հեռանալով Բաքվից՝ թուրքական հրամանատարությունն այնտեղ թողեց մեծ թվով սպաներ, զենք ու զինամթերք (Ավետիսյան 62): Այսպիսով՝ արևելահայերին բնաջնջելու երիտթուրքերի քաղաքականությունը որպես «ծառանգություն» փոխանցվեց մուսավաթականներին:

Բաքվի հայերի 1918 թ. սեպտեմբերյան կոտորածներից հետո մուսավաթականները Նուխի և Արեշ գավառներում և Բաքվի նահանգի տամսյակ հայկական գյուղերում հայ բնակչության նկատմամբ իրագործեցին նորանոր ոճրագործություններ՝ կոտորած, կողոպուտ, տեղահանություն և այլն (Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.* 23-28; Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի և կյուբերի ժողովածու): Թուրքական հրամանատարությունը ծրագրել էր կոտորել նաև Շամախի, Գյոքչա և Նուխի քաղաքներում ու հայկական գյուղերում մնացած հայերին (Հայաստանի Ազգային արխիվ [Ֆ. 276, ց. 1, գ. 14, թ. 60]): Այն, ինչ կատարվեց Բաքվում, կրկնվեց նաև գավառների բոլոր հայաբնակ բնակավայրերում: «Բագուի դէպքերէն յետոյ, - գրում է ՀՅԴ անդամ, ազգային գործիչ Արսեն Միքայելյանը, - սկսեցին (մուսավաթականները - Գ. Ս.) «վրեժ» լուծել հայերէն եւ գաւառներու մէջ՝ Շամախի, Նուխի եւ Գանձակ, ուր մահմետական տարրը մեծամասնութիւն է կազմում» (Միքայելյան 158): Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ծառայութեան

յունների՝ արտաքին գործոց նախարար Շ. Բուրիանիին հղած հեռագրում թուրք-թաթարների ոճրագործությունների մասին ասվում էր. «Հայերի վերջին հալածանքների ժամանակ թաթարներն իրենց դաժանությամբ մրցում էին թուրքերի հետ» (Ավետիսյան, *Հայկական հարցը 1918 թ.* 285): Ընդհանուր առմամբ, 1918 թ. մարտից 1919 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Բաքվում և գավառներում հայ զոհերի թիվը, ոչ լրիվ տվյալներով անցնում էր 50.000-ից (Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ.* 46): Այսպիսով՝ երիտթուրքերի կիսատ թողածը նույն թուրքերի օգնությամբ լրացրին մուսավաթականները:

Հարկ է նշել, որ մուսավաթական իշխանությունների հայահալած քաղաքականությանը նպաստեց նախկին երիտթուրք Մուստաֆա Զեմալ փաշայի գլխավորությամբ 1919 թ. գարնանից սկսած «ազգայնական» (միլլի) շարժումը (Ամատունի 107-111): Զեմալական շարժումը ժառանգեց երիտթուրքերի հայաստան քաղաքականության գաղափարական ծրագիրը: Լավ հասկանալով այն դերը, որ կարող են ունենալ մուսավաթականները Հայաստանի և հայերի դեմ սկսված պայքարում՝ Մ. Զեմալը Կարինի (Էրզրում) առաջին (1919 թ. հուլիս 23-օգոստոս 6) և դրան հաջորդած Սեբաստիայի (Սվաս) երկրորդ (1919 թ. սեպտեմբեր 4-11) համաժողովների աշխատանքներին մասնակից էր դարձրել Ադրբեջանական Հանրապետության զինվորական ներկայացուցիչներին (Կիրակոսյան 262): Նպատակ ունենալով Ադրբեջանական Հանրապետությունը հենակետ դարձնել Այսրկովկասում լայնածավալ գործունեության համար՝ համաժողովներից անմիջապես հետո քեմալականների կողմից մի պատվիրակություն ուղարկվեց Բաքու, որն առաջադրանք ուներ՝ ամենուրեք մահմեդականներին ոտքի հանել հայերի դեմ և համաձայնության գալ մուսավաթականների հետ՝ նրանցից ֆինանսական օժանդակություն ստանալու նպատակով: Բաքվում սկսեց ծավալվել քեմալականությունը պաշտպանող լայն շարժում: Տակավին 1919 թ. ամռանը թուրքական 15-րդ բանակի հրամանատար Զյազըմ Կարաբեքիրի պատվիրակները մշտական կապ էին պահպանում մուսավաթական կառավարության հետ: Բաքու ուղարկվածների մեջ էր երիտթուրքական նախկին գործիչ, Էրզրումի համաժողովի կազմակերպիչ դոկտ. - Ֆուաթ Սաբիթը (Աղաջըք), որն ավելի ուշ՝ 1920 թ.-ին, իրեն հայտարարեց Բաքվում - Օսմանյան Թուրքիայի գլխավոր ներկայացուցիչ (Սարգսյան 23): Բաքվում իր գործունեությունն էր ակտիվացրել նաև համախալամականության դիրքերում կանգնած «Իթթիհադ» կուսակցությունը, որն անթաքույց ուներ հակահայկական ուղղվածություն (Միքայելեան 165): Օսմանյան կայսրության և Բաքվի կապն ամրապնդելու նպատակով 1919 թ. հոկտեմբերի 29-ին Կ. Պոլսում Ադրբեջանական Հանրապետության ներկայացուցիչ Զերինովի և Մ. Զեմալի ներկայացուցիչ, թուրքական գլխավոր շտաբի պետ Ջևադ Բեյի միջև կնքվեց ռազմաքաղաքական համագործակցության գաղտնի մի դաշ-նագիր, որն առաջին հերթին ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ (Չարեան 169): 1919 թ. վերջերից Բաքվում իր գործունեությունն էր վերսկսել Խալիլ - փաշան: Այդ ժամանակ Ադրբեջանական Հանրապետությունում ազատ գործողության իրավունքից օգտվում էր նաև Նուրի փաշան, որը ղեկավարում էր մուսավաթականների հետ սերտորեն շաղկապված «Թուրքական ժողովրդի պատվիրակություն» կոմիտեն (Սարգսյան. 23): Զեմալականների և մուսավաթականների սերտ համագործակցության մասին Բաքվում լույս տեսնող «Իթթիհադ» լրագիրն այդ օրերին գրում էր. «...Տաճիկ ժողովրդի բախտը այսօրվանից կապված է Ադրբեջանի մահմեդականների բախտի հետ» («Յառաջ», 1920):

Անշուշտ, այս ազդակները ոգևորեցին թուրք-մուսավաթականներին՝ հայ բնակչության նկատմամբ վերսկսելու հալածական քաղաքականությունը: Բաքվում սկսեցին մշակվել հայաստան նոր ծրագրեր, որքան էլ որ Ադրբեջանի խորհրդարանը, որը լեցուն էր համաթյուրքական, համախալամական գործիչներով ու երբեմնի մարդասպաններով (Մ. Է. Ռասուլզադե, Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշև, Կարաբեկ Կարաբեկով, Ալիբեկ Չիզկիսկի և ուրիշներ), 1919 թ. սեպտեմբերի 6-ին ընդունել էր օրենք՝ Ադրբեջանի քաղա-

քացիության վերաբերյալ: Դրա համաձայն՝ «Ազերբայջանի քաղաքացիներ համարում են՝ առանց ազգի և կրոնի խտրութեան՝ նախկին ռուսաց կայսրության այն բոլոր հպատակները, որոնք իրանք, կամ նրանց ծնողները ծնել են Ազերբայջանի Հանրապետության սահմաններում» (Ազերբայջանի քաղաքացիության (հպատակության) օրենքը, 3): Սակայն հայ բնակչությանը օրենքից դուրս համարելով՝ ադրբեջանական իշխանությունները պետական մակարդակով երկրամասով մեկ իրականացրին հայաստանաց քաղաքականություն, որի հետևանքով զոհ գնացին հարյուրավոր հայեր: Այլ խոսքով՝ սարքովի «Ադրբեջան» կազմավորման անունից ադրբեջանական ինքնություն էր կառուցվում այլաոյացության, առաջին հերթին հայաստանացության հենքի վրա: Հայ բնակչության կոտորածները նոր թափով սկսվեցին 1920 թ. սկզբներից: 1920 թ. ապրիլի 11-ին թաթարական 200 զինված հրոսակախմբեր իշխանությունների ցուցումով հարձակվեցին Շամախիի գավառի Գյուրջևան, Հնդար, Քոխլուճ, Քարքանց ու շրջակա հայկական գյուղերի վրա և կոտորեցին 500 հոգու (Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 57, ց. 2, գ. 2053, թ. 2): Կոտորածը զարհուրելի կերպարանք ստացավ հատկապես Գյուրջևան գյուղում: 300 զինված հրոսակներ, ապրիլի 10-ին շրջապատելով գյուղը, սպանում են ավելի քան 120 հոգու («Наше время», 1920 [22 апреля, № 29, Баку]): Հայ խաղաղ բնակչության սպանությունները, կողոպուտն ու ավերումները շարունակվեցին նաև հայկական մյուս գյուղերում: Կոտորածները շարունակվում են նաև Գյոքչա գավառի Զեշուրդ, Թուբիշեն, Գիրք և Զալբանդ հայկական գյուղերում: Հայերի ջարդը զարհուրելի էր հատկապես Գիրք գյուղում, որտեղ գյուղի քահանա Ալեքսանդր Աբրահամյանցին մորթազերծ անելուց հետո ռուսական Իվանովկա գյուղում ապաստանած գիրքեցիներից 50 հոգու, որոնք հիմնականում կանայք ու երեխաներ էին, գավառի պրիստավի պահակազինվորները գյուղի ծայրին գտնվող առվի մեջ մորթոտում են («Наше время», 1920 [22 апреля, № 29, Баку]):

Մուսավաթական իշխանության գործադրած բարբարոսական քաղաքականության հետևանքով Կուրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում զգալիորեն փոխվեց էթնոժողովրդագրական պատկերը՝ ի վնաս հայերի: Թուրք-մուսավաթականների՝ 1918-1920 թթ. գործադրած ցեղասպան քաղաքականության հետևանքով Կուրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում զգալիորեն փոխվեց էթնոժողովրդագրական պատկերը՝ ի վնաս հայերի: Այս ոճրագործությունների պերճախոս վկայություններն են ստորև բերվող հետևյալ թվական տվյալները: Այսպես՝ ընդհանուր առմամբ 1918-1920 թթ. Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների 50.000-ից ավելի հայերից կոտորածի ենթարկվեց շուրջ 40.000-ը (Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.* [պատ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, 1996]): Ջարդերից հետո կտրուկ նվազեց նաև Բաքվի նահանգի հայերի թիվը: 1921 թ. մարդահամարի տվյալներով Գյոքչայի, Շամախիի, Ղուբայի, Բաքվի, Լենքորանի և Ջավադի (Ջեվատ) գավառներում հայ բնակչության թիվը կազմում էր 50.212 (Заквказье 152-153): Այդ թիվը համադրելով հայ բնակչության՝ նախքան կոտորածներն արձանագրված թվի՝ 127.318 (Հայաստանի Ազգային արխիվ [ֆ. 149, ց. 1, գ. 46, թ. 2-8; գ. 133, թ. 19, ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2; ֆ. 409, ց. 1, գ. 2634, թ. 1-2]; Ստեփանյան, *Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ.* 31-48) հետ՝ պարզորոշ երևում են փաստացի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին երիտթուրքերն ու մուսավաթականները: Ըստ այդմ կոտորածներին զոհ էր գնացել շուրջ 77.106 մարդ, որից միայն 49.927-ը Բաքու քաղաքում (նախքան կոտորածները Բաքվում, ներառյալ արդյունաբերական-գործարանային շրջանները, հայ բնակչության թիվը 88.673 (Իշխանեան 17) էր, իսկ 1921 թ. տվյալներով կազմում էր 38.746 (Заквказье 152-153):

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ Կուրից մինչև Ապշերոն ընկած տարածքում (Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառներ, Բաքվի նահանգ) 1918-1920 թթ. ցեղասպանության էր ենթարկվել շուրջ 117.106 հայ: Չորսրինակ, եթե 1914

թ. Շամախիի, Գյոքչայի, Նուխիի և Արեշի գավառներում հայերը կազմում էին 73.526 մարդ, ապա Ադր. ԽՍՀ-ում 1921 թ. օգոստոսին անցկացված գյուղատնտեսական վիճակագրության տվյալների համաձայն՝ մնացել էր մոտ 12.716 հայ (Карапетян 4): Որպեսզի պարզ լինի կոտորածների ահռելի չափերը, վկայաբերենք միայն Ղուբա քաղաքի օրինակը: Այսպես՝ եթե քաղաքում նախքան կոտորածները հայերի թիվը 500 էր, ապա 1921 թ. օգոստոսի դրությամբ մնացել էր ընդամենը 9 հոգի (Заквказье 152):

Քաղաքակրթության ոչնչացումը, որ համարվում է վայրենի՝ քոչվոր հիմքի վրա ստեղծված արհեստածին «Ադրբեջան», ըստ Էռլայանի՝ ավագակապետության անբաժան մասը, թուրք-մուսավաթականները իրագործեցին նաև մշակութային եղեռն՝ կողոպտվեցին և ավերվեցին հազարամյակներով ստեղծված հայկական բազմաթիվ խաչքարերը, մատուռները, եկեղեցիներն ու վանքերը: Այսինքն՝ թուրք-մուսավաթականները իրագործել են նաև մշակութային եղեռն: Հայ բնակչության կոտորածներն ու բռնի մահմեդականացումը զուգորդվել էր եկեղեցիների ոչնչացումով, ավերումով կամ մզկիթների վերածումով: Ընդ որում՝ Շամախու գավառում ավերվել էր 11, իսկ - Գյոքչայի գավառում՝ 9 եկեղեցի (Հայաստանի Ազգային արխիվ [Ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 4; Ֆ. 458, ց. 1, գ. 104, թ. 19-22]): Կողոպտվել և ավերվել էր նաև Շամախու թեմի երբեմնի առաջնորդակիստ Սադիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքը, որտեղից դուրս էին տարվել բազմաթիվ խաչեր և արծաթեղեն (Հայաստանի Ազգային արխիվ [Ֆ. 1-49, ց. 1, գ. 43, թ. 8]):

Ադրբեջանում հայերից թալանված անշարժ ու շարժական գույքի, մասնավորապես տնտեսության հիմքը կազմող նավթարդյունաբերական ձեռնարկությունների հարստությունների կորուստը և այլ ասպարեզներում հասցված վնասներն անցնում էին տասնյակ միլիոններից: Մանկավարժ, գրող ու հասարակական գործիչ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի), որ շրջագայել է Բաքվի նահանգի հայկական բնակավայրերում, «Բազմամիլիոն ժառանգությունե խորագիրը կրող ճանապարհորդական նոթերում 1920 թ. մարտի 26-ին ցավով նշում էր. «... խնդրում եմ մի ակնարկով յետ նայել և հաշուի առնել թե ինչ խոշոր ժառանգություն է թողել արտաքսուած հայը իր հետնորդներին: Մենք տեսնում ենք, որ նա թողել է ամուր, քարաշէն տներ և այլ շինություններ: Մենք տեսնում ենք, որ նա թողել է քարապատ՝ ծորակառու աղբիւրներ - և, որ գլխաւորն է, թողել է բոլորովին պատրաստի հազարաւոր այգիներ... Մի հանգամանք միայն կարծես հաստատ է, այդ այն է, որ եկեղեցիների խաչերը շուտով կիսալուսնի կփոխուին, եկեղեցիները ու վանքերը անմիջապէս մէջիտ կդառնան, մօտերը կցցուին ազանի մինարեթներ» (Քաջբերունի):

Կոտորածներից հետո հայաթափված ու կողոպտված հայկական գյուղերում, ինչպես նաև Նուխի, Շամախի ու Բաքու քաղաքներում ադրբեջանական իշխանությունները բնակեցրին քրդերին ու կովկասյան թաթարներին (Հայաստանի Ազգային արխիվ [Ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 58]): Շամախի քաղաքի օրինակով բացահայտվում են ադրբեջանական իշխանությունների՝ հայ բնակչության նկատմամբ գործադրած բռնությունների ու կամայականությունների քաղաքականությունը («Наше время», 1919 г. [25 апреля, № 75, Баку]): Ադրբեջանի կառավարությունը նպատակադրվել էր այդտեղից դուրս մղել կոտորածներից մազապուրծ սակավաթիվ հայերին և բռնությամբ տիրանալ նրանց տներին ու ունեցվածքին: Այդ նպատակով կառավարությունը որոշել էր քաղաքի ներքին թաղում բնակվող կովկասյան թաթարներին վերաբնակեցնել վերին - թաղում ավելի բարեկարգ վիճակում գտնվող հայկական թաղամասում: Գ. Քաջբերունին այս առիթով ցավով նշում էր, որ եթե հայերի տներն ընկնեն «...անընդունակ, երբեք այգու երես չտեսած, երկյարկանի տներում չապրած, գոմէշների ու ոչխարների հետ կեանք վարած մարդկանց ձեռքեր, այդպիսիները իհարկէ, եղածն էլ - քարուքանդ կանեն» (Քաջբերունի): Մոսկվայում լույս տեսող «Жизнь национальностей» ամսագիրը 1921 թ. գրել է. «Ադրբեջանում, այնտեղ, որտեղ նախկինում բնակվել են հայերը, մնացել են բաց տարածություններ կամ բնակեցվել են ադրբեջանացիներով և

քրդերով: Հայ բնակչությունը կենտրոնացել է այն տեղերում, որտեղ չէին թափանցել մուսավաթականները» (Волкова 10):

Ադրբեջանական իշխանությունների այս գործելաոճի համար նույնպես որպես օրինակ էր ծառայել Արևմտյան Հայաստանի բնակավայրերը քրդերով և Բալկաններից ու Հյուսիսային Կովկասից տեղափոխված մահմեդական վերաբնակիչներով՝ մուհաջիրներով, բնակեցնելու՝ թուրքական իշխանությունների քաղաքականությունը: Ակնհայտ է, որ մուսավաթական Ադրբեջանն իր գոյության ողջ ընթացքում (1918-1920 թթ.), Օսմանյան կայսրության օրինակով, երկրի տեղաբնիկ ժողովուրդների, այդ թվում հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանության, էթնիկ գտումների, տեղահանման և ուժացման քաղաքականության ճանապարհով նպատակադրվել էր Արևելյան Այսրկովկասում ստեղծել միատարր՝ շիա կովկասյան թաթարներով բնակեցված «սեփական հայրենիք»:

Այսպիսով՝ ինչպես ակներև է դառնում ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա պատժի մասին»՝ տվյալ հանցագործության միջազգայնորեն ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ.-ին, անառարկելիորեն վկայում են, որ հայերի նկատմամբ կատարվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իսկական ցեղասպանություն: Հատկանշական է այն իրողությունը, որ Բաքվի նահանգի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ.-ին Արևմտյան Հայաստանում: Ուստի երիտթուրքերի և մուսավաթականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Բաքվից մինչև Արևմտյան Հայաստան և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներ) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

2021 թ. առաջին կիսամյակի ժողովրդագրական ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝ 17211 ծնունդ (+8.9% 2020 թ. առաջին կիսամյակի համեմատ) և 16627 մահ (+15.3%): Բնական հավելածը կազմել է 584 մարդ (-57.7% նախորդ տարվա համեմատ), ընդ որում այն ապահովվել է գրեթե բացառապես Երևանի շնորհիվ (ընդհանուր դրական ցուցանիշի 97.6%-ը): Ցավալին այն է, որ ՀՀ 10 մարզերից 9-ում բնական աճը բացասական էր. մահերը գերազանցել են ծնունդներին Լոռիում (-397), Շիրակում (-316), Տավուշում (-282), Արարատում (-178), Արմավիրում (-159), Սյունիքում (-128), Կոտայքում (-116), Վայոց ձորում (-99), Արագածոտնում (-85): Յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով գործակիցների տեսանկյունից պատկերն ավելի վատթար է (Տավուշ՝ -4.8, Վայոց ձոր՝ -4.2, Լոռի՝ -3.8, Շիրակ՝ -2.8, Սյունիք՝ -1.9 և այլն): Մահացության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ապրիլին (3361), ամենացածրը՝ հունիսին (2290), իսկ ծնելիության ամենաբարձր ցուցանիշը՝ մարտին (3085), ամենացածրը՝ փետրվարին (2680): Մահվան դեպքերից 2241-ը COVID-19-ից են, իսկ 151-ը 2020 թ. պատերազմում զոհվածներ են, որոնց գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-հունիսին: Բացի այդ՝ 18.6%-ով ավելացել է մեռելածինների թվաքանակը [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-հունիսին» 144-147]: Ընդհանուր այս տիտուր պատկերի ներքո անհասկանալի է ոմանց ոգևորությունը նրանով, որ 100 աղջկա հաշվով ծնվել է 108.6 տղա՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 110.4-ի փոխարեն: Չէ՛ որ ՀՀ-ում կանանց թիվը զգալիորեն գերազանցում է տղամարդկանց, հատկապես պատերազմից հետո երիտասարդների շրջանում դիսբալանսը մեծացել է:

2020 թ. պատերազմից հետո Արցախի ժողովրդագրական իրավիճակը աղետալի միտումներ ունի: 2021 թ. առաջին կիսամյակում Արցախում գրանցվել են 660 ծնունդ և 748 մահ, հետևաբար բնակչության բնական աճը պատմության մեջ առաջին անգամ բացասական է եղել՝ -88: 2020 թ. առաջին կիսամյակի համեմատ մահացությունն աճել է 25.5%-ով, իսկ ծնելիությունը նվազել է 32.7%-ով [«ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին» 90]: Արցախը նախկինում աչքի է ընկել ավելի բարձր ծնելիության գործակցով, քան ՀՀ միջին ցուցանիշն է եղել:

Առաջին կիսամյակից հետո պատկերը փոքր-ինչ բարելավվել է ՀՀ-ում: Հունվար-հուլիսին գրանցվել են 20126 ծնունդներ և 18874 մահեր (որից 2331-ը կամ 12.4%-ը՝ COVID-19-ից): Այս ցուցանիշները 2019 և 2020 թթ. նույն ամիսների հետ համեմատելիս ստանում ենք տիտուր պատկեր. ծնելիությունն ավելացել է համապատասխանաբար 3.9 և 3.6%-ով, մահացությունը՝ 19.5 և 10.1%-ով, իսկ բնական հավելածը նվազել է 65 և 45.5%-ով՝ կազմելով 1252 մարդ: Մեռելածինների թիվն ավելացել է 15.7%-ով [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հուլիսին» 121-122]:

Միտումները պահպանվել են նաև հաջորդ ամիս: Հունվար-օգոստոսին ՀՀ-ում գրանցվել են 23440 ծնունդներ և 21115 մահեր (որից 2534-ը կամ 12%-ը՝ COVID-19-

ից): Այս ցուցանիշները 2019 և 2020 թթ. նույն ամիսների հետ համեմատելիս ստանում ենք հետևյալ պատկերը. ծնելիությունը ավելացել է համապատասխանաբար 2.7 և 2.5%-ով, իսկ մահացությունն ավելացել է 18.7 և 9.7%-ով. բնական հավելվածը նվազել է 53.8 և 35.7%-ով՝ կազմելով 2325 մարդ: Մեռելածինների թիվն ավելացել է 11.1%-ով: Մահացությունը գերազանցել է ծնելիությանը հունվարին և ապրիլին [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-օգոստոսին» 127-128]:

2021 թ. հունվար-սեպտեմբերին գրանցվել են 11.2%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-սեպտեմբերին, որոնք, բացի սեպտեմբերի վերջին օրերից, նախապատերազմական էին և չէին կրում պատերազմի ժողովրդագրական հետևանքները: Գրանցվել են 26809 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.9%) և 23674 մահեր (+11.2%, իսկ 2019 թ. համեմատ՝ +20.9%): Մահվան դեպքերի 12.5%-ի պատճառը COVID-19 համավարակն է, իսկ 64.7%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը: 12.2%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելվածը 9 ամսում կազմել է 3135 մարդ, որը 2020 և 2019 թթ. համեմատ նվազ ցուցանիշ է համապատասխանաբար 40.6 և 54.3 %-ով: Բնական աճը բացասական է Լոռում (-368), Տավուշում (-242), Շիրակում (-210), Սյունիքում (-32), Վայոց ձորում (-20), իսկ ընդհանուր դրական հավելվածն ապահովում է Երևանի +2692 ցուցանիշի շնորհիվ [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-սեպտեմբերին» 152-155]:

Հոկտեմբերին մահացությունը կտրուկ աճել է, որի պատճառը կորոնավիրուսային հիվանդությունն է: Մի քանի օր ՀՀ-ը դուրս չէր գալիս COVID-19-ի պատճառով օրական մահացության ցուցանիշով աշխարհի վատագույն տասնյակից, և դա դեռ այն դեպքում, որ ՀՀ-ից Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը գեկուցված և նաև նույնությամբ Ջ. Հոփքինսի համալսարանի աղյուսակում հրապարակված ցուցանիշներում ներառված չեն COVID-19 ունեցած, բայց այլ պատճառով մահացածները, որոնց վերաբերյալ վիճակագրությունը ՀՀ-ում առանձին է հրապարակվում: Հոկտեմբերի երկրորդ կեսին աղյուսակում ՀՀ-ն 8-րդն էր՝ 14 մահ 1 մլն բնակչի հաշվով: Մեզկից բարձր հորիզոնական զբաղեցնող երկրների ցանկում միայն Բուլղարիան (6.9 մլն), Ռումինիան (19 մլն) և Ուկրաինան (43.4 մլն) են, որ ունեն միլիոնից ավելի բնակիչ, իսկ մնացյալը փոքրաթիվ բնակչությամբ են: Նման պատկերի ներքո ՀՀ իրական հորիզոնականը առնվազն 4-րդ տեղն է, եթե ոչ երրորդը՝ այլ պատճառով մահացած COVID-19 վարակակիրների ներառման պարագայում: Համավարակի սկզբից մինչև 2021 թ. հոկտեմբերի 23-ը ՀՀ-ում COVID-19-ից մահացել է 7231 մարդ (COVID-19-ի պատճառով վախճանված՝ 5975, COVID-19 ունեցած, բայց այլ պատճառով մահացած՝ 1256), ինչը կազմում է ՀՀ մշտական բնակչության մոտ 0.25%-ը: Միայն նախորդող 30 օրերի ընթացքում համավարակը իլել է շուրջ 800 մարդու կյանք: Հարևան Ադրբեջանը և Վրաստանը վերը նշված ժամկետում գեկուցել են ԱՀԿ-ին համապատասխանաբար 6869 և 9699 մահվան դեպքերի մասին:

Շնչառական կամ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության աճ է նկատվում 2020 թ. սկսած: Բացի այդ, կորոնավիրուսային հիվանդությունից բուժված մարդկանց շրջանում հստակ գնահատված չէ որոշակի ժամանակահատված անց մահացության հավանականության փոփոխությունը: Վիճակագրորեն առանձնացված չեն նաև այն դեպքերը, երբ ընտանիքում մի քանի հոգի նույն ախտանիշներով հիվանդ են, սակայն միայն մեկ-երկու հոգին են COVID-19 վիրուսի թեստ հանձնել, այնուհետև գրանցվել է մահ թեստ չհանձնած անձի պարագայում:

Ընդհանուր առմամբ, 2021 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ-ում գրանցվել են 6.3%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-հոկտեմբերին, որոնց մեջ փաստորեն ներառված են եղել սեպտեմբերի վերջին օրերին և հոկտեմբերին պատերազմի պատճառով գրանցված մահերը: Մահացության աճի միտումները նկատելի են նույնիսկ պատերազմական գործողությունների ժողովրդագրական հետևանքների

տարվա համեմատ: 2021 թ. 10 ամիսների ընթացքում գրանցվել են 30282 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.4%) և 27136 մահեր (+6.3%, 2019 թ. համեմատ՝ +25.6%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.3, մահացությանը՝ 11: Մահվան դեպքերի 13.8%-ի պատճառը COVID-19-ն է, իսկ 94.1%-ով ավելացել են ՄԻԱՎ-ով հարուցված դեպքերը: 11.6%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելանքը 10 ամսում կազմել է 3146 մարդ, որը 2020 և 2019 թթ. համեմատ նվազ ցուցանիչ է համապատասխանաբար 32 և 62.1%-ով: Հոկտեմբերին ծնունդների թիվն ընդամենը 11-ով է գերազանցել մահերի ցուցանիշին [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հոկտեմբերին» 119-121¹]:

2021 թ. նոյեմբերի 12-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է 2020 թ. վերազնահատված ժողովրդագրական ցուցանիշները՝ 36353 ծնունդներ և 36170 մահեր, հետևաբար ՀՀ բնակչության բնական հավելանքը կազմել է ոչ թե 1077 մարդ, ինչպես տարեսկզբին էր հայտարարվել, այլ մոտ 6 անգամ քիչ՝ 183 մարդ: Համեմատության համար՝ 2014 թ. բնական հավելանքը կազմել է 15987, Ապրիլյան պատերազմի 2016 թ.՝ 12366, 2018 թ.՝ 10823, իսկ նախաքովիդյան և նախապատերազմական 2019 թ.՝ 9855: Ըստ այդմ մահացությունը ՀՀ համար ռեկորդային 12.2 գործակիցն է ունեցել 1000 մշտական բնակչի հաշվով՝ նախապես հրապարակված 11.9-ի փոխարեն [«Հայաստանը թվերով, 2021» 26]: Այդուհանդերձ, սա էլ դեռ վերջնական ցուցանիշը չէր, քանի որ աճյունների նույնականացման գործընթացը շարունակվում էր:

2021 թ. նոյեմբերի 17-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վերահաշվարկված տվյալները փաստել են, որ 2020 թ. ՀՀ 10 մարզերից 9-ը տարին փակել են բնակչության բացասական բնական շարժով, ընդ որում մահերը գերազանցել են ծնունդներին ՀՀ գյուղական բնակչության շրջանում՝ -0.4 գործակից 1000 մշտական բնակչի հաշվով: Հակառեկորդ է գրանցվել Վայոց ձորում՝ -6.2 գործակից: Համեմատության համար նշենք, որ 2018 և 2019 թթ. բնական նվազում է եղել միայն Լոռու մարզում, իսկ 2020 թ. աճ է եղել միայն Գեղարքունիքում՝ նախնական +127 մարդ: Լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել սեռատարիքային կազմում, օրինակ՝ 20-24 տարեկան տղամարդկանց թիվը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ 2018 թ. համեմատ նվազել է 11.8 հազարով, իսկ 25-29 տարեկան տղամարդկանցը՝ 21.7 հազարով, միասին՝ 33.5 հազար նվազում 20-29 տարեկան տղամարդկանց շրջանում [«ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021» 25-26, 28]:

2021 թ. հունվար-նոյեմբերին գրանցվել են 0.4%-ով ավելի շատ մահվան դեպքեր, քան 2020 թ. հունվար-նոյեմբերին: Այստեղ ուշադրություն է պետք դարձնել նրան, որ կորոնավիրուսային համավարակը և պատերազմը ներառող 2020 թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածի ցուցանիշի մեջ ընդգրկված են 2021 թ. հունվար-մարտին գրանցված, բայց 44-օրյա պատերազմի ռազմական գործողություններով պայմանավորված մահերը: Սակայն 2021 թ. հունվար-նոյեմբերի տվյալների մեջ 237 դեպքը 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում զինվորական գործողությունների հետևանքով դեպքերն են, որոնց քաղաքացիական կացության գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-նոյեմբերին: Սա նույնիսկ պարզաբանված է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակման մեջ. «... 2020 թ. ցուցանիշները կվերանայվեն 2021 թ. տարեկան ցուցանիշների ամփոփման ժամանակ» [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-նոյեմբերին» 144]: Հաշվի առնելով պաշտոնական տվյալների այս շփոթը՝ համեմատության մեջ

¹ Վիճակագրական հրապարակման 120-րդ էջում ծանոթագրված է, որ 2021 թ. գրանցված 227 մահերը 2020 թ. պատերազմի հետևանքով դեպքերն են, որոնց քաղաքացիական կացության գրանցումները կատարվել են 2021 թ. ապրիլ-հոկտեմբերին, իսկ արտաքին պատճառներով մահերի 2020 թ. ցուցանիշները կվերանայվեն 2021 թ. տարեկան ցուցանիշների ամփոփման ժամանակ:

դիտարկենք նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. տվյալները ևս: 2021 թ. 11 ամիսների ընթացքում գրանցվել են 33587 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.7%, 2019 թ. համեմատ՝ +1.9%) և 31713 մահեր (+0.4%, 2019 թ. համեմատ՝ +33.3%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.4, իսկ մահացությանը՝ 11.7: Նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. 11-ամսյակի համեմատ 10.7%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն, ցավոք, 14.8%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը: Մահվան դեպքերի 16%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա 11 ամսվա համեմատ վիրուսը 93.5%-ով ավելի շատ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 5079 պաշտոնական դեպքերի՝ 2019 թ. նկատմամբ մահացության աճը կազմում է 2852 մարդ (12%): Բացի COVID-19-ի աղետալի հետևանքներից, 100%-ով ավելացել են ՄԻՎԿ-ով հարուցված դեպքերը: 10.5%-ով աճել է մեռելածինների թիվը: ՀՀ բնակչության բնական հավելածը 11 ամսում կազմել է 1874 մարդ, որը գերազանցում է 2020 թ. նախնական ցուցանիշին 6.1%-ով, սակայն զիջում է 2019 թ. համապատասխան թվին 79.6%-ով [նույն տեղում 143-145]: 2021 թ. նոյեմբերի 1-ին համավարակից մահվան դեպքերը հասել են 7678-ի, նոյեմբերի 7-ին՝ 8002-ի (6670+1332), նոյեմբերի 14-ին՝ 8393: Դպրոցներն ու բուհերը մեկ շաբաթ փակ էին, բայց աշխատում էին հանրային տրանսպորտը և զվարճանքի կենտրոնները, որտեղ մարդկանց խտությունը շատ մեծ է: Հավելյալ մահացության տվյալները և պաշտոնական պատճառները վերլուծելիս հնարավոր է եզրակացնել, որ համավարակով պայմանավորված մահվան դեպքերը մոտեցել են 10000-ի: Սակայն պաշտոնական վիճակագրությամբ ՀՀ-ում COVID-19-ի պատճառով մահերի թիվը հասել է 10000-ի սահմանագիծը 2022 թ. փետրվարի 25-ին, իսկ հաջորդ օրն արդեն կորոնավիրուսային հիվանդության հետևանքով (8413) և COVID-19-ի առկայությամբ այլ հիվանդության պատճառով (1603) մահվան դեպքերի ընդհանուր թիվը հասել է 10026-ի:

Ընդհանուր առմամբ՝ 2021 թ. գրանցվել են 36585 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +0.6%, 2019 թ. համեմատ՝ +1.5%) և 34658 մահեր (-4.2%, 2019 թ. համեմատ՝ +32.4%): Ծնելիության գործակիցը կազմել է 12.4, իսկ մահացությանը՝ 11.7: Մահվան դեպքերի 15.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ վիրուսը 53.7%-ով ավելի շատ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 5450 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2019 թ. նկատմամբ մահացության աճը կազմում է 3022 մարդ կամ 11.54%: 2020 թ. համեմատ 71.4%-ով ավելացել են նաև ՄԻՎԿ-ով հարուցված դեպքերը, ինչպես նաև 10.2%-ով աճել է մեռելածինների թիվը: 2021 թ. ցուցանիշների մեջ ներառված են 2020 թ. պատերազմում զոհված, սակայն 2021 թ. ապրիլ-դեկտեմբերին գրանցված 250 մահվան դեպքերը. «Սույն տվյալների վերջնականացումից հետո դրանք կներառվեն 2020թ. մահերի ցուցանիշում, հետևաբար 2020-2021թթ. ժողովրդագրական ամփոփ և կառուցվածքային ցուցանիշները կենթարկվեն առավել ամբողջական վերանայման» [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին» 157]:

ՀՀ բնակչության բնական հավելածը կազմել է 1927 մարդ, որը զիջում է 2019 թ. համապատասխան թվին 80.4%-ով: Ինչքան էլ որ պաշտոնական հրապարակման մեջ ահադդորդ ձևով նշված է, թե բնական հավելածը 10.5 անգամ գերազանցել է 2020 թ. ցուցանիշին, նկատենք մի ցավալի փաստ. 2020 թ. նախնական +183 տվյալը, փաստորեն, հենց վերը նշված ծանոթագրությամբ (250 նույնականացված աճյուններ 2021 թ. ցուցանիշի ներքո) վերահաշվարկվելու և դառնալու է -67: Այսպիսով՝ այն, որ դեռ մեկ տարի առաջ պնդում էինք, թե 2020 թ. ՀՀ բնակչության բնական աճը բացասական է եղել, արդեն փաստվում է պաշտոնական վիճակագրության հիման վրա հաշվարկով: Բացի այդ, 2021 թ. հունվարին, ապրիլին, նոյեմբերին ու դեկտեմբերին մահեր ավելի շատ են գրանցվել, քան ծնունդներ: Սահմնկեցուցիչ է 2021 թ. նոյեմբերի վիճակագրությունը՝ 3305 ծնունդ և 4577 մահ, հետևաբար բնական

Նվազումը՝ -1272: Այստեղ զգալի է COVID-19-ի ազդեցությունը՝ հակառակորդային մահվան 1326 դեպքերով: Այդ ցուցանիշով երկրորդ տեղում հոկտեմբերն է՝ 795 մահ, իսկ երրորդ հորիզոնականում՝ ապրիլը՝ 774 դեպք: Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մահերը գերազանցել են ծնունդներին: 2019 և 2020 թթ. համեմատ ինքնասպանություններն աճել են համապատասխանաբար 24.8 և 4.4 %-ով: Նախահամավարակային և նախապատերազմական 2019 թ. համեմատ 10.3%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն, ցավոք, 14.3%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը [Նույն տեղում 156-158]:

2020 թ. ՀՀ բնակչության բնական նվազման համայնապատկերում ուշագրավ է հարևան պետությունների հետ համեմատությունը, ըստ այդմ՝ Իրանում, Թուրքիայում և Ադրբեջանում գրանցվել է բնական աճ՝ համապատասխանաբար +665000, +460000 և +50924, իսկ Վրաստանում՝ -4017 բնական նվազում: Արցախում +130 հավելածի մեջ ներառված են նաև ՀՀ-ում գրանցված արցախյան հաշվառմամբ ընտանիքների ծնունդները: Ի դեպ, թե՛ ՀՀ-ում, թե՛ Ադրբեջանում և թե՛ Վրաստանում գրանցվել են վերջին 50 տարվա ընթացքում մահացության ամենաբարձր գործակիցները 1000 բնակչի հաշվով՝ համապատասխանաբար 11.9, 7.6 և 13.6: Թուրքիայում և Իրանում էլ գրանցվել են ծնելիության՝ երբևէ ամենացածր գործակիցները՝ համապատասխանաբար 13.3 և 13.6:

2021 թ. ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի գրանցումների հաշվեկշիռը կազմել է -43874, ընդ որում՝ ՀՀ փաստաթղթերով (ՀՀ քաղաքացիներ կամ կացության փաստաթղթերով)՝ -73571 [Նույն տեղում, 163]: Սրանք, ըստ էության, ուղևորաշրջանառության ցուցանիշներն են, իսկ միգրացիոն մնացորդը պաշտոնական նախնական գնահատմամբ -4200 է, ինչը չի հաստատվում Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրության դաշնային ծառայության՝ դեռևս դեկտեմբերի վերջին հրապարակած ՌԴ սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ ընթացիկ վիճակագրությամբ, որի համաձայն՝ 2021 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ-ՌԴ միգրացիոն հաշվեկշիռը ՀՀ-ի համար կազմել է -35318: Միայն սեպտեմբեր-հոկտեմբերին հաշվեկշիռը եղել է -9848: ՀՀ-ն ՌԴ միգրացիոն հաշվեկշիռում զիջում է միայն Տաջիկստանին (+71938), Ուկրաինային (+49675) և Ղազախստանին (+36912)՝ առաջ անցնելով Դրոգստանից (+31531) և Ուզբեկստանից (+26715) և զբաղեցնելով առաջին տեղը բնակչության թվաքանակի հարաբերակցությամբ [«Социально-экономическое положение России, январь-ноябрь 2021 года» 246]: 2021 թ. ՀՀ կացության կարգավիճակ են ստացել 3813 անձինք, այդ թվում՝ Հնդկաստանի 1017, ՌԴ 766 և Իրանի 494 քաղաքացիներ: ՀՀ բնակավայրերի հասցեներով կատարված բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառումների ցուցանիշները Սյունիքի մարզում կազմել են -1387, Տավուշում՝ -628, Վայոց ձորում՝ -589, Գեղարքունիքում՝ -477, Շիրակում՝ -415, Լոռում՝ -118 [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին» 162, 165]:

2022 թ. հունվարին գրանցվել են 2868 ծնունդներ (Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ +1.9%, 2020 թ. համեմատ՝ +4.3%) և 2840 մահեր (-5.8%, սակայն 2020 թ. համեմատ՝ +7%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.4, իսկ մահացությանը՝ 11.3: Մահվան դեպքերի 4.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվարի համեմատ վիրուսը 2.5 անգամ ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 134 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2020 թ. հունվարի նկատմամբ մահացության աճը կազմում է 51 մարդ կամ 1.92%: Բացի COVID-19-ի հետևանքներից, 33.3%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային հիվանդություններից և 10.2%-ով էլ՝ մարսողական օրգանների հիվանդություններից հարուցված դեպքերը: 2021 թ. նկատմամբ 16.7%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 30.4%-ով: ՀՀ բնակչության բնական աճը հունվարին կազմել է 28 մարդ, որը 2021 թ. հունվարի վերահաշվարկված -199 ցուցանիշից

հետո փոքր-ինչ դրական միտում է, սակայն զիջում է 2020 թ. համապատասխան թվին 70.8%-ով: Հատկանշական է, որ 57.1%-ով աճել են մինչև 4 տարեկան երեխաների մահվան դեպքերը: Նախահամավարակային և նախապատերազմական 2020 թ. հունվարի համեմատ 10.8%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 20.5%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվարի համեմատ 1.4%-ով նվազել են ամուսնությունները, և 37.4%-ով էլ աճել են ամուսնալուծությունները [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվարին» 116-117]:

Ժողովրդագրական իրավիճակը ավելի վատթար է փետրվարին: 2022 թ. հունվար-փետրվարին գրանցվել են 5344 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -3.4%, 2020 թ. համեմատ՝ +0.9%) և 6030 մահեր (+11%, 2020 թ. համեմատ՝ +18.5%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.2, իսկ մահացությանը՝ 12.6: Մահվան դեպքերի 7.7%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ վիրուսը 5.1%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով մահվան 465 պաշտոնական դեպքերի՝ նախահամավարակային 2020 թ. հունվար-փետրվարի նկատմամբ մահացության աճը 476 մարդ է կամ 9.35%: Բացի COVID-19-ից, 2.9%-ով ավելացել են նորագոյացություններից, 8%-ով՝ վարակիչ և մակաբուծային հիվանդություններից, 13.3%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 41.4%-ով՝ շնչառական օրգանների, 5.3%-ով՝ մարսողական օրգանների, 5.8%-ով էլ՝ այլ հիվանդություններից հարուցված դեպքերը: 2021 թ. նկատմամբ 28.4%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 18.4%-ով: ՀՀ բնակչության բնական նվազումը հունվար-փետրվարին կազմել է -686 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-փետրվարյան վերագնահատված ցուցանիշը +102 էր, իսկ 2020 թ.՝ +205: Նախահամավարակային և նախապատերազմական 2020 թ. հունվար-փետրվարի համեմատ 6.2%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 25.9%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 2021 թ. հունվարի համեմատ 8.5%-ով նվազել են ամուսնությունները, 27.8%-ով աճել են ամուսնալուծությունները [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-փետրվարին» 129-130]:

2022 թ. հունվար-մարտին գրանցվել են 8098 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -6%, 2020 թ. համեմատ՝ +8.2%) և 8707 մահեր (+5.3%, 2020 թ. համեմատ՝ +18%): Ծնելիության գործակիցը կազմել է 11.1, իսկ մահացությանը՝ 11.9: Մահվան դեպքերի 7.6%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ վիրուսը 26.4%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 657 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մարտի նկատմամբ մահացության աճը կազմում է 673 մարդ կամ 9.12%: Բացի COVID-19-ի հետևանքներից՝ 16.2%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 10.4%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 37.7%-ով՝ շնչառական օրգանների, 0.9%-ով էլ՝ այլ հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 22.6%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 10.3%-ով: ՀՀ բնակչության բնական նվազումը հունվար-մարտին կազմել է -609 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-մարտյան նախագնահատված ցուցանիշը +351 էր, իսկ 2020 թ.՝ +106: Մահվան դեպքերը գերազանցել են ծնունդներին Երևանում, Լոռիում, Շիրակում, Տավուշում, Գեղարքունիքում, Սյունիքում և Վայոց ձորում: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-մարտի համեմատ 12.7%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 27.8%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-մարտի համեմատ 8.8%-ով նվազել են ամուսնությունները, և 20.5%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: Վարչական հաշվառման անցնելու և դուրս գալու հաշվեկշիռը բացասական է եղել Սյունիքում, Տավուշում, Գեղարքունիքում, Վայոց ձորում և Շիրակում [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մարտին» 184-187]:

2022 թ. հունվար-ապրիլին գրանցվել են 10665 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -7.3%, 2020 թ. համեմատ՝ +4.8%) և 10700 մահեր (-7.3%, սակայն 2020 թ. համեմատ՝ +12.2%): Ծնելիության գործակիցը կազմել է 11, իսկ մահացությանը՝ նույնպես 11: Մահվան դեպքերի 6.3%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ վիրուսը 59.5%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 674 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-ապրիլի նկատմամբ մահացության աճը կազմում է 493 մարդ կամ 5.17%: Բացի COVID-19-ի հետևանքներից՝ 16.3%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 2.1%-ով՝ արյան շրջանառության համակարգի, 17%-ով՝ շնչառական օրգանների հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 20.7%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 0.8%-ով: ՀՀ բնակչության բնական նվազումը հունվար-ապրիլին կազմել է -35 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-ապրիլյան վերազնահատված ցուցանիշը -127 էր, իսկ 2020 թ.՝ +645: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-ապրիլի համեմատ 41%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 41.7%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-ապրիլի համեմատ 5.6%-ով նվազել են ամուսնությունները, 15%-ով էլ՝ աճել ամուսնալուծությունները [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-ապրիլին» 116-117]:

Միտումները շարունակվել են մայիսին: 2022 թ. հունվար-մայիսին գրանցվել են 13581 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -5.4%, 2020 թ. համեմատ՝ +6.1%) և 12800 մահեր (-9.5%, 2020 թ. համեմատ՝ +10%): Ծնելիության գործակիցը կազմել է 13.9, իսկ մահացությանը՝ 13.1: Մահվան դեպքերի 5.3%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-մայիսի համեմատ վիրուսը 67.3%-ով ավելի քիչ կյանքեր է խլել [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մայիսին» 162-163]: Առանց COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 682 պաշտոնական դեպքերի՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ մահացության աճը կազմում է 482 մարդ կամ 4.14%: 2020 թ. հուլիսի 6-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն 2020 թ. հունվար-մայիսի համար հրապարակել էր COVID-19-ի պատճառով հարուցված մահվան 105 դեպք՝ ծանոթագրելով, որ ըստ ՀՀ առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տրամադրած տեղեկատվության՝ COVID-19 հիվանդությունից մահվան դեպքերը կազմել են 139 [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-մայիսին» 144]: 2021 թ. փետրվարի 5-ին հրապարակված ամփոփ վիճակագրության մեջ ապրիլ և մայիս ամիսների համար նշված են համապատասխանաբար 24 և 82 թվերը՝ ըստ քաղաքացիական կացության մահվան մասին ակտերի գրանցումների [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին» 151]: Ստացվում է, որ ամփոփ տվյալները ներկայացնում են վիրուսի պատճառով մահվան 106 դեպք: Այդուհանդերձ, մեկ տարի առաջ հրապարակվել էր 118 դեպքերի մասին: Նկատի ունենալով այս ցուցանիշը՝ COVID-19-ի պատճառով մահացությունը 2022 թ. համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ աճել է 5.78 անգամ: Իսկ եթե ընդհանրապես հանում ենք COVID-19-ից մահերի վիճակագրությունը թե՛ 2020 և թե՛ 2022 թթ. պարագայում, 2020 թ. հունվար-մայիսի նկատմամբ մահացության աճը կազմում է 600 մարդ կամ 5.21%:

Այս տարի հակառեկորդային է փետրվարին մահացածների թվաքանակը՝ 3239 մարդ (30.6%-ով ավելին, քան նախահամավարակային 2019 թ. փետրվարին), և միայն այդ ամիս բնակչության բնական նվազումը կազմել է -763: Իրավիճակը փոքր-ինչ շտկել և բնակչության բնական աճը դրական է դարձրել մայիս ամսվա վիճակագրությունը՝ 2916 ծննդյան և 2100 մահվան դեպքեր: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ և մայիս ամիսների համեմատ: ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-մայիսին կազմել է +781 մարդ, մինչդեռ

2021 թ. հունվար-մայիսյան նախագնահատված ցուցանիշը +127 էր, իսկ 2020 թ.՝ +1163: 15.6%-ով ավելացել են վարակիչ և մակաբուծային, 12.7%-ով՝ շնչառական օրգանների, 0.4%-ով՝ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 12.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, սակայն 2020 թ. համեմատ աճել է 10.2%-ով: Համավարակի մեկնարկային և նախապատերազմական 2020 թ. հունվար-մայիսի համեմատ 55%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն 52.7%-ով էլ աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-մայիսի համեմատ 3.8%-ով նվազել են ամուսնությունները, և 12.7%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.5 ամուսնության հաշվով գրանցվել է 1 ամուսնալուծության դեպք [«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-մայիսին» 162-163]:

Հավելենք, որ ՀՀ մշտական բնակչության թիվը ապրիլի 1-ի դրությամբ՝ 2011 թ. մարդահամարի տվյալների հաշվարկային հիմքով: Ըստ այդմ՝ ՀՀ մշտական բնակչությունը՝ 2.9616 մլն է, որից քաղաքային՝ 1.8914 մլն (այդ թվում՝ Երևանում՝ 1.0932 մլն), գյուղական՝ 1.0702 մլն [«ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թ. ապրիլի 1-ի դրությամբ» 3]:

Քննարկված ցուցանիշները լիովին տեղավորվում են ՀՀ ժողովրդագրական անցման ներկա փուլին բնորոշ միտումների մեջ: Սա այն դեպքում, երբ վիճակագրորեն գնահատված չէ COVID-19-ի երկրորդային ազդեցությունը հիվանդությունը հաղթահարածների վերարտադրողական ֆունկցիայի վրա: Նույնը պետք է նշել պատերազմում վիրավորված զինծառայողների պարագայում:

Եզրակացություն

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք եզրակացության, որ ժողովրդագրական արդի գործընթացները բացատրվում են ժողովրդագրական ճգնաժամի համատեքստում: Ժողովրդագրական անցման արդի փուլում 2020-2022 թթ. առանձին ամիսներին բնակչության բնական աճն անցել է ժողովրդագրական «ձմեռվա» փուլ, այսինքն՝ վերածվել է բնակչության բնական նվազման: Երկարաժամկետ տեսանկյունից արդի միտումները տանում են բնակչության սեղմված վերատադրության՝ ծնունդների թիվը կայուն կերպով զիջելու է մահվան դեպքերին: Այս միտումները պայմանավորված են հետխորհրդային առաջին տարիներին պտղաբերության ընդհանուր գործակցի նվազմամբ և ցածր ցուցանիշի շարունակական պահպանմամբ, սակայն 2020 թ. Արցախյան պատերազմը և COVID-19 համավարակն ուղղակիորեն և անուղղակիորեն մեծապես ազդել են ժողովրդագրական ներկա իրավիճակի վրա՝ սահմանափակելով բնակչության բնական աճի հնարավորությունները և որոշ ամիսների մղել բնական նվազման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-հունիսին». Ստեփանակերտ, 2021: http://stat-nkr.am/files/publications/2021/Doklad_2021_hunvar_hunis/soc_6%20amis.pdf
2. «Հայաստանը թվերով, 2021». Երևան, 2021:

¹ Մշտական բնակչության մեջ նշվում են նաև ժամանակավոր բացակայողները: Մշտական բնակչության հաշվարկի համար միգրացիայի տվյալները վերագնահատվում են նախորդ տարվա՝ տևային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության ամփոփ տվյալներով՝ հաշվի առնելով, որ հաշվառման գործընթացը կախված է քաղաքացիների կամքից: Վերագնահատված ցուցանիշներում ներգաղթյալ են հաշվվում բնակություն հաստատելու նպատակով ՀՀ ժամանածները, արտագաղթած՝ արտերկրում բնակվելու մեկնածները: Միգրացիայի մնացորդը հաշվարկվում է այդ ցուցանիշների տարբերությամբ:

3. «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021».
Երևան, 2021:
4. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին».
Երևան, 2021:
5. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-օգոստոսին».
Երևան, 2021:
6. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-մարտին».
Երևան, 2021:
7. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-հունիսին».
Երևան, 2021:
8. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-սեպտեմբերին».
Երևան, 2021:
9. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-հոկտեմբերին».
Երևան, 2021:
10. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-նոյեմբերին».
Երևան, 2022:
11. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-հուլիսին».
Երևան, 2021:
12. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-փետրվարին».
Երևան, 2021:
13. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվարին».
Երևան, 2021:
14. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-ապրիլին».
Երևան, 2021:
15. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-մայիսին».
Երևան, 2021:
16. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին».
Երևան, 2022:
17. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվարին».
Երևան, 2022:
18. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-փետրվարին».
Երևան, 2022:
19. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-մարտին».
Երևան, 2022:
20. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-ապրիլին».
Երևան, 2022:
21. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-մայիսին».
Երևան, 2022:
22. «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ».
Երևան, 2022:
23. Մայիսայան, Միքայել և ուրիշներ. «Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճը ժողովրդագրական անցման արդի փուլի համատեքստում. միտումներ և մարտահրավերներ».
Հայագիտության հարցեր, 2021, թիվ 1, էջ 131-154:
24. «Социально-экономическое положение России, январь-ноябрь 2021 года», Москва, 2022, <https://rosstat.gov.ru/storage/mediabank/osn-11-2021.pdf>.
25. Kirk, Dudley. "Demographic Transition Theory." *Population Studies*, vol. 50, no. 3, 1996, pp. 361–87, JSTOR, <http://www.jstor.org/stable/2174639>. Accessed 18 Jun. 2022.

WORKS CITED

1. «Arcakhi Hanrapetut'yan social-ntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-hunisin» [Socio-Economic Situation of Republic of Artsakh, January-June 2021], Stepanakert,

2021. http://stat-nkr.am/files/publications/2021/Doklad_2021_hunvar_hunis/soc_6%20amis.pdf
2. «Hayastany' t'verov, 2021», [Armenia in Figures, 2021] Yerevan, 2021.
 3. «Hayastani Hanrapetut'yan marzery' yev Yerevan qaghaqy' t'verov, 2021», [Marzes of the Republic of Armenia and Yerevan City in Figures, 2021] Yerevan, 2021.
 4. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2020 t'vakani hunvar-dektemberin» [Socio-Economic Situation of RA, January-December 2020], Yerevan, 2021.
 5. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-o'gostosin» [Socio-Economic Situation of RA, January-August 2021], Yerevan, 2021.
 6. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-martin» [Socio-Economic Situation of RA, January-March 2021], Yerevan, 2021.
 7. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-hunisin» [Socio-Economic Situation of RA, January-June 2021], Yerevan, 2021.
 8. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-septemberin» [Socio-Economic Situation of RA, January-September 2021], Yerevan, 2021.
 9. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-hoktemberin» [Socio-Economic Situation of RA, January-October 2021], Yerevan, 2021.
 10. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-noyemberin» [Socio-Economic Situation of RA, January-November 2021], Yerevan, 2022.
 11. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-hulisin» [Socio-Economic Situation of RA, January-July 2021], Yerevan, 2021.
 12. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-p'etrvarin» [Socio-Economic Situation of RA, January-February 2021], Yerevan, 2021.
 13. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvarin» [Socio-Economic Situation of RA, January 2021], Yerevan, 2021.
 14. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-aprilin» [Socio-Economic Situation of RA, January-April 2021], Yerevan, 2021.
 15. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-mayisin» [Socio-Economic Situation of RA, January-May 2021], Yerevan, 2021.
 16. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2021 t'vakani hunvar-dektemberin» [Socio-Economic Situation of RA, January-December 2021], Yerevan, 2022.
 17. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022 t'vakani hunvarin» [Socio-Economic Situation of RA, January 2022], Yerevan, 2022.
 18. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022 t'vakani hunvar-p'etrvarin» [Socio-Economic Situation of RA, January-February 2022], Yerevan, 2022.
 19. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022 t'vakani hunvar-martin» [Socio-Economic Situation of RA, January-March 2022], Yerevan, 2022.
 20. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022 t'vakani hunvar-aprilin» [Socio-Economic Situation of RA, January-April 2022], Yerevan, 2022.
 21. «Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022 t'vakani hunvar-mayisin» [Socio-Economic Situation of RA, January-May 2022], Yerevan, 2022.
 22. «HH mshtakan bnakchut'yan t'vaqanaky' 2022 t'vakani aprili 1-i drut'yamb» [Number of De Jure Population of the Republic of Armenia as of April 1, 2022], Yerevan, 2022.
 23. Malkhasyan Mikayel, Khachikyan Armen, Malkhasyan Ter Abraham qahana, Hayastani Hanrapetut'yan bnakchut'yan bnakan atchy' jhoghovrdagrakan ancman ardi p'uli hamateqstum. Mitumner yev martahraverner, «Hayagitut'yan harcer», 2021, t'iv 1, e'j

131-154 [Malkhasyan Mikayel, Khachikyan Armen, Malkhasyan Fr. Dr. Abraham, The Natural Population Change in the Republic of Armenia in the Context of the Current Stage of Demographic Transition: Trends and Challenges, *Armenological Issues*, 2021, vol. 1, pp. 131-154].

24. «Social'no-jekonomicheskoe polozhenie Rossii, janvar'-nojabr' 2021 goda», Moskva [Socio-Economic Situation of Russia, January-November 2021, Moscow], 2022. <https://rosstat.gov.ru/storage/mediabank/osn-11-2021.pdf>.

THE CURRENT DEMOGRAPHIC SITUATION IN ARMENIA (IN CONDITIONS OF DEMOGRAPHIC CONSEQUENCES OF COVID-19 PANDEMIC AND THE 2020 ARTSAKH WAR)

MIKAYEL MALKHASYAN

*Yerevan State University, Faculty of History,
Chair of History of Armenia, Ph.D. in History, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to investigate the main characteristics of the current demographic situation in the Republic of Armenia in the conditions of the demographic consequences of the COVID-19 pandemic and the 2020 Artsakh war. This is important not only for description of the current stage of the demographic transition, but also for the prediction of future trends.

To achieve this goal, a task was set to present and analyze the data characterizing population natural growth: birth rate and mortality rates, as well as various factors influencing them. Significance was attached to the presentation of the marriage-divorce ratio as a precondition for the analysis of a factor directly affecting the birth rate. From the perspective of mortality analysis, particular attention was paid to the demographic consequences of the COVID-19 pandemic and the 2020 Artsakh war.

Guided by the methods of demographic macro-analysis, and historical-comparative analysis, the research presents the main data characterizing the current demographic situation, their impact on the tendencies of increasing or decreasing the population of the Republic of Armenia. The research concludes that in the context of the demographic crisis the current demographic processes are turning into demographic "winter" – the natural decrease of the population.

Keywords: *the current stage of demographic transition, permanent population of the RA, natural population change, total fertility rate, crude birth rate, population reproduction, demographic policies, COVID-19 pandemic, the 2020 Artsakh War.*

ТЕКУЩАЯ ДЕМОГРАФИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ (В УСЛОВИЯХ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ ПАНДЕМИИ COVID-19 И АРЦАХСКОЙ ВОЙНЫ 2020 ГОДА)

МИКАЭЛ МАЛХАСЯН

*преподаватель кафедры истории армянского народа факультета
истории Ереванского государственного университета,
кандидат исторических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение основных характеристик современной демографической ситуации в Республике Армения в условиях демографических последствий пандемии COVID-19 и Арцахской войны 2020 г. Это позволяет не только описать текущий этап демографического перехода, но и предсказать будущие тенденции.

Для достижения данной цели мы поставили задачу представить и проанализировать данные, характеризующие естественный прирост – коэффициенты рождаемости и смертности, а также различные факторы, влияющие на них. Важное значение придавалось представлению соотношения брачности и разводимости как предпосылки для анализа фактора, непосредственно влияющего на рождаемость. С точки зрения анализа смертности особое внимание было уделено демографическим последствиям пандемии COVID-19 и Арцахской войны 2020 г.

Руководствуясь методами демографического макроанализа и историко-сравнительного анализа, мы представили основные данные, характеризующие текущую демографическую ситуацию, их влияние на тенденции увеличения или уменьшения численности населения Республики Армения. В итоге мы пришли к выводу о том, что в условиях демографического кризиса современные демографические процессы переходят в этап демографической «зимы», то есть в состояние естественной убыли населения.

Ключевые слова: *текущий этап демографического перехода, постоянное население РА, естественный прирост населения, суммарный коэффициент рождаемости, общий коэффициент рождаемости, воспроизводство населения, демографическая политика, пандемия COVID-19, Арцахская война 2020 г.*



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ
ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ***

ՅՏԴ 342.4

DOI: 10.52063/25792652-2022.2.13-78

ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՅ ՎԵՏՈՒՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱՊԵՄԻԱՅԻ ՄԱՍՎԻՐԱՆՈՒՄ,
ք. ԵՐԼԱՆ, Հայաստանի Հանրապետություն
arpinearakelyan.h@gmail.com

Սույն հոդվածով փորձ է արվել բացահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավաստեղծ գործունեության նկատմամբ: Աշխատանքի հիմնական նպատակն է վեր հանել մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների ներդրման գործում խորհրդարաններին վերապահված յուրահատուկ դերը: Ասվածը մեր կողմից դիտարկվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի համապատասխան բանաձևի և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականի լույսի ներքո:

Աշխատանքի առաջին մասում անդրադարձ է կատարվել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի օրենքների նախագծերի և մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշների ներդաշնակության և համապատասխանության ստուգման և ապահովման առնչությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող խորհրդարանական վերահսկողությանը վերաբերող հարցերին, իսկ երկրորդ մասում՝ խորհրդարանական մշտադիտարկմանը:

Աշխատանքի խնդիրը ԳՅ-ում խորհրդարանական վերահսկողության և խորհրդարանական մշտադիտարկման համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի ու դրանց առնչությամբ առկա իրավական գործիքների կատարելագործման ուղիների վերհանումն է:

Սույն հոդվածի շրջանակներում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներ, ինչպիսիք են՝ իրավահամեմատական, ձևական-իրավաբանական և համակարգային վերլուծության մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ ԳՅ-ում գործող խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը թերի է օրենքների նախագծերի՝ մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին համապատասխանության ստուգման՝ որպես պարտադիր գործառույթի իրականացման առումով և առաջարկվել է ԳՅ Ազգային ժողովում

* Հոդվածը ներկայացվել է 12.06.2022թ., գրախոսվել՝ 06.07.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

գործող մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների վերանայման գործընթացում այս հարցն արժանացնել հստակ կարգավորման:

Յիմնաբառեր՝ Եվրոպական դատարանի վճիռներ, խորհրդարանական վերահսկողություն, խորհրդարանական մշտադիտարկում, ՀՀ Ազգային ժողով, ՄԻԵԴ վճիռների ազդեցություն, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների իմպլեմենտացիա, եվրոպական դատարանի վճիռների կատարում:

Նախաբան

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա) վավերացմամբ յուրաքանչյուր պետություն ստանձնում է ներպետական իրավական համակարգը մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու և ներդաշնակեցնելու պարտավորությունը, ինչը, ի թիվս այլնի, դրսևորվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) վճիռների պատշաճ և ամբողջական կատարմամբ:

Ասվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպական դատարանի վճիռները կոնկրետ զանգատի հիման վրա գործը լուծող վերջնական դատական ակտ լինելուց բացի հանդիսանում են Եվրոպական կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններ և իրենց գիտագործնական ու գիտատեսական նշանակությամբ էապես ազդում են իրավունքի զարգացման վրա:

Իրավունքի զարգացման կարևորագույն դրսևորումներից է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված իրավական արժեքների և իրավաբանական հայեցակարգերի հետևողական իմպլեմենտացիան ներպետական իրավական համակարգում, ինչը, կախված պետության իրավական համակարգի առանձնահատկություններից, յուրաքանչյուր դեպքում իրականացվում է տարբեր կերպ և տարբեր ընթացակարգերով: Այնուամենայնիվ, մի բան ընդհանուր է՝ դա խորհրդարանների՝ ընդգծված կարևոր դերակատարումն է իրավաստեղծ գործունեության իրականացման շրջանակներում ներպետական օրենսդրության ու Եվրոպական դատարանի վճիռներում մեկնաբանվող կոնվենցիոն չափանիշների համապատասխանության ապահովման գործում (Wittling-Vogel 62-63):

Վերը նշված համատեքստում խորհրդարանների դերը դիտարկվում է երկու տեսանկյունից՝

- խորհրդարանական վերահսկողություն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի օրենքների նախագծերի և մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշների ներդաշնակության ու համապատասխանության ստուգման և ապահովման առնչությամբ,
- խորհրդարանական մշտադիտարկում Եվրոպական դատարանի վճիռների կատարման շրջանակներում ձեռնարկվող ընդհանուր միջոցառումների առնչությամբ:

Խորհրդարանական վերահսկողություն

Մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշների ներդրման հարցում խորհրդարանների պատասխանատվության նման ոլորտային տարանջատումը բխում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականից, որով կոչ է արվում անդամ պետություններն իրենց իրավական համակարգում Եվրոպական կոնվենցիան կյանքի կոչել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան (Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե): Սրա համար հատկապես անհրաժեշտ է, որ պետությունները գործուն քայլեր ձեռնարկեն ապահովելու համար, որ ինչպես օրենքները, այնպես էլ իրավակիրառ արակտիկան համապատասխանեն Կոնվենցիային: Ավելին՝ Նախարարների կոմիտեի հանձնարարականի իմաստով վերոնշյալ մեխանիզմի միջոցով պետք է հնարավոր

լինի ստուգել ոչ միայն օրենքի նախագծերի, այլ նաև գործող օրենքների համապատասխանությունը Եվրոպական կոնվենցիայով ամրագրված չափանիշներին, որպիսի գործառնությունների իրականացման պատասխանատուն, որպես կանոն, համարվում են խորհրդարանները:

Հանձնարարականի բովանդակությունը հետագայում էլ ավելի հստակեցվեց ու մասնավորեցվեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևով, համաձայն որի՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման և մշտադիտարկման ապահովման նպատակով ազգային խորհրդարանները պետք է հիմնեն համապատասխան խորհրդարանական կառույցներ, ինչպես օրինակ՝ մարդու իրավունքների հանձնաժողովներ կամ այլ համանման կառույցներ, որոնց լիազորությունները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 1823 (2011) բանաձև): Այս բանաձևի ընդունումից հետո տարբեր պետությունների օրենսդիր մարմինների կողմից մշակվեցին տարաբնույթ գործիքներ Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացի մշտադիտարկման նպատակով: Դրանց շարքում հիշատակման արժանի է Գերմանիայի օրինակը, որտեղ կառավարությունը Եվրոպական դատարանի կողմից հրապարակված վճիռների և դրանց կատարման շրջանակներում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տարեկան հաղորդումներով հանդես է գալիս խորհրդարանի առջև: Սա հնարավորություն է տալիս խորհրդարանին ոչ միայն անմիջականորեն ներգրավվել Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացին, այլ նաև ըստ անհրաժեշտության արձանագրել օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու անհրաժեշտությունը Եվրոպական կոնվենցիայի ամբողջական իմպլեմենտացիա ապահովելու և ինդրո առարկա հարցի առնչությամբ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ երաշխավորելու նպատակով:

Անդրադառնալով օրենսդիր մարմնի կանխարգելիչ դերակատարությանը՝ հարկ է նշել 2015 թվականի Բոլոնսեյի հռչակագրի դրույթները, որոնցով հատուկ ամրագրում ստացավ Եվրոպական կոնվենցիայի իմպլեմենտացման գործընթացում ազգային օրենսդիր մարմինների ներգրավվածությունը: Մասնավորապես Բոլոնսեյի հռչակագրով կողմերը համաձայնել են, որ հետայսու անհրաժեշտ է՝

- բարձրացնել խորհրդարանի ներկայացուցիչների իրազեկվածությունը Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ, ինչը ուղղակիորեն կարող է ազդել պատգամավորների ամենօրյա գործունեության արդյունավետության բարձրացման վրա,

- ձեռնարկել համապատասխան գործողություններ Կոնվենցիային ու Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին օրենքների նախագծերի, գործող օրենքների և իրավակիրառ պրակտիկայի համապատասխանությունը ստուգող գործիքակազմի ներդրման համար,

- խթանել ազգային խորհրդարանների ներգրավվածությունը վճիռների կատարման գործընթացում, այդ թվում նաև՝ կատարման փուլում գտվող վճիռներով բարձրացված իրավական հարցերին անմիջականորեն առնչվող օրենսդրական թերի կամ ոչ լիարժեք կարգավորումների վերաբերյալ խորհրդարաններին ծանուցելով («Բոլոնսեյի հռչակագիր»):

Վերոշարադրյալով պայմանավորված՝ անհնար է թերագնահատել մեկից ավելի ուղղություններով Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունն իրավաստեղծ մարմինների՝ որպես ուղղակի ժողովրդավարական լեգիտիմության կրող գործունեության ոլորտի նկատմամբ:

Դիտարկենք վերոշարադրյալը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինակով: ՀՀ Ազգային ժողովում Մարդու և քաղաքացու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտներին առնչվող հարցերով մշտական հանձնաժողովներ՝ ձևավորվել են դեռ երրորդ գումարման Ազգային ժողովում և գոյություն ունեն այսօր ևս: Ուսումնասիրելով հանձնաժողովների գործունեության ոլորտները՝ նկատելի է դառնում, որ խնդրո առարկա ժամանակահատվածի առաջնահերթություններով ու մարտահրավերներով պայմանավորված հանձնաժողովների գործունեության ոլորտները շատ հաճախ փոփոխվել են, երբեմն ներառելով մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող նոր ոլորտներ ու նոր հարցեր, ինչպիսիք են օրինակ՝ երեխայի իրավունքներ, կրոն, գեղարվեստի հարցեր, ազգային փոքրամասնություններ, տեղեկատվություն, կուսակցություններ, հասարակական միավորումներ, կրոն, կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, փաստաբանություն, նոտարիատ, արհեստակցական միություններ, հասարակական կազմակերպություններ: Այսօր գործող ութերորդ գումարման Ազգային ժողովում մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտն ընդգրկում է հետևյալ հարցերի շրջանակը և այդ ոլորտները կարգավորող օրենքները՝

- մարդու իրավունքների պաշտպանություն,
- երեխայի իրավունքներ,
- կրոն,
- կանանց և տղամարդկանց իրավահավասարություն,
- ազգային փոքրամասնություններ,
- փաստաբանություն,
- հասարակական կազմակերպություններ և այդ ոլորտները կարգավորող օրենքներ²:

Թեև մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտը մեծապես ընդգրկում է Եվրոպական կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների շրջանակը, այնուամենայնիվ գործունեության ոլորտների շարքում բացակայում է ուղղակի ամրագրումն առ այն, որ հանձնաժողովը պատասխանատու է նաև խնդրո առարկա ոլորտներում օրենքների նախագծերի ու մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների համապատասխանության ապահովման համար: Վերը նշվածի լույսի ներքո մարդու իրավունքների հանձնաժողովը Խորհրդարանական վեհաժողովի բանաձևի իմաստով չի համարվում Խորհրդարանական վերահսկողության արդյունավետ գործիքակազմ: Են խորհրդարանական վեհաժողովի բացատրական հուշագրի համաձայն՝ որպես այդպիսին համարվելու համար հանձնաժողովի իրավասությունից հստակ պետք է բխեն հետևյալ լիազորությունները՝

- օրենքների նախագծերի՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին և այս ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանության համակարգային ստուգում,
- Եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացի պարբերական մշտադիտարկում,

¹ Հանձնաժողովը երբեմն անվանվել է պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով (ԱԺ երրորդ գումարում), երբեմն՝ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով (ԱԺ չորրորդ գումարում, ԱԺ հինգերորդ գումարում, ԱԺ յոթերորդ գումարում, ԱԺ ութերորդ գումարում), իսկ վեցերորդ գումարման Ազգային ժողովում՝ Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողով:

² Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 06.08.2021թ. «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» որոշում:

• օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու և օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու հնարավորություն (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, *PPSD(2014)22 բացատրական հուշագիր*):

Ի համեմատություն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի մշտական հանձնաժողովի՝ զուգահեռաբար դիտարկենք նաև Եվրոպական ինտեգրման հարցերով հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները՝ վեր հանելու վերջինիս լիազորությունները խորհրդարանական վերահսկողության շրջանակներում:

ՀՀ Ազգային ժողովում Եվրոպական ինտեգրման հարցերով հանձնաժողով առաջին անգամ ձևավորվել է ժամանակավոր հանձնաժողովի կարգավիճակով երրորդ գումարման Ազգային ժողովում: Գորրորդ (2007), հինգերորդ (2012) և վեցերորդ (2017) գումարման Ազգային ժողովում արդեն իսկ մշտական հանձնաժողովի կարգավիճակով գործող Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտն ընդգրկում էր Եվրոպական Միության և Եվրախորհրդի հետ կապերը, Հայաստանի Հանրապետության օրենքների և Եվրոպական օրենսդրության ներդաշնակեցումը և այդ ոլորտները կարգավորող օրենքները: Հանձնաժողովի գործունեության ոլորտի նման լայն ձևակերպումները թույլ են տալիս եզրակացնել, որ օրենքների նախագծերի՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ու Եվրոպական չափանիշներին (այդ թվում՝ Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումներին) համապատասխանության ստուգման առնչությամբ խորհրդարանական վերահսկողության իրականացման պարտականությունը վերապահված էր վերջինիս:

Ժամանակագրական առումով այս ընթացքը համընկնում է Եվրոպայի խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության սկզբնական փուլի հետ, երբ ներպետական օրենսդրության կատարելագործման առնչությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների բեռը բավականին մեծ էր և, միանշանակ, խորհրդարանական վերահսկողության նման կառուցակարգը կոչված էր նպաստելու ազգային իրավական համակարգի՝ առավել արագ կատարելագործմանը:

Այնուամենայնիվ, յոթերորդ և այժմ գործող ութերորդ գումարման Ազգային ժողովի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտն այլևս չի ընդգրկում Եվրոպայի խորհրդի հետ կապերը: Հանձնաժողովի գործունեության ոլորտներն են՝ Եվրոպական միության հետ կապերը, Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերը, Եվրոպական միության իրավական ակտերին Հայաստանի Հանրապետության օրենքների մոտարկումը և այդ ոլորտները կարգավորող օրենքները: Այս համատեքստում անհասկանալի է, թե ինչու Եվրոպայի խորհրդի՝ որպես ՀՀ անդամակցությամբ գործող միջազգային կառույցի հետ կապերի և հետևաբար նաև վերջինիս մարմինների, այդ թվում՝ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո ազգային օրենսդրական կարգավորումների կատարելագործման հարցերն այլևս դուրս են մնում հանձնաժողովի գործունեության ոլորտից:

«ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ *Մշտական հանձնաժողովները ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար*: Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է մշտական հանձնաժողովների լիազորությունները:

Փաստացի, ներպետական օրենսդրության ու մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական չափանիշների համապատասխանության ստուգումը չի ընդգրկվում ո՛չ մարդու իրավունքների և ո՛չ էլ Եվրոպական ինտեգրման

հանձնաժողովի գործունեության ոլորտներում: Միգուցե հնարավոր է առաջնորդվել այն կանխավարկածով, որ Եվրոպական կոնվենցիայի՝ որպես վավերացված միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության բաղկացուցիչ մասի պահանջներին ու մեկնաբանություններին օրենքների նախագծերի համապատասխանեցումը մշտապես ենթադրվում է իրավական նորմերի աստիճանակարգությունը սահմանող Սահմանադրական դրույթի պահանջի ուժով: Այդուամենայնիվ անհասկանալի է, թե ինչու Հայաստանի Հանրապետության օրենքների և Եվրոպական օրենսդրության ներդաշնակեցումը ժամանակին հանդիսանում էր Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի գործունեության ինքնուրույն ոլորտ, իսկ այսօր՝ ոչ: Ներպետական օրենսդրության կատարելագործումն ու մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը հետևողականորեն իրականացվող գործունեություն է, հատկապես ներկայիս հարափոփոխ իրականության պայմաններում, երբ նոր հասարակական հարաբերությունների առաջացմանն ու թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ակնկալվում է ոլորտային իրավական կարգավորումների առնչությամբ սկզբունքային մոտեցումների համընթաց զարգացում: Ինչպես իրավագիտորեն նշում է Գ. Դանիելյանը՝ «Իրավական կարգավորման շրջանակների ընդլայնումը մեծապես թելադրված է նաև միջազգային իրավաստեղծ զարգացումներով, մասնավորապես վերջին տասնամյակներին նկատվում է միջազգային իրավական չափանիշների ընդլայնման միտում, ինչն անխուսափելիորեն անդրադառնում է ազգային օրենսդրության վերանայման գործընթացների վրա» (Դանիելյան 7):

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում գործում են քննարկվող հարցի կապակցությամբ խորհրդարանական վերահսկողության իրականացման տարբեր մոդելներ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում գործող Մարդու իրավունքների միացյալ հանձնաժողովն առանձին և մասնագիտացված հանձնաժողով է, որը պատասխանատու է մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական չափանիշներին օրենքների նախագծերի համապատասխանության ապահովման ու Եվրոպական դատարանի վճիռների կատարման մշտադիտարկման համար:

Չեխիայում, Լեհաստանում և Ռուսիայում գործում են մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովներին առընթեր ենթահանձնաժողովներ, իսկ Գերմանիայում և Լիտվայում գործում է խորհրդարանական վերահսկողության հիբրիդային տարբերակը, որի շրջանակներում մեկից ավելի հանձնաժողովներ կամ ենթահանձնաժողովներ ad hoc հիմքով կազմավորվում և իրականացնում են իրենց գործառնությունները: Հատկապես հետաքրքրական է Գերմանիայի օրինակը: Գերմանիայի խորհրդարանի ստորին պալատում՝ Բունդեսթագում գործող մշտական հանձնաժողովներից երկուսն են առավելապես առնչվում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հարցերին: Դրանք են՝ Մարդու իրավունքների և մարդասիրական աջակցության հանձնաժողովը և Իրավական հարցերի հանձնաժողովը: Որպես կանոն Իրավական հարցերի հանձնաժողովը նախաձեռնում և ղեկավարում է բոլոր այն հարցերով քննարկումները, որոնք առնչվում են Արդարադատության նախարարության իրավասության ոլորտին: Մարդու իրավունքների հանձնաժողովը գործունեության առավել լայն շրջանակ ունի, որը, ի թիվս այլնի, ներառում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-Եվրոպական չափանիշներին օրենքների նախագծերի համապատասխանության ստուգումը:

Յուրաքանչյուր դեպքում հանձնաժողովների անդամ պատգամավորները կարող են դիմել խորհրդարանի իրավական հետազոտությունների ծառայության համար պատասխանատու ստորաբաժանմանը, որը անկախ փորձագիտական աջակցություն է ցուցաբերում խնդրո առարկա հարցի կապակցությամբ միջազգային-իրավական չափանիշների ու սկզբունքների կապակցությամբ: Բոլոր այն դեպքերում,

Երբ Գերմանիայի դեմ կայացված Եվրոպական դատարանի վճռի կատարումը ենթադրում է օրենսդրության բարեփոխում կամ նոր օրենքի ընդունում, հարցը ենթակա է քննարկման Իրավական հարցերի հանձնաժողովում: Հանձնաժողովի կողմից հրավիրվող նիստերի ժամանակ յուրաքանչյուր գործով պարտադիր քննարկման ենթակա են հետևյալ հարցերը. ինչու՞ է նման օրենսդրական փոփոխությունն անհրաժեշտ, արդյո՞ք այն համարվում է բավարար միջոց վճռով արձանագրված խախտումների վերացման համար և արդյո՞ք հաշվի են առնվել խնդրո առարկա հարցի կապակցությամբ առկա միջազգային-եվրոպական չափանիշները:

Բացի խորհրդարաններից, ներպետական իրավական իրավական համակարգում մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրումն ապահովող բազմաթիվ այլ կառուցակարգեր կան: Կան երկրներ, ինչպես օրինակ՝ Գերմանիան, որտեղ Եվրոպական դատարանում կառավարության/ պետության ներկայացուցիչը սերտորեն համագործակցում է խորհրդարանի հետ՝ այդպես էլ նպաստելով Եվրոպական դատարանի վճիռների կատարումից բխող օրենսդրական բարեփոխումների առավել արդյունավետ իրականացմանը:

Վերադառնալով Հայաստանի Հանրապետության օրինակի քննարկմանը՝ անդրադառնանք Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի ինստիտուտին՝ բացահայտելու վերջինիս իրավասության շրջանակն այս ոլորտում: Համաձայն Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի (այսուհետ՝ Ներկայացուցիչ) մասին օրենքի 9-րդ հոդվածի՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրման ոլորտում Ներկայացուցիչը կարող է իրավասու մարմիններին ներկայացնել մարդու իրավունքների միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ օրենսդրական առաջարկություններ, մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնել գրավոր կարծիք, ուսումնասիրել ոլորտի միջազգային փաստաթղթերը, նախադեպային իրավունքը, ինչպես նաև ոլորտի ներպետական պրակտիկան և անհրաժեշտության դեպքում իրականացնել ոլորտի բարելավման և մարդու իրավունքների միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ գործողություններ:

Վերը թվարկված լիազորությունների իրականացման արդյունքում Ներկայացուցչի կողմից ներկայացվող կարծիքները և գրավոր առաջարկները նպաստում են իրավական ակտերի նախագծերի կարգավորումների կատարելագործմանը և լավարկմանը: Այս առումով պետական մարմինների և Ներկայացուցչի փոխհարաբերությունների էլ ավելի խորացումն ու ընդլայնումը միայն ի նպաստ է ներպետական իրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների ներդրմանը: Ինչ վերաբերում է Ներկայացուցչի և խորհրդարանի փոխհարաբերություններին, ապա այս առնչությամբ Ներկայացուցչի մասին օրենքը առանձնահատուկ կարգավորումներ չի նախատեսում: Հայաստանի Հանրապետության համար Եվրոպայի խորհրդի 2023-2026թթ. գործողությունների ծրագրի նախագծով ակնկալվող վերջնարդյունքներից մեկը ներպետական իրավական համակարգում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների կիրարկման գործում ՀՀ խորհրդարանի դերի բարձրացումն է: Մեր կարծիքով՝ այս գործողության կատարման շրջանակներում հնարավոր է էականորեն ընդլայնել խորհրդարանի և Ներկայացուցչի փոխգործակցության շրջանակը՝ վերջինիս տալով հստակ իրավական կարգավորում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտներին և հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևի ու հուշագրի առաջարկ-հանձնարարականները՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է կատարելագործել մարդու

իրավունքների պաշտպանության ոլորտում Երոպական դատարանի վճիռներով արտահայտված չափորոշիչների ներդրման, վերջիններիս և ներպետական օրենսդրության միջև ներդաշնակության ապահովման առնչությամբ խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը: Այս գործընթացի մեկնարկային քայլը, մեր գնահատմամբ, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների վերանայումն է՝ ուղղակիորեն ամրագրելով, որ յուրաքանչյուրն իր իրավասության ոլորտում պատասխանատու է Եվրոպական չափորոշիչներին համապատասխան ՀՀ օրենսդրության զարգացման համար:

Խորհրդարանական մշտադիտարկում

Օրենսդիր մարմնի՝ որպես իր գործունեության ոլորտում Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ուղղակի կրողի դերակատարությունը հատկապես ընդգծվում է հետևյալ կատեգորիայի վճիռներով՝

- Երբ Դատարանը պահանջում է օրենսդիր մարմնից ընդունել իրավական կարգավորումներ՝ ապահովելով խնդրո առարկա հարաբերությունների կարգավորման առնչությամբ իրավական որոշակիություն,

- Երբ Եվրոպական դատարանը պահանջում է պետությունից իր կողմից սահմանված չափանիշներին համապատասխան հստակեցնել ներպետական իրավական կարգավորումները՝ դարձնելով դրանք կանխատեսելի և որոշակի, և ապահովել դրանց պատշաճ կիրառման նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողություն: Որպես կանոն, նման իրավիճակներ հանդիպում են հատկապես քրեական գործերի շրջանակներում, երբ մարդու իրավունքներին միջամտությունը և սահմանափակումներն առավել մեծ չափով են (ինչպես օրինակ՝ գաղտնի քննչական գործողություններ, ազատությունց զրկելու հետ կապված խափանման միջոցների կիրառում և այլն), ինչի հետևանքով իրավունքների խախտման հավանականությունն էլ համամասնորեն բարձր է,

- Երբ Դատարանն առաջարկում է ընդլայնել Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքի պաշտպանությանը նվիրված ներպետական իրավական կարգավորման գործողության շրջանակը՝ այսպիսով նպատակ հետապնդելով ապահովել անձի իրավունքների և հանրային շահերի միջև առավել հավասարակշռված պաշտպանություն: Որպես կանոն, այս գործերով ևս առաջին խումբ գործերի նմանությամբ ակնկալվում է դատական արդյունավետ վերահսկողության երաշխավորում նման հավասարակշռության և համաչափության պատշաճ գնահատման (Muller 182):

Քննարկված բոլոր իրավիճակները վերաբերում են Եվրոպական դատարանի կողմից խախտում արձանագրող վճիռի կատարան շրջանակներում կոնկրետ գործի շրջանակներում օրենսդիր մարմնի նախաձեռնողականությանն ու ներգրավվածությանը՝ որպես վճիռի ազդեցության դրսևորման եղանակ:

Թեև խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից գոյություն ունեցող կառուցակարգերը դեռևս կատարելագործման կարիք ունեն, անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ իրապարակված վճիռների կատարման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա ամենևին չի խանգարել ՀՀ օրենսդիրն Եվրոպական դատարանի կողմից ՀՀ վերաբերյալ կայացված վճիռներով արձանագրված խախտումների վերացման անհրաժեշտությամբ պայմանավորված օրենսդրական բարեփոխումների իրականացման համար:

Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռներով արձանագրված խախտումների պատճառները տարբեր են: Յուրաքանչյուր դեպքում այդ պատճառները կարող են լինել ինչպես թերի իրավակարգավորման, այնպես էլ սխալ իրավական պրակտիկայի հետևանք: ՄԻԵԴ-ի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված և խախտում արձանագրող յուրաքանչյուր վճիռ՝ ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես

ձեռնարկվում են տվյալ վճռի կատարմանն ուղղված անհատական և (կամ) ընդհանուր բնույթի միջոցառումներ, որոնց վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե: Այդուհանդերձ, երբեմն համապատասխան փոփոխությունների գործընթացը սկսվում է նույնիսկ մինչև ՄԻԵԴ-ի կողմից վճիռ կայացնելը՝ հաշվի առնելով ինչպես քննության փուլում գտնվող գործերով բարձրացված հարցերը, այնպես էլ գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները, պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու խնդիրը:

Անդրադառնալով ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումների և, ընդհանրապես, մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդրման ապահովման նպատակով նախաձեռնված օրենսդրական փոփոխություններին՝ հարկ է առանձնացնել հետևյալ օրինակները.

1. Վարչական կալանքի ինստիտուտի վերացումը:

2005 թվականի դեկտեմբերի 16-ին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխությունների արդյունքում վարչական կալանքի ինստիտուտը կարգավորող խնդրահարույց օրենսդրական նորմերը ճանաչվեցին ուժը կորցրած: Այս փոփոխությունները, ի թիվս այլնի, պայմանավորված էին նաև ՄԻԵԴ վարույթում քննվող գործերով բարձրացված ենթադրյալ իրավախախտումներով:

2008 թվականին ՄԻԵԴ-ը կայացրեց «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը, որով արձանագրված խախտումները պայմանավորված էին նաև 2003-2004 թվականներին ընդդեմ նախագահական ընտրությունների կազմակերպված հավաքների մասնակցող անձանց նկատմամբ վարչական կալանքի ինստիտուտի կիրառմամբ և վերջինիս առնչվող թերի իրավակարգավորումներով: Հետագայում ՄԻԵԴ-ը կայացրեց նմանատիպ խախտում արձանագրող ևս 6 վճիռ, որոնց կատարման շրջանակներում ընդհանուր միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը վերացել էր նախապես իրականացված օրենսդրական փոփոխություններ շնորհիվ:

2. Պետական տուրքի վճարումից ազատման բացարձակ արգելքի վերացում:

«Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ ներպետական օրենսդրության դրույթներով սահմանված պետական տուրքի վճարումից ազատման բացարձակ արգելքն ինքնին խնդիր է առաջացնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ: Հիմք ընդունելով արձանագրված խախտումը՝ 2009 թվականի ապրիլի 7-ին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված համապատասխան փոփոխությունների արդյունքում այն խնդրահարույց նորմերը, որոնց համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները չէին կարող ազատվել պետական տուրքի վճարումից, ուժը կորցրեցին:

3. Մտքի, խղճի և կրոնի ազատության ապահովումը:

«Բայաթյանն ընդդեմ Հայաստանի», «Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի» և «Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի» գործերով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ գորակոչից խուսափելու համար դիմումատուների դատապարտումը Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կրոնի ազատության իրավունքին ոչ իրավաչափ միջամտություն է: Անձի այդ իրավունքը երաշխավորելու և նշված վճիռները կատարելու նպատակով 2013 թվականի մայիսի 2-ին ընդունվեց «Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում այլընտրանքային աշխատանքային ծառայությունն ամբողջությամբ նոր բովանդակություն ձեռք բերեց: Այսինքն՝ այս վճիռներով արձանագրված խախտումները պայմանավորված էին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում տվյալ ժամանակահատվածում առկա թերի

իրավակարգավորումներով, մասնավորապես, այլընտրանքային ծառայության (ինչպես զինվորական, այնպես էլ աշխատանքային) համար օրենքով սահմանված երկար ժամկետները քննադատվել էին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից օրենքի ընդունման պահից:

Վերոնշյալ փոփոխությունները և դրանց կիրառման պրակտիկան բարձր գնահատականի են արժանացել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի և մի շարք այլ կառույցների, ինչպես նաև Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպության կողմից: Արդյունքում նշված վճիռների կատարողական վարույթները Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից փակվեցին՝ ՄԻԵԴ-ի համապատասխան վճիռների պահանջներն ամբողջությամբ կատարված լինելու պատճառաբանությամբ:

4. Ոչ նյութական (բարոյական) վնասի հատուցման ապահովումը:

«Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի», ինչպես նաև «Սահակյանն ընդդեմ Հայաստանի» գործերով վճիռներում ՄԻԵԴ-ը գտել է, որ ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմների բացակայությունը, որի հետևանքով Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված երաշխիքների խախտման արդյունքում տառապանք կրած անձը զրկվում է նման փոխհատուցում ստանալու հնարավորությունից, ինքնին 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում է: Հետևաբար ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսվի նման հնարավորություն:

Նույն տրամաբանությամբ Եվրոպական կոնվենցիայով ամրագրված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքից օգտվելու հնարավորությունը կարևոր պայման է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման համար: Այս դիրքորոշումն արտահայտվել է նաև «Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռում, որում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետևանքով իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար: Զանի որ Հայաստանի օրենսդրությամբ նման հատուցում չէր նախատեսվում, դիմումատուն զրկված է եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից, հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

Գոյություն ունեցող օրենսդրական բացերը լրացնելու, ինչպես նաև նշված վճիռների՝ ամբողջական և արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով 2014 թվականի մայիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն ուղղված էր Հայաստանի Հանրապետությունում Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման համար ոչ նյութական վնասի հատուցման կառուցակարգի սահմանմանը: 2015 թվականին այս ինստիտուտը կատարելագործվեց:

Այսպիսով՝ ՀՀ Ազգային ժողովի իրավաստեղծ գործունեության նկատմամբ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը դրսևորվում է ինչպես խորհրդարանական վերահսկողության, այնպես էլ խորհրդարանական մշտադիտարկման միջոցով, որոնց առնչությամբ գործող իրավական գործիքակազմերի հետագա զարգացումն ու կատարելագործումը կնպաստեն մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին ՀՀ իրավական համակարգի ներդաշնակեցմանը:

Եզրահանգումներ

1. Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների ներդրման գործում խորհրդարաններին վերապահված է բացառիկ ու յուրահատուկ

դեր, ինչը դրսևորվում է խորհրդարանական վերահսկողության և խորհրդարանական մշտադիտարկման ձևերով:

2. Եվրոպական դատարանի վճիռներով արտահայտված չափորոշիչների ներդրման, վերջիններիս և ներպետական օրենսդրության միջև ներդաշնակության ապահովման առնչությամբ խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը կատարելագործման կարիք ունի, և այս առնչությամբ առաջարկվող ուղղություններից մեկը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների վերանայումն է:

3. Խորհրդարանը, որպես օրենսդիր գործունեություն իրականացնող մարմին, երբեմն ուղղակիորեն կրում է Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը, ինչը առավել հստակ օրինակներով դրսևորվում է՝ ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնման պարագայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան, Գևորգ. *Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ*. Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2021:

2. Wittling-Vogel, Almut. "The Role of the Legislative Branch in the Implementation of the Judgments of the European Court of Human Rights". *Judgments of the ECHR-effects and implementation*, Nomos Verlagsgesellschaft, 2014, pp. 59-74.

3. Muller, Amrei. "Effective politica; dialogue". *The European International Law*, Vol. 28, No 3, The Author, Published by Oxford Press, 2018.

4. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով. «Ազգային խորհրդարաններ. մարդու իրավունքների երաշխավորները Եվրոպայում» թիվ 1823 (2011) բանաձև. 23 Հունիսի 2011:

5. ---. «Խորհրդարանների դերը ՄԻԵԴ չափորոշիչների իմպլեմենտացման գործում. համալիր ակնարկ գոյություն ունեցող մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ» թիվ PPSD(2014)22 բացատրական հուշագիր. 13 Հոկտեմբերի 2014:

6. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե. «Անդամ պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված չափորոշիչներին օրենքների նախագծերի, գործող օրենքների և իրավակիրառ պրակտիկայի համապատասխանության ստուգման վերաբերյալ» թիվ Rec(2004)5 հանձնարարական. 12 Մայիսի 2004:

7. Եվրոպական միություն. «Բրյուսելի հռչակագիր», բարձրաստիճան կոնֆերանս «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իմպլեմենտացիա. բաշխված պատասխանատվություն» խորագրով. 27 Մարտի 2015:

8. ՄԱԿ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա. 4 Նոյեմբերի 1950. ՀՀ-ի կողմից կոնվենցիան վավերացվել է 26 Ապրիլի 2002:

WORKS CITED

1. Danielyan, Gevorg. *Iravasteghts' gorts'uneut'yun ev iravabanakan tekhnika. Usumnakan dz'er'nark*. Tigran Mets' hrat., Yerevan. [Law-making Activity and Legislative Technique. Educational Manual. Tigran Mets publishing house, Yerevan] 2021. (In Armenian)

2. Wittling-Vogel, Almut. "The Role of the Legislative Branch in the Implementation of the Judgments of the European Court of Human Rights". *Judgments of the ECHR-effects and implementation*, Nomos Verlagsgesellschaft, 2014, pp. 59-74.

3. Muller, Amrei. "Effective politica; dialogue". *The European International Law*, Vol. 28, No 3, The Author, Published by Oxford Press, 2018.

4. Evropakan miut'yun. «*Bryuseli hr'tchakagir*», bardz'rastitchan konferans «Mardu iravunqneri evropakan konventsiaji implementatsia. bashkhvats' pataskhanatvut'yun» khoragrov. 27 Marti 2015. [*“Brussels Declaration”, High-level Conference on the “Implementation of the European Convention on Human Rights, Shared Responsibility”*. 27 March 2015]. (In Armenian)

5. Evropayi khorhrdi nakhararneri komite. «*Andam petut'yunnerum Mardu iravunqneri evropakan konventsiajov nakhatesvats' chap'oroshichnerin o'renqneri naxagts'eri, gorts'ogh o'renqneri ev iravakirar' praktikayi hamapataskhanut'yan stugman veraberyal*» t'iv Rec(2004)5) hand'znarakan. 12 Mayisi 2004. [*“Recommendation of the Committee of Ministers Rec(2004)5) to Member States on the Verification of the Compatibility of Draft Laws, Existing Laws and Administrative Practice with Standards Laid Down in the European Convention on Human Rights”*. 12 May 2004]. (In Armenian)

6. Evropayi khorhrdi khorhrdaranakan vehajhoghov. «*Azgayin khorhrdaranner. mardu iravunqneri erashkhavorneri' Evropayum*» t'iv 1823 (2011) banad'zev. 23 Hunisi 2011. [*“National Parliaments: Guarantors of Human Rights in Europe”* Resolution 1823 (2011). 23 June 2011]. (In Armenian)

7. ---. «*Khorhrdaranneri dery' MIED chap'oroshichneri implementatsman gort'um. hamalir aknark goyut'yun unetsogh mekhanizmneri ev hamakargeri veraberyal*» t'iv PPSD(2014)22) batsatrankan hushagir. 13 Hoktemberi 2014. [*“The Role of Parliaments in Implementing ECHR Standards: Overview of Existing Structures and Mechanisms”* PPSD (2014)22) Background memorandum. 13 October 2014]. (In Armenian)

8. MAK. «*Mardu iravunqneri ev himnarar azatut'yunneri pashtpanut'yan masin*» evropakan konventsia. 4 Noyemberi 1950. HH-i koghmits konventsian vaveratsvel e' 26 Aprili 2002. [*“The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms”*. 4 November 1950. ratified by the Republic of Armenia on 26.04.2002]. (In Armenian)

IMPACT OF JUDGMENTS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS ON THE LAW-MAKING ACTIVITIES OF ARMENIA

ARPINE ARAKELYAN

*Public Administration Academy of RA, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

In the framework of this article an attempt has been made to identify the impact of the judgments of the European Court of Human Rights on law-making activities in the Republic of Armenia. The main aim of this article is to reveal the unique role assigned to the parliaments in the process of implementation of European standards for the protection of human rights. The topic at issue has been studied under the light of the relevant resolution of the CoE Parliamentary Assembly and the recommendation of the CoE Committee of Ministers.

In the first part of the article, some issues have been viewed related to the parliamentary oversight in the Republic of Armenia while ensuring the harmonization and verification of compliance of draft laws with the conventional standards for human rights protection, in the second part, some issues concerning parliamentary monitoring have been referred to.

The objective of this article is to reveal the types of impact of the judgments of the European Court of Human Rights in the context of parliamentary oversight and parliamentary monitoring in the Republic of Armenia and suggest ways to improve existing legal mechanisms in that regard.

In the framework of this article, both general scientific and jurisprudence-specific methods have been used, such as legal comparative and formal-legal methods and the method of systematic analysis.

Based on the results of the study, it has been noted that the parliamentary oversight in the Republic of Armenia in terms of ensuring the harmonization and verification of compliance of draft laws with the conventional standards for human rights protection as a mandatory function lacks for effective mechanisms. Thus it has been suggested to clarify the issue raised in the process of reviewing the spheres of activity of the standing committees of the RA National Assembly.

Keywords: *Judgments of the European Court, parliamentary oversight, parliamentary monitoring, RA National Assembly, Impact of the ECtHR judgments, implementation of international human rights standards, Enforcement of the judgments of the European Court.*

ВОЗДЕЙСТВИЕ РЕШЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА НА ЗАКОНОДАТЕЛЬНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АРПИНЕ АРАКЕЛЯН

*аспирант Академии государственного управления РА,
г. Ереван, Республика Армения*

Данная статья посвящена выявлению воздействий решений Европейского суда по правам человека на законодательную деятельность Республики Армения. Основная цель работы заключается в выявлении уникальной роли парламентов в процессе имплементации европейских критериев, предусмотренных в целях защиты прав человека. Вышеуказанное положение было рассмотрено, в особенности, с точки зрения соответствующих резолюций Ассамблеи Совета Европы и рекомендаций Комитета министров Совета Европы.

В первой части статьи рассмотрены некоторые вопросы, связанные с парламентским контролем в Республике Армения при обеспечении гармонизации и проверки соответствия законопроектов общепризнанным стандартам защиты прав человека, во второй части обсуждался вопрос о парламентском мониторинге.

Задача работы – выявить формы воздействий решений Европейского суда по правам человека в контексте парламентского контроля и парламентского мониторинга в Республике Армения и предложить пути совершенствования существующих правовых механизмов в этом отношении.

В рамках данной статьи использовались как общие научные, так и особые юридические методы, такие, как сравнительно-правовые, формально-юридические и системно-аналитические методы.

По результатам исследования отмечено, что парламентскому контролю в Республике Армения в части обеспечения гармонизации и проверки соответствия законопроектов общепризнанным стандартам защиты прав человека как обязательной функции не хватает действенных механизмов. Таким образом, было предложено внести ясность в вопрос, возникший в процессе рассмотрения сфер деятельности постоянных комиссий Национального Собрания РА.

Ключевые слова: *решения Европейского суда, парламентский контроль, парламентский мониторинг, Парламент РА, воздействие решений ЕСПЧ, имплементация международных критерий защиты прав человека, исполнение решений Европейского суда.*

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԳԻՄՆԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՄՔԵՐՆ ՈՒ
ԱՈԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

ՉՏԴ 342.7

DOI: 10.52063/25792652-2022.2.13-91

ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Հայաստանում Եվրոպական Համալսարանի
միջազգային հարաբերությունների և իրավագիտության ֆակուլտետի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgaravetisyan96@gmail.com*

Հոդվածը վերաբերում է մարդու հիմնական իրավունքների համակարգում իր ուրույն տեղն ունեցող տեղեկատվության ազատության իրավունքին, որը մարդկության պատմության ցանկացած շրջափուլում ենթարկվում է տվյալ ժամանակաշրջանի փոխություններին: Հսկայական փոփոխությունների ժամանակակից աշխահում առավել քան արդիական է դառնում նման իրավունքների համակարգային ուսումնասիրությունը:

Հետազոտության շրջանակում առաջ է քաշվել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի տեսաիրավական հիմքերի ու առանձնահատկությունների վերհանման նպատակը: Նշված նպատակին հասնելու համար հետազոտության առջև դրվել է տեղեկատվության ազատության տեսական ու նորմատիվ ոլորտում տեղ գտած հասկացության հստակեցման, հիմնական իրավունքի տեսանկյունից ներկայացման և որպես իրավունք ու ազատություն դիտարկելու խնդիրները:

Ուսումնասիրությունն իրականացվել է վերացարկման, վերլուծության ու համադրության գիտական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտությամբ ներկայացվում է տեղեկատվության ազատությանը տրված հայկական և արտասահմանյան տեսական բնորոշումները, որոնց ամփոփման արդյունքում ամբողջացվում են քննարկվող իրավունքի լայն և նեղ իմաստները: Տեղեկատվության ազատությունը ներկայացվում է նաև իրավունքի և ազատության տեսանկյուններից, առանձնացվում է դրա՝ որպես հիմնական իրավունքի կառուցվածքային տարրերը: Ուսումնասիրությունը եզրափակվում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի շրջանակում իրավունքի սուբյեկտի, հասցեատիրոջ և օբյեկտի՝ իրավունքի սուբյեկտի պահանջի ու պետության պարտականությունների շրջանակի հստակեցմամբ ու ամփոփմամբ:

Հիմնաբառեր՝ տեղեկատվության ազատություն, հիմնական իրավունք, ազատություն, տեսություն, տեսական մոտեցում, իրավունքի կառուցվածք, իրավունքի սուբյեկտ, իրավունքի հասցեատեր, օբյեկտ, պահանջ:

Ներածություն

Տեղեկատվության ազատության իրավունքը հանդիսանում է տեսաիրավական բազմաթիվ քննարկումների առարկա, որոնք ուղղված են տեղեկատվության ազատության Էության վերհանմանը: Վերջինիս նպատակով ժամանակակից

* Հոդվածը ներկայացվել է 05.06.2022թ., գրախոսվել՝ 22.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

հետազոտություններն իրականացվում են հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման լույսի ներքո, երբ տեղեկատվության ազատության իրավունքը ձեռք է բերում բազմաթիվ առանձնահատկություններ:

Տեղեկատվության ազատության տեսական և իրավական բնորոշումները

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բուն «տեղեկատվության ազատություն» հասկացությանը տեսական ոլորտում տրված մեկնաբանմանը: Ըստ ռուս իրավագետ Ս. Ա. Ավակյանի՝ տեղեկատվության ազատությունը սահմանադրական իրավունքի հայեցակարգ է, որն ընդգրկում է մի խումբ իրավունքներ և ազատություններ, այդ թվում՝ խոսքի ազատություն, մամուլի ազատություն, հանրային նշանակության տեղեկատվություն ստանալու իրավունք, ցանկացած օրինական ճանապարհով տեղեկատվություն տարածելու ազատություն և այլն (Авакьян 68): Իսկ Ի. Ա. Լեոյախը կարծում է, որ խոսքի ազատությունը ներառում է մի քանի կառուցվածքային տարրեր, որոնք սերտորեն փոխկապակցված են և գոյություն ունեն միասնության մեջ: Դրանք են նախ՝ յուրաքանչյուր անձի ազատությունը՝ հրապարակավ արտահայտելու իր մտքերը, գաղափարներն ու դատողությունները և տարածելու դրանք ցանկացած օրինական միջոցներով: Երկրորդը մամուլի և այլ զանգվածային լրատվության միջոցների ազատությունն է, որը զերծ է գրաքննությունից և ապահովում է տեղեկատվական մարմիններ ստեղծելու և օգտագործելու իրավունքը: Երրորդը հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ ստանալու իրավունքն է կամ այլ կերպ՝ տեղեկատվության աղբյուրներին հասանելիության ազատությունը (Ледях и др. 75): Վ. Մ. Բոյերը տեղեկատվության իրավունքն ու ազատությունը մեկնաբանում է կարճ՝ իրազեկված լինելու և տեղեկատվության հասանելիության իրավունք (Боев и Павельева 26):

Ռուսական իրավական մտքին զուգահեռ՝ ամերիկյան և եվրոպական իրավագետները տեղեկատվության ազատությունը, ի թիվս այլևի, դիտարկում են առաջին հերթին որպես երկրի կառավարմանը մասնակցելու գործիք, հրապարակայնության ու բազմակարծության ապահովման միջոց: Ամերիկացի իրավագետ Ջ. Աքերմենը նշում է, որ տեղեկատվության ազատության հարաբերությունները կարգավորող նորմերը կարգավորում են առաջին հերթին անձի արտահայտվելու, երկրի կառավարմանը մասնակցելու և պետության կառավարման վրա քաղաքական, տնտեսական ու բյուրոկրատական ազդեցություն ունենալու հարաբերությունները (Ackerman and Sandoval-Ballesteros 87): Ըստ արգենտինացի իրավագետ Ռոբերտո Սաբայի՝ տեղեկատվության ազատությունը, բացի բոլորիս հայտնի երաշխիքներից, կրում է նաև որոշակի հարցի վերաբերյալ տեղեկատվություն սպառողների տեսակետների լայն բազմազանության ապահովման երաշխիքը (Saba 153): Ինչպես նշում է հոլանդացի իրավագետ Մարկ Բովենսը՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը վերաբերում է առաջին հերթին պետության բաց կառավարմանը, որը կանոնակարգում է պետական կառավարման թափանցիկության երաշխավորումը՝ նպատակ ունենալով ապահովել ավելի լավ ժողովրդավարական վերահսկողություն և կառավարության սոցիալական հաշվետվողականություն (Bovens 327): Տեղեկատվության ազատությունը հաշվետու կառավարման (Mendel 19) և թափանցիկության (Spahiu 42) հիմնական բաղադրիչն է:

Տեսական մոտեցումներում պակաս կարևոր չէ անդրադառնալ նաև հայկական իրավական մտքին: Տեղեկատվության ազատության կարևորության անդրադառնալիս Գ. Հարությունյանը նշում է տեղեկույթի մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Տեղեկույթի պետական մենաշնորհը և գրաքննությունը բուն ներանգի պես խփում են

հենց պետությանը՝ տանելով հասարակությանը տնտեսական, քաղաքական և իրավական փակուղի (Հարությունյան 309):

Ընդհանրացնելով տեսական մոտեցումներում առկա մեկնաբանությունները՝ կարող ենք հստակեցնել, որ տեղեկատվության ազատությունը դիտարկվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով՝ այն համարվում է որպես ժողովրդավարության կայացման անբաժան մաս և ապահովում է պետության բաց կառավարումը, իրապարակայնությունն ու թափանցիկությունը: Տեղեկատվության ազատության իրավունքը, բացի սոսկ մարդու առանձին, մեկ իրավունք լինելուց, նաև մարդու այլ հիմնական իրավունքների ապահովման միջոցն ու օժանդակողն է: Կարելի է ասել, որ տեղեկատվության ազատությունը ոչ այդքան առանձին իրավունք, որքան իրավունք-միջոց է՝ այլ իրավունքների արդյունավետ իրացման համար: Նեղ իմաստով դիտարկելիս տեղեկատվության ազատությունն համարվում է կոնկրետ տեղեկատվության ազատ փնտրման, ստացման ու տարածման, մամուլի ազատության ու հանրային մարմիններից տեղեկությունների ստացման գործընթացները կարգավորող երաշխիք:

Տեղեկատվության ազատությունը որպես մարդու հիմնական իրավունք. իրավունք, թե՞ ազատություն

Տեղեկատվության ազատության առանձնահատկությունները հնարավոր է վեր հանել դրա եռության բացահայտմամբ: Այսպես՝ տեսական մոտեցումներում տեղեկատվության ազատությանը տրված բնորոշումներում, ինչպես նկատում ենք, այն ներկայացվում է մի դեպքում՝ որպես իրավունք, մյուսում՝ որպես ազատություն, ուստի հարց է առաջանում՝ տեղեկատվության ազատությունը իրավունք է, թե՞ ազատություն:

Իրավունքի և ազատության հարաբերակցության վերաբերյալ մասնագիտական գրականությունում դեռևս չկա միասնական մոտեցում: Մի խումբ իրավագետներ դրանք նույնականացնում են, մյուսները՝ հստակ տարանջատում: Հետխորհրդային իրավաբանական գրականությունում հաճախ նշվում է, որ «ազատությունն» առավելապես կապված է անձի այնպիսի իրավագործությունների հետ, որոնք սահմանում են նրա ինքնուրույնության սահմանը՝ պաշտպանելով նրա ներաշխարհը միջամտությունից: Իսկ «իրավունք» հասկացությունն առավելապես նախատեսում է պետության կողմից որոշակի դրական գործողություններ, ծառայություններ կամ անձի իրավագործություններ՝ մասնակցելու որոշակի հանրային-քաղաքական ու տնտեսական կառույցների գործունեությանը (Козлова и Кутафин 121): Արտասահմանյան գրականությունում նշվում է, որ եթե անձն ունի իրավունք, հետևաբար այլ անձն էլ ունի դրան համապատասխան պարտականություն: Ազատությունը նախատեսում է, որ ոչ ոք չպետք է խոչընդոտի, խանգարի անձին կատարելու այն, ինչ նա ցանկանում է անել: Ի տարբերություն իրավունքի՝ ազատության դեպքում ոչ ոք պարտավոր չէ հսկողություն իրականացնել կամ ապահովել դրա իրացումը: Իրավունքն իրավական կամ սոցիալական պահանջ է՝ պահանջ ներկայացնելու հնարավորություն: Ազատությունն անձի իրավական հնարավորությունն է կոնկրետ ոլորտում վարելու իր գործերն առանց պետության միջամտության: Իրավագետ Մ. Մամաջանյանը նշում է, որ այսօր անձի հանրաճանաչ իրավական հնարավորությունները սահմանադրությունում կամ այլ նորմատիվ իրավական ակտում ամրագրված են իրավունքի տեսքով, թե ազատության՝ գործնականում վճռորոշ չեն, քանի որ իրավական գլոբալիզացիայի պայմաններում անկախ նրանից՝ ամրագրված կլինի հավաքների իրավունքը, թե՞ հավաքների ազատությունը, անձը գործնականում օժտված է միևնույն իրավական հնարավորություններով (Մուրադյան և ուրիշներ 175):

Իրավական ազատությունը հանդիսանում է որոշակի գործողություն անելու կամ այն բաց թողնելու (չանելու) թույլտվության միաձուլում: Լիարժեք սահմա-

Նադրական իրավունք ձեռք բերելու համար չպաշտպանված ազատությունը պետք է պաշտպանված լինի պետության դեմ անձի ունեցած՝ ըստ Էության համարժեք իրավունքով, որով ազատություն ունեցող անձին պետությունը չպետք է արգելի անել այն, ինչը նա սահմանադրորեն ազատ է անելու: Պետության դեմ ուղղված այս իրավունքը սահմանադրական իրավունքների առանցքն է ու սահմանադրական իրավունքների տեսության կենտրոնը: Վերջինս անվանվում է նաև «կենտրոնական թեզ» (*The Oxford Handbook of Comparative Constitutional Law* 268): Չ. Ռազը նշում է, որ իրավունքի առկայությունն ինքնին հանդիսանում է այլոց վրա պարտականություն դնելու բավարար պատճառ (Raz 184), շարունակելով նաև ավելացնում՝ ազատությունների առկայությունը ևս նախատեսում է որոշակի պարտականություններ (օրինակ՝ չմիջամտել), որոնք իրավունքից բխող պարտականություններից տարբերվում են նրանով, որ անձի ազատության իրացումն ապահովելու համար անհրաժեշտություն չկա կատարել ակտիվ գործողություններ:

Հաջորդիվ տեղեկատվության ազատությանը կամ տեղեկատվության ազատության իրավունքի Էության բացահայտմանն անդրադառնալիս կարևոր ենք համարում նաև այն դիտարկել մարդու հիմնական իրավունք հանդիսանալու տեսանկյունից: Ինչպես գիտենք, մարդու հիմնական իրավունքն ունի եռատարր կառուցվածք՝ առաջինը իրավունքի շահառուն կամ կրողն է, երկրորդը իրավունքի հասցեատերն է, իսկ երրորդը՝ իրավունքի առարկան կամ օբյեկտը (*The Oxford Handbook of Comparative Constitutional Law* 267):

Տեղեկատվության ազատության բաղադրատարրերն առարկայական ներկայացնելու համար անդրադառնանք դրա «հայաստանյան բաղադրատարրերին», որոնք ներկայացված են մայր օրենքով: Այսպես՝ ՀՀ գործող Սահմանադրությունը, ի տարբերություն նախորդ խմբագրությամբ սահմանադրությունների, տեղեկատվության ազատությանը վերաբերող երկու հոդված է նախատեսում՝ 42-րդ և 51-րդ հոդվածները:

Առաջինի դեպքում ներկայացվում է ընդհանուր տեղեկատվության ազատությունը, որը սահմանադիրը ներառել է կարծիքի արտահայտման ազատության հիմնական իրավունքի մեջ և ձևակերպել. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է (...) առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Երկրորդը, որպես հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունք, ներկայացված է 51-րդ հոդվածում. «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում տեղեկատվության ազատության կրող է հանդիսանում յուրաքանչյուր ոք¹ (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներն ու ապաքաղաքացիները)՝ ի տարբերություն Սահմանադրությամբ նախատեսված այլ հիմնական իրավունքների, որոնց կրող կարող են հանդիսանալ միայն ՀՀ քաղաքացիները: Սրանով ցույց է տրվում տեղեկատվության ազատության մեծ կարևորությունը:

Ընդհանուր մոտեցման համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման հասցեատերը, ինչպես մյուս հիմնական իրավունքների դեպքում, հանդիսանում է պետությունը: Սրա մասին է ՀՀ Սահմանադրական դատարանի (այսուհետ նաև՝ ՍԴ) 04.05.2018թ.-ի թիվ ՍԴԴ-1412 որոշումը, որով արձանագրել է ՀՀ

¹ Մի շարք երկրներում, օրինակ՝ Վրաստանում, Մոլդովայում, Շվեդիայում, Բուլղարիայում և այլն, հանրային մարմիններից տեղեկություն ստանալու ազատությունը պատկանում է միայն քաղաքացիներին:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտականության հասցեատեր է սահմանում հանրային իշխանությանը՝ դրանով իսկ, ըստ էության, բացառելով այդ գործառույթի անմիջական իրականացումը մասնավոր անձանց կողմից միմյանց միջև ծագող իրավահարաբերություններում: Սահմանադրության, հատկապես, հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանող նորմերը մասնավոր անձանց միջև հարաբերություններում անմիջականորեն իրացվելի են միայն Սահմանադրությամբ և վերջինիս հիման վրա ընդունված օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

ՍԴ-ի վերոնշյալ որոշումից բխում է, որ վերջինս, թեև ընդունում է հանրային մարմինների՝ հիմնական իրավունքի հասցեատեր լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, չի բացառում, որ Սահմանադրությամբ և/կամ վերջինիս հիման վրա ընդունված օրենքով նախատեսված լինելու դեպքում հիմնական իրավունքներն ու ազատություններն իրացվեն նաև մասնավոր իրավահարաբերություններում և հիմնական իրավունքի հասցեատեր լինեն նաև մասնավոր սուբյեկտները (թիվ ՍԴՈ-719 որոշում):

Հետաքրքիր է, որ տեսաբանները հիմնական իրավունքի հասցեատիրոջ վերաբերյալ մոտեցումները ներկայացնում են հանրային և մասնավոր իրավունքների տարանջատման լույսի ներքո: Հանրային և մասնավոր իրավունքների սահմանազատման շրջանակում Գ. Հովհաննիսյանը շահերի տեսության և ենթակարգության տեսության հետ կարևոր է համարում նաև Հ. Վոլֆի հեղինակած հատուկ իրավունքի տեսությունը, որի համաձայն՝ հանրային իրավունքը կարգավորվում է հանրային-իրավական նորմով, որն առկա է ոչ թե այն ժամանակ, երբ այն կոնկրետ դեպքում լիազորում կամ պարտավորեցնում է հանրային իշխանության կրողին, այլ այդպես պետք է լինի բոլոր հնարավոր դեպքերում (Հովհաննիսյան 32): Հիմնական իրավունքներն ընկալվում են որպես ուղղահայաց ազդեցություն ունեցող (պետական մարմինն անձի կողմից ուղղակիորեն պահանջ ներկայացնելով), մինչդեռ հիմնական իրավունքները մասնավոր իրավունքում ներկայացնելիս պետք է ձեռք բերեն հորիզոնական ազդեցություն, որն ի սկզբանե դուրս է հիմնական իրավունքի շրջանակից ու նպատակից (Collins 12): Զադաբացին պարտավոր է հարգել մեկ այլ քաղաքացու հիմնական իրավունքն այնքանով, որքանով դա պահանջում է նրա համար գործող հասարակ իրավունքը (Eppring 192):

Տեսական մոտեցումների հիման վրա ներկայացնելով արդեն տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի հասցեատիրոջ հարցը՝ անվիճելի է, որ այն հանդիսանում է հանրային մարմինը: Անհրաժեշտ ենք համարում պարզաբանել, թե ՀՀ-ում ո՞ր հանրային մարմիններն են հանդիսանում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի հասցեատերեր, և արդյո՞ք մասնավոր սուբյեկտները կարող են հանդիսանալ ըննարկվող իրավունքի հասցեատերեր:

Դիտարկելով առաջին հերթին Սահմանադրության 42-րդ հոդվածը՝ նկատում ենք, որ տեղեկատվության ազատությունը երաշխավորող նորմը ներառում է *«առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության (...)* տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն»՝ ձևակերպումը, որից պարզ է դառնում նշված հիմնական իրավունքի հասցեատեր են հանդիսանում հանրային մարմինները: Վերջիններիս բնույթը հստակեցված է հենց նորմում. դրանք են պետությունն իր ողջ եռանդամ (օրենսդիր, գործադիր, դատական) կազմով և համայնքային նշանակության հանրային հարցերը լուծող տեղական ինքնակառավարման մարմինները: Հասցեատերերի կազմը նույնն է նաև Սահմանադրության տեղեկատվության ազատությունը երաշխավորող երկրորդ նորմում՝ 51-ում: Հետաքրքիր է նաև, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսել է դեպքեր, երբ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի հասցեատեր կարող են հանդիսանալ նաև որոշ մասնավոր սուբյեկտներ, որոնք բնորոշվել են որպես հանրային նշանակություն ունեցող մարմիններ:

Ինչ վերաբերում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի առարկային կամ օբյեկտին, ապա կարևոր է նշել, որ ՀՀ մայր օրենքում այն արտահայտվում է հանրային մարմինների և՛ պոզիտիվ, և՛ նեգատիվ պարտականության տեսքով: Այսպես՝ 42-րդ հոդվածի առաջին մասն ուղղակի հանրային մարմիններին պարտավորեցնում է՝ չմիջամտել տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությանը: Այստեղ հանրային մարմինների առաջնային պարտականությունը անգործություն (չմիջամտել) դրսևորելն է: Իսկ նույն հոդվածի երկրորդ մասը մի կողմից՝ հանրային մարմինն պարտավորեցնում է չմիջամտել մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությանը, մյուս կողմից՝ հանրային մարմնի (սույն դեպքում՝ միայն պետության) վրա դնում է պոզիտիվ պարտականություն՝ երաշխավորել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության ու ռադիոյի գործունեությունը: Այստեղ պետությունը, ի տարբերություն հոդվածի 1-ին մասի, պետք է դրսևորի ակտիվ գործողություններ՝ ստեղծել ու ապահովել անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Սահմանադրության 51-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ազատության (տեղեկություն ստանալու) հիմնական իրավունքի առարկան արտահայտվում է միայն հանրային մարմնի պոզիտիվ պարտականությամբ՝ տրամադրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ:

Եզրակացություն

Ամփոփելով տեղեկատվության ազատության՝ որպես հիմնական իրավունքի կառուցվածքային առանձնահատկությունը՝ պետք է արձանագրենք, որ ՀՀ-ում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովումն իրականացվում է հետևյալ շրջանակում՝

- յուրաքանչյուրի սուբյեկտիվ իրավունքն է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել չմիջամտել տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու, ինչպես նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությանը,

- յուրաքանչյուրի սուբյեկտիվ իրավունքն է պետությունից պահանջել ստեղծել ու ապահովել անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը,

- յուրաքանչյուրի սուբյեկտիվ իրավունքն է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել տրամադրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ:

Ստացվում է, որ տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում ապահովվում ու պաշտպանվում է վերոնշյալ երեք պահանջների շրջանակում: Ավելի ամբողջական անդրադարձի համար կարևոր ենք համարում նաև վերոնշյալ պահանջները ներկայացնել Գ. Յելլինեկի (Jellinek) կողմից առաջ քաշված ստատուսների ուսմունքի լուսի ներքո, որը մեծ տարածում ունի իրավագիտության մեջ: Ըստ այդմ էլ՝ վերոգրյալ պահանջներից առաջինի դեպքում առկա է status negativus (պետությանն ուղղված պահանջ՝ չմիջամտել իրավունքների ու ազատությունների իրացմանը) գործառույթ, երկրորդի դեպքում՝ status positivus (պետությանն ուղղված պահանջ՝ իրավունքի իրացման համար ապահովել համապատասխան ծառայությունները) գործառույթ, իսկ երրորդի դեպքում առկա է status activus (պետությանն ուղղված պահանջ՝ ապահովել ժողովրդավարական պետության կայացմանը քաղաքացու մասնակցությունը) գործառույթ:

Հաշվի առնելով, որ status activus գործառույթը պայմանավորվում է ժողովրդավարական պետությունում քաղաքացու ունեցած դերի ընդգծմամբ, ինչպես նաև հանրային կառավարմանը անհատի մասնակցության ապահովմամբ (Մուրադյան և ուրիշներ 173), պետության մեջ քաղաքացու ազատության, քաղաքական կամքի ձևավորմանը քաղաքացու մասնակցության ապահովմամբ (Հովհաննիսյան 66), կարծում ենք՝ որպես status activus բնույթն ունեցող հիմնական իրավունքների կրողներ, հնարավորության դեպքում պետք է հանդիսանան միայն տվյալ պետության քաղաքացիները: Տվյալ դեպքում ՀՀ Սահմանադրությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքը շնորհել է և՛ ՀՀ քաղաքացիներին, և՛ օտարերկրյա քաղաքացիներին: Ինչպես վերևում տեսանք, շատ երկրներ նշված իրավունքով են օժտել միայն իրենց քաղաքացիներին, ուստի հիմք ընդունելով քննարկվող իրավունքի բնույթը, դրա ապահովմամբ հետապնդվող իրական նպատակն ու դրան ՀՀ քաղաքացու մասնակցության կարևորությունը՝ կարծում ենք, որ հիմնավորված կլինի, եթե ՀՀ-ում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու իրավունքի կրող հանդիսանային միայն ՀՀ քաղաքացիները:

Վերադառնալով արդեն վերևում բարձրացված հարցին՝ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է ազատություն՝, թե՛ իրավունք, արդարացիորեն պետք է նշենք, որ դրա պատասխանը կախված էր վերոնշյալ մոտեցումներից, դիտարկումներից, նորմատիվ ձևակերպումներից, ընդհուպ՝ իրավունքի կառուցվածքային տարրերի վերհանումից: Այսպիսով՝ ամփոփելով տեղեկատվության ազատությանը տրված բնորոշումները, տեսական մոտեցումներն ու նորմատիվ ակտերում դրանց արտացոլումը՝ արձանագրում ենք, որ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է *ազատություն*՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելը, ստանալը և տարածելը, ինչպես նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ու տեղեկատվական այլ միջոցների ազատությանը հանրային մարմինների չմիջամտելը նախասահմանված լինելու իմաստով, և *իրավունք*՝ անկախ հանրային հեռուստատեսության և ռադիո գործունեությունը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկությունների տրամադրումն ապահովելու՝ հանրային մարմիններին ուղղված պահանջ ներկայացնելու իմաստով: Ստացվում է, որ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է և՛ իրավունք, և՛ ազատություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ. ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Իրավունք, Երևան, 2010:
2. Հովհաննիսյան, Գոռ. *Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն*. Հանրային դիվանագիտություն բարեգործական ՀԿ, Երևան, 2020:
3. Մուրադյան, Մանուկ և ուրիշներ. *Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ*. 3-րդ լրամշակված հրատ., Լուսաբաց հրատարակչատուն, Երևան, 2018:
4. Collins, Hugh. *On the (In)compatibility of Human Rights Discourse and Private Law* Hugh Collins. London School of Economics and Political Science, LSE Law, Society and Economy Working Papers 7/2012, London, 2012.
5. Epping, Volker. *Epping Grundrechte*. 9 Auflage, Springer, Hannover/Hamburg, 2021.
6. Jellinek, Georg. *System der subjektiven öffentlichen Rechte*. Heidelberg, 1892.
7. Raz, Joseph. *The Morality of Freedom*. Oxford University Press, Oxford, 1986.

8. Spahiu, Irma. *The nature and value of access to information laws in Canada and the EU: Ideals, practices and perspectives*. York University Toronto, Ontario, 2016.
9. *The Oxford Handbook of Comparative Constitutional Law*. Ed. Michel Rosenfeld and András Sajó, Oxford University Press, Oxford, 2012.
10. Авакьян, Сурен. *Конституционное право России: Учебный курс*. в 2-х т., Юрист, Москва, 2007.
11. Боер, Виктор, и Ольга Павельева. *Информационное право: учеб. пособие*. Ч. 1, ГУАП, Санкт-Петербург, 2006.
12. Козлова, Екатерина, и Олег Кутафин. *Конституционное право России*. Издание третье, переработанное и дополненное, Москва, 2001.
13. Ледях, Ирина, и др.. *Права человека: Учебник*. изд-во Норма, Москва, 2009.
14. Ackerman, John, and Irma Sandoval-Ballesteros. "The Global Explosion of Freedom of Information Laws". *Administrative Law Review*, Volume 58, Number 1, Washington College of Law, American University, Winter 2006.
15. Bovens, Mark. "Information Rights: Citizenship in the Information Society". *The Journal of Political Philosophy*, Vol. 10, No. 3, 2002, pp. 317-341.
16. Saba, Roberto. "El Derecho de la Persona a Acceder a la Información en Poder del Gobierno". *Derecho Comparado de la Información*, No. 3, 2004, pp. 145-185.
17. Mendel, Toby. "Freedom of Information as an Internationally Protected Human Right". *ARTICLE 19*,
<https://www.article19.org/data/files/pdfs/publications/foi-as-an-international-right.pdf>.
18. ՀՀ Սահմանադրական դատարան. *թիվ ՄՂՈ-719 որոշում*. 28 Նոյ. 2007:
19. ՀՀ Սահմանադրական դատարան. *թիվ ՄՂՈ-1412 որոշում*. 04 Մայիս 2018:

WORKS CITED

1. Avak'yan, Suren. *Konstitucionnoe pravo Rossii: Uchebnyj kurs*. v 2-h t., Jurist, Moskva. [*Constitutional law of Russia: Training course*. In 2 volumes, Lawyer, Moscow] 2007. (In Russian)
2. Boer, Victor, i Olga Pavel'eva. *Informacionnoe pravo: ucheb. posobie*. Ch. 1, GUAP, Sankt-Peterburg. [*Informational Rights*. P. 1, SUAI, Saint-Petersburg] 2006. (In Russian)
3. Collins, Hugh. *On the (In)compatibility of Human Rights Discourse and Private Law* Hugh Collins. London School of Economics and Political Science, LSE Law, Society and Economy Working Papers 7/2012, London, 2012.
4. Epping, Volker. *Epping Grundrechte*. 9 Auflage, Springer, Hannover/Hamburg. [*Epping Fundamental Rights*. 9th Edition, Springer, Hannover/Hamburg] 2021. (In German)
5. *ՀՀ Տահմանադրության մեկնանքներ*. ղնդհանր կհմբարդտ'յանբ` G. Harut'yunyani, A. Vagharshyani, Iravunq, Erevan. [*Comments on the RA Constitution*. Edited by G. Harutyunyan, A. Vagharshyan, Law, Yerevan] 2010. (In Armenian)
6. Hovhannisyan, Gor. *Y'ndhanur iravagitut'yun ev iravabanakan met'odabanut'yun*. Hanrayin divanagitut'yun baregorts'akan HK, Erevan. [*General Jurisprudence and Legal Methodology*. Public Diplomacy Charitable NGO, Yerevan] 2020. (In Armenian)
7. Jellinek, Georg. *System der subjektiven öffentlichen Rechte*. Heidelberg. [*System of Subjective Public Rights*. Heidelberg] 1892. (In German)
8. Kozlova, Ekaterina, I Oleg Kutafin. *Konstitucionnoe pravo Rossii*. Izdanie tret'e, pererabotannoe i dopolnennoe, Moskva. [*Constitutional law of Russia*. Third edition, Revised and Expanded, Moscow] 2001. (In Russian)
9. Ledjah, Irina i dr.. *Prava cheloveka: Uchebnik*. izd-vo Norma, Moskva. [*Human Rights: Textbook*. Norma Edition, Moscow] 2009. (In Russian)

10. Muradyan, Manuk ev urishner. *Petut'yan ev iravunqi tesut'yun: Usumnakan d'zer'nark*. 3-rd Iramshakvat's hrat., Lusabats hratarakchatun, Erevan. [*Theory of Law and State. Textbook*. 3rd revised publishing house, Lusabats publishing house, Yerevan] 2018. (In Armenian)
11. Raz, Joseph. *The Morality of Freedom*. Oxford University Press, Oxford, 1986.
12. Spahiu, Irma. *The nature and value of access to information laws in Canada and the EU: Ideals, Practices and Perspectives*. York University Toronto, Ontario, 2016.
13. *The Oxford Handbook of Comparative Constitutional Law*. Ed. Michel Rosenfeld and András Sajó, Oxford University Press, Oxford, 2012.
14. Ackerman, John, and Irma Sandoval-Ballesteros. "The Global Explosion of Freedom of Information Laws". *Administrative Law Review*, Volume 58, Number 1, Washington College of Law, American University, Winter 2006.
15. Bovens, Mark. "Information Rights: Citizenship in the Information Society". *The Journal of Political Philosophy*, Vol. 10, No. 3, 2002, pp. 317-341.
16. Saba, Roberto. "El Derecho de la Persona a Acceder a la Información en Poder del Gobierno". *Derecho Comparado de la Información*, No. 3, pp. 145-185. ["The Right of the Person to Access Information Held by the Government". *Comparative Information Law*. No. 3, pp. 145-185] 2004. (In Spanish)
17. Mendel, Toby. "Freedom of Information as an Internationally Protected Human Right". *ARTICLE 19*, <https://www.article19.org/data/files/pdfs/publications/foi-as-an-international-right.pdf>.
18. HH Sahmanadrakan dataran, *t'iv SDO-719 voroshum*. 28 Noy. 2007. [Constitutional Court of Armenia. *Decision No. SDO-719*. 28 Nov. 2007]. (In Armenian)
19. HH Sahmanadrakan dataran, *t'iv SDO-1412 voroshum*. 04 Mayis 2018. [Constitutional Court of Armenia. *Decision No. SDO-1412*. 04 May 2018]. (In Armenian)

THE THEORETICAL BASIS AND FEATURES OF FREEDOM OF INFORMATION AS A FUNDAMENTAL HUMAN RIGHT

EDGAR AVETISYAN

*European University in Armenia,
Faculty of International Relations and Law,
Chair of Law, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The article deals with the issue of the right to freedom of information, which has a special place in the system of basic human rights, which is subject to changes in any period of human history. In the modern world of enormous changes, the systematic study of such rights is becoming more and more urgent.

Within the framework of research the goal of revealing its theoretical-legal bases and features has been put forward. In order to achieve this goal, the research presented the issues of clarifying the concept of freedom of information in the theoretical-normative sphere, presenting it from the point of view of a fundamental right, and considering it as a right and freedom.

The study was conducted using scientific methods of abstraction, analysis and combination.

The research presents the Armenian-foreign theoretical definitions given to the freedom of information, as a result of which the broad meanings of the law under discussion are completed. Freedom of information is presented from the point of view of right and freedom, the structural elements of it as a fundamental right are separated. The

study concludes by clarifying and summarizing the scope of the legal entity, the addressee and object, the legal entity's claim and the scope of the state's responsibilities within the framework of the fundamental right to freedom of information.

Keywords: *Freedom of information, fundamental right, freedom, theory, theoretical approach, structured law, subject of law, addressee of law, object, demand.*

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ И ОСОБЕННОСТИ СВОБОДЫ ИНФОРМАЦИИ КАК ОСНОВНОГО ПРАВА ЧЕЛОВЕКА

ЭДГАР АВETИՏՅԱՆ

аспирант кафедры юриспруденции факультета международных отношений и юриспруденции Европейского университета в Армении, г. Ереван, Республика Армения

В статье рассматривается проблема права на свободу информации, занимающего особое место в системе основных прав человека, которая претерпевает изменения в любой период истории общества. В современном мире огромных перемен систематическое изучение таких прав становится все более актуальным.

В рамках исследования выдвинута цель выявления его видеоправовых основ и особенностей. Для достижения поставленной цели в исследовании поставлены задачи уточнения понятия свободы информации в теоретико-нормативной сфере, представления его с точки зрения основного права, рассмотрения как права и свободы.

Исследование проводилось с использованием научных методов абстрагирования, анализа и комбинирования.

В исследовании представлены как армянские, так и иностранные теоретические определения, данные свободе информации, в результате чего дополняются широкие смыслы обсуждаемого закона. Свобода информации представлена с точки зрения права и свободы, выделены структурные элементы ее как основного права.

Исследование завершается уточнением и обобщением сферы действия юридического лица, адресата объекта, требований юридического лица и сферы ответственности государства в рамках основного права на свободу информации.

Ключевые слова: *свобода информации, основное право, свобода, теория, теоретический подход, структурированное право, субъект права, адресат права, объект, спрос.*

ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

ՀՏԴ 340

DOI: 10.52063/25792652-2022.2.13-101

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՉՈՒԲԱԵՎ

Կոնստրա ընկերությունների խմբի հիմնադիր, փաստաբան,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Legaldep02@gmail.com

Մարդկային միտքը միշտ ձգտել է գտնել այնպիսի «աստվածային էտալոն», որի վրա հնարավոր կլինի կառուցել հասարակական կյանքը: Հասարակական կյանքի նորմատիվ կարգավորման «աստվածային նախասկզբի» փնտրտուքները հանգեցրել են բնական իրավունքի հայեցակարգի ձևավորմանը, որն ըստ էության կոչված էր ապահովել հավասարակշռվածություն «աստվածային կամքի» և հասարակական կյանքի նորմատիվ կարգավորման միջև: Սույն հոդվածի նպատակն է բնական իրավունքի վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա մոտեցումները խմբավորելով անտիկի, միջնադարի, նորի, նորագույնի և ժամանակակիցի ցույց տալ պատմական տարբեր ժամանակահատվածներում հիմնախնդրին վերաբերող մոտեցումների զարգացման միտումները, գտնել այն առանցքային գաղափարը որի ազդեցության տակ ծագեց և զարգացավ բնական իրավունքի տեսությունը: Հոդվածի հիմնական խնդիրն է վեր հանել այն հիմնական պատճառները, թե ինչու ծագեց բնական իրավունքների գաղափարը և ինչ ազդեցություն այն ունեցավ մարդկության պատմության արդի փուլի համար: Հոդվածում օգտագործված է պատմական համեմատության մեթոդը: Հետազոտության արդյունքներով արված է եզրահանգում, որ մեր օրերում՝ բառօգտագործման իմաստով, *jus naturale*-ն՝ մարդու իրավունքների բնահիմքի տեսությունը, մասնագիտական գրականության մեջ իր տեղը զիջել է նոր հիմնարար իրավաբանական ոլորտի՝ Մարդու իրավունքների տեսության:

Հիմնաբառեր՝ մարդու իրավունքներ, բնական իրավունքներ, մարդու բնություն, դրական իրավունք, բնահիմքի գաղափար, իրավունքի փիլիսոփայություն, *jus naturale*:

Ներածություն

Բնական իրավունքի ծագման և զարգացման հիմնահարցի հետազոտման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ ենք համարում բնական իրավունքի վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա մոտեցումները պայմանականորեն խմբավորել՝

- անտիկի (հունական պոլիսների փիլիսոփաներ, Հռոմի իրավաբաններ, ասիական պետություններ, հին աշխարհի քաղաքակրթություններ),
- միջնադարի (բնական իրավունքի կրոնականացում),

* Հոդվածը ներկայացվել է 09.06.2022թ., գրախոսվել՝ 27.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

նորի (լուսավորականության շրջան, բնական իրավունքն ապակրոնականացում), նորագույնի (երկրորդ աշխարհամարտից հետո ծավալված գործընթացներ) և ժամանակակիցի (վերպետական միջազգային պայմանագրեր, իրավունքի գլոբալացում)՝

նպատակ ունենալով ցույց տալ պատմական տարբեր ժամանակահատվածներում հիմնախնդրին վերաբերող մոտեցումների զարգացման տեմպերը:

Անտիկ շրջան

Մասնագետները բնական իրավունքի արմատները փնտրում են դեռևս Իոնյան դպրոցի փիլիսոփաների աշխատություններում (Զ.ա. 6-րդ դար): Իրենց շրջապատող գրեթե կուսական բնության ներդաշնակությունը համեմատելով բնության ներդաշնակությունից հեռու արիստոկրատների, դեմոկրատների, բռնակալության կողմնակիցների և այլոց ներպոլիսական վեճերի հետ՝ հենց Իոնյան դպրոցի փիլիսոփաները սկսեցին արտահայտել մտքեր սկզբնականի՝ իր օրգանական կազմակերպվածությամբ բացարձակ «Ֆիզիկական» (Physis բառից) իրավակարգի և մարդկային հարաբերական իրավասահմանումների (Nomos - օրենք) հակադրության մասին՝ նկատելով, որ վերջինիս ուժը դրված է եղել այնպիսի մի փխրուն հիմքի վրա, ինչպիսին մարդկային համաձայնությունն է (պայմանագիր, համաձայնագիր). «Ֆիզիկայի» բացարձակը և «օրենքի» հարաբերականությունը (nomos)՝ հորինված մարդկանց կողմից, այն տեսական դրույթն է, որը իոնյան փիլիսոփաները փոխանցել են ապագա սերունդներին. դա նրանց՝ ժամանակագրական կարգով «առաջնային» ավանդն էր բնական իրավունքի տեսության զարգացման գործում (Βερχωβοδος 130): Զ.ա. 5-րդ դարը համաշխարհային քաղաքակրթությանը տվել է հանրահայտ Աթենք պոլիսը, որը զարկ է տվել ազատ մարդկային մտքի զարգացմանը: Առաջինը սոփեստներն էին, որոնք Հին Հունաստանի պոլիսներում գործող կարգերը քննադատելու համար օրենքերը հակադրում էին բնությանը: Սոփեստները հասարակական երևույթների ուսումնասիրության հիմքում սկսեցին օգտագործել հարաբերականության մեթոդը: Սոփեստ մտածող Անտիֆոնոս Աթենացին կարծում էր, որ օրենքներն արհեստական են և կամայական, մինչդեռ բնության մեջ ամեն ինչ տեղի է ունենում ինքնաբերաբար՝ ըստ անհրաժեշտության: Նա գտնում էր, որ հելենները, մեծարելով ազնվականներին, վարվում են ինչպես բարբարոսներ: Բարբարոսներն ու հելենները բոլոր առումներով հավասար են: Կրտսեր սոփեստ Ալկիդամասը հայտարարում էր, որ բնությունը ոչ մեկին ստրուկ չի դարձրել, Աստված բոլորին ստեղծել է հավասար (Πεύστ 44) (*աստվածային հավասարության բանաձևը*¹ Ա. 4): Սոփեստների և նրանց ընդդիմախոսների ճառերի հակամարտության արդյունքում բնական իրավունքի և, առհասարակ, իրավունքի տեսության մեջ շրջանառության մեջ դրվեցին «ազատության», «արդարության», «բնության օրենքների», «բնական վիճակի» հասկացությունները: Այստեղ հետաքրքիր համադրություն կարելի է տեսնել ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի ձևական հավասարության գաղափարի հետ (Нерсесянц 19-20) :

Մատենագրությունը վկայում է, որ Հին Եգիպտոսում երկրային կյանքի օրենքների, տիրող կարգի (ընդգծումը՝ Ա.4) ծագումը կապվում էր աստվածային սկզբի հետ: Նրանք համոզված էին, որ աստվածներն են ստեղծել պետությունն ու գործող կարգավորիչները: Հին Եգիպտացիների առասպելական-կրոնական հայացքներում ամփոփված էր այն գաղափարը, որ արդարությունն ու արդարադատությունը (լատ.՝ in iudicio et iustitia) մարմնավորում է Մասա¹ աստվածուհին: Երկրային իշխանության և հաստատված վարքագծի կանոնների, այդ թվում՝ հիշատակվող ժամանակների իրավունքի աղբյուրների աստվածային բնույթը նշանակում էր, որ դրանք

¹ Մասնագիտական գրականության մեջ հանդիպում է նաև Մա-ատ տարբերակը:

համապատասխանում կամ պետք է համապատասխանեն «Մաստիս», այսինքն՝ արդարության բնական-աստվածային կարգերին: «Մաստը» այստեղ ունի ճշմարտության, արդարության իմաստ, որը հետագայում դրվելու է բնաիրավական իրավաբանական հիմքում և անվանվելու է բնական իրավունք (Нерсесянц 19-20):

Հին Եգիպտոսում պատկերացում է եղել ելակետային, հիմնարար գաղափարների հենքի վրա հասարակական կյանքի կարգավորման անհրաժեշտության մասին: Այստեղ Մաստը հանդիսանում է արդարություն, արդարադատություն, ճշմարտություն: Վարքագծի կարգավորման հարցում պետք է հենվել Մաստի միջոցով մարմնավորված «սկզբունքների» վրա: Դժվար չէ նկատել, որ Մաստը հին Եգիպտացիների շրջանում ունեցել է ներկայիս սահմանադրության դերակատարությունը: Սակայն սա այլ տեսակի սահմանադրություն է. սա «աստվածային սահմանադրություն» է:

Բոլորովին այլ էր իրավիճակը Հին Հնդկաստանում: Այստեղ հասարակությունը բաժանված էր (հարաբերականության որոշակի տարրերով՝ այն պահպանվել է առ այսօր) 4 սոցիալական խմբերի, որոնք կոչվում էին վարնաներ՝ բրահմաններ, քշատրիններ, վայշիններ, շուդրաներ (Касты в Индии: особенности общества): Հին Հնդկաստանի միջային պատումներում խոսվում է այն մասին, որ վարնաները առաջացել են տիեզերական հսկա Պուշուրիի մարմնից. ընդ որում՝ բրահմանները սերված են Պուշուրիի բերանից, քշատրինները՝ ձեռքերից, վայշինները՝ կոնքերից, շուդրաները՝ ոտնաթաթերից: Այս վարնաներից առաջին երեքի ներկայացուցիչները համարվում էին համայնքի լիիրավ անդամներ, իսկ շուդրաները գտնվում էին կախյալ վիճակում (Лейст 15): Կաստայական բաժանումը պայմանավորում էր նաև վերջիններիս «իրավասուբյեկտության» ծավալը: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ «ի բնե», բնական իրավունքների մասին այստեղ կարող ենք խոսել միայն կոնկրետ վարնայի համամասնությամբ: Այսինքն՝ եթե մարդը ծնվել է որպես քշատրին, նրան վերաբերվում են բոլոր այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք ավանդաբար ունեցել են այս կաստայի ներկայացուցիչները: Հնդիկները չէին ընդվզում իրենց կարգավիճակի դեմ՝ համարելով դա երկնային կամք: Նրանց մտածողության հիմքում ընկած էր ռեինկարնացիայի գաղափարը: Հնդիկների խորին համոզմամբ՝ եթե մարդը ապրի առաքինի կյանքով, հաջորդ կյանքում կծնվի սոցիալական ավելի բարձր կարգավիճակով, իսկ հակառակ պարագայում՝ հոգով կիջնի ընդհուպ մինչև կենդանու կամ բույսի մակարդակի: Ավանառու է, որ հնդիկների մոտ բնական իրավունքի գաղափարը ձևավորվել է որակապես այլ հենքի վրա: Նրանք իրենց սոցիալական ծագումը և դրանից բխող հետևանքները համարում էին բնական երևույթ:

Իրավունքների, պետության, մարդու ծագման վերաբերյալ կրոնական բնույթի բացատրություններ ենք գտնում նաև Հին Չինաստանում, որտեղ տիրապետող էին հիմնականում դաոսիզմի, կոնֆուցիականության, մաոիզմի և լեգիզմի գաղափարախոսությունները: Հետաքրքրական է հատկապես բնական իրավունքի և դաոսիզմի հարաբերակցությունը: Ուսմունքի հիմքում ընկած է «դաոի» (բառացի՝ ճանապարհ) գաղափարը: Վերջինս փոխառվել է չինական ավանդություններից, որտեղ այն ուներ մարդու, ժողովրդի ճշմարիտ կյանքի ուղու իմաստ, որը համապատասխանում է երկնքի թելադրանքին: Վերաիմաստավորելով այս հասկացությունը՝ դաոսիզմի հիմնադիրները ձգտում էին հիմնավորել, որ երկնային կամքն է շնորհիվ դաոի օրենքները ժողովրդին: Համաձայն Լաո Ցզիի հետևորդների մեկնաբանության՝ դաոն աշխարհի բացարձակ սկիզբն է: Ավելին՝ նրանք կարծում էին, որ դաոն նախորդում է երկնային տիրոջը և իր հզորությամբ գերազանցում է վերջինիս: Դաոն է ամեն ինչի սկիզբը, բնական սկզբի և փոփոխությունների անվերջ հոսքը, դրանց փոխակերպումը մի ձևից մյուսի, ծննդի ու մահվան մշտնջենական պտույտը: Մարդուն այն ներկայանում է գերբնական օրենքի տեսքով, որը կառավարում է աշխարհը: Այս ուժի դեմ մարդուն մնում է միայն գիտակցել սեփական մանրությունն ու կրքերից ազատվելու ճանապարհով երկարացնել իր կյանքը: Բուն

աշխատանքում երկնային բառի փոխարեն օգտագործված է երկրային բառը, ինչը, կարծում ենք, տպագրական սխալ է, քանի որ հակառակ պարագայում միտքը զրկվում է տրամաբանությունից: Ինչպես տեսնում ենք, Չինաստանում ևս աշխարհի սկիզբը և մարդու դերն այդ աշխարհում կապվում է ինչ-որ վերերկրային ուժի հետ: Այստեղ ևս առաջարկվում է ընդունել գործող կարգերը՝ առանց «փոփոխությունների և լրացումների»:

Հին Հռոմում իրավաբանները քաղաքացիական իրավունքի և ժողովուրդների իրավունքների շարքում առանձնացնում էին բնական իրավունքը (*jus naturale*)՝ որպես բնության օրենքների և իրերի բնական կարգի արտացոլում (Խրոպանյուկ 208): Այս կամ այն տարբերությամբ՝ մոտեցման այսպիսի ձևաչափը բնորոշ էր հիմնախնդրով զբաղվող գրեթե բոլոր հռոմեացի իրավաբաններին: Որպես օրինակ վկայակոչենք Ցիցերոնին, ով ասում էր, որ պետության օրենքը, որը հակասում է բնական իրավունքին, չի կարող դիտվել որպես օրենք (Խրոպանյուկ 208): Ցիցերոնը առաջին իրավաբանն էր, որը հրատարակել է բնական իրավունքին վերաբերող հատուկ աշխատություն՝ «*De origine juris*»-ը (Իրավունքի մասին), որտեղ և շարադրել է բնական իրավունքի վերաբերյալ իր հայացքները: «Մենք ի բնե հակված ենք սիրել մարդկանց, իսկ դա էլ հենց օրենքի հիմքն է»: Արդարադատության օրենքը արդարությունն է: «Արդարությունն ընդհանրապես գոյություն չունի, եթե հիմնված չէ բնության վրա...»: Ցիցերոնը իր ստեղծած իրավունքի դասակարգման մեջ հիմնարար տեղ է հատկացնում բնության (բնական) օրենքին: Այլ կերպ ասած՝ բնական իրավունքը բոլոր իրավական կառույցների հիմքն է: Ի տարբերություն ստոիկների՝ Ցիցերոնը աստվածային օրենքին (*lex aeterna*) համակողմանի բնորոշում չի տալիս: Աստված ստեղծեց բանականությունը, աստվածային բանականության բարձրագույն դրսևորումը *lex naturalis*-ն է: Բնական օրենքը, ըստ Ցիցերոնի, իդեալ է (իդեալական մոդել), որի հետ փոխկապակցված են և չափվում են մարդու կամքով հրապարակված բոլոր իրավական դրույթները: Հռոմեացի մեծ իրավաբանի գրություններում հստակ սահմանագիծ է դրվում երկու հասկացությունների՝ իրավունքի (*jus*) և օրենքի (*lex*) միջև: «Յուսի» տակ հիմնականում հասկացվում էր բնական իրավունքը: Դա բնության գործողության, ավելի ճիշտ՝ նրա ներքին (իմանենտ) շարժումների և միացությունների արդյունք է: Ի տարբերություն ստոիկների՝ Ցիցերոնը նշանակալի ուշադրություն չի դարձնում հասկացության բացահայտմանը. «*lex aeterna*»-ն, «*Jlrec*»-ը (օրենքներ) մարդու որոշումների արդյունք են (*Верховодов* 40): Հակադրելով արդար (հավասար-*aequus*) իրավունքը անկատար օրենքին՝ Ցիցերոնը գրել է. «Եթե իրավունքները հաստատվեին ժողովուրդների հրամանով, առաջատար մարդկանց որոշումներով, դատավորների դատավճիռներով, ասպա կլինեին նաև ավազակություն անելու, շանալու, կեղծ կտակներ ներկայացնելու իրավունքներ (*Ковалевский* 92):

Բնական իրավունքի դերը միջին դարերում

Բնական իրավունքը, որպես գաղափարաբանություն, մինչև միջնադար պահպանեց իր «նախնական» տեսքը և վերջնականորեն չձևակերպվեց որպես մարդու բնական իրավունքների վերաբերյալ տեսության: Միջնադարին բնորոշ բոլոր բնագավառների «կրոնականացումը» չէր կարող արհամարհանքով անցնել այնպիսի ոլորտների կողքով, ինչպիսիք են՝ մարդը, նրա դերը աշխարհում, մարդու իրավունքները, ազատությունները, դրանց ստեղծարար սկիզբը և այլն: Նշված ոլորտները հանդիսանում են նաև բնաիրավական տեսության հետազոտման առանցքը: Միջնադարում բնական իրավունքի գաղափարը տեսական առումով և դրա գործնական կիրառման հնարավորությունների տեսանկյունից մտնում էր անբավարար: Դրանում պարունակվող անհամապատասխանությունները հնարավորություն տվեցին օգտագործել այն՝ կախված ժամանակի պահանջներից: Այնուամենայնիվ, մնալով դոկտրինա՝ այն սերտորեն կապված չէր մարդկային հասարակության

գոյության իրական պայմանների հետ: Թովմա Աքվինացին փորձեց միացնել բնական իրավունքն իրական աշխարհի հետ՝ այն ուղղակիորեն կապելով դրական իրավունքի հետ՝ հնարավոր դարձնելով բնական օրենքի բովանդակության ընդլայնումը մարդկային օրենքների կողմից, դրական իրավունքի նորմերին բնական իրավունքի նորմերի ավելացումը (Бернацкый 6-9): Թ. Աքվինացին հստակ տարբերություն էր տեսնում գրված ու չգրված օրենքների միջև: Խոսելով, իր ձևակերպմամբ, մարդկային (դրական, գրված) իրավունքի մասին՝ հեղինակը ի նկատի էր ունենում ֆեոդալական իրավունքը: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ Աքվինացին ժխտում էր մարդկային (դրական) այն օրենքների նշանակությունը, որոնք հակասում էին բնական օրենքի սահմանած դրույթներին: Նրա համար օրենքներ չէին համարվում ինքնապահպանման, ընտանեկան կյանքի և դաստիարակության, ճշմարտության (Աստծո) փնտրտուքի և մարդկանց արժանավայել շփման կարիքներին հակադարձող դրույթները: Ըստ Աքվինացու՝ օրենքի մեկ այլ տեսակ է աստվածայինը: Այն տրվում է Աստվածաշնչում և անհրաժեշտ է 2 պատճառներով: Առաջին հերթին՝ մարդկային (դրական) օրենքը ընդունակ չէ չարիքը ամբողջովին բնաջնջելու և երկրորդ՝ մարդկային մտքի անկատարելության պատճառով: Մարդիկ ինքնուրույն չեն կարող հանգել ճշմարտության մասին միասնական պատկերացման (Нерсесянц 124): Այս ամենով հանդերձ՝ Թ. Աքվինացին նշում էր, որ ֆեոդալական, գրված օրենքները պետք է կատարվեն անշեղորեն, ինչպես աստվածային ցուցումները: Սրանով, ամենայն հավանականությամբ, Թ. Աքվինացին փորձում էր կրոնական դոգմատիկայի միջոցով նպաստել պետական կառավարման արդյունավետ իրականացմանը:

Նոր շրջան

Բնաիրավական գաղափարախոսությունը թռիչքածն զարգացում ապրեց հատկապես 17-րդ դարում՝ շնորհիվ իրավական մտքի խոշորագույն ներկայացուցիչներ Թոմաս Գոբսի և Ջոն Լոկի (Անգլիա), ֆրանսիացի լուսավորիչներ Շառլ Լոկի Մոնտեսքիոյի, Ժան Ժակ Ռուսոյի և Լիդերյանդցի տեսաբան Զուգո Զրոցիուսի: Սակայն լուսավորականության շրջանում տեղի ունեցած ինդրո առարկա բնագավառի գիտական պայթյունը պատահականության արդյունք չէր և տարերայնորեն չէր ձևավորված: Անվանի լուսավորիչները իրենց ձեռքի տակ ունեին զարգացման երկուհազարամյա պատմություն անցած գաղափարներ. եկել էր դրանք ամփոփելու և հասարակական կյանքում ներդնելու ժամանակը:

Բնական իրավունքի զարգացման վրա մեծ ազդեցություն է թողել անվանի մտածող Թոմաս Գոբսը: Բնական իրավունքի վերաբերյալ Գոբսի պատկերացումները ամփոփված են իր հայտնի աշխատության՝ «Լևհիաթանի» մեջ: Այստեղ նա ձևակերպել է իր հայտնի 20 բնական օրենքները: Նշված օրենքների մշակման ժամանակ Գոբսը բավականին շատ է ապավինում Արիստոտելի մտքերին: Գոբսը իրավունքի ու բարոյականության տարանջատման ջատագովներից չէր: Հակառակը՝ նա ձգտում էր իրավունքի սուբյեկտների բնական իրավունքները բարոյականացնել, գտնել իր ժամանակի իրավունքի բարոյական հիմքը (Верховодов 8): Թ. Գոբսը իր բնաիրավական ուսմունքը կառուցում էր մարդու բնության և կրքերի հետազոտման հիման վրա: Գոբսը խիստ քննադատորեն էր վերաբերում այդ կրքերին՝ գտնելով, որ մարդկանց բնութագրական է մրցակցությունը, անվստահությունը, փառասիրությունը: Այս կրքերը մարդկանց դարձնում են թշնամիներ (Пейст 192): Գալով այսպիսի եզրահանգման՝ Գոբսը տվեց իրավագիտության ամենահայտնի ասույթներից մեկը՝ *homo homini lupus est* (մարդը մարդուն գայլ է): Գոբսը գտնում էր, որ բնական վիճակում, որտեղ չկա մարդկանց վախի մեջ պահող իշխանություն, տեղի է ունենում *bellum omnia contra omnes*¹ (բոլորի պատերազմը բոլորի դեմ): Այսպիսի

¹ Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել այս ձևակերպման այլ շրջադարձ. *Omnium bellum contra omnes*:

կարգավիճակի կործանանար ուժը ստիպում է մարդկանց դուրս գալ բնական վիճակից: Այս ուղին մարդկանց թելադրվում է բնական օրենքների (կարծում ենք՝ հեղինակը ի նկատի ունի բնության օրինաչափությունները), բանականության «կարգադրագրերի» կողմից: Համաձայն Հոբսի՝ բնության մեջ գոյություն ունեն բնական իրավունքներ և բնական օրենքներ: Առաջինի տակ Հոբսը հասկանում էր ազատությունը՝ անել ամեն ինչ ինքնապահպանման համար, իսկ երկրորդ դեպքում ընդգծում է այն արգելված գործողությունները, որոնք կործանարար են կյանքի (ենթադրում ենք՝ համակեցության) համար: Բնական օրենքները հռչակում են՝ պետք է փնտրել խաղաղություն և այդ նպատակով հրամայական է փոխադարձաբար հրաժարվել «ամեն ինչ անելու» իրավունքից: Հրաժարվելով բնական իրավունքներից (վերը բերված իմաստով)՝ մարդիկ այդ «գործառույթը» փոխանցում են պետությանը (Ֆեյտ 192): Թ. Հոբսը առաջիններից էր, որ ձևակերպեց մեր օրերում բանաձևային համարվող այն դրույթը, համաձայն որի՝ այն, ինչ արգելված չէ օրենքով, թույլատրելի է: Ըստ Հոբսի՝ հետազոտվող բանաձևումը բնութագրվում է այսպես. «Այնտեղ, որտեղ սուվերենը չի նախատեսել որևէ կանոններ, հպատակը ազատ է իր հայեցողությամբ ընտրել՝ դրսևորել կոնկրետ վարքագիծը» (Ֆեյտ 194): Ակնառու է, որ Թոմաս Հոբսի՝ վերը բերված ընկալումները միտված էին մարդու՝ որպես անհատականության ուսումնասիրությանը, նրա իրավունքների հիմնավորմանը մարդկային բանականության միջոցով:

Բնական իրավունքը, որի օգնությամբ Աստված իշխում է մարդկանց և պատժում նրանց, ովքեր խախտում են իր օրենքները, պետք է բխի ոչ թե արաբազործության փաստից, ասես Աստված հնազանդություն էր պահանջում որպես երախտագիտություն իր բարի գործերի համար, այլ իր անդիմադրելի հզորությունից (ԾճԵ 278): Այս բարդ արտահայտության իմաստը հնարավոր է պարզել երկու տեսանկյունից՝ Աստվածաբանական (Աստված է արարիչը աշխարհի) և իրավական՝ բնական օրենքը մարդկանց երկրային գոյության հիմքն է. դրա խախտման համար հետևում է պատիժ, որը համարժեք է «Աշխարհի արարչի» «անդիմադրելի հզորության» ուժին: Բայց աշխարհիկ գործերում եկեղեցին չունի ինքնուրույնություն և չի կարող ղեկավարվել «օտար ուժի» կողմից: «Գերակայությունը նրա նկատմամբ» «բնական օրենքի հիման վրա» պատկանում է «իրենց տիրույթներում գտնվող բոլոր միապետերին» (ԾճԵ 573):

Ջոն Լոկը ևս հանդիսանում էր բնաիրավական տեսության դրոշակակիր: Ինչպես շատ այլ հեղինակներ, նա ևս մարդու իրավունքներին վերաբերող իր դատողությունները բացահայտում է պետության հասկացությունն ու Էությունը լուսաբանելիս: Պետության առաջացման պայմանագրային տեսության միջոցով բնութագրելով պետությունը, վերջինիս ծագումը և նշանակությունը՝ Լոկը տրամաբանական շեշտը դնում է այն հանգամանքի վրա, որ մարդիկ, կամավոր ստեղծելով պետությունը, պետք է հետևեն բացառապես իրենց բանականությանը: Մարդիկ սպառիչ և պարփակված որոշում են այն լիազորությունների ծավալը, որոնք նրանք փոխանցում են պետությանը: Բնական իրավունքների և հիմնարար ազատությունների՝ տոտալ հրաժարման մասին (հօգուտ պետության) խոսք գնալ չի կարող¹: Կյանքի, սեփականության, հավասարության և ազատության իրավունքները մարդը ոչ մի պարագայում չի կարող օտարել (Нерсесян 334): Լոկը Էական նշանակություն էր տալիս օրենքներին: Նա կարծում էր, որ քաղաքացիական հասարակության կամ օրենսդիրի կողմից ընդունված ցանկացած կարգադրագիր դեռևս օրենք չէ: Օրենքի «տիտղոս» կարող է ստանալ միայն այն ակտը, որը բանական էակին ցույց է տալիս այնպիսի վարքագծի կանոններ, որոնք համապատասխանում են իր սեփական «շահերին» և ծառայում համընդհանուր

¹ Սրանով Լոկը միաժամանակ հակադարձում է Հոբսին, որ տրամագծորեն հակառակ դիրքորոշում ուներ:

բարորդությանը (Нерсесянц 335): Բնույթով այդպիսին էին նաև ֆրանսիացի նշանավոր լուսավորիչներ Շառլ Լուի Մոնտեսքյոյի և Ժան-ժակ Բուսոյի հիմնադիր մեկնաբանությունները: Առավել հետևողականորեն և մեծամասամբ «մաքուր» բնական իրավունքի տեսությունը ներկայացված է Պուֆենդորֆի աշխատություններում: Պուֆենդորֆը պնդում էր, որ ֆիզիկական հատկությունների կամ հոգեբանության տեսանկյունից մարդկային արարքները չեն տարբերակվում: «Չկա ի բնե բարի կամ չար արարք, միայն էթիկական կամ իրավական օրենքով սահմանված գնահատականն է նրանց հաղորդում բարոյական որակավորում և նույնիսկ քանակականացում»: Պուֆենդորֆի, ինչպես և բնաիրավական այլ տեսաբանների մոտ դեռ շատ սերտ է կապը բարոյականության և իրավունքի, էթիկայի և իրավունքի փոխհարաբերության, ընդ որում՝ մարդու բնականության գործողությունների, իրականության՝ բնական մարդկային գիտակցման միջոցով: Ս.Պուֆենդորֆն իրականացրել է բնական իրավունքի համակարգումը: Նրա ուսմունքի համաձայն՝ հասարակությունը գոյություն ունի «lex naturalis» բնական օրենքի շնորհիվ, որը արտաքին իշխանության կողմից տրված հրաման է և նորմերի օբյեկտիվ համակարգ է, որը ձևականորեն տարանջատում է թուլյատրեյի և ողջամիտի սահմանները: Մարդկային գործողություններին իրավական գնահատական տալու համար որոշիչ է դրանց համապատասխանությունը բնականության արտաքին հրահանգներին: Այստեղ միաձուլվում են իրավունքի գաղափարը և իրավունք հասկացությունը, ինչը հանգեցնում է իրավունքի տարանջատմանը բարոյականությունից և հասարակություն հասկացության անհատականացմանը: Հասարակության հասկացության սահմանումը՝ որպես անհատների միավորում, որի անհրաժեշտությունը հիմնված է (մարդկանց կենսաբանական անօգնականության հետևանքով) բոլորի համար ընդհանուր՝ համակցության ռացիոնալ ցանկության վրա և ձևականորեն իրականացվում է «lex naturalis» բնականի օրենքի պարտադիր ուժի շնորհիվ, հիմք է հանդիսանում բնական իրավունքի ինդիվիդուալիստական հայեցակարգի ձևավորման համար, որը ստանում է իրավական ձև (Рябченко 3):

Բնական իրավունքի տեսության հետագա զարգացումը շարունակվեց աշխարհի ամերիկյան հատվածում, որտեղ այս տեսությունը ընդունեց վառ արտահայտված գործնական նշանակություն: ԱՄՆ-ը սահմանադրության՝ որպես նորմատիվ-սոցիալական փաստաթղթի հայրենիքն է, և հենց այս երկրի սահմանադիր հայրերն էին, որ կյանքի հավիտենական օրենքները (մարդու բնական իրավունքների առումով) իմպլեմենտացրեցին սահմանադրաիրավական տիրույթ: Ավաճող վերաբերում է Անկախության ամերիկյան հռչակագրին (1776թ. հուլիսի 4), որն ըստ էության առաջին քաղաքական փաստաթուղթն էր, որում խոսվեց մարդու, ժողովրդի բնական և անօտարելի իրավունքների մասին: Այս փաստաթղթով հայտնի չափով տրվեց բնական իրավունքների հստակ ցանկ: Հռչակագիրը ազդարարեց, որ Տիրոջ կողմից բոլոր մարդիկ օժտված են կյանքի, ազատության և երջանկության ձգտման իրավունքներով: Այստեղ խոսվեց նաև ժողովրդի կոլեկտիվ բնական իրավունքների մասին (ժողովրդի անկախության հաստատման իրավունքը, կառավարման տիրապետող համակարգը նորով փոխարինելու իրավունքը (ԱՄՆ անկախության հռչակագիրը): Ընդ որում՝ բնական իրավունքի տեսության զարգացման համար այս ժամանակները և իրադարձությունը հեղափոխական ազդեցություն ունեցան: Տեղի ունեցան բնական իրավունքների ցանկի շուրջ բանավեճեր, դրանց ամրագրումներ քաղաքական, նորմատիվ փաստաթղթերում. դարերի խորքից ձևավորված սաղմերը ստացան ավարտուն հայեցակարգի տեսք: Ամերիկյան հռչակագրին հաջորդեց ֆրանսիայում մարդու և քաղաքացու հռչակագրի ընդունումը (1789թ.), որում հստակ խոսվեց այնպիսի հիմնարար դրույթի մասին, ինչպիսին օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարությունն է: Այս հռչակագրի արժանիքներից է նաև այն, որ

վերջինս ամրագրում ունի առ այն, որ «մարդիկ ծնվում և ապրում են ազատ և հավասար իրավունքներով» (Մարդու և քաղաքացու ֆրանսիական հռչակագիր):

Ժամանակակից միտումներ

Երկրորդ աշխարհամարտի ավարտից Միավորված ազգերի կազմակերպության, տարբեր միջազգային կառույցների հիմնադրումից հետո բնական իրավունքի տեսությունը ենթարկվեց ևս մեկ բեկումնային փոփոխության: Բնական իրավունքի տեսությունը այս շրջանում կատարյալ «ռենեսանս» էր ապրում: Հենց այս շրջանում էր բնական իրավունքը վերաիմաստավորվում, ձևավորվում էին նոր մոտեցումներ, մեկնաբանություններ: Այս գործընթացը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «վերածնված բնական իրավունք» անվանմամբ: Այս ամենի արդյունքը եղավ այն, որ ընդունվեցին մարդու բնական իրավունքներին վերաբերող մի շարք հեղինակավոր միջազգային իրավական փաստաթղթեր (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և այլն): Ժամանակակից իրավական ըմբռնումը դրական ու բնական իրավունքի համակեցության ձև է, ավելին՝ բնական իրավունքը հիմնականն է՝ որպես ժամանակակից իրավական ըմբռնման հիմք: Ելնելով դրանից, գիտակցելով հասկացությունների ցանկացած սահմանումների հարաբերականությունը՝ կարելի է առաջարկել ժամանակակից բնական իրավունքի հետևյալ սահմանումը. ժամանակակից բնական իրավունքը հավասար սուբյեկտների ազատության՝ պատմականորեն պայմանավորված և արդարության սկզբունքի վրա հիմնված միջոց է, որի բովանդակությունը նրանց իրավունքներն ու պարտականություններն են, և որն ունի իշխող բնույթ և ամրագրված է հատուկ իրավական ձևերով (Шокымов 5):

Եզրակացություն

Արդեն մեր օրերում բառօգտագործման իմաստով *jus naturale*-ն՝ մարդու իրավունքների բնաիրավական տեսությունը, մասնագիտական գրականության մեջ իր տեղը զիջել է նոր հիմնարար իրավաբանական ոլորտի՝ Մարդու իրավունքների տեսության: Բնական իրավունքի ժամանակակից դարաշրջանում դրա «ճիշտ իրավունքի» սանդղակի գործառույթը մեծապես ստանձնել է «մարդու իրավունքներ» կատեգորիան: Որպես այդպիսին՝ «անընդունելի կլինի մարդու իրավունքների գոյությունը կախվածության մեջ դնել գերիշխող հասարակական ու պետական ուժերի կողմից դրանց ճանաչումից, և հետևաբար այս իրավական եզրույթը նեղացնել պետական կամ միջազգային դրական իրավունքի մակարդակին: Այսպիսով՝ իրականացված վերլուծությունների համատեքստում կարող ենք արձանագրել, որ բնական իրավունքի վերաբերյալ մտորումները ուղեկցել են մարդկությանը և բոլոր քաղաքակրթություններին: Թեև մենք այսօր ունենք ավարտուն փաստաթղթեր, որոնք մարդու բնական իրավունքների նորմատիվային ամրագրումներ են պարունակում, սակայն բնաիրավական բառաֆոնը և գաղափարների ամփոփումը դրանց մեջ երկու հազարամյակի արգասիք է: Բնական իրավունքի տեսությունը ծագեց և զարգացավ սուր բանավեճերի արդյունքում: Իրավական քարտեզի իմաստով այն ընդգրկեց աշխարհի բոլոր ներկա և նախկին հասարակությունները: Պատմականորեն այս տեսության ներսում ձևավորվեց հայացքների մի այնպիսի համախումբ, համաձայն որոնց՝ մարդը ծնունդի փաստով ունի որոշակի իրավունքներ և ազատություններ, որոնք անորոշեցողական մակարդակում են, նախորդում են դրան և օրենքի (պոզիտիվ իմաստով) միջոցով չեն կարող նեղացվել կամ սահմանափակվել:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խրոպանյան, Վալենտին. *Պետության և իրավունքի տեսություն*, Եր. Գոշ, 1997, էջ 208:
2. «Декларация независимости США». 12.05.2017. www.russiantampa.com/about_usa/declaration.php. Доступно: 18.07.2022
3. «Декларация прав человека и гражданина». [www.agitclub.ru /museum/revolution1/1789/ declaration.html](http://www.agitclub.ru/museum/revolution1/1789/declaration.html). Доступно: 18.07.2022
4. Бернацкий, Георгий. *Развитие представлений о природе естественного права в истории правовой мысли*. Автореферат диссертации по ВАК РФ. 12.00.01, 2001.
5. Верховодов, Евгений. *Генезис теории естественного права в западной европе*. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Нижний Новгород, 2001.
6. Гоббс, Томас. *Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского*. Избранные произведения. Т. 1-2. М., 1964.
7. Гоббс, Томас. *Основы философии. Сочинения*. Т. 1-2. М.: Мысль, 1964.
8. Нерсисянц, Владимир. *История политических и правовых учений*, Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА • М), 2000.
9. Лейст, Олег. *История политических и правовых учений*, Учебник Юридическая литература, 1997.
10. «Касты в Индии: особенности общества». Индианочка, 09 Декабря 2013, <http://indianochka.ru/kultura/obshhestvo/kasty.html> Доступно: 09.07.2022.
11. Ковалевский, Максим. *История политических учений Нового времени*. СПб, 1911.
12. Рябченко, Надежда. *Проблемы естественного права в учениях немецких юристов*, и автореферат диссертации по ВАК РФ 12.00.01, 2002.,
13. Шокумов, Юрий. *Современное естественное право и частноправовой договор*, диссертация кандидата юридических наук: 12.00.01, 2000.
14. Brugger, Winfried. *Menschenrechte im modernen Staat , Archiv des öffentlichen Rechts*. – 1989 р. – Band 114

WORKS CITED

1. Khropanyuk, Valentin. Petut'yan yev iravunk'i tesut'yun, t'argmanut'yun KH. Harut'yunyan ej 208, [Khropanyuk, Valentin Theory of State and Law, Yer. Gosh, , translation by Kh. Harutyunyan page 208] 1997. (In Armenian)
2. Deklaratsiya nezavisimosti SSHA www.russiantampa.com/about_usa/declaration.php, Dostupno: 18.07.2022 [The US Declaration of Independence] 2017. (In Russian)
3. Deklaratsiya prav cheloveka i grazhdanina [www. agitclub.ru /museum/revolution1/1789/ declaration.htm](http://www.agitclub.ru/museum/revolution1/1789/declaration.htm)), [Declaration of the Rights of the Man and of the Citizen of 1789]. (In Russian)
4. Bernatskiy, Georgiy Razvitiye predstavleniy o prirode yestestvennogo prava v istorii pravovoy mysli, avtoreferat dissertatsii po VAK RF 12.00.01, doktor yuridicheskikh nauk, 2001, [Bernatsky, Georgy, Development of Ideas about the Nature of Natural Law in the History of Legal Thought, abstract of the dissertation on the Higher Attestation Commission of the Russian Federation 12.00.01, Doctor of Law] 2001. (In Russian)
5. Verkhovodov, Yevgeniy Genезis teorii yestestvennogo prava v zapadnoy yevrope, Dissertatsiya na soiskaniye uchenoy stepeni kandidata yuridicheskikh nauk, Nizhniy Novgorod, 2001 g, [Verkhovodov, Evgeny Genesis of the Theory of Natural Law in Western Europe, Dissertation for the degree of candidate of legal sciences, Nizhny Novgorod] 2001. (In Russian)

6. Gobbs, Tomas Leviathan, ili materiya, forma i vlast' gosudarstva tserkovno-gro i grazhdanskogo. Izbrannyye proizvedeniya. Vol. 1-2 M., 1964 g, [Hobbes, Thomas Leviathan, or Matter, Form and Power of the Church and Civil State. Selected works. V. 1-2 M.] 1964. (In Russian)

7. Gobbs Tomas Osnovy filosofii. Sochineniya. T. 1-2. M.: Mysl', 1964 t'. , [Thomas Hobbes, Fundamentals of Philosophy. Works. Vol. 1-2. M.: Thought] 1964 (In Russian)

8. Nersesyants, Vladimir Istoriya politicheskikh i pravovykh ucheniy, Izdatel'stvo NORMA (Izdatel'skaya gruppa NORMA–INFRA • M), 2000t'. , [Nersesyants, Vladimir, History of political and legal doctrines, NORMA Publishing House (NORMA-INFRA Publishing Group • M), 2000. (In Russian)

9. Leyst, Oleg, Istoriya politicheskikh i pravovykh ucheniy, Uchebnik [Yuridicheskaya literatura, 1997.t'. , [Leist, Oleg, History of Political and Legal Doctrines, Textbook Legal Literature] 1997. (In Russian)

10. «Kasty v Indii: osobennosti obshchestva». Indianochka, 09 Dekabrya 2013, <http://indianochka.ru/kultura/obshhestvo/kasty.html> Dostupno: 09.07.2022. ["Castes in India: characteristics of society." Indianochka, <http://indianochka.ru/kultura/obshhestvo/kasty.html>] 2013. (In Russian)

11. Kovalevskiy, Maksim Istoriya politicheskikh ucheniy Novogo vremeni. SPb., 1911 t'. , [Kovalevsky, Maxim, History of political doctrines of modern times. St. Petersburg] 1911. (In Russian)

12. Ryabchenko, Nadezhda Problemy yestestvennogo prava v ucheniyakh nemetskikh yuristov, i avtoreferat dissertatsii po VAK RF 12.00.01, kandidat yuridicheskikh nauk, 2002 t'. , [Ryabchenko, Nadezhda, Problems of Natural Law in the Teachings of German Lawyers, and Abstract of the Dissertation on the Higher Attestation Commission of the Russian Federation 12.00.01, Ph.D. in Law] 2002. (In Russian)

13. Shokumov, Yuriy, Sovremennoye yestestvennoye pravo i chastnopravovoy dogovor, dissertatsii kandidata yuridicheskikh nauk : 12.00.01, 2000 t'. , [Shokumov, Yuri, Modern Natural Law and Private Law Contract, dissertations of a candidate of legal sciences: 12.00.01] 2000. (In Russian)

14. Brugger, Winfried, Menschenrechte im modernen Staat , Archiv des öffentlichen Rechts. – 1989 t'. – Band 114

BACKGROUND OF THE ORIGIN OF THE THEORY OF NATURAL LAW AND THE TRENDS OF ITS DEVELOPMENT

ALEXANDER KOCHUBAYEV

*Contra Group of Companies, Founder, Advocate;
NAS RA Institute of Philosophy, Sociology and Law, PH.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The human mind has always sought to find such a "divine standard" to build social life on it. The search for the "divine principle" of the normative regulation of public life led to the formation of the concept of natural law, which, in fact, was designed to ensure a balance between the "divine will" and the normative regulation of public life. The purpose of this article is to show the trends in the development of approaches to the issue of natural law that have existed in the scientific literature in different historical periods, by means of conditionally grouping them into ancient, medieval, new, latest, modern, to find the key idea under the influence of which the theory of natural law arose and developed and to identify the major reasons for the emergence of the idea of natural law and to determine what impact it has had on the modern stage of human history. The article uses

the method of historical comparison. Based on the results of the study, it was concluded that at present, in the sense of the word usage, *jus naturale*, the natural law theory of human rights, has given way in professional literature to a new fundamental legal field - the theory of human rights.

Key words: *human rights, natural rights, human nature, positive law, natural law concept, philosophy of law, jus naturale.*

ПРЕДПОСЫЛКИ ПРОИСХОЖДЕНИЯ ТЕОРИИ ЕСТЕСТВЕННОГО ПРАВА И ТЕНДЕНЦИИ ЕЕ РАЗВИТИЯ

АЛЕКСАНДР КОЧУБАЕВ

*основатель группы компаний «Контра», адвокат,
соискатель Института философии, социологии и права НАН РА,
г. Ереван, Республика Армения*

Человеческий разум всегда стремился найти такой «божественный эталон», на котором можно строить общественную жизнь. Поиски «божественного начала» нормативного регулирования общественной жизни привели к формированию концепции естественного права, которая, собственно, и была призвана обеспечить равновесие между «божественной волей» и нормативной регуляцией общественной жизни. Цель данной статьи – показать тенденции развития подходов к вопросу о естественном праве, существующих в научной литературе в разные исторические периоды, сгруппировав их на античные, средневековые, новые, новейшие, современные, найти ключевую идею, под влиянием которой возникла и развивалась теория естественного права, и определить, какое влияние она оказала на современный этап истории человечества. В статье используется метод исторического сопоставления. По результатам исследования сделан вывод о том, что в настоящее время в смысле словоупотребления *jus naturale*, естественно-правовая теория прав человека, уступила место в профессиональной литературе новому фундаментальному правовому полю – теории прав человека.

Ключевые слова: *права человека, естественные права, природа человека, позитивное право, естественно-правовая концепция, философия права, jus naturale.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ***

ՀՏԴ 316.4

DOI: 10.52063/25792652-2022.2.13-112

ՎԻԿՏՈՐՅԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերություններ
ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
viktorya.melqonyan@ysu.am

Տեղեկատվության և տեխնոլոգիաների դերը աճում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում, հետևապես հենց տեղեկատվության և տեխնոլոգիաների որակից է կախված մարդկային ռեսուրսի որակը, համապատասխանաբար նաև՝ արդի հասարակությունների զարգացվածության աստիճանը և հետագա էվոլյուցիայի հեռանկարները:

Այնուամենայնիվ, տեղեկատվական հասարակությունների ձևավորումը և հետագա զարգացումը անխուսափելիորեն հանդիպում է լրջագույն մարտահրավերների, որոնք մեծամասամբ բխում են տեղեկությունների որակից, սոցիալական գանգվածային լրատվական միջոցների աշխատանքից, հասարակության թվային և մեդիա գրագիտությունից, տեխնոլոգիաների հասանելիության և կիրառության խնդիրներից, ինչու ոչ նաև՝ պետական ոչ բավարար հովանավորչությունից:

Այս աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու տեղեկատվական հասարակությունների կայացման առանձնահատկությունները և վերհանելու տեղեկատվական հասարակության կայացման հիմնախնդիրները Հայաստանում՝ քարտեզագրելով կիրառական լուծումներ:

Աշխատանքը շարադրված է «տեղեկատվական հասարակություն» հիմնախնդրի տեսական ուսումնասիրության, խնդրի շուրջ իրականացվող միջազգային և մասնավոր ծրագրային աշխատանքների մշտադիտարկման և փաստերի համալիր համադրման հիմքով:

Արդյունքում պարզվում է, որ Հայաստանում չկա տեղեկատվական հասարակության արդյունավետ ձևավորման և կայուն զարգացմանն ուղղված մշակված ռազմավարական ծրագիր-քաղաքականություն, և ոլորտը չի հանդիսանում պետական հովանավորչության թիրախ, ինչը դանդաղեցնում է վերջինիս զարգացումը: Այն փաստը, որ Հայաստանում խնդրով զբաղվող հիմնական կառույցները միջազգային կազմակերպություններ են և

* Հոդվածը ներկայացվել է 08.06.2022թ., գրախոսվել՝ 21.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

քաղաքացիական հասարակության այլ դերակատարներ, ոլորտի զարգացումը դարձնում է միակողմանի և ոչ համալիր զարգացող, ինչն իր հերթին խոսում է նվազ արդյունավետ և ոչ հիմնարար քայլերի մասին:

Հիմնաբառեր՝ տեղեկատվական հասարակություն, տեղեկատվություն, տեխնոլոգիա, մեդիագրագիտություն, թվային ուսուցում, համացանց, Հայաստան:

Նախաբան

Տեղեկատվական հասարակություն» եզրույթը շատ հաճախ փոխարինվում է «գիտելիքի հասարակություն» կամ «գիտելիքահենք հասարակություն» եզրույթներով: Հիմքում ընկած է այն պնդումը, որ գիտելիքի աղբյուրը տեղեկատվությունն է՝ սուբյեկտի (առարկա, գործողություն) մասին ստացված ինֆորմացիան:

Պետք է արձանագրել, որ տեղեկատվության բնույթից, որակից և հասանելիությունից, ինչպես նաև տեխնոլոգիաների զարգացման մակարդակից ու հասարակության կողմից պատշաճ և ապահով գործառնումից է կախված այն, թե արդյոք հասարակությունը կկայանա՞ որպես տեղեկատվական միավորում-հանրույթ, թե՞ կմնա ավանդական հիմքերում՝ առանց արդիականացման որևէ հավակնության:

Տեղեկատվական հասարակությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակի հրամայական է, որը սակայն չի ենթադրում, որ այն բնականոն էվոլյուցիոն գործընթաց է: Այն հասարակական զարգացվածության բարձրագույն մակարդակ է, որին հնարավոր է հասնել գործադրված պետական-մասնավոր ջանքերի, կրթության շարունակական արդիականացման, քաղաքացիական հասարակության զարգացման, միջազգային փորձի ուսումնասիրության և տեղայնացման շնորհիվ:

Չուզահեռաբար պետք է նշել, որ ոչ բոլոր հասարակություններն են, ելնելով իրենց զարգացվածության մակարդակից, սոցիալ-տնտեսական վիճակից, քաղաքական մշակույթի, վարչակարգի և բազմաթիվ այլ առանձնահատկություններից, պատրաստակամ հեշտորեն և արդյունավետորեն ընդունել ժամանակակից և համընդհանուր միտումները, որոնք ենթադրում են նոր փոփոխություններ՝ շատ դեպքերում խիստ մարտահրավերային սոցիալական տարբեր շերտերի և տարբեր տարիքակազմերի համար:

Տեղեկատվական հասարակությունների ձևավորման առանձնահատկությունները

Տեղեկատվական հասարակությունների ձևավորումը ենթադրում է հասարակության տարբեր շերտերի միջև և հասարակության ու պետության միջև հաղորդակցության իրականացման նոր որակներ ու ձևաչափեր՝ սկսած հանրային-պետական ծառայությունների թվայնացումից և արդիականացումից մինչև հանրային-պետական գործընթացներին առնչվող տեղեկատվության ստացման այլընտրանքային աղբյուր-հարթակներ:

Տեղեկատվական հասարակության երկու կարևորագույն բաղկացուցիչները տեղեկատվությունն ու տեխնոլոգիաներն են: Արդի ժամանակներում տեղեկատվությունն այն մեկնարկային միավորն է, որից սկսվում է անձի սոցիալականացման գործընթացը, որն ուղեկցվում է որակյալ կրթությամբ, իրավունքների ու պարտականությունների պատշաճ գործառնմամբ և այլ հատկանիշներով ու գործընթացներով: Տեղեկույթը կամ տեղեկատվությունը հանդիսանում է ռազմավարական ռեսուրս և գնահատվում է ավելի բարձր, քան ավանդական նյութական պաշարները (Զոթանջյան և Աթանեսյան 9-21):

Մյուս կողմից՝ ժամանակակից տեխնոլոգիաներն այն «միջնորդներն» են, որոնք մարդկային գործունի հետ զուգահեռ ապահովում են տեղեկատվության ձևավորումը և դրա հանրային շրջանառությունը: Տեխնոլոգիաների անհրաժեշտ ներդրմամբ ու

կիրառմամբ են ուղեկցվում ժամանակակից պետություններում ու հասարակություններում բազմակողմ հաղորդակցությունների վարման և ծառայությունների մատուցման հարաբերությունները: Ստացվում է, որ տեղեկատվության և տեխնոլոգիաների անքակտելի միության արդյունքում էլ ձևավորվում են ժամանակակից տեղեկատվական հասարակությունները:

«Տեղեկատվական հասարակությունը» կամ, ինչպես Դանիել Բելլն է ասում, «հետինդուստրիալ հասարակությունը» (1973 թ. լույս տեսած «Յետինդուստրիալ հասարակության հարձակումը. սոցիալական կանխագուշակման փորձ» աշխատության մեջ), 20-րդ դարի կեսերի սոցիալական կառուցվածքի փոփոխությունների հետևանք է, որը 21-րդ դարում որոշիչ սոցիալական ձև դարձավ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Ռուսաստանում ու Արևմտյան Եվրոպայում: Ըստ նրա՝ հետինդուստրիալ հասարակության հիմնական սոցիալական առանցքը տեղեկատվությունն է (Տեր-Յարությունյան):

Ուշագրավ է Էդգար Զալանթարյանի դիտարկումը տեղեկատվական հասարակության անցման չորս հիմնական դրսևորումների շուրջ (Զալանթարյան 279-284) .

1. Տնտեսության կառուցվածքային փոփոխություններ, հատկապես աշխատուժի բաշխման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում,
2. Համակարգչային գրագիտության անհրաժեշտության գիտակցման տարածում, կրթության տեղեկատվայնացում, հասարակության տեղեկատվայնացման տարածում,
3. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին աջակցություն կառավարության կողմից,
4. Բացասական դրսևորումների տարածում (համակարգչային վիրուսներ, հարձակումներ ենթակառուցվածքների տեղեկատվական բաղկացուցիչների վրա և այլն):

Նկատելի է, որ տեղեկատվական հասարակության փոխակերպման ճանապարհին վերը թվարկված դրսևորումները ոչ միայն ուղեկից են գործընթացին, այլև տեղեկատվական հասարակության ձևավորման և՛ հիմքն են, և՛ տրամաբանական արդյունքը:

Այատեղեկատվության տարածումը, տեղեկատվական պատերազմները, միջազգային լրտեսությունը, վտանգավոր և ռիսկային բովանդակությամբ նյութերի տարածումը հանդիսանում են տեղեկատվական հասարակությունների համար առաջնային մարտահրավերներ, քանի որ դրանք ուղղակի ազդեցություն են թողնում տեղեկատվության որակի ու համացանցի անվտանգ և արդյունավետ օգտագործման վրա:

Այս մարտահրավերները համաշխարհային են և բնութագրական բոլոր այն երկրներին, որտեղ կա համացանցի հասանելիություն կամ տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառություն: Բնականաբար, կախված երկրի քաղաքական ռեժիմից՝ պետություններն իրենց դեմ ծառայած մարտահրավերներին արձագանքում են տարբեր կերպ. ավտորիտար վարչակարգերը սահմանափակում կամ իսպառ արգելում են սոցիալական ցանցերի կիրառությունը, իսկ ժողովրդավարականները փնտրում և գտնում են պայքարի ավելի լիբերալ մեթոդներ (Մկրտչյան 55-62):

Ավելին՝ այս մարտահրավերներին դիմակայելու կարողությունն ուղղակիորեն կապված է տվյալ հասարակության մեղիա և թվային գրագիտության աստիճանի հետ: Առավել զարգացած երկրներում թվային տեխնոլոգիաների օգտագործման հասարակական հմտություններն ու կարողությունները ավելի բարձր են՝ ելնելով տեխնոլոգիաների կիրառության ավելի վաղ փորձառությունից: Այս համատեքստում պետք է նշել, որ Հայաստանում մեղիագրագիտության և տեղեկատվական գրագետ հասարակության ստեղծման ուղղությամբ շարունակաբար իրականացվում են մի շարք ծրագիր-նախաձեռնություններ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական մակարդակներում:

Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման ուղղությամբ իրականացվող քայլ-ձեռնարկները

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծում համապարփակ անդրադարձ է կատարվում ուսումնական գործընթացում և կրթական ծրագրերում արդի տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների լայն կիրառության անհրաժեշտությանը, որը ուղեկցվում է հստակ շեշտադրմամբ առ այն, որ համավարակով պայմանավորված իրավիճակը նոր սրությամբ ի ցույց դրեց առկա կրթական ճգնաժամը, մասնավորապես էլեկտրոնային համակարգերից օգտվելու մարտահրավերները, առցանց աշխատանքի և ուսման համար անհրաժեշտ ոչ բավարար հմտությունները, մեդիագրագիտության ցածր մակարդակը և այլն: Արձանագրվում է նաև, որ Հայաստանում արդեն իսկ գործարկված կրթական էլեկտրոնային առցանց և հեռավար հարթակները շարունակում են կարիք ունենալ արդիականացման, անվտանգության ապահովման և ոլորտին առնչվող այլ հարցերի կարգավորման (ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը 10-11):

2003 թ.-ից մինչև օրս Լոնդոնում գործող Media Diversity Institute կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ Հայաստանը» ծրագրեր է իրականացնում ավանդական լրատվամիջոցների, սոցիալական մեդիայի և նոր տեխնոլոգիաների զարգացման և հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ՝ ի նպաստ Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման (Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ Հայաստան):

2012 թ.-ից մինչև օրս Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը կյանքի է կոչում մեդիագրագիտության ուղղությամբ տարբեր ծրագրեր՝ ներառյալ Հայաստանում մեդիագրագիտության զարգացման հայեցակարգի մշակումը, որի նպատակն է պետական մարմինների, դպրոցների, բուհերի, ուսումնական կենտրոնների, լրատվամիջոցների և շահագրգիռ այլ կողմերի հետ համատեղ հստակեցնել մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերն ու հետագա անելիքները (Մեդիա նախաձեռնությունների կենտրոն):

Հանրային լրագրության ակումբը մեդիագրագիտության զարգացման ուղղությամբ իրականացնում է տարաբնույթ ծրագրեր, այդ թվում՝ «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» և երիտասարդների աջակցության «Power up Youth Armenia» ծրագրերը (Հանրային լրագրության ակումբ):

Важным представляется вопрос о месте и роли писателя в окружающей его литературной среде. В данном конкретном случае наблюдения, сделанные над поэзией мхитаристов, дают основу для определенных выводов. Ни оскорбительным, ни странным не следует считать описание того, что стих, разработанный отцами-мхитаристами, имеет не один серьезный «смертный грех», наименее значительным из которых, безусловно, является грех древнеармянского языка.

«Стихотворение – это, конечно, язык. Но прежде всего – это воплощение глубокого чувства, эмоциональной образности, стиля, и именно благодаря этому обстоятельству становится возможным отвергнуть любой лингвистический порядок, структуру, оболочку. Стихотворение довольствуется страстью, точнее говоря, чувством» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 76). Эти строки, по сути, определяют один из важнейших критериев оценки стихотворения Ошаканом.

Это описание поэзии мхитаристов, *полновесная строка*, и не важно в каком стиле она написана. Проецируя свои мысли на стихи Алишана, написанные на древнеармянском языке, Ошакан замечает: «Ни один из сотен древнеармянских стихов Алишана не пробуждали в нас подлинного поэтического волнения» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 80). Ошакан оценивает большинство древнеармянских стихотворений с некоторыми оговорками. Анализ одного произведения можно распространить и на другие стихи.

«Есть ли сердце за этой грудой слов?», – вопрошает Ошакан по поводу стихотворения Алишана «Перед могилой Шатобриана» и дополняет, – ответ: сладострастное стихотворчество, имя которому – стих мхитаристов» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 83).

«Поэзия мхитаристов – как на древнеармянском, так и на современном языке – не входит в «Панораму западноармянской литературы», главным образом потому, что это не подлинные стихотворения, содержащие новые идеи, и, следовательно, не все произведения, даже написанные на современном армянском языке, надлежит включать в «Панораму». Талантливые стихотворцы Терзян, Нар-Бей, Берберян, Сетян, Ачмян, перфекционист Пешикташлян, лирик-патриот Дурян и сотни других поэтов, которые слагали и будут слагать стихи, так и не смогли создать честное и правдивое искусство. Таким образом, вопрос поэзии мхитаристов становится эстетическим вопросом, который продолжает оставаться актуальным для всех времен и народов» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 83).

Алишан высказал свои мысли, умолчав, что людей с такими слабостями, задором и энергией можно не только рассматривать как неисчерпаемых болтунов, которые «могут создать у читателя невыносимое настроение усталости от стихов».

Так, в цикле «О Господе» последовательно представлены стихотворения с одинаковым названием – «Иисусу», которые представляют собой цикл из примерно десяти произведений. «Я не возражаю, Иисус – бездонный источник. Но когда в стихотворении дается одна часть этой бездны, потом ожидаемо повторяется в других частях, то эта бездна перестает нас интересовать» (Ошакан, Панорама

западноармянской литературы [Т. 2] 84). Вопреки мнению многих людей, молитва не всегда является синонимом поэзии. Мы смогли бы смириться с десятками стихотворений, а то и с сотней. Важно, чтобы с каждой из этих сотен «ко мне доходило новое творение, а не слепок того, что когда-то было сказано. Например, эти Иисусы очень далеки от того, чтобы воссоздать образ истинного Иисуса» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 84).

В основе осуждения стихотворений Алишана из серии «Отечество», написанных на древнеармянском языке, Ошакан устанавливает ценностный критерий восприятия поэтической «техники» Алишана, которая становится центральной при оценке и других произведений. «Конечно, я не требую, чтобы люди были слишком односторонними там, где жизнь столь обширна. Я требую, чтобы люди были правдивыми, только правдивыми. Другими словами, давайте самым кратким и глубоким образом расскажем обо всех этих необъятных и широчайших чувствах» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 88). Тот же критерий применяется к циклам «О Господе» и «О печалях», в которых «ошибка столь же решающая, как и в других» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 94). «О размышлениях» и «О природе» написаны с той же «беспощадной настойчивостью». Всегда слова, слова, слова. Около двухсот пятидесяти строк по поводу гибели горлицы. «И надлежит вспоминать многословные строки Багратуни по поводу смерти соловья. И припоминать не менее пространные строки Терзяна о тлях. Вот что означает прогулка с пером для Алишана и его последователей» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 102).

При оценке Алишана Ошакан опирается на свои непосредственные впечатления. И хотя многие тезисы, выдвинутые Ошаканом, не совпадают с нашими традиционно сложившимися мнениями, тем не менее, мы должны уметь отделять существенное, главное, важное от разнообразного потока оценок и впечатлений, разобраться в парадоксах, «самым ярким примером которых является сказочная поэзия Алишана» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 74).

Понятно, что при сопоставлении с мировой литературой многие реалии армянской литературы блекнут или кажутся подражанием или заимствованием. Ссылаясь, например, на французских романтиков, Ошакан утверждает, что, прочитав после них произведения Алишана, мы убеждаемся «насколько мы далеки от серьезности, глубины, жизни, целостности» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 17). Интересно, что в статье «Риторика в нашей литературе» Ошакан с сожалением отмечает, что «наша литература проявила странное братство с романтизмом, а Багратуни, Алишан, Пешикташлян, Нар-Бей, Терзян, грамотные талантливые писатели, «часто плыли по течению» и не смогли освободить свою индивидуальность от «оков риторики» (Ошакан, Под клювом грифа).

Безжалостно реалистичный, не желающий обманывать ни себя, ни других Ошакан оценивает стихи Алишана на современном армянском языке, руководствуясь логикой свободы мысли и литературными критериями, которые он постоянно подвергал пересмотру. К этим стихам тоже много вопросов, но «не надо принимать за ошибку поход в цирк» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 104).

Здесь следует отметить, что Ошакан большое внимание уделял вопросу лексического строя, который всегда был основой его оценок. Говоря об отдельных писателях, Ошакан обязательно анализирует их язык. Обращает на себя внимание различие между языком и стилем даже на уровне «гендерной принадлежности»,

например, язык и стиль Зограба он именует мужским современным армянским языком и мужским стилем соответственно, язык Гарагаша – современным армянским языком самцов и самок и т.д.. «Но язык – это лишь половина стихотворения, не забывайте об этом, – пишет Ошакан. – А другая половина? Типы. Мораль. Драма. Жизнь. Самостоятельность. Образность. Новизна» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 106).

В этом отношении примечателен анализ поэмы «Шушан, дочь Шаварша», в которой причудливо смешались «средний, крестьянский, высокий армянский язык». Принцип тот же: не путать словесный шквал с искусством. Между тем, используя почти тот же языковой материал, Туманян в «Парване» «сумел в нескольких строках создать драму удивительной красоты». «Ни студии, ни сверкающий древнеармянский язык, ни венское великолепие не сыграли роли в создании шедевра сыном простого восточноармянского священника» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 108).

Вес слова и ощущений становятся тем стержнем, вокруг которого Ошакан строит свою аналитическую конструкцию. Остальные произведения на современном армянском языке, такие как: «Раздан», «Скорблю по тебе, армянская земля», «Армянская земля», «Масисские горы», «Луна» и т. д., кажутся ему «сырым материалом», которые еще не дошли до уровня искусства. При этом, по словам Ошакана, Алишан своими стихотворениями на современном армянском языке спас себя как раз «благодаря современному армянскому языку». В каждом из этих стихотворений есть «частичка сердца», но их главная вина в том, что они остаются в сыром состоянии. Это общее обвинение, конечно, в основном направлено против мхитаристов: «Возложите ответственность за несчастье на Венецию» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 113).

Ошакан неоднократно подчеркивает влияние духовной среды, сформировавшей мировоззрение Алишана: «Дидактико-нравоучительная поэзия XVI века все еще жила в венецианском монастыре столетия спустя» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 113) и патриотический дух, который был главной движущей силой литературы Алишана, был подарком этой среде и романтизму его дней, поскольку источником мировоззрения Алишана была Европа 1840–1848 годов. Литературные истоки романтизма Алишана восходят к Шатобриану и Ламартину, а национально-патриотические настроения сформировались под воздействием Шиллера, Байрона, Лонгфелло и других. Однако, по словам строгого Ошакана, к сожалению, эта патриотическая жилка не могла быть освоена Алишаном настолько, чтобы стать частью его характера. В то же время в «Воспоминаниях о Родине армянской» характер проступает в значительной степени, что, по мнению Ошакана, не подлежит сомнению. «Но это не защищает его славу уникального, глубокого стихотворца» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 114).

Мировоззрение Алишана, которое Ошакан пытается охарактеризовать концептуально-критическими терминами «воображение», «чувствительность», «идеология», «чувство искусства», с одной стороны, является результатом духовной атмосферы Конгрегации мхитаристов, общего духа монастырской среды, с другой стороны, европейских и национальных общественно-политических событий. Неслучайно самые яркие стихи Алишана, напоминающие воинственные призывы, были написаны во времена Венецианской революции, которые позже были опубликованы в разделе «Отечество» из сборника «Напевы». Отмечая этот благоприятный факт, Ошакан тем не менее не считает Алишана представителем так называемого практического патриотизма. «Военный патриотизм под пером аббата нам показался бы неуместным. То, что не доставало Алишану, стало

причиной роковых лишений и его трагической гибели» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 118).

Эта неудовлетворенность объединяет его с патриотами, жившими в Константинополе, Москве, Индии.

Эти замечания вытекают из общего понимания мировоззрения Ошакана. Для Ошакана прав тот, кто живет. Так же точно и с восприятием писателя. Критик всегда требовал не путать литературу с патриотизмом. Национально-патриотическая ориентация для него – не единственный критерий искусства. «Поэзия – это не патриотизм, – пишет Ошакан, – и мы не можем позволить ценой неполных и разрозненных фрагментов повысить ее ценность» (Ошакан, Диаспора и подлинная поэзия 69).

Более того, собственно национальные специфические черты Ошакан отделяет от патриотических побуждений. Основа и мерило всего – жизнь, реальная жизнь и художественная жизнь как часть и продолжение реальной жизни. Жизнь как бытие демиурга, как творение самого себя. Человек и армяне, мир и армяне, время и армяне: нельзя армян связать в их исторических сплетениях и превратить только лишь в носителей национальной мечты. Это – основные литературные ориентиры Ошакана в восприятии и оценке патриотической лирики Алишана.

Примечательны особенности восприятия отдельных произведений, выявляемые при их критическом анализе. Кажется, что критик ведет своеобразный монолог, который иногда бывает ироничным, капризным, но характеризуется глубокими философскими интерпретациями, часто с определениями, которые приобретают характер всеобъемлющих формулировок. Надо особо подчеркнуть детальную работу Ошакана с оригиналами, с образами, на основе которых он передает свои непосредственные, иногда очень горячие, переполненные чувствами впечатления, представляя чрезвычайно сложные и интересные аналитические тексты. Немало также описательных фрагментов.

Как мы уже упоминали, Ошакан испытывает нескрываемый энтузиазм по поводу исторических работ Алишана, которые он считает важнейшей частью его творчества. «Бесспорным фактом является то, что центр тяжести заслуг почтенного аббата находится в этой сфере» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 144).

Среди «конкретных, означенных, впечатляющих» произведений Алишана Ошакан выделяет два тома: «Воспоминания о Родине Армянской» и «Шнорали и подробности о нем». В других произведениях, таких как «Сисван», «Сисакан», «Сказания об Армени» и т. д., конечно, есть великолепные поэтические страницы, где собраны замысловатые ботанические, географические и геологические сведения, но в то же время они служили «исключительно для повышения мыслительного уровня народа, что для него являлось заветным долгом» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 146).

«Для арменоведения эти тома являются настоящей энциклопедией армянского мира» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 148), – пишет Ошакан, подчеркивая то благоприятное обстоятельство, что Алишан был ученым и одновременно писателем, что нашло отражение в «искомых описаниях» книги «Воспоминания о Родине Армянской».

Критерии неизменны: эти тома Алишана непревзойдены не только по своему «достоверному содержанию», но и по своим «истинным чувствам, бодрости, дыханию, причуды характера», которые «со всеми своими преувеличениями находят способ достучаться до моего сердца, когда это сердце отвергает блага безжизненного венского метода» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 149).

Ошакан однозначно формулирует: «Армянская история – это не только наука, но и жизнь» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 150). А жизнь не может быть побеждена тривиальной логикой. Именно из этого убеждения Ошакан черпает свои первоначальные идеи. В «Воспоминаниях о Родине Армянской» историк перемещается на второй план, уступая место Алишану-литератору. Эта «история одновременно и роман, и критика, и летоисчисление, и география. «Воспоминания о Родине Армянской» – одна из господствующих книг в западноармянской литературе» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 153). Ошакан с особой симпатией отзывается о богословской емкости «Воспоминаний о Родине Армянской», подчеркивая, что Алишан в создании образов опирался на христианские истины, проводил параллели, близкие или идентичные его мировоззрению.

«В книге есть страницы, которые могут взволновать своей евангельской простотой» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 172). При таком подходе «Воспоминания о Родине Армянской» можно назвать «национальной книгой» «как и большинство летописей, молитв нашей древней литературы – как церковной, так и светской – поэзию ашугов и все подлинные, родные нам книги нашей новой словесности» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 172).

«Воспоминания о Родине Армянской» – одна из тех искренних и сердечных книг, которые всегда будут жить вечно. Среди своих любимых произведений Ошакан выделяет также книги «Сказания об Армении», «Шнорали и подробности о нем», которые являются «эмоциональным и убедительным свидетельством познавательной обеспокоенности» Алишана (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 174).

«Сказания об Армении» не являются дополнением к армянской литературе, но здесь «Алишан уделяет гораздо больше внимание просвещению, пониманию, действиям по сравнению с «Напевами»» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 176). Читать все со странным энтузиазмом без намерения что-либо узнать, подробно рассказывать о жизни армянских историков, взвешивать значимость, восхищаться их печальными и простыми красотами, – все это долг сердца, мыслительный продукт, поэтому эта «книга – не произведение высокого искусство» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 179). «Какими бы ни были мои сомнения в отношении Шнорали, эта книга – сладкое утешение» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 181). Так же: «В «Древних верованиях армян» Алишан не обновлял пантеон армянских богов. Но даже в этом случае заслугой Алишана является составление этой сокровищницы» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 182).

Обобщая свои впечатления и резюмируя замечания, Ошакан отмечает, что «труды Алишана были порождены национальной тревогой до того, как стали литературой» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 187).

На основании подробных наблюдений Ошакан приходит к принципиальному выводу, что «история – это душа и тело Алишана». Он был священником, прежде чем стал литератором, он был учителем, прежде чем стал поэтом, он был патриотом, прежде чем стал историком. И его труды родились «в огне этих великих устремлений» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 190). Заслуга Алишана в целостном представлении «неполная, противоречивая и проблематичная», но «почетная, героическая» (Ошакан, Панорама западноармянской литературы [Т. 2] 188).

Заклучение

Итак, исследования Акопа Ошакана выделяются среди публикаций, посвященных Гевонду Алишану, постановкой и логикой вопросов, а также аксиологическими критериями, в которых критик анализирует и оценивает все творчество Алишана с использованием сравнительного метода и приходит к оригинальным выводам. Критик исследует мировоззрение Алишана, его эстетические представления, идеалы, исследует основные тематико-идеологические аспекты произведений, иногда подробно описывая и пересказывая сцены излюбленных произведений, предпосылки их происхождения, исторические основы, изобразительную систему. Он также рассматривает творчество Алишана в контексте армянской и мировой литературы, пытается выделить самобытность «благородного аббата» в контексте мхитаристской ментальности, элементов, подчеркивающих художественно-исторический характер произведений, глубокий национальный колорит и дух.

Взгляды Ошакана, резкие по своей идейной направленности и зачастую нелестные по своему характеру, мастерски раскрывают всевозможные нюансы и перспективы, характеризующие темперамент, мировоззрение и умонастроение Алишана, что может стать отдельным предметом изучения. Несмотря на идеологию, сформировавшуюся в советские годы, исследование Акопа Ошакана продолжает оставаться руководством для современной литературной критики.

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. Багин.1984, № 7. (на арм. яз.).
2. Ошакан, Акоб. *Диаспора и подлинная поэзия*. Иерусалим, 1945. (на арм. яз.).
3. ---. *Личность Алишана и его деятельность. Лекции. Романтики*, Информационный выпуск 2, Иерусалим, октябрь-декабрь, 1940. (на арм. яз.);
4. ---. *Отец Гевонд Алишан*. Акос, Бейрут, кн. 8, 1945. (на арм. яз.).
5. ---. *Панорама западноармянской литературы*. Т. 2, Иерусалим, 1953. (на арм. яз.).
6. ---. *Панорама западноармянской литературы*. Т. 10, Антилиас, 1953. (на арм. яз.).
7. ---. *Под ключом грифа*. Бейрут, 2008, <https://digilib.aua.am/book/749/774/24575/%D4%B1%D5%B6%D5%A3%D5%B2%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%BF%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B6%20%D5%BF%D5%A1%D5%AF>.
8. ---. *Аналогии (Параллели) между восточноармянской и западноармянской литературой*. Бейрут, 1999. (на арм. яз.).
9. ---. *Сочинения*. Ереван, 1979. (на арм. яз.).
10. Севак, Паруйр. *Собрание сочинений*: В 6 тт. Т. 5.

WORKS CITED

1. Bagin [Bagin].1984, № 7. (In Armenian)
2. Oshakan, Akob. *Diaspora i podlinnaja poezija*. Ierusalim [Diaspora and genuine poetry. Jerusalem] 1945. (In Armenian)
3. ---. *Lichnost' Alishana i ego dejatel'nost'*. Lekcii. Romantiki, Informacionnyj vypusk 2, Ierusalim. [Alishan's personality and activities. Lectures. Romantics Newsletter 2, Jerusalem] oktjabr'-dekabr', 1940. (In Armenian)
4. ---. *Otec Gevond Alishan*. Akos, Bejrut, kn. 8. [Father Ghevond Alishan. Beirut] 1945. (In Armenian)

5. ---. Panorama zapadnoarmjanskoj literatury. T. 2, Ierusalim. [Panorama of Western Armenian Literature. T. 2, Jerusalem] 1953. (In Armenian)
6. ---. Panorama zapadnoarmjanskoj literatury. T. 10, Antilias. [Panorama of Western Armenian Literature. T. 10, Antilias] 1953. (In Armenian)
7. ---. Pod kljuvom grifa. Beirut. [Under the beak of the vulture. Beirut] 2008, <https://digilib.aua.am/book/749/774/24575/%D4%B1%D5%B6%D5%A3%D5%B2%D5%AB%D5%B6%20%D5%AF%D5%BF%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B6%20%D5%BF%D5%A1%D5%AF>.
8. ---. Ravnovesija mezhdu vostochnoarmjanskoj i zapadnoarmjanskoj literaturoj. Beirut. [Balance between Eastern Armenian and Western Armenian Literature. Beirut] 1999. (In Armenian)
9. ---. Sochinenija. Erevan. [Works. Yerevan] 1979. (In Armenian)
10. Sevak, Parujr. Cobranie sochinenij: V 6 tt. T. 5 [Collected works].

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԹԵՅՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱԼ

*Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալ, Ակսել
Բակունցի տուն-թանգարանի գիտաշխատող, ԱԵԳՄՍ անդամ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ժ. Գորիս, Հայաստանի Հանրապետություն*

Մեծ հայագետ, գրող Ղևոնդ Ալիշանի կյանքի ու ստեղծագործության ֆենոմենը միշտ եղել է հայ հասարակական մտքի ուշադրության կենտրոնում: Ժամանակի ընթացքում ուսումնասիրողների կողմից զգալի գործ է արվել, շատ բան է ճշգրտվել, արժևորվել, վերաարժևորվել և փաստելի է, որ արվածն ընդհանուր առմամբ ապահովում է Ալիշանի հանրագիտակ վաստակի լուսաբանման համակողմանիությունը: Այդ անդրադարձների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հակոբ Օշականի «համապատկերյան» ուսումնասիրությունը, եթե հաշվի առնենք նրա ընդգրկուն ու խոր քննական տեսադաշտը, կյուրը համակողմանի վերլուծության ենթարկելու ուրույն մեթոդներն ու չափանիշները:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Ղևոնդ Ալիշանին արևմտահայ մեծագույն քննադատ Հակոբ Օշականի գնահատմամբ:

Մեր ինդիքն է մասնագիտորեն գնահատել Օշականի քննադատական մտքի այն յուրօրինակ արժեչափերը, որոնցով նա ամբողջացնում է Ալիշանի գործի գրապատմական արժեքը:

Ալիշանի ժառանգության օշականյան քննությունը՝ նրա բնագրի տիպաբանական, կառուցվածքային նորովի մեկնաբանությամբ և մինչ օրս չդիտարկված առանձնահատկությունների վերհանմամբ, դեռևս առանձին ուսումնասիրության կյուր չի դարձել, ինչը ինքնին հաստատում է հողվածի գիտական նորույթը և արդիականությունը:

Հողվածում կիրառել ենք ինչպես մասնագիտական գրականագիտական (հերևենենտիկա, աքսիոլոգիական), այնպես էլ ընդհանուր գիտական (վերլուծական) մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ Օշականի քննահայեցական դիրքորոշումները, թեև որոշակիորեն կրում են գաղափարական սուր միտվածություն ու հաճախ մերժողական բնույթ, բայց և վարպետորեն

բացահայտում են Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական խառնվածքն ու գրաշխարհը բնութագրող էական տարրերը, որոնցից ամեն մեկը կարող է դառնալ ուսումնասիրության առանձին կյուբ:

Հիմնաբառեր՝ Ղևոնդ Ալիշան, Հակոբ Օշական, քննադատ, տպավորապաշտ քննադատություն, ռոմանտիզմ, Մխիթարյաններ, հայրենասիրական քնարերգություն, պատմական երկեր:

GHEVOND ALISHAN APPRAISED BY HAKOB OSHAKAN

TEHMINA MARUTYAN

*Goris State University, Scientific Secretary
Journal «Scientific Artsakh», Deputy Editor-in-Chief;
Research Associate of Aksel Bakunts House-Museum,
Union of Young Scientists and Specialists of Artsakh, Member;
Ph.D. in philological sciences, Associate professor,
Goris, the Republic of Armenia*

The phenomenon of the life and work of the great Armenologist, writer Ghevond Alishan has always been in the center of attention of Armenian public thought. A considerable amount of work has been done by researchers over time, much has been revised, evaluated, re-evaluated, and it is a fact that the work done generally provides comprehensive coverage of Alishan's encyclopedic merits.

Among those references, Hakob Oshakan's "comparative" study is of particular interest, taking into account comprehensive and deep analytical horizons, specific methods and criteria for a comprehensive analysis of the material.

The purpose of the study is to present Ghevond Alishan in the assessment of the great Western Armenian critic Hakob Oshakan. Our task is to showcase and appreciate the unique and valuable examples of Oshakan's critical thought that complement the literary significance of Alishan's work.

The "Oshakan" study of Alishan's heritage, with its typological, structural new interpretation and the highlighting of hitherto unobserved features, has not yet become the subject of a separate study, which determines the scientific novelty and relevance of the article.

The article uses both special literary (hermeneutical, axiological) and general scientific (analytical) research methods. As a result of the study, we came to the conclusion that, although Oshakan's critical views are distinguished by a sharp ideological orientation and some uncompromisingness, they masterfully reveal the key elements that characterize the creative world and the principles of Ghevond Alishan, which can become the material of a separate study.

Keywords: *Ghevond Alishan, Hakob Oshakan, critic, impressionist criticism, romanticism, Mkhitaryans, patriotic poetry/lyrics, historical works.*

ԴԱՎԱՃԱՆՆԵՐԸ ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ*

ՀՏԴ 821.19.0

DOI: 10.52063/25792652-2022.2.13-141

ԼԵՎՈՆ (ՆԵՐՍԵՀ ԱԲՂ.) ԱԼՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի
ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան
հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ,
Երուսաղեմի հայոց պատրիարքության
«Սիոն» ամսագրի գլխավոր խմբագիր,
ք. Երուսաղեմ, Իսրայել
fr.nerseh@yahoo.com*

**Սույն հոդվածի նպատակը Ծերենցի «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու»
և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերում հանդես բերված անմիաբան ու
հայրենադավ նախարարների ու հոգևորականների կերպարների և նրանց
գործելակերպի համապարփակ վերլուծությունն է:**

**Հոդվածի խնդիրը վերոնշյալ վեպերում ներկայացված դավաճան
կերպարների բարոյահոգեբանական նուրբ, շատ անգամ աննկատ ու
ստվերված խնդիրների վերլուծությանն առնչվող հայ գրականության մյուս
պատմավիպասանների (Բաֆֆի, Մուրացան) գործերում ևս նմանօրինակ
քստմնելի երևույթները հայտնաբերելն ու զուգահեռներ անցկացնելն է:**

**Հոդվածում պատմահամեմատական և համադրական մեթոդների հիման
վրա քննության են առնվել Ծերենցի երեք պատմավեպերի դավաճան
նախարարների ու հոգևորականների կերպարները, համեմատվել են Բաֆֆու
և Մուրացանի պատմավեպերում նկարագրվող համանման կերպարների հետ
և ցույց են տրվել նրանց նմանություններն ու տարբերությունները:**

**Հեղինակը, քննելով դավաճանության հիմնախնդիրը երեք՝ իրարից
տարածաժամանակային տարբեր շրջանների վիպասանների գործերում և
արժանավորապես գնահատելով նյութն իրենից առաջ ուսումնասիրած
նախորդներին, եզրակացնում է, որ հայրենիքի անկախության և ժողովրդի
ինքնության պահպանման համար կարևոր են ազգային միասնությունը և
հայրենասիրական վեհ գաղափարներն ընկալելն ու իմաստավորելը: Երեք
վիպասանների երկերում էլ քիչ չեն ստոր, նյութապաշտ ու մորթապաշտ հայ
դավաճանները, որոնք, անձնական շահն ու բարեկեցությունը գերադասելով
ազգայինից ու պետականից, իրենց հուղայական գործունեությամբ
անպատմելի դժբախտություններ են բերում հայոց պետականությանն ու
հայրենիքին: Իսկ հայրենիքի, ժողովրդի, կրոնի ուրացումը, օտար
բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ ժողովրդի շահերի, ծանրագույն
հանցանք է՝ դավաճանություն, և արժանի է ամենաանողոք պատժի:**

**Հիմնաբառեր՝ Ծերենց, պատմավեպ, «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու»,
«Թեոդորոս Ռշտունի», դավաճան նախարարներ, ազգադավ իշխաններ,
անմիաբանություն, հոգևորականություն, կենտրոնախույս քաղաքականություն:**

* Հոդվածը ներկայացվել է 28.03.2022թ., գրախոսվել՝ 12.04.2022թ., տպագրության
ընդունվել՝ 10.07.2022թ.:

Նախաբան

Դավաճանությունը չարիքներից մեծագույնն է, որի առաջին դրսևորումներին հանդիպում ենք Աստվածաշունչ մատյանի Հին և Նոր Կտակարաններում: Երկու հազար և ավելի տարիներ են անցել պատմական այն օրվանից, երբ Հիսուս Քրիստոսի աշակերտներից Հուդա Իսկարիովտացին մատնեց իր ուսուցչին ու մարդկության պատմության մեջ մնաց որպես դավաճանության խորհրդանիշ: Նրա անունից առաջացան «հուդա-դավաճան», «հուդայաբար», «հուդայական», «հուդայորեն», «հուդայություն» բառերը, որոնք այսօր էլ տրվում են դավաճանական գործունեություն ծավալող անձանց բնորոշելիս:

Հայոց բազմադարյա պատմության մեջ ևս քիչ չեն ստոր, նյութապաշտ ու մորթապաշտ հայ դավաճանները, որոնք, անձնական շահն ու բարեկեցությունը գերադասելով ազգայինից ու պետականից, իրենց հուդայական գործունեությամբ անպատմելի դժբախտություններ են բերել հայոց պետականությանն ու հայրենիքին: Նրանցից շատերը դարեր, նույնիսկ հազարամյակներ շարունակ մեր ժողովրդի հիշողության մեջ դառնել են որպես դավաճանության խորհրդանիշներ, որոնց անդրադարձել և նրանց հանդեպ իրենց խիստ վերաբերմունքն են արտահայտել հայ պատմիչներն ու պատմավիպասանները (Եղիշե, Ծերենց, Րաֆֆի, Մուրացան և այլք):

Ներկա հրապարակմամբ փորձել ենք համապարփակ ուշադրության արժանացնել Ծերենցի «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերի անմիաբան ու հայրենադավ նախարարների ու հոգևորականների կերպարներին՝ իրենց գործելակերպով:

Դավաճանների կերպավորումը «Թորոս Լևոնի» վեպում

«Թորոս Լևոնի» վեպում Ծերենցը ստեղծել է պատմական ճշմարիտ պատկերներ: Բյուզանդացիները հայրենիքի դավաճան հայ իշխանների հետ միասին տիրել էին Կիլիկյան Հայաստանին: Ժողովուրդն անասելի ծանր զրկանքներ էր կրում թե՛ օտար նվաճողների և թե՛ ներքին հարստահարիչների ձեռքին: Հայրենադավ նախարարներն ու հոգևորականները բոլորովին անտարբեր վերաբերմունք էին ցուցաբերում ազգային այդ մեծագույն դժբախտության նկատմամբ: «Կային նաև անոնց մեջ այնպիսիներ,- գրում է Ծերենցը,- որ ոչ միայն իրենց ազգության պաշտպանությունը կարհամարհեին, այլ օտարաց հաճոյ լինելու համար իրենց ազգը արհամարհել, և անկից օտարանալն ու զանի հարստահարելն իրենց սովորություն ըրած էին» (Ծերենց 105): Հայ ժողովրդի ազատության ու անկախության բախտը գտնվում էր մեծագույն վտանքի առաջ:

Պատմական այդ իրադրության մեջ Ծերենցը ներկայացնում է Թորոս իշխանի սքանչելի կերպարը՝ որպես ազգային հերոսի, որպես մեծ հայրենասերի, որի միակ բաղձանքը ազատ և «գորավոր Հայաստան» ստեղծելն էր: Առ այդ նա իր ամբողջ ուժով պայքարում էր քաղաքական բռնությունների ու անարդարությունների, ազնվականության և հոգևորականության դեմ, որոնք ոտնահարում էին ժողովրդի իրավունքները:

Հայրենադավ իշխանները դեռ Թորոսի հոր՝ Լևոն թագավորի գահակալության ժամանակներից էին սկսել վարել կենտրոնախույս քաղաքականություն: Թորոսը ձգտում էր համոզել նրանց հետ կանգնել իրենց դավաճանական արարքներից և ներգրավվել ազատագրական շարժման մեջ, բայց ապարդյուն: Նրան այդպես էլ չի հաջողվում փառամոլությամբ կուրացած իշխանների գուրջ շարժել և հայրենասիրական զգացում ներշնչել: Նրանց անտարբերությունը, սակայն, չի հուսահատեցնում իշխանին. նրան մեծ հավատ էր ներշնչում ժողովուրդը՝ պատմական մեծ իրադարձությունների շարժիչ ուժը: Թորոսի հանկարծակի երևալը Կիլիկիայում այլեկծում, ոտքի է հանում լեռնաբնակներին: Վերջիններս, ելնելով իրենց

տեղերից, թողնելով տուն ու տեղ, գալիս-միանում էին Թորոսին, որպեսզի միացյալ ուժերով պայքարեին արտաքին ու ներքին թշնամու դեմ և դարերից եկող վրեժը փոխհատուցեին արյամբ: Դժգոհում էին Անարգաբայի տիրոջից՝ Սմբատից: «Վասակի գործ կկատարե,- ասում էին Թորոսին,- հարկ-տուրք կառնես մեզ ու մեր տղաքը անոթի կմեռցնես, ի՛նք չի կշտանար... դատ կհնարես, սուտ վկա կստեղծես, որ բանտի, պատժի, տուգանքի ճար գտնես, կաշառք առնես, արյուն թափես... Մեր գեղերը քանդվեցան, մեր տուններն ավերակ դարձան, ի՛նք՝ պալատներ կշինես, պարտեզներ կշինես մեր ավերակաց վրա... մեր լեզուն, մեր հավատքը հոռոմեն ավելի կնախատեն, օտարին նախատել կուտան...» (Ծերենց 106): Բողոքների այս տարափը ցույց էր տալիս ոչ միայն օտար նվաճողների գործադրած ահավոր բռնություններն ու կոտորածները, այլ նաև հայ իշխանների գործադրած գազանային արարքները սեփական ժողովրդի հանդեպ:

Սմբատն ինչպես պատմական արքյուրներում, այնպես էլ վեպում բացարձակապես չի ընդունում Թորոսի իշխանությունը և հանդես է գալիս բյուզանդացիների կողմից, քակի որ բյուզանդահպատակ էր: Նա դատերը՝ Մարգրիտին, հատուկ նպատակով ամուսնացրել էր Թորոսի եղբոր՝ Ստեփանեի հետ, որը ևս բյուզանդահպատակ էր և շարունակում էր աներոջ քաղաքականությունը՝ տիրակալման ստատուսը ապահովելու նպատակով (Ավետիսյան 56): Վերջինիս սպանության պատճառը, ըստ Ծերենցի, նրա այդ տիրակալական իրավունքների հաստատման ապակողմորոշումն է, որին և խորամանկաբար մղում էին բյուզանդական իշխանավորները՝ օգտագործելով հայոց թագավորի և իր եղբոր միջև առաջացած հակասությունները: Հեղինակը վեպում միանգամայն ճիշտ է կռահել իրողությունը, ինչը չի ասվում ո՛չ Մատթեոս Ուռնայեցու, ո՛չ էլ Սմբատ պատմագրի կողմից:

Վեպի կերպարներից Օշին իշխանը Լաբրոնացու հայրն էր և Ներսես Շնորհալու փեսան: Ըստ պատմիչների՝ նա ևս բյուզանդական կողմորոշում ուներ և այս ձևով էր ամրապնդում ու պաշտպանում իր տիրակալական իրավունքները: Բյուզանդիայի հոգևոր ու վարչական մարմինների կողմից սատարվելով՝ նա ուղղակիորեն խփում էր հայոց պետականության ամբողջականությանը: Մասուտ քաղաքը ազատագրելու ժամանակ հայ իշխաններից ոմանք հանդես էին գալիս բյուզանդացիների կողմից, որոնցից մեկը Լամբրոնի տեր Օշինն էր, իսկ մյուսը՝ Բարձրաբերդի տերը՝ Վասիլ իշխանը: Քաղաքը գրավելիս հայոց թագավորը բյուզանդացի բազմաթիվ զինվորների հետ միասին գերի է վերցնում նաև հայագի իշխաններին (Ավետիսյան 56-57): Այս մասին Սմբատ պատմիչը գրում է. «Եւ կալան գտերն Լամբրոնին զՕշինն, և գտերն Բարձրբերդոյ զՎասիլն, և գտերն Պռականու Տիգրանն, որք էին տքա ի կողմն Յունաց թագավորին, և զթուլամորթ Յոյնսն կալեալ մերկացուցանելն և արձակելն. և տիրեաց Թորոս Մասայ անհոգութեամբ, և ամենայն գաւառացն զոր ուներ» (Սմբատ Սպարապետ 170-171):

Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանը խանգարող, նրան ստրկամտության մղող և նրա շահերին անհավատարիմ ու վտանգավոր դասերից մեկն էլ Ծերենցը համարում էր հոգևորականությանը և մերկացնում էր վերջինիս հակաժողովրդական գործունեությունը: Չնայած այդ ամենին՝ հորդորում էր չմոռանալ, որ «...որովայնապարար և խաբէբա եկեղեցականաց քով կան գործունյա և աշխատասեր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը և ժողովուրդը կսիրեն և գիտեն նաև զիրենք անոնց համար զոհել» (Ծերենց 95-96):

Բարձրաստիճան հոգևորականները, իրենց ընդհանուր շահերից ելնելով, պաշտպանում էին դավաճան իշխաններին և հաճախակի բանակցություններ վարում հունաց Կիր Մանուելի կայսեր հետ՝ հայկական եկեղեցին հունադավան դարձնելու համար: Կասկածից վեր է, որ Գրիգորիս (Գրիգոր Գ Պախլավունի (1113-1166) կաթողիկոսի այդ մարմաջը Թորոսին հաճելի չէր կարող լինել, ուստի Ներսես Շնորհալու հետ ունեցած զրույցի ժամանակ նա մեծ սխալ է համարում երկու

եկեղեցիների միացումը՝ դրա մեջ տեսնելով սեփական ազգի «սուզման» վտանգը: «Հայ եկեղեցվույն փոքր դրոշակը անկախ պահեցեք,- ասում է նա,- ինչպես ես ազգային անկախության դրոշակը անկախ պահելու կջանամ» (Ծերենց 191):

«Թորոս Լևոնի» վեպում Ծերենցը նաև հակադրում է իրար երկու պատմական դեմքերի՝ Թորոսին, և եղբորը՝ Մլեհին: Վերջինիս վեպում քիչ տեղ է հատկացված, սակայն որպես փառասեր ու անարժան մի անձնավորություն՝ նա զծագրված է վառ ու տպավորիչ գույներով: Թորոսի և Մլեհի միջև գոյություն ունեցող հակասությունները վեպում սրվում են հատկապես այն ժամանակ, երբ Թորոսը դուրս է գալիս պատերազմական վիճակներից և ջանում է երկիրը պահել խաղաղության մեջ, երբ չեզոքանում են դրսի վտանգավոր ուժերը: Հենց այստեղ էլ Մլեհը ապստամբում և վտանգավոր է դառնում՝ դավեր նյութելով եղբոր դեմ: «-Բայց ես չեմ ուզեր,- ասում է Թորոսը Մլեհին, որ Ռուբինյաց միջև և պատմության մեջ զրուցվի, թե եղբոր արյան ձեռք մխեց, ուստի գնա՛ այս երկրեն դուրս, հեռացիր...» (Ծերենց 200)

Պատկերելով Մլեհին՝ որպես հայրենիքի դավաճանի, Ծերենցը նպատակ է դրել դատապարտել ավատական մասնատվածության հետևանք հանդիսացող երկպառակությունները և առաջ քաշել այն գաղափարը, որ թե՛ արտաքին և ներքին թշնամու, թե՛ կենտրոնախույս ուժերի դեմ պայքարի պետք է դուրս գալ միացյալ ուժերով. միայն համընդհանուր պայքարի միջոցով է հնարավոր նվաճել ազատությունը և ասպարեզից վերացնել հասարակության համար չարիք հանդիսացող թշնամիներին:

Վիպասանը մի շարք պատկերներում արտացոլել է Մլեհի անմարդկային եռությունը: Վերջինս, պահպանելու համար իր հայրական իշխանությունը, դժգոհում էր եղբոր հայրենասիրական գործողություններից, դաշնակցում էր Հալեպի Նուրետտին սուլթանի հետ, որպեսզի նրա օժանդակությամբ կարողանար իրագործել իր ստոր նպատակները: Ուրանալով ազգն ու հայրենիքը և գործիք դառնալով թշնամու ձեռքին՝ նա պատրաստ էր ամեն ստորության՝ ընդհուպ մինչև եղբորը սպանելը: Նրա բոլոր խարդավանքները, սակայն, անհաջող են անցնում. բանակը ծանր պարտություն է կրում, ինքն էլ գերի է վերցվում Թորոսի կողմից: Մլեհը ցանկանում էր կործանել Թորոսին, բայց ինքն է կործանվում, որովհետև չի կամենում հասկանալ եղբորը և նրա մարդկային, բանական վերաբերմունքը փոխհատուցում է դավաճանությամբ:

Հայրենիքի, ժողովրդի, կրոնի ուրացումը, օտար բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ իր ժողովրդի շահերի, ծանրագույն հանցանք է՝ դավաճանություն, և արժանի է ամենաանողոր պատժի. սա է «Թորոս Լևոնի» վեպի հիմնական գաղափարներից մեկը: Նույն գաղափարին հանդիպում ենք նաև Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում, որում իբրև հայրենիքի դավաճաններ ներկայացված են Դավիթ Ուրացողի և Մելիք Ֆրանգյուլի կերպարները: Ինչպես «Թորոս Լևոնի» վեպում, այնպես էլ «Դավիթ Բեկ»-ում հայրենիքին դավաճանելու, ժողովրդից խորթանալու արգահատելի վարքագիծը միահյուսվում է նրանց անմարդկային եռության հետ: Այստեղ էլ Դավիթ Ուրացողն է փառասերի տիպար: Նա էլ, ինչպես Մլեհը, անձնական շահերը բարձր է դասում հայրենիքի ու ժողովրդի շահերից և պատրաստ է ոտնատակ տալ ամեն մի սրբություն իր նպատակների իրագործման համար (Սարիկյան 251): Նա ուրանում է իր կրոնը, իր աղջկան նետում օտար բռնակալի գիրկը և պատրաստ է անել քծնանքի ու հաճոյամոլության ամեն ժեստ, միայն թե արժանանա բռնավորի հովանավորությանը և նրա միջոցով կարողանա իրագործել իր փառասիրական տենչերը: «Ես,- ասում է Դավիթ Ուրացողը,- եթե կցանկանայի հայ ժողովրդի հետ գործ ունենալ, ոչ այլ կերպ չէի ընդունի, բայց միայն նրա գլուխը լինել և ոչ ոքի ստորադրյալը» (Րաֆֆի, *Դավիթ Բեկ* 449): Ինչպես Մլեհը «Թորոս Լևոնի» վեպում, ցանկանալով պահպանել իր տոհմական իշխանությունը, դիմում էր Հալեպի Նուրետտին սուլթանի հովանավորությանը, այնպես էլ Մելիք Ֆրանգյուլը «Դավիթ Բեկ»-ում նույն նպատակով դիմում է պարսից Ֆաթալի խանի հովանավորությանը: «Ինչ պիտի անես, երբ օտարի, երբ թշնամու ծառայության մեջ ես գտնվում... Ես

ուրացա իմ կրոնը, ընդունեցի մահմեդականությունը, որ դրանով գրավեմ իմ թշնամու մտերմությունը, որ դրանով ավելի խոր մտնեմ նրա սրտի մեջ, որ կարողանամ նրան իմ ձեռքում պահել: Այդ բոլորը արեցի ես, միայն նպատակների համար» (Րաֆֆի, *Դավիթ բեկ* 682-683):

Թե՛ Ծերենցը և թե՛ Րաֆֆին ունեն իրենց բարոյախոսական կոնցեպցիան և իրենց երկերում ամենուրեք շեշտել են այն, որ հայրենիքի դավաճանը պետք է պատժվի, չարությունը արժանի է կործանման: Ուստի և՛ Սլեիը և՛ Մելիք Ֆրանգյուլը կրում են իրենց արժանի պատիժը և սպանվում:

Դավաճանների կերպավորումը «Երկունք Թ. Դարու» վեպում

Ծերենցը, ինչպես «Թորոս Լևոնի» վեպում Թորոսին, այնպես էլ «Երկունք»-ում Յովնասին պատկերել է որպես ռազմական խոշոր գործչի և հմուտ զորավարի, որը Թորոսի նման ամբողջ հոգով առում էր դավաճան նախարարներին՝ նրանց անվանելով «բազմագլխյան վիշապ». բարձրաստիճան հոգևորականության արհամարհում էր՝ նախարարների կենտրոնախույս ձգտումները չվերացնելու համար, իսկ հասարակ ժողովրդին սիրում էր հոգու պարզությամբ ու անմիջականությամբ: Պատմական դժնդակ պայմաններում Յովնասի առաջ ծառայել էին մեծ դժվարություններ, որոնցից ծանրագույնը ավատական ներքին երկպառակության վերացումն էր, որը ջլատել էր երկրի ուժերը և նպաստել օտար բռնակալների տիրապետության հաստատմանը: Անշուշտ, բոլոր ուժերի համախմբմամբ թշնամու դեմ պայքարի դուրս գալու պահին էական դեր պիտի կատարեր և, ինչպես եկեղծը վրում է պատմագիրների բերած փաստերից, կատարել է հայ եկեղեցին այնքանով, որքանով իր շահերը զուգադիպել են ժողովրդի ընդհանուր շահերին ու ձգտումներին: Բայց արդյոք «Երկունք»-ում հոգևորականները կանգնած են իրենց կոչման բարձրության վրա:

Հոգևորականության մասին խոսելիս Ծերենցը միշտ էլ ժողովրդի և հոգևորականության, պետության ու եկեղեցու շահերը շփման մեջ է դրել և ընդգծել դրանց իրարամերժ դրությունը: Ըստ նրա գլխավոր կերպար Յովնասի՝ հայ եկեղեցու հոգևոր ծառաները կարող էին զորավիգ լինել իրեն՝ նախարարների կենտրոնախույս ուժերը զսպելու և արտաքին թշնամու դեմ ընդհանուր պայքարի դուրս գալու համար, ուստի աշխատում է գործոն դիրքի մեջ դնել հոգևորականությանն ու ներգրավել նրանց ազատագրական շարժման մեջ: Այդ նպատակով ժողովրդի համար տազանապալի այդ օրերին Յովնասը, կռահելով գալիք վերահաս վտանգը, որոշում է ներկայանալ Դվինում գումարվող վեհաժողովին, որին ներկա էր նաև Ամենայն հայոց կաթողիկոս Յովհաննես Դրասխանակերտցին: Յովնասը «Սասնո ժողովրդի» անունով թախանձագին խնդրում է կաթողիկոսից՝ «օրհնության կոնդակ մը հանել բոլոր Հայաստանի ժողովրդոց, զեն ի ձեռքին հարձակելու ընդդեմ անօրինաց, որ կը պատրաստվին մտնել աշխարհքս բնաջինջ ընելու համար քրիստոնեության և հայության անունը, կը հրավիրե յուր սրբությունը գալ բնակելու Ս. Կարապետի վանքը մինչև պատերազմի վերջը» (Ծերենց 275):

Յովնասի խիզախ ու համարձակ առաջարկությունը խիստ զայրույթ է պատճառում կաթողիկոսին և հայրենադավ նախարարներին. նրանք վախենում էին, որ ժողովրդը մի օր ապստամբության դրոշ կբարձրացնի նաև իրենց դեմ, այդ պատճառով մերժողական պատասխան են տալիս: Յովնասը «անխռով և անսասան՝ բայց տխուր վասնզի չի կրցավ շարժել եկեղեցական խումբը՝ ուսկից ինք հենակետ մը չիսել կը հուսար» (Ծերենց 277), հեռանում է վեհաժողովից՝ հայրենի երկիրը պաշտպանելու համաժողովրդական վճռականությամբ:

Եթե եկեղեցին իր բարձրության վրա կանգնած լիներ և համագործակցեր հայ աշխարհիկ իշխանության հետ, և եթե չլիներ նախարարական տների կենտրոնական իշխանությանը հակադրվելու, նույնիսկ նրան դավաճանելու փորձերը, ապա այդ

դեպքում տեղի չէին ունենա այնքան մեծ արյունահեղություններ, և ժողովուրդը չէր կորցնի իր քաղաքական անկախությունը: «Եթե կաթողիկոսը միայն ուզեր շարժիլ, եթե իմ խորհրդույս ուզեր հետևիլ, գար Ս. Կարապետ, հաներ ոտք եկեղեցական բանակը, ժողովրդոց բանակը հարյուր հազարներով կը կանգներ անմիջապես,- ասում է Յովնանը,- և մենք հայքս ան ատեն ոչ վատ կը լինեինք, ոչ անմիաբան, ոչ նախանձոտ, այլ քարով միայն զինյալ՝ շուններու պես կը հալածեինք թշնամին, որուն անարգ ոտից տակ կը հեծեն գերությանը մեր զավակները, մեր կանայքը, մեր իշխանքը, մեր եկեղեցին, մեր հավատքը...» (Ծերենց 279):

Մեծ խելքի և հզոր կամքի տեր զինվորականը խորապես ըմբռնում էր, որ ո՛չ դավաճան իշխանները և ո՛չ էլ կաթողիկոսը ազգին օգտակար լինել չէին կարող, հետևաբար պետք էր դիմադարձ լինել նրանցից և ապավինել ժողովրդին: Այդ ժողովը Յովնանի համար մեծ դաս եղավ. նա այնտեղ տեսավ մարդկային հարաբերությունների ամբողջ քառուրդ, բարձր խավերի քար անտարբերությունը ժողովրդի ճակատագրի հանդեպ, նրանց երեսպաշտությունն ու բարոյական անկումը: «Դու Ղևոնդ մը միայն գտիր,- ասում էր Գուրգեն իշխանը Յովնանին,- ես քեզի տասը Վարդան կը գտնեմ» (Ծերենց 270), «Ղևո՛նդ, Ղևո՛նդ, ո՛ւր ես,- բացականչում է Յովնանը,- Հայաստան քեզ պես մեծ մարդ, մեծ քահանա, մեծ Զրիստոսի ծառա մեկ հատ մը միայն բերավ, ափսո՛ս, և հոն յուր ծննդական կարողությունը դադրեցավ» (Ծերենց 276-277):

Ծերենցը ճիշտ չէր, երբ համաժողովրդական ազատագրական շարժման մեջ վճռական ուժը համարում էր հոգևորականությանը, իսկ Վարդան Մամիկոնյանի նման հայրենիքի և ժողովրդի ազատության վեհ գործին նվիրված անձնվեր զորավարին մղում հետին պլան: Սակայն դժվար չէ բացատրել, ինչպես Պետրոս Ադամյանը կասեր՝ «պատկառելի վիպասանի» (Ադամյան 51) այդ մոտեցումը: Նրա համոզմամբ, երբ ազգային ինքնուրույն պետականության ստեղծման ենթարկված գեները, իբրև զինակից, ստանում է նաև խաչը, դառնում է հզորություն, անքակտելիություն, ուստի և կռվան՝ օտար ներխուժող ուժերի դեմ կռվելու համար:

Վիպասանը Յովնաննես կաթողիկոսին ներկայացրել է որպես վերին աստիճանի թուլակամ մի մարդ, որը, հայրենիքին նվիրված լինելով հանդերձ, չի կարողացել նրա համար որևէ օգտակար գործ կատարել: Երբ երկիրը տազնապի մեջ էր, նա շարունակ փախչում էր աթոռանիստ քաղաքից և ոչ մի վճռական քայլի չէր դիմում ժողովրդին օրհասական վտանգից փրկելու համար, այլ մտածում էր միայն իր անձի մասին: «Դվին քաղաքը այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաք՝ գրեթե 200.000 և ավելի բնակիչ ուներ, երևելի յուր ոստիկանաց պալատով, կաթողիկոսարանով և մայր եկեղեցիով,- գրում է Ծերենցը,- թեպետ կաթողիկոսը հոն բնակելու չէր համարձակեր արաբացի իշխանին երկյուղեն»: Ըստ նրա՝ «Ամեն բան և ջանք ուշ էր, միմիայն ճամփա խոհեմությամբ թշնամվույն հետ վարվիլն էր և նորա չարությունն քաղցրացնել» (Ծերենց 369):

Հետաքրքրականն այն է, որ «Գևորգ Մարզպետունի» վեպում նույնպես Յովնանես կաթողիկոսը պատկերված է բացասական գծերով: Նրա թուլամորթությունը, երկչուությունը հետևյալ կերպ է բնութագրել Մուրացանը. «Նրա բարեկազմ, հաղթանդամ և արտաքուստ զորավոր մարմնի մեջ ապրում էր մի տկար սիրտ և երկչու հոգի» (Մուրացան 182):

Յովնանես կաթողիկոսը ազգի օգտին երբեմն գործում էր բարիքներ՝ «միայն փառք վաստակելու» համար, բայց «արգելք չէր դնում հասնող չարիքներին» (Մուրացան 183),- գրում է Մուրացանը: Նույն միտքը արտահայտում է նաև Ծերենցը «Երկունք»-ում՝ ասելով, որ նախորդ կաթողիկոսի մահից հետո նորն է ընտրվում աշխարհական Չաքարիան, «որուն առաքինությունը և անձնուրացությունը հայտնի էր ամենուն. վասնզի Հայաստան ձանձրացեր էր այդ անտարբեր, թուլամորթ հայրապետներեն, որ իրենց հանգստությունը միայն կը ճանաչեին և կը փնտրեին» (Ծերենց 369): «Երկունս էլ,- գրում է Ա. Տերտերյանը,- թե՛ Ծերենցը և թե՛ Մուրացանը

եկեղեցական իշխանությունն իջեցնում են «երկնային» բարձունքից, սակայն Մուրացանի զենքը շատ ավելի թունավոր էր, քան Ճերենցինը, որովհետև նա սատիրա է բանեցրել Յովհաննես կաթողիկոսի դեմ» (Տերտերյան 102):

Երկու վիպասաններն էլ փորձել են ընդհանրապես առաջադեմ հոգևորականության դերը չժխտել, ավելին՝ նրանք ցանկացել են «Մի հոտ և մի հովիվ» գաղափարը դարձնել համաժողովրդական շարժման գլխավոր ուժը ամբողջ ազգի վրա, որը պիտի ամրապնդեր պետական մտածողությունն ու ազգային ինքնագիտակցությունը: Սակայն նրանց հույսերը չեն արդարանում:

Ի տարբերություն Ճերենցի և Մուրացանի՝ Րաֆֆին «Դավիթ Բեկ» վեպում բարձրացնում է հայ հոգևորականության անունը և Յովհաննես կաթողիկոսի թուլական կերպարին հակադրում հայրենասեր Ներսես Արքեպիսկոպոսի կերպարը: Որպես անկախության պահպանման գլխավոր նախապայման՝ Ներսես Արքեպիսկոպոսն առաջադրում է ազգային միասնության գաղափարը, ինչը անում էին Թորոսը «Թորոս Լևոնի» վեպում և Յովհաննեսը՝ «Երկունք»-ում:

«Ո՛ւր որ հայ կա, պետք է միաբանին,- ասում է նա Գուրգեն իշխանին,- և առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ստեն թերևս հայ ազգը իր փրկություն գտնե» (Ճերենց 218): Մուրացանի հերոսը ևս առաջ է քաշում ազգի միասնական ուժերի համախմբման գաղափարը՝ որպես երկրի փրկության միակ երաշխիք. «Երկրի փրկությունը,- ասում է Գևորգ Մարգպետունին,- կախված է այժմ իշխանների միությունից և այդ միությունը պետք է ստեղծել՝ զոհաբերության ի՛նչ գնով ուզում է լինի» (Մուրացան 217):

Միաբանության իդեալը Ճերենցի վեպերում առանձնակի նշանակությամբ էր շեշտվում, քանի որ հեղինակն արդեն հայտնաբերել էր այն չարիքը՝ երկպառակությունն ու անմիաբանությունը, որը պատճառ էր դարձել հայկական պետականության անկման: Րաֆֆին և Մուրացանը ևս իրենց վեպերում հայ ժողովրդի դժբախտության հիմնական պատճառը համարել են երկրի ներքին երկպառակությունը, ավատական մասնատվածությունն ու նախարարների անմիաբանությունը: Երեք հեղինակներն էլ խստորեն ձաղկել են դավաճանությունն ու անմիաբանությունը և դրանց հակադրել հայրենասիրության ամբողջ վեհությունը՝ առաջադրելով ազգային միասնության գաղափարը՝ իբրև հայրենիքի անկախության ու ժողովրդի ինքնության պահպանման կարևորագույն նախապայման: Եթե հայրենասիրությունը, ըստ վիպասանների, գերագույն առաքինություն է և արժանի է փառաբանման ու դրվատման, ապա անմիաբանությունը չարիք է ժողովրդի համար, իսկ դավաճանությունը հանցանքներից ծանրագույնն է: Ով դավաճանում է հայրենիքին և պաշտպանում է թշնամուն, նա ամենամեծ ոճրագործն է և արժանի է ամենաանողոք պատժի:

Ինչպես «Թորոս Լևոնի»-ում, այնպես էլ «Երկունք»-ում Ճերենցը դարձյալ անողոք քննադատության է ենթարկում այն նախարարական տներին, որոնք, ելնելով իրենց շահերից, դաշնակցում են թշնամու հետ և իրենց վարքագծով խանգարում երկրի առաջադեմ ուժերի համախմբմանը: Նրանք ոչ մի մասնակցություն չեն ցուցաբերում ազատագրական շարժմանը. յուրաքանչյուրը մտածում ու գործում է յուրովի. ոմանք, փառասիրական տենչից դրդված, համագործակցում էին թշնամու հետ, մյուսները՝ փառաբանում և արդարացնում արաբների նվաճողական քաղաքականությունը, երրորդները՝ չեզոք դիրք գրավում: Բնական է, որ նախարարական տների այսպիսի մասնատվածությունը, նրանց հակամարտ շահերն ու կենտրոնախույս ձգտումները պարարտ հող էին ստեղծելու թշնամու ծրագրերի իրականացման համար: «Օտար թագավորներից «բազմականգուն տիտղոսներ» ստանալով,- գրում է Ա. Տերտերյանը,- դավաճանները՝ բոլոր այդ Մերուժանները, Վասակները, Գոհիոնները, պատճառ են դարձել ժողովրդի արյան թափվելուն կամ նրա գերությանը» (Տերտերյան 102):

Վեպում Հովնանի և Խոսրով իշխանի երկխոսության միջոցով հեղինակը ընթերցողի համար որոշակի է դարձնում դավաճան իշխանների հետապնդած նպատակների և նրանց արարքների ազգադավ էությունը: Մերկացնում էր նաև նախարարներին, որոնք թշնամու բարբարոսական արշավանքների ժամանակ փախչում էին իրենց ամրոցները և վտանգի պահին ոչ մի օժանդակություն ցույց չէին տալիս ժողովրդին: «Վերեն կնային թե անօրենը ի՞նչ կընե,- ասում է Կարապետը,- ի՞նչպես կսպաննե, ի՞նչպես գերի կտանի, ի՞նչպես կայրե, ի՞նչպես կհափշտակե: Եվ երբ նա կերթա, կիջնեն իրենց ծակերեն, ժողովուրդը կկսկծան և կհորդորեն, որ նորեն ցանեն, նորեն հնձեն, նորեն շինեն, ահա մեր վիճակը» (Ծերենց 249):

Արաբ բռնակալների ասպատակությունների ժամանակ իշխանական դասի այդօրինակ վերաբերմունքի մասին բացասաբար է արտահայտվել նաև Մուրացանն իր «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում: Նա նույնպես խստորեն քննադատում է դավաճան նախարարների հակամարդկային էությունը, նրանց բարոյական այլասերվածությունը, փառասիրությունը, ժողովրդի բախտի ու ճակատագրի հանդեպ նրանց ցուցաբերած անտարբեր վերաբերմունքը: «Մենք ոչինչ չենք անում,- ասում է խորապես գայրացած Մարզպետունին կաթողիկոսին,- կամ անում ենք այն, ինչ որ ամոթ և նախատիք է բերում հայ անվանը: Մենք քաշվել, նստել ենք մեր բերդերում, շրջապատել ենք մեզ պահակ զևդերով, ապահովել ենք թշնամու հարձակումից, իսկ ժողովուրդն ու եկեղեցիները թողել անտերունչ, անպաշտպան, կամ ավելի ճիշտն ասած, մատնել նրանց թշնամու սրին...» (Մուրացան 214):

Րաֆֆին ևս իր «Խենթը» վեպում դատապարտել է կղերականության ու ավատական վերնախավի անտարբեր վերաբերմունքը սեփական ժողովրդի ու հայրենիքի հանդեպ. «Նայեց՛ք, նայեց՛ք...,- ասում է Կարդանը,- տունը աչքի առջեւ այրում են, զաւակները կրակի մեջ խորովում են, կինը, առջիկը քաշում տանում են... Տղամարդը տեսնում է այդ բոլորը եւ ինքը ամենայն խոնարհութեամբ պարանոցը դեմ է անում թշնամու սրին... So, անիծեալ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, յետոյ մեռիր...» (Րաֆֆի, *Խենթը, Արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից* 10):

«Երկունք»-ի դավաճան իշխաններ Մուշեղ Վահևունին, Վահրամ Տրունին և Վահրամ Գևունին թշնամու բանակի մեջ բարձր դիրք էին գրավում և հանդես էին գալիս իբրև Բուղայի հավատարիմ ծառաներ ու գործակալներ: «Սոքա երեքը,- գրում է Ծերենցը,- միաբան գրյալ և կնքյալ նամակով առ Բուղա մատնեցին իրենց իշխանը Աշոտ Արծրունի ի կապանս և ի գերություն, և Վասպուրական երկիրն ի հուր և ի սուր» (Ծերենց 324): Բուղային ուղղված դավաճան իշխանների նամակի բովանդակությունը տալիս է Թովմա Արծրունին, որից էլ օգտվել է Ծերենցը. «Եվ արդ մենք՝ Վասպուրականի ազատների ու իշխանների նահապետներս, Վահևունյաց տոհմից Մուշեղը, Տրունյաց տոհմից Վահրամը, մյուս Վահրամը, որը և իշխանի թիկնապահն է, և բազում ուրիշ ազատներ ու պետության զորականներ, որոնց ձեռքն է մեր աշխարհի հոգաբարձությունը, գրեցինք քեզ, Բուղա, արաբացոց զորապետների գլխավոր և բարձակից մեծն թագավորի: Միայն թե ազատ արձակի մեզ և մեր ազգատոհմին մեր տները և թույլ տուր յուրաքանչյուրիս խաղաղ ապրելու այնտեղ: Մենք Աշոտին կտանք քո ձեռքը, առանց զենքի, մարտի ու ճակատ կազմելու, և չես չարչարվի նրա պատճառով» (Արծրունի և Անանուն 150):

Վեպի՝ «Աշոտ Արծրունի և դավաճանք», «Վրեժ», «Դարան» գլուխներն ամբողջությամբ խարսխված են այս փաստի վրա:

Փառասեր, գոռոզ ու իշխանատենչ նախարարները, դառնալով Բուղայի հայաջինջ քաղաքականության պաշտպանն ու հովանավորը, մինչև վերջ էլ մնում են հավատարիմ իրենց գլխավորած հակահայրենասիրական հոսանքի հակաժողովրդական բնույթին: Սակայն Բուղայի դեմ տարած հաղթանակից հետո Հովնանի առաջ ծառացել էր մի դժվարին հարց՝ շուտափույթ հայտնաբերել դավաճաններին, բանտարկել և դատաստան տեսնել նրանց հետ: Եթե մյուս երկու մատնիչ իշխանները տակավին հայտնաբերված չէին, ապա Մուշեղ Վահևունին՝ «այդ

չարագործը, այդ արյունարբու գազանը, որ բոլոր Վասպուրական արյան և սուզի համակեց» (Ծերենց 314), ինչպես ճիշտ բնութագրել է նրան հեղինակը, յուրացրել էր քծնանքի և կեղծիքի բոլոր նրբությունները, նպատակին հասնելու միջոցների անխտրականությունը, դավելու հնարքները: Դավաճանը հասկանում էր իր վիճակի անելանելիությունը. համոզված էր, որ մինչև մյուս մատուհիչ իշխանների ձերբակալումը մնացել են հաշված ժամեր: Ի՞նչ անել, ինչպե՞ս դուրս գալ այդ դրությունից: Նա գիտեր, որ արդարանալու որևէ միջոց չունի, անգոր է, այլևս չի կարող կեղծել և ժողովրդից թաքցնել իր կատարած արարքները:

Շուտով հայրենիքի դավաճան այդ երեք իշխանները, որոնք «զինվորական օրինաց մատուհիչ եղան վատությամբ, տիրադավ եղան իրենց տերը մատուցին, իրենց բարերարներու երախտյաց ապերախտությամբ պատասխանեցին» (Ծերենց 321), կանգնում են ժողովրդական դատարանի առջև, որպեսզի պատասխան տան իրենց ազգադավ գործունեության համար: Վերջիններս խորամանկությամբ ձգտում էին քողարկել բոլոր այն չարագործությունները, որ կատարել էին իրենց ձեռքերով, և ամբաստանում էին Յովնանին՝ «իբրև խարդախի և դավաճանի, որ իրենց կենաց դեմ թշնամությամբ գրգռված՝ ո՛ր գիտե ուստի, զիրենք կապանաց և բանտի մատներ էր ամենայն դիվական նենգությամբ» (Ծերենց 321): Բայց Յովնանի բնածին խելքն ու զգուշությունը նրանց փաստի առաջ են կանգնեցնում և բացահայտում նրանց հոգու ամբողջ գարշելիությունը: Մի ակնթարթ նա վերհիշում է բազմաթիվ գյուղերի ու քաղաքների ավերումն ու կողոպուտը, անմեղ ժողովրդի գերեվարումը, բազում զինակից ընկերների կորուստը և շատ ու շատ այլ սարսափելի տեսարաններ, որոնք դավաճանների մատուության հետևանքներն էին: «Կրնայի զիրենք կախել առաջին փայտեն... բայց չուզեցի... որովհետև գրված է. Մի՛ սպանաներ, այլ դատե և դատապարտե» (Ծերենց 322):

Եվ ահա խուլեցու մեջ բորբոքվում է ցամառն հուրը: Նա շատ կտրուկ, վճռական հրամայում է հրապարակայնորեն դատել և տալ նրանց արժանի պատիժը: Բոլոր ներկաները, աջ ձեռքները Ավետարանի վրա դրած, ձախը՝ սրտներին, խոստովանում էին, թե «հանցավոր և մատուհիչ էին՝ հավասար ուրացելոցն Մերուժանա Արծրունվո և Վասակա Սյունվո և Յուդա Իսկարիոտացվո» (Ծերենց 323), ապա միահամուռ ընդունելով Յովնանի որոշումը՝ վճռում են. «Մենք զիրենք արժանի դատեցինք մահու և այս վճռին ու նրա գործադրությունը հանձնեցինք Յովնանու խուլեցվո,- ասում են լեռների պարզամիտ գյուղացիները,- որ ո՛ր տեղ և ո՛ր կողմ արժան և հարմար դատի՛ այս մեր պատժո վճիռն ի գործ դնե հօրինակ և ի զգուշություն չարագործաց և միամտաց» (Ծերենց 324):

Պատմաբան Լեոն, իր «Ռուսահայոց գրականությունը» նշանավոր աշխատության մեջ քննելով Ծերենցի վեպերը, կարծում է, որ գրողը բոլորովին անտեղի է ներկայացրել այդ դատը. «Մենք տեսնում ենք Յայաստանի լեռներում եվրոպական մի դատարան իր բոլոր ձևականություններով: Եվ այս անպատեհության պատճառը հասկանալի է. Ծերենց, ինչպես ասացինք, մի անկախ ազգի առաջնակարգ գործը որոշ օրենսդրությունն է համարում: Եվ ահա իր այդ գաղափարը նա գործադրել է տալիս իր գլխավոր հերոսի միջոցով, որ առհասարակ նրա բոլոր աշխարհայեցողությունների համագումարն է ներկայացնում» (ԼԵՕ 270): Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Տերտրյանը, «թե՛ Յովնանը և թե՛ հեղինակը խնդրին նայել են դաստիարակչական տեսակետից: Դավաճաններին «ոչ միայն պետք է հիշել,- ասում է Ծերենցը,- այլ նաև կրակով գրել, ժայռերու վրա փորագրել, մանր և փոքրիկ տղայոց ուսուցանել, որ նոցա անունը նզովեն և նոցա օրինակին քստմնել սովորեն և մեծ հասակավոր մարդիկ առաջին առթիվ զանոնք պատուհասեն» (Տերտրյան 108):

Ինչպես տեսնում ենք, դավաճան նախարարների վարքագիծը թե՛ Ծերենցի, թե՛ Մուրացանի և թե՛ Րաֆֆու ստեղծագործություններում խիստ քննադատության է ենթարկված: Նրանք երեքն էլ հայ գրականության և հասարակական մտքի

պատմության մեջ մեծ հետաքրքրություն հանդես բերեցին դեպի պատմական անցյալը և ցույց տվեցին հակադիր դասերի ու դասակարգերի միջև եղած խոր հակասությունը, պատռեցին քամահրանքի քողը, որով պարուրված էին ազնվականների անմարդկային արարքները տվյալ դարաշրջանում:

Ազնվական դասի քննադատության, հասարակական այդ կարևոր խնդրի հասկացողությունը ժողովրդի և իշխանական դասի միջև գոյություն ունեցող անհավասարության վերացումն է և հասարակ մարդկանց հասարակական ու քաղաքական իրավունքների ճանաչումը, այսինքն՝ հասարակության անդամների իրավահավասարության հաստատումը: Այստեղից էլ բխում են երկու մեծ վիպասանների ժողովրդասիրությունն ու մարդասիրությունը: Այս և համանման շատ գծերով էլ մոտ են իրար գեղարվեստական մտքի այդ երկու կարկառուն ներկայացուցիչները:

Դավաճանների կերպավորումը «Թեոդորոս Ռշտունի» վեպում

«Թեոդորոս Ռշտունի» վեպում Ծերենցը դիմել է հայոց պատմության մի ծանր և անհուսալի ժամանակաշրջանի, երբ պարսկական ու բյուզանդական իշխանությունների տակ հեծող Հայաստանը քայքայված ու կազմալուծված վիճակով ենթարկվում էր արաբական արշավանքներին: Այստեղ ևս Ծերենցը մեծ դեր է հատկացրել հայ վերնախավի՝ նախարարների, բարձրաստիճան հոգևորականների և ժողովրդի միջև եղած հարաբերությունների բնութագրմանը: Ցույց տալով ազատագրական շարժման ընթացքում ազնվականների մի որոշ մասի կատարած դրական դերը՝ վիպասանը չի քողարկում նախարարների պառակտողական, քայքայիչ գործողությունները: Ծերենցը սպառնիչ համոզությամբ նկարագրում է ազգադավ նախարարների վարած քաղաքականության բացասական եուությունը: Հայրենադավ իշխանները, ըստ Ծերենցի, հանցագործներ են, որոնք, գաղտնի կապերի մեջ մտնելով արաբական ու բյուզանդական վերնախավի ներկայացուցիչների հետ, բացահայտորեն դավաճանում են ժողովրդին, ոտնահարում նրա կենսական շահերը: Ազգային արժանապատվությունից զուրկ այդ իշխաններն իրենց գործունեությամբ հանդես են գալիս ոչ միայն որպես ժողովրդի թշնամիներ, այլև նրանք, շատ հաճախ նախանձությունից դրդված, միմյանց դեմ են դուրս գալիս. «Նախարարք և իշխանք հարստահարող, կասկածոտ, տգետ, նախանձոտ միմյանց դեմ» (Ծերենց 537):

Ազգադավ նախարարների նկատմամբ հեղինակի ունեցած այսօրինակ վերաբերմունքն արտահայտվում է վեպի բազմաթիվ էջերում. այդ երևույթը նրա բոլոր երկերում բացահայտված է վարպետորեն, ուժեղ և անհերքելի մերկացումներով: Ծերենցը ցույց է տալիս, որ հայրենադավ իշխանների ամեն մի արարք, համագործակցություն ստար նվաճողների հետ մի նոր դժբախտություն էին բերում ժողովրդին, թե ինչպես այդ բոլորին ավելանում էին նաև ներքին տիրապետող դասերի կամայականություններն ու բռնությունները բուն ժողովրդի մեջ, որը ստեղծում էր ընդհանուր ատելություն դեպի այդ ներքին հարստահարիչները, դեպի այն ամենը, ինչը երաշխավորվում էր իշխող վերնախավի անսանձ կամայականության բռնի շահագործմամբ: «Ինչպես բնական է ազնվատոհմությանց,- գրում է վիպասանը,- ամեն տեղ արհամարհ աչքը նայիլ հասարակ ժողովրդյան վրա և հարստահարել, նույնը սովորաբար կընեին հայոց նախարարք և ազատք: Վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մեկ իրավունքը չի իշխող մեկ տեղ մը, չի կար հաստատություն մը, որուն վրա ինք հենվեր, չի կար կազմակերպյալ օրենք մը, որ զինք պաշտպաներ» (Ծերենց 481):

Ծերենցը, դատապարտելով ներքին երկպառակությունները, ինչպես «Երկունք»-ում, այնպես էլ այս վեպում առաջ է քաշել ազգային միասնության գաղափարը՝ իբրև հայրենիքի անկախության գլխավոր նախապայման: «Այդ նախարարական իշխանությունը, որ մեծ և պզտի բռնավորությանց բաժանելով

երկիրը կենտրոնական իշխանություն կտկարացներ, և այդ բռնավորները գործիք կընէր օտարին բանսարկությանը և միջամտությանը»,- գրում է Ծերենցը (Ծերենց 482): Յեղիակը կարծում է, որ նախարարների անմիաբանության հետևանքով է, որ Հայաստանը կռվախնձոր էր դարձել արաբական ու բյուզանդական պետությունների ձեռքին. եթե նախարարները միաբանեին, ստեղծեին մի ամուր միասնական իշխանություն, ապա թշնամին երբեք չէր կարող ոտնակոխ անել հայոց աշխարհը և բնաջնջեր անմեղ ժողովրդին: Այս գաղափարն ընկած է Ծերենցի բոլոր վեպերի հիմքում. այն իր լայն լուսաբանությունն է ստացել նաև «Թեոդորոս Ռշտունի» վեպում:

Գրողը խստորեն քննադատում է ավատատեր իշխանների տարանջատվածությունը, նրանց գաղտնի համագործակցությունը արաբական իշխանության ներկայացուցիչների հետ, ժողովրդի ճակատագրի հանդեպ նրանց ունեցած անտարբեր վերաբերմունքը: Նա ցույց է տալիս, թե ինչպես նախարարներից շատերը թշնամու հետ միասին ճնշում ու հարստահարում էին ժողովրդին՝ օտար մեծամեծների աչքում իրենց դիրքն ու հեղինակությունը բարձրացնելու համար: Յեղիակի բնութագրմամբ՝ ազգադավ նախարարները ժամանակի ամենահետադիմական ուժերն էին, որոնք, հակադրվելով կենտրոնաձիգ առաջադեմ ուժերին, ոչ միայն խանգարում էին երկրի կենտրոնական ուժեղ պետություն ստեղծելուն, այլև նպաստում ներքին ուժերի ջլատմանը, հնարավորում թշնամուն հեշտությամբ կենսագործելու իրենց նվաճողական ծրագրերը: Ծերենցը, քննադատական վերաբերմունք հանդես բերելով դավաճան իշխանների նկատմամբ, ընդհանուր գծերով մերկացնում է նրանց ոչ միայն կենտրոնախույս ձգտումները, այլև դասակարգային-շահագործողական էությունը: Անգթորեն ճնշելով ժողովրդական զանգվածներին՝ նրանք ոտնահարում էին ժողովրդի իրավունքները, և վերջինս, «Ոսկվո և արծաթի հարկապահանջների տակ կքած», կրկնակի ենթարկվում էր ավատական բռնության օրենքի նվաստացուցիչ ազդեցությանը: «Կային ժամանակներ,- գրում է Ծերենցը,- որ նախարարական ձեռքը այն աստիճան կծանրանար ժողովրդյան վրա ոսկվո և արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը կնմանեցնե այդ խեղճ շինականը, այսինքն ժողովուրդը «մարդու», որ կընկնի ի ծով հնարք չի գտներ ելլելու, «հիվանդի», որ ցավեն տազնապայալ խոսելու նաև կարողություն չունի» (Ծերենց 481):

Ծերենցի կարծիքով՝ հիվանդ ժողովրդի վերջերը բուժելու համար անհրաժեշտ էր հեռանկարային լայն գործունեություն ծավալել, որի հիմնական նպատակը պետք է լիներ կրթել և դաստիարակել հայրենակիցներին՝ բարձրացնելով նրանց ազգային ինքնագիտակցությունը:

Կենտրոնախույս ուժերի պառակտիչ քաղաքականությունը ցույց տալով՝ վիպասանը զուգահեռ է անցկացրել հայերի ու հույների պատմական ճակատագրերի միջև և հանգել այն եզրակացության, որ Հայաստանի՝ պետականորեն հզոր չլինելու հիմնական պատճառը նախարարների վարած կենտրոնախույս քաղաքականությունն է, որը օտարերկրյա ծանր լծի հետ միասին խանգարում է ժողովրդի միավորմանը, մինչդեռ հույների մոտ «ուսմունքը բնական մարդը բարձրացրել է» ազգային ընդհանուր շահերը ճանաչելու և համախմբվելու գիտակցությանը: «...Հայերը նույնչափ անմիաբան եղած են, ինչչափ ամեն ազինք,- գրում է վիպասանը,- որ զորավոր կառավարություն չեն ունեցել երբեք: Իրենք ոչ երբեք ունեցել են Հունաց պես 25 տարի քշող քաղաքական պատերազմը Պելոպոնեսյան պատերազմի պես թեպետ նախարարությանը անմիաբանությունը հար և նման էր այդ Հունաստանի փոքր, փոքր հասարակապետությանը, միայն այն տարբերությամբ, որ հոն ժողովուրդն ազատ և ամեն բան էր, և ուսմունքը բնական մարդը բարձրացուցր էր, իսկ Հայաստան՝ ժողովուրդը ոչինչ էր, և իր բռնավորներն ամեն ինչ» (Ծերենց 483):

Վիպասանն ընդգծում է, որ միայն կրթության ու դաստիարակության խնդիրը կարող է ազգային ինքնաճանաչողության արթնացման և ազատագրական բոլոր ուժերի միավորման ու համախմբման գլխավոր ազդակ դառնալ: Նա ամեն կերպ

ձգտում էր կրթության ու դաստիարակության միջոցով ժողովրդին դուրս բերել թշվառ վիճակից: Ներշնչվելով ֆրանսիական լուսավորիչներից ու գրողներից՝ Ծերենցը նախ իր հրապարակախոսական հոդվածներում, այնուհետև վեպերում արծարծում է այն հարցը, որ լուսավորությունը առաջին և ամենագլխավոր նախապայմանն է ազգային-քաղաքական նպատակների իրականացման համար: «Ժողովրդական միաբանական ոգի և ուսումնարան. այս երկու բան կարող են հայ ազգին կենդանության շունչ բերել», - գրում է նա (Ծերենց 638):

Ծերենցին զբաղեցնող հիմնական հարցերից մեկն էլ բարձրաստիճան հոգևորականության խնդիրն էր:

Ներսես կաթողիկոսը վեպում պատկերված է իբրև հմուտ քաղաքագետ, հեռատես, փորձառու, խելացի, աշխարհ տեսած, բազմակողմանի զարգացած, եկեղեցական օրենքների քաջ գիտակ մի անձնավորություն: Նա հասկանում էր, որ երկիրը օտար ասպատակողներից պաշտպանելու համար առաջին հերթին պետք էր ամրապնդել հայրենիքի սահմանները, վերականգնել բոլոր այն քաղաքները, որոնք քարուքանդ էին եղել բարբարոսների ձեռքերով, բոլոր եկեղեցիներն ու վանքերը պետք է վերանորոգվեին. ահա այս նպատակով նա ձեռնարկում է քաղաքաշինարարական մեծ աշխատանքներ: «...Այրած եկեղեցիները և կաթողիկոսարանը ու հյուրանոցը նորոգեց, - գրում է Ծերենցը, - պարիսպներն ամրացուց, պարտեզներ և այգիներ տնկեց և Գառնո գետն ջուր բերավ ոռոգելու համար: Դվին շունչ առավ կենդանացավ քանի մը տարվա համար, ավերակաց վրա պալատներ, տուններ և շուկաներ բարձրացան» (Ծերենց 538):

Եթե Ներսես կաթողիկոսի կերպարը վեպի սկզբում բնութագրվում է դրական գծերով, ապա վերջում հեղինակը նրա կերպարը մեկնաբանում է այլ դիրքերից՝ ներկայացնելով նրան որպես այլ հոգեբանության և վարքագծի տեր մարդու: Հայոց կաթողիկոսը հայրենասեր է, սիրում է իր հայրենիքն ու ժողովրդին, այդ բանը չի ժխտում հեղինակը: Բայց ի՞նչ դիրք է բռնում նա հայրենիքը վտանգի մեջ եղած ժամանակ: Հենց այս հարցում էլ հեղինակը մեղադրում է նրան՝ հայրենադավ իշխանների հետ միանալու և հայրենիքին ու ժողովրդին դավաճանելու համար:

Թշնամու կողմից սպառնացող վտանգի պահին, փոխանակ իր հայրենիքին ու ժողովրդին օգնի, նա Հովհաննես կաթողիկոսի նման իր անձը փրկելու համար թողնում է աթոռանիստ քաղաքը և Սմբատ Կյուրողապատի հետ փախչում Տայոց գավառը՝ պատճառաբանելով, որ իրենք հեռանում են Դվինից ոչ թե իրենց կյանքի ապահովության համար, այլ Թեոդորոս Ռշտունու երկյուղից, որ իբր հայոց սպարապետը մի նոր դավադրություն է նախապատրաստել իրենց դեմ: Թեոդորոս Ռշտունու դեմ հարուցված մեղադրանքները բոլորովին անհիմն էին, որովհետև վեպում ոչ մի տեղ նշված չէ հայոց զորավարի կազմակերպած դավադրության մասին. դա Ներսես կաթողիկոսի կողմից հորինված միտք էր՝ վատաբանելու Թեոդորոս Ռշտունուն, քանի որ վերջինս ամեն կերպ աշխատում էր իր ուժն ու կարողությունն ի սպաս դնել հայրենիքի պաշտպանության սրբազան գործին:

Վեպում ծավալվող իրադրությունների և դրանցում հանդես եկող գլխավոր գործող անձերի միջոցով Ծերենցը ստեղծում է մի պատմավեպ, որում շրջափում է բազմաթիվ խնդիրներ թե՛ տվյալ դարաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, թե՛ հայ իրականության մեջ գոյություն ունեցող տարբեր դասակարգերի և թե՛ հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ:

Վիպասանի կերտած դրական կերպարներն ամբողջանում են իրականի և իդեալականի, իրենց ապրած դարաշրջանի վշտերի ու պատրանքների, ներկայի ու գալիքի պատկերացումներից: Գլխավոր կերպարներին վերցնելով վերնախավից՝ Ծերենցը հակադրել է նրանց հենց իրենց դասակարգի մարդկանց հետ, ցույց տվել, որ նրանք իրենց հոգեբանությամբ ու բնավորությամբ տարբերվում են ազգադավ նախարարներից, եթե հայրենասեր իշխաններն իրենց մտքերն ու զգացմունքները միավորել և միասնական ուժերով դուրս են եկել թշնամու դեմ, ապա հայրենադավ

իշխանները իրենց արարքներով միշտ ձգտել են խանգարել նրանց հայրենասկզբ գործունեությունը:

Եզրակացություն

Ծերենցն իր երեք վեպերում խստորեն քննադատել է դավաճան իշխանների հակաժողովրդական գործունեությունը: Նրանց քաղաքական վարքագիծը բնութագրելու համար հեղինակը առանձնացրել է գլխավոր հատկանիշները՝ դրանով իսկ հասնելով յուրաքանչյուրի բացասական կողմերի պատկերմանը: Հայրենիքի դավաճանները հոգով այլատերված, բարոյական անազնիվ սկզբունքներով դեկավարվող անհատներ էին, որոնք, հովանավորվելով արտաքին թշնամու կողմից, վարում էին կենտրոնախույս քաղաքականություն:

Ծերենցի, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերում ներկայացված դավաճան նախարարների, իշխանների ու հոգևորականների կերպարների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայրենիքի, ժողովրդի, կրոնի ուրացումը, օտար բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ ժողովրդի շահերի, ծանրագույն հանցանք է՝ դավաճանություն, և արժանի է ամենաանողոք պատժի: Երեք վիպասաններն էլ ձաղկել են դավաճանությունն ու անմիաբանությունը և դրան հակադրել հայրենասիրության ամբողջ վեհությունը՝ առաջադրելով ազգային միասնության գաղափարը՝ իբրև հայրենիքի անկախության և ժողովրդի ինքնության պահպանման կարևորագույն նախապայման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան, Չավեն. *Հայ պատմավեպի պոետիկան*. Երևան, 1986:
2. Թովմա Արծրունի և Անանուն. *Պատմություն Արծրունյաց տան*. Ներածությունը, թարգմանությունը և ծանօթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1978:
3. Լեօ. *Ռուսահայոց գրականությանը սկզբից մինչև մեր օրերը*. Վենետիկ, 1904:
4. Ծերենց. *Երկեր*. առաջաբանը՝ Վ. Սկրտչյանի, Երևան, 1957:
5. Մուրացան. *Գևորգ Մարզպետունի*. Հայ դասականների գրադարան, Երևան, 1977:
6. Սարիկյան, Սերգեյ. *Րաֆֆի*. Երևան, 1957:
7. Սմբատ Սպարապետ. *Տարեգիրք*. յառաջաբանը՝ Հ. Ս. վրդ. Ազըլեանի, Վենետիկ, 1956:
8. Տերտրյան, Արսեն. *Հայ կլասիկներ*. Երևան, 1944:
9. Րաֆֆի. *Դավիթ բեկ*. Վիեննա, 1903:
10. Րաֆֆի. *Խենթը, Արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից*. Պոսթըն, 1937:
11. Ադամյան, Պետրոս. *Առ պատկառելի ծերենց. յուր վաղամտիկ և բարեհիշատակ դուստր. Տիկին Թագուհի Մելիք-Ազարյանցի մահվան առթիվ*. ինքնագիր, ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 51:

WORKS CITED

1. Avetisyan, Zaven. *Hay patmavepi poetikan*. Erevan. [The Poetics of the Armenian Historical Novel. Yerevan] 1986. (In Armenian)
2. Léo. *Rusahayots' grakanut' iwné skzbits' minch'ew mer öreré*. Venetik. [The Armenian Literature in Russia from the Beginning to our Days. Venice] 1904. (In Armenian)
3. Muratsan. *Gevorg Marzpetunii*. Hay dasakanneri gradaran, Erevan. [Gevorg Marzpetuni. The Library of the Armenian Classics, Yerevan] 1977. (In Armenian)
4. Raffi. *Davit' bek*. Vienna. [David Bek. Vienna], 1903. (In Armenian)

5. Raffi. *Khent'ë, Arkatsner verjin rus-t'urk'akan paterazmits'*. Post'y'n. [*The Fool: Adventures from the Last Russian-Turkish War*. Boston] 1937. (In Armenian)
6. Sarinyan, Sergey. *Raffi*. Erevan. [*Raffi*. Yerevan] 1957. (In Armenian)
7. Smbat Sparapet. *Taregirk'*. ħarajabanë H. S. vartabed Agëlean. [*Yearbook*. Foreword by H. S. Arch. Agilian, Venice] 1956. (In Armenian)
8. Terteryan, Arsen. *Hay klasikner*. Erevan. [*The Armenian Classics*. Yerevan] 1944. (In Armenian)
9. Tovma Artsruni ew Ananun. *Patmut'yun Artsrunyats' tan*. neratsut'yunë, t'argmanut'yunë ev tsanot'agrut'yunnerë Vrej Vardanyani, Erevan. [*The History of Artsruni Dynasty*. Introduction, Translation and Footnotes by V. Vardanyan, Yerevan] 1978. (In Armenian)
10. Tserents'. *Erker*. arajabanë Vahagn Mkrтч'yani. Erevan. [*Literary Works*. Foreword by V. Mkrтчyan, Yerevan] 1957. (In Armenian)
11. Adamyanyan, Petros. *Ar patkarelin Tserents' yur vaghamerik ev barehishatak dustr. Tikin T'aguhi Melik-Azaryants'i mahvan art'iv*. ingnagir, GAT', C'erenci fond, 51. [*To His Greatness Tserents, On the Death of the Prematurely Dead and Well-Remembered His Daughter Mis Taguhi Melik-Azaryants*. Handwritten, The Archives of the Museum of Literature and Art after Yeghishe Charents, Tserents Fund, Document 51. (In Armenian)

TRAITORS IN TSERENTS'S HISTORICAL NOVELS

LEVON (ARCHIMANDRITE NERSEH) ALOYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Chair of History of Armenian Literature after Academician Hrant Tamrazyan,
Ph.D. Student; journal of the Armenian Patriarchate
of Jerusalem «Sion», Chief editor,
Jerusalem, Israel*

This article examines the characters of disunited and treacherous ministers in the novels "Toros, Son of Levon," "Travails of the 9th Century," and "Theodoros Rshtuni," with the goal of studying and comparing the treacherous characters in Tserents' historical novels with those in Raffi's and Muratsan's works, as well as bringing out the infamous and contemptible attitude of the Armenian elite, ministers, princes and clergy towards the fate of the homeland and its people.

The historical-comparative and historical-analytical methodologies were employed in the course of the research.

Following the previous studies, the author explores the theme of betrayal in three novelists' works written in different periods of time, and comes to the conclusion that in order to preserve the independence of the homeland and the identity of the people, it is necessary to acknowledge the importance of the notions of national unity and patriotism. Three novelists' works contain plenty of insidious, materialistic, and cowardly Armenian traitors who, by prioritizing their own personal interests and welfare over national and state interests, bring great misfortune to the Armenian statehood and homeland through their treacherous activities. The denial of homeland, people, religion while allying with foreign dictators against the interests of the people is a grave crime and betrayal that deserves the harshest punishment.

Keywords: *Tserents, historical novel, "Toros, Son of Levon," "Travails of the 9th Century," "Theodoros Rshtuni," treacherous ministers, renegade princes, disunity, clergy, centrifugal policy.*

ПРЕДАТЕЛИ В ИСТОРИЧЕСКИХ РОМАНАХ ЦЕРЕНЦА**ЛЕВОН (АРХИМАНДРИТ НЕРСЕ) АЛОЯН**

*соискатель кафедры армянской литературы имени Гранта Тамразяна
Ереванского государственного университета,
главный редактор журнала
Армянского Иерусалимского патриархата «Сион»,
г. Иерусалим, Израиль*

Данная статья дает всеобъемлющий анализ образов разобщенных и настроенных против государственной власти князей и священников и их деятельности в исторических романах Церенца «Торос Левони», «Рождение IX века», «Теодорос Рштуни».

Цель исследования – изучить и сопоставить образы предателей в исторических романах Церенца с образами изменников в исторических романах Мурацана, Раффи, а также выявить низкое, осудительное и предательское отношении еармянской элиты, князей и духовенства, к своей родине и к судьбе народа.

В ходе работы были использованы историко-сравнительный метод и метод исторического анализа.

Проанализировав мотивы предательства в трех сочинениях вышеназванных авторов, отделенных друг от друга временем и пространством, и Церенца и отдав дань уважения изучавшим этот материал предшественникам, автор приходит к выводу о том, что для независимости родины и сохранения национальной идентичности важно национальное единство, восприятие и переосмысление высших патриотических идеалов и духовных ценностей. В работах всех трех романистов есть немало образов низких, меркантильных и эгоистичных предателей-армян, которые предпочли личную выгоду и благополучие национальному и государственному процветанию и которые своими предательскими поступками приносят огромный вред родине и армянской государственности. Предательство родины, народа и религии, союз с иноземными завоевателями – страшная вина: измена, за которой последует суровое наказание.

Ключевые слова: *Церенц, исторический роман, «Торос Левони», «Рождение IX века», «Теодорос Рштуни», вельможи-предатели, князя-предатели, разрозненность, духовенство, центробежная политика.*

ՈՐՈՇ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԿԱՂԱՊԱՐ-ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ*

ՀՏԴ 82.0:09

DOI: 10.52063/25792652-2022.2.13-156

ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հայցորդ,
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական աշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ovsannakhachatryan77@gmail.com

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել ձեռագրի հիշատակարանի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ կաղապարային բնույթը:

Հոդվածի խնդիրն է ցույց տալ կաղապարային հիշատակարանների նշանակությունը ձեռագրագիտության մեջ:

Աշխատանքը շարադրված է պատմահամեմատական և համադրական մեթոդների կիրառմամբ:

Կատարված հետազոտության արդյունքը ցույց է տալիս, որ հայերեն ձեռագրերի հիշատակարանները մեծ մասամբ գրված են հիշատակարանային կաղապարներով, նույնիսկ կան ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ: Ձեռագրի հիշատակարանի տիպիկ նմուշ-օրինակ կա ՄՄ (Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի) Հ^մ 2335 ձեռագրում (Երուսաղեմ, 1476 թ.), իսկ ՄՄ 3461 ձեռագրում (Թոխաթ, 1662 թ.) կան հուշադրյուրի, գավաթի վրա գրելու արձանագրություն-հիշատակարանների օրինակներ: ՄՄ Հ^մ 3633, 5664, 6059, 8454, 8578 ձեռագրերի՝ նույն կաղապարով գրված հիշատակարանների տեղեկությունները համադրելով՝ պարզեցինք ձեռագրերի «ազգակցական» կապերը, ՄՄ Հ^մ 8578 ձեռագրի գրչության վայրը՝ Մոկս գավառ, ինչպես նաև Սարգիս գրիչի ով լինելը՝ Սարգիս Հիզանցի (եղել է Խիզան կամ Հիզան գավառի անվանի ծաղկող Սարտիրոս Խիզանցու եղբայրը):

Այսինքն՝ մինևույն կաղապար-օրինակի հիման վրա գրված հիշատակարանների հավաքման, դասդասման արդյունքում հնարավոր կլինի պարզել ոչ միայն ձեռագրի ստեղծման հանգամանքների հետ կապված զանազան տեղեկություններ, այլև լուծել ձեռագրագիտական տարաբնույթ հարցեր:

Հիմնաբառեր՝ հիշատակարան, ժանր, կաղապար, գրիչ, ձեռագիր, աղբյուրի վրա գրելու հիշատակարան, գավաթի վրա գրելու հիշատակարան, Սարգիս Հիզանցի:

ՆԱԽԱԲԱՆ

Հայերեն ձեռագրի առաջացմանը զուգընթաց երևան է եկել հայ միջնադարյան գրականության կարևոր ժանրերից մեկը՝ ձեռագրի հիշատակարանը (Բախչինյան), որի ժանրային կարևոր առանձնահատկություններից կարելի է համարել կաղապարային բնույթը:

* Հոդվածը ներկայացվել է 31.05.2022թ., գրախոսվել՝ 23.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Հայերեն ձեռագրի հիշատակարանները մեծ մասամբ գրված են ընդունված հիշատակարանային կաղապար-արտահայտությունների, բառակապակցությունների, նույնիսկ նախադասությունների գործածմամբ: Բոլոնիայի համալսարանի պրոֆ. Շիրիկյանը առանձնացրել է հայերեն ձեռագրերի հիշատակարաններում եղած զանազան կաղապարային արտահայտություններ ու բառակապակցություններ՝ «ձեռս փտի ի հող դառայ, գիրս մնայ յիշատակող», «յերեսս անկեալ աղաչեմ», «ի ինդոյ պատուական սարկաւագի», «ի յարդար վաստակոց իւրոց», «ի ստոյգ և ընտիր և լավ օրինակէ», «շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ ավարտեցի» և այլն (Sirinian 76-85): Հայերեն ձեռագրերի հիշատակարանային կաղապարներին անդրադարձել է նաև բելգիացի հետազոտող Էմմանուել Կան Էլվերդինգեն (Van Elverdinghe 1-7), իսկ Խ. Հարությունյանը այդ կաղապարները դասակարգել է չորս պայմանական խմբի մեջ՝ «ա. կառուցվածքային բնույթի համընդհանուր կաղապարներ, բ. գրչօջախների կնիքը կրող կաղապարներ, գ. հեղինակային կաղապարներ, դ. թափառող կաղապարներ» (Հարությունյան 198-217):

Հիշատակարանային կաղապարներին զուգահեռ՝ գոյություն ունեն կաղապար-հիշատակարաններ, որոնք ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ են:

Կաղապարային հիշատակարանները ձեռագրերում

Հիշատակարանային կաղապարներից պետք է տարբերել կաղապար-հիշատակարանները, որոնք ոչ թե բառակապակցություններ կամ նախադասություններ են, այլ ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ: Կաղապար-հիշատակարանի տիպիկ օրինակ կա 1476 թ.-ին Երուսաղեմում գրված ՄՄ Հ^մ 2335 ձեռագրում (Մաթևոսյան ԺԸ.; Հարությունյան 201-202), որտեղ տեղանունների, անձնանունների և այլ հատկանունների փոխարեն գրված են՝ «այս անուն», «այս չափ», «որչափ որ կամիս՝ ասայ», «այս առաջնորդի» պայմանական արտահայտությունները, որպեսզի հետագայում հիշատակարանի օրինակից օգտվողը լրացներ համապատասխան անունները.

«[Փ]առք եզակի տերութեանն եւ եռահիւսակ դաւանութեան... Արդ, յանգ ելեալ աւարտեցաւ հոգիաբուխ մատեանս, որ կոչի Մանրուսումն, ի շրջագայութեան Հայոց տումարի (այս չափ), ի գաւառս (այս անուն), ի հայրապետութեան տեառն (այս անուն), ի յերկնահանգէտ եւ ի գերահռչակ, եւ ի հրեշտակածեմ, եւ յաստուածաբնակ վանքս, որ կոչի (այս անուն), որ նման է վերինն Երուսաղէմ, ընդ հովանեաւ [այս անուն], ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (այս անուն), որ է վարուքն մաքուր, բնութեամբ հեգ, լեզուան քաղցր, սրտիւն առատ, իմաստուն՝ որպէս Աբրահամ (որչափ որ կամիս, ասա), առ ոտս (այս առաջնորդի), ձեռամբ յոգնամեղ եւ անարիեստ գրչի [այս անուն]...» (ՄՄ ձեռ. 2335, 181բ):

Վերոգրյալ կաղապարի բառացի կիրառումը դեռևս չենք գտել որևէ ձեռագրի հիշատակարանում, սակայն սա ոչ թե փաստում է դրա չգործածվելը, այլ վեր է հանում այն բնավորությունը, որ ունեցել են միջնադարյան գիչները. ունենալով որոշակի ստեղծագործական ազատություն՝ նմուշը նույնությամբ չեն արտագրել, այլ կատարել են հավելումներ, կրճատումներ՝ իրենց ոճին և ունակություններին համապատասխան: Այնուամենայնիվ, ՄՄ հ^մ 2335 ձեռագրում եղած հիշատակարանի նմուշի առկայությունը արդեն պարզ է դարձնում, որ եղել են նման կաղապար-օրինակներ, որոնցից օգտվել են գրիչները՝ թեկուզև որոշակի փոփոխություններ կատարելով: Եվ եթե մենք միևնույն կաղապարով գրված հիշատակարանները հավաքենք մի տեղում և համադրենք ունեցած տվյալները, ապա հնարավորություն կունենանք գտնել ձեռագրերի գրչության հանգամանքների հետ կապված զանազան տեղեկություններ, ձեռագրագիտական կարևոր հարցերի պատասխաններ: Օրինակ՝ վերջերս ձեռագրերի նկարագրության աշխատանքի ընթացքում ՄՄ Հ^մ 8578 ձեռագրում գտանք մի հիշատակարան, որն ունի չափածո ծավալուն (141 տող) և ոչ

ծավալուն արձակ հատվածներ: Հիշատակարանում գրված է ձեռագրի գրչության թվականը՝ 1599 թ., գրչի անունը՝ Սարգիս, իսկ գրչության վայրը բացակայում է.

Փառք եռակի աստուծութեանն
 Եւ միակի ան[ճառ] բնութեանն],
 Երրորդութեանն անքըննական
 Եւ միութեանն անզըննական...
 Յիշման առնէք ըզմեզ արժան:
 ԸզՍարգիս հողս եւ անպիտան:
 Եւ դուք յիշիք առ Տէրըն Բան,
 Յարժամ գայցե ի դատաստան,
 Լըսէք ըզճայնն երանական
 Չեկայք արհնեայք Հաւրն իմ արժան:
 Եւ մա տացուք փառս անխափան,
 Երրորդութեանըն միական
 Աղաչեսցուք գՂայրն գըթական,

Որ է արհնեայ միշտ յաւիտեան (ՄՄ ձեռ. 8578, 404ա-7ա):

Եւ արդ, գրեցաւ եւ ծաղկեցաւ եղանակաւոր տառս եւ աստուածաբան կտակս եւ խընկալի տուփս եւ զանազան ծաղկաւետ բուրաստանս եւ անուշահամ կերակուրս, որ կոչի Շարակնոց՝ ի խիկ յարհնակէ, ձեռամբ սուտ եւ խաբբեայ [407բ] անարհեստ գրչի՝ Սարգիս, եւ ծնաւոյաց իմոց՝ տէր Սարգիս վարպետին եւ Խանումին՝ փոխեցելոցն առ Բրիստոս, եւ իմ պատուական եղբարն՝ տէր Մարտիրոս վարպետին... եւ իմ որդոցն՝ Յ[ո]վանէս սարկաւագին եւ Կարապետին... Գրեցաւ Շարակնոցս ի թվական[ի] ՌԽԸ. (1599), եւ Բրիստոսի փառք յաւիտեանս. [ամ]է[ն]» (ՄՄ ձեռ. 8578, 407աբ):

Նկատեցինք, որ այս ծավալուն հիշատակարանը կա նաև ՄՄ Հ^մ 5664, 6059, 8454, 3633 ձեռագրերում, ուստի հիշատակարանային տվյալները համադրելով՝ փորձեցինք կատարել ձեռագրագիտական փոքրիկ հետազոտություն:

Այսպես՝ ՄՄ Հ^մ 5664 ձեռագրի հիշատակարանում գրիչ Կիրակոս Ավընդանցին նշում է, որ իր ուսուցիչը Սարգիս Հիզանցին է. «Վասն որոյ աղաչեմ զձեզ լալով եւ պաղատանօք, զմանկունսրդ սուրբ եկեղեցւոյ, զի լի եւ առատ սրտիւ ողորմի ասացէք ստացող սորա զշնորհալի եւ զշնորհագարդ, զաստուածահաճոյ եւ սրբասէր, զառաքինի եւ զհոգեսէր, զբազմաշնորհն եւ զբարեբախտ, զաստուածագարդ շնորհօք լցեալն Սիմէոն վարդապետին, եւ իւր ծնօղացն, եւ ինձ՝ մեղապարտ Կիրակոսիս, եւ իմ ծնօղացն, եւս առաւել վարդապետին իմոյ՝ տէր Սարգիս Հիզանցոյն, միթէ լսել տայ ձեզ Բրիստոս Աստուած մեր զէ (շարունակած)» (ՄՄ ձեռ. 5664, 441բ), ինչը հաստատվում է հենց Սարգիս գրչի ՄՄ Հ^մ 6420 Ավետարանի ծաղկելու առիթով գրված հիշատակարանում՝ «եւ զանդրանիկ որդին իմ՝ զՅովանէս սարկաւագն, եւ զաշակերտն մեր՝ զտէր Կիրակոսն եւ զԴիլաքն, որ աւզնական եղեն ի ծաղկել սուրբ Աւետարանիս...» (ՄՄ ձեռ. 6420, 341ա): Գրականության մեջ կա այն տեղեկությունը, որ Սարգիս Հիզանցին եղել է Հիզանի հայտնի ծաղկող Մարտիրոսի եղբայրը¹, ինչը Սարգիս գրիչը հաստատում է ՄՄ Հ^մ 8578 ձեռագրի հիշատակարանում. «եւ իմ պատուական եղբարն՝ տէր Մարտիրոս վարպետին... եւ իմ որդոցն՝ Յ[ո]վանէս սարկաւագին եւ Կարապետին...» (ՄՄ ձեռ. 8578, 407ա):

Վերոնշյալ փաստերի համադրությամբ պարզ է դառնում, որ ՄՄ Հ^մ 8578 ձեռագրի Սարգիս գրիչը Սարգիս Հիզանցին է:

¹ Սարգիս Խիզանցին (Ժ2-ԺԷ. դդ.) ձեռագրեր է նկարագրելու խլաթում, Ավընդանց գյուղում, եղել է Խիզանի անուանի ծաղկող Մարտիրոս Խիզանցու եղբայրը, որից էլ սովորել է ծաղկելու արվեստը: Սարգիս Խիզանցու աշակերտներն են եղել Կիրակոսը, Չաքարիան, Դիլաքը, որոնք օգնել են իրենց ուսուցչին ձեռագրեր ծաղկելու գործում (Գեորգեան 667):

Այսպիսով՝ եթե կաղապարային հիշատակարանների տվյալների համադրությամբ հնարավոր եղավ պարզել Սարգիս Գրչի ով լինելը, ապա հնարավոր կլինի պարզել նաև այդ ձեռագրերի «ազգակցական» կապերը, որոնցով և՛ ՄՄ Հ^մ 8578 ձեռագրի գրչության վայրը:

ՄՄ Հ^մ 5664 ձեռագիրը գրված է 1615, 1627 թվականներին՝ Կիրակոս Ավրնդանցի գրչի ձեռքով (ինչպես վերը նշեցինք, նա եղել է Սարգիս Հիզանցու աշակերտը), Ավրնդանց գյուղում: ՄՄ Հ^մ 6059 ձեռագրի (1631 թ.) Ավետիս Գրչի հիշատակարանից պարզվում է, որ ինքը եղել է Կիրակոսի աշակերտը. «Արդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան զծողս եւ զծնօղքն իմ՝ Վարդան քահանայն եւ զՄահմուր, եւ զմեծ պապն իմ յ383ալ զԹումայ քահանայն, եւ զվարպետն իմ՝ զտեր Կիրակոս Աւրնդանցին, որ բազում աշխատությամբ ուսոյց զիս...» (ՄՄ ձեռ. 6059, 382բ): Իսկ ՄՄ 3633 ձեռագրի (1655 թ.) Թումա գրիչը գրում է, որ իր հայրը տեր Ավետիսն է. «Արդ, որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղթութս ձեր զանարժան զծողս՝ զԹումայ, եւ զծնօղքն իմ՝ տեր Աւետիս, եւ զմայրն իմ՝ զԱռիստ, զեղբայրն իմ՝ Վարդան, եւ տղայն իմ՝ Խաչիկ...» (ՄՄ ձեռ. 3633, 370բ): Ավետիս գրիչը ՄՄ Հ^մ 8454 ձեռագրի հիշատակարանում հաստատում է, որ Թուման ոչ միայն իր պապի անունն է, այլ նաև որդու. «Արդ, որք հանդիպիք սմա, կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան յ408բլ զըծողս՝ զԱւետիս, եւ զծննօղքն իմ՝ զՎարդան քահանայն, եւ զմայրն իմ՝ զՄահմուրն, եւ զպապն իմ՝ զԹումա քահանայն, եւ զտղայքն իմ՝ զԹումէն եւ զՎարդօ, եւ Նոցա մայրն՝ զԱռիստ, եւ զվարպետն իմ՝ զտեր Կիրակոս...» (ՄՄ ձեռ. 8454, 408աբ):

Այսպիսով՝ պարզվում է՝ ՄՄ Հ^մ 3633 ձեռագիրը ընդօրինակված է 1655 թվականին, Ավրնդանց գյուղում, Թումա Գրչի ձեռքով, որը Ավետիս Գրչի որդին է: ՄՄ Հ^մ 6059 ձեռագիրը ընդօրինակված է 1631 թվականին, կրկին Ավրնդանց գյուղում Ավետիս Գրչի ձեռքով, որը Կիրակոս Գրչի աշակերտն է: ՄՄ Հ^մ 5664 ձեռագիրը ընդօրինակված և նկարագարված է 1615, 1627 թվականներին, Աւրնդանց գյուղում Կիրակոս Ավրնդեցու ձեռքով, որը Սարգիս Հիզանցու աշակերտն է: Այսինքն՝ այս ձեռագրերը մի դպրոցի ծնունդ են: Ըստ այդմ, թվում է՝ կարելի էր ենթադրել, թե ՄՄ Հ^մ 8578 ձեռագիրը, որը գրվել է Սարգիս Հիզանցու ձեռքով և, ըստ Եռության, վերոհիշյալ դպրոցի արդյունքն է, նույնպես ընդօրինակվել է Ավրնդանց գյուղում: Պարզելով, սակայն, որ այդ կաղապարային հիշատակարանը գոյություն ունի Մոկս գավառի այլ գյուղերում ընդօրինակված ձեռագրերում ևս¹, պարզ է դառնում, որ վերոնշյալ գրչության դպրոցի ներկայացուցիչները ձեռագրեր ընդօրինակել են ոչ միայն Ավրնդանց գյուղում, հետևաբար չենք կարող վստահ լինել, որ ՄՄ Հ^մ 8578 ձեռագիրը ընդօրինակվել է հենց այս գյուղում, սակայն կարող ենք նշել, որ այն ընդօրինակվել է Վանի նահանգի Մոկս գավառում:

Ձեռագրերում կան ոչ միայն հիշատակարանի, այլև արձանագրություն-հիշատակարանի նմուշ-օրինակներ: Օրինակ՝ ՄՄ Հ^մ 3461 ձեռագրում կան աղբյուրի, գավաթի վրա գրելու արձանագրությունների օրինակներ՝ գրված ձեռագրի գրիչ Հովհաննես Բաբերդցու ձեռքով: Առաջինը վերնագրված է «Աղբրի վրայ գրելու յիշատակարան» (այստեղ նշված է ձեռագրի գրչության թվականը 1662 թ.²) և

¹ Օր.՝ ՄՄ հ^մ 4620 ձեռագիրը Շարակնոց է՝ ընդօրինակված 1658 թվականին Վարդան Գրչի ձեռքով, Սուրս գիւղում (գուր Մեծ Հայքի Մոկս աշխարհում, Մոկս Առանձնակ գավառում, հետագայում Սորս՝ Վանի նահանգի Վանի գավառում, Մոկսի գավառակում. Հակոբյան և ուրիշներ 727), կամ էլ օրինակ ՄՄ հ^մ 6053 ձեռագիրը կրկին Շարակնոց է՝ ընդօրինակված 1660 թվականին, Հովանես Գրչի ձեռքով, Ապարանաց Ուխտում:

² «Արդ, գրեցաւ սուրբ գիրքս թփին ՌՃԺԱ. (1662) ամին, ի քաղաքն Թուխաթ, ի թաղն Պազարճուխ, ի դուռն սուրբ Սարգըսու, ձեռամբ անիմաստ եւ յոյժ մեղապարտ Բաբերդացի

Նախատեսված է հուշաղբյուրի¹ հիշատակի քարի վրա փորագրելու համար: Արձանագրություն-հիշատակարանի այս նմուշում, ինչպես նկատում ենք, կա «Ֆլան» պայմանական արտահայտությունը, որի փոխարեն օրինակից օգտվողը պետք է լրացներ այն մարդու անունը, ում ծնողների հիշատակին և տոհմին նվիրված էր հուշաղբյուրը: Վերջինս համեմատված է Հորդանան գետի և դրախտից դուրս եկող չորս գետերի հետ:

Աղբյուրի վրայ գրելու յիշատակարան

Աղբյուր, որ է ջրոց բլիման,
Յորդանանու է սայ Նըման
Կամ Դ. գետոցն յաղենական
Արբուցանող գամենեսեան:
Կանգնեալ ըզսայ հոգոյ հնձան,
Պարոն ֆլան ծընօղացն յիշման,
Նայ եւ սեռից զարմից լըման
Թվին հայոց ՌՃ. եւ մետասան (1662) (ՄՄ ձեռ. 3461, 43ա,
Հարությունյան, 330):

Այս հիշատակարանին հաջորդում են գավաթի վրա գրելու նմանատիպ հիշատակարանների օրինակներ.

Գաւաթի

Գաւաթս անապակ գինով ի լի,
Անուշ լինի զսայ խմօղի,
Ի վայելումն այս ֆլանի,
Թվին Ռ. եւ Կ. (1611):

Այս անուն մարդըս Թոխաթցի,
Ըզսայս գաւաթըս կազմել տվի,
Դուստր եւ որդոցս ամենայնի,
Թվին Ռ. եւ Ճ.ի (1651):

Գաւաթի

Բաժակս գինով ուրախարար,
Քիչ խըմօղին է սայ հալալ,
Ալէքսանոսն ըզսայ արար

Դուստր եւ որդոց զարմից համար (ՄՄ ձեռ. 3461, 43ա):

Այս վերջին օրինակում նկատում ենք կենսասիրություն. հեղինակը խրախուսում է չափավոր խմելը և մերժում հարբեցողությունը, ինչպես միջնադարյան տաղերգուները, օր. Հովհաննես Թլկուրանցին իր տաղում.

Գինին մարդոյ ամօթ բերէ
Եւ ի լեզու չար արկանէ.

Քան զգինին յետեւ հացին

Երկու Լ՝ իրեքն՝ այլ շահ չէ (Դուրխանյան 112; Թլկուրանցի 186):

ՄՄ Հ⁴¹ 3461 ձեռագրի նույն երեսի արտաքին լուսանցում նկատում ենք ևս մեկ օրինակ.

Այս գաւաթս է գեղեցիկ,
Մեջն է [լ]ցած անուշ գինիկ,
Առ դու ի քո[ւմ] ///ինդ

Յովհաննես իրիցու: Ամեղադիր լերո՛ւք գրիս սղալանաց եւ անարիեստութեանն, զի կար մեր այս եր, իմ սիրելի՛ հայրք եւ եղբայրք» (ՄՄ ձեռ. 3461, 358բ):

¹ Հուշաղբյուրի կառուցման մշակույթը եղել է հայկական միջավայրում և շարունակվում է մինչ օրս. այն կառուցում են՝ ի հիշատակ մերձավոր հարազատների:

Չինքն խըմե խիստ անուշիկ:

Վերոգրյալները անձանագրություն-հիշատակարանների կաղապարներ են, և չի բացառվում նմանատիպ այլ օրինակների հնարավոր առկայությունը հայերեն ձեռագրերում:

Եզրակացություն

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները աչքի են ընկնում հիշատակարանային կաղապարների լայն գործածմամբ, նույնիսկ գոյություն ունեն ամբողջական հիշատակարանի նմուշ-օրինակներ (ինչպես ՄՄ Հ^տ 2335 ձեռագրում եղած օրինակը), որոնցից օգտվել են միջնադարյան գրիչները: Ձեռագրերում կան ոչ միայն ձեռագրական հիշատակարանների, այլև արձանագրություն-հիշատակարանների օրինակներ՝ հուշադրյուրի, գավաթի վրա գրելու համար նախատեսված:

Միևնույն կաղապար-օրինակով գրված հիշատակարանների միջոցով հնարավոր է պարզել ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանուր ձեռագրագիտական հարցեր, ստանալ ձեռագրերի ստեղծման հանգամանքների հետ կապված զանազան տեղեկություններ: Ինչպես վերը նկատում ենք, հիշատակարանների տվյալները համադրելով հնարավոր եղավ պարզել ՄՄ Հ^տ 3633, 5664, 6059, 8454, 8578 ձեռագրերի «ազգակցական» կապերը, ՄՄ Հ^տ 8578 ձեռագրի գրչության վայրը՝ Մոկս գավառ, ինչպես նաև Սարգիս գրչի ով լինելը՝ Սարգիս Հիզակնի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բախչիյան, Յերիկ. *Հայկական ձեռագրերի հիշատակարանները*. Երևան, 1980:
2. Գեորգեան, Աստղիկ. *Հայ մանրանկարիչներ (IX-XIX դդ.)*. Գահիրե, 1998:
3. Դյուրխանյան, Աելիտա. *Հայ գրականության պատմություն*. Երևան, 2006:
4. Հակոբյան, Թադևոս և ուրիշներ. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանուններ բառարան*. հտ. 4, ցուցակ 1, Երևան, 1998:
5. Հարությունյան, Խաչիկ. *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները*. Երևան, 2019:
6. Հովհաննես, Թլկուրանցի. Տաղեր. Երևան, 1960:
7. Մաթևոսյան, Արտաշես. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ. ղարեր*. Երևան, 1988:
8. Sirinian, Anna. *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, "Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text"*. ed. by V. Calzolari with the collaboration of M. E. Stone, Brill, Leiden-Boston, 2014.
9. Van Elverdinghe, Emmanuel. "Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons". *Journal of Data Mining and Digital Humanities*, Special Issue, 2017, pp. 1-7.
10. ՄՄ ձեռ. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578:

WORKS CITED

1. Bakhch'inyan, Henrik. *Haykakan dzeragreri hishatakarannerē*. Erevan. [*Colophons of Armenian Manuscripts*. Yerevan] 1980. (In Armenian)
2. Dolukhanyan, Aelita. *Hay grakanut'yan patmut'yun*. Erevan. [*History of Armenian literature*. Yerevan] 2006. (In Armenian)
3. Gēorgean, Astghik. *Hay manrankarich'ner (IX-XIX dd.)*. Gahirē. [*Armenian Miniaturists (IX-XIX centuries)*. Cairo] 1998. (In Armenian)
4. Hakobyan, T'adevos ev urishner. *Hayastani ev harakits' shrjanneri teghanunneri bararan*. ht. 4, tsutsak 1, Erevan. [*Dictionary of Toponyms of Armenia and of Adjacent Regions*. Vol. 4, list 1, Yerevan] 1988. (In Armenian)

5. Harut'yunyan, Khach'ik. *Hayeren dzeragreri hishatakarannerë*. Erevan. [Colophons of Armenian Manuscripts. Yerevan] 2019. (In Armenian)
6. Hovhannes, T'lkurats'i. Tagher. Erevan. [Poems. Yerevan] 1960. (In Armenian)
7. Mat'evosyan, Artashes. *Hayeren dzeragreri hishatakaranner, V-XII dd.* Erevan. [Colophons of the Armenian Manuscripts, V-XII Century. Yerevan] 1988. (In Armenian)
8. Sirinian, Anna. *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, "Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text"*. ed. by V. Calzolari with the collaboration of M. E. Stone, Brill, Leiden-Boston, 2014.
9. Van Elverdinghe, Emmanuel. "Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons". *Journal of Data Mining and Digital Humanities*, Special Issue, 2017, pp. 1-7.
10. MM dzer. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578. [Yerevan, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran) MSS no. 2335, 3461, 3633, 5664, 6059, 6420, 8454, 8578].

SOME UNIQUE COLOPHON-EXEMPLARES IN ARMENIAN MANUSCRIPTS

OVSANNA KHACHATRYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Ph.D. Student;
Matenadaran after Mesrop Mashtots, Researcher,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to specify a very important feature of the colophons in the Armenian manuscripts - their exemplary character.

The objective of the work is to present the importance of colophon-exemplares in codicology.

The work is written applying the historical-comparative and comparative methods.

The results of the research show that though colophons are mostly written in colophon-patterns, there are colophon-exemplares of a complete colophon too. There is a typical colophon-exemplar in the Ms. 2335 of Matenadaran (M, Jerusalem, 1476), and there are examples of inscriptions-colophons: a colophon for writing on a fountain and on a cup in the Ms. M 3461 (T'okhat', 1662). Comparing the information of the colophons written in the same colophon-exemplar of the manuscripts M 3633, 5664, 6059, 8454, 8578, we clarified the "kinship" connections of those manuscripts. We also found out the place of writing of the Ms. M 8578 (Moks province), as well as who the scribe Sargis was. He is Sargis Hizants'i, the brother of the famous miniature painter Martiros Hizants'i from Hizan province.

In other words, due to collecting and classifying colophons written on the basis of the same colophon-exemplar, it is possible to find out not only various data concerning the circumstances of the origin of those manuscripts, but also to solve various codicological issues.

Keywords: *colophons, genre, exemplar, scribe, manuscript, a colophon for writing on a fountain, a colophon for writing on a cup, Sargis Hizants'i.*

НЕКОТОРЫЕ УНИКАЛЬНЫЕ КОЛОФОНЫ В АРМЯНСКИХ РУКОПИСЯХ**ОВСАННА ХАЧАТРЯН**

*аспирант Армянского государственного педагогического
университета им. Хачатура Абовяна, научный сотрудник
Матенадарана им. Месропа Маштоца,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – указать на очень важную особенность колофонов армянских рукописей, их экземплярный характер и попытаться показать значение колофонов в кодикологии.

Работа написана с применением сравнительно-исторических и сопоставительных методов.

Результаты исследования показывают, что, хотя в армянских рукописях колофоны в большинстве своем написаны в соответствии с шаблонами для коротких форм колофонов, также существуют и объемные колофоны. В рукописи № 2335 Матенадарана (М, (Иерусалим, 1476 г.) есть типичный экземплярный колофон, а в рукописи М № 3461 (Тохат, 1662 г.) — примеры надписей-колофонов: колофон для написания на роднике-памятнике, на чаше. Сопоставив сведения на колофонах, написанных по одному и тому же колофону-экземпляру рукописей М № 3633, 5664, 6059, 8454, 8578, мы выяснили «родственные» связи этих рукописей. Мы также выяснили место написания рукописи М № 8578 (провинция Мокс) и кто такой писец Саргис. Это Саргис Хизанци – брат Мартироса Хизанци, знаменитого миниатюриста из провинции Хизан.

Иными словами, в результате классификации колофонов, написанных на основе одного и того же колофона-экземпляра (шаблона), можно выяснить не только разные сведения, связанные с обстоятельствами происхождения рукописи, но и решить различные кодикологические вопросы.

Ключевые слова: *колофоны, жанр, экземпляр, писец, рукопись, колофон для написания на роднике-памятнике, колофон для написания на чаше, Саргис Хизанци.*

ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀՈԳԵՔԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՓՈՐՁԻ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*¹**

ՀՏԴ 159.9

DOI: 10.52063/25792652-2022.2.13-164

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
avanesyanh@ysu.am

ԻՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ, Ավրորա
առողջապահական կենտրոնի քեյս-մենեջեր,
ք. Զոլիկա, ԱՄՆ
i.babajanyan95@gmail.com

Հոդվածի նպատակն է հետազոտել հետպատերազմական բարդ իրավիճակներում հոգեբանական ծառայության մատուցման գործընթացում հոգեբանների գործնական փորձի և տեսական մոտեցումների կիրառման առանձնահատկությունները: Սկզբում իրականացվել է հոգեբանների գործնական գործունեության մեջ տեսական ու մեթոդաբանական հիմունքների կիրառման խնդրի մանրակրկիտ տեսական վերլուծություն: Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ հոգեբանական գիտության մեթոդաբանական և հայեցակարգային հիմքերը ուղղակիորեն ազդում են կիրառական հոգեբանության ապացուցողական գործիքակազմի զարգացման վրա: Հատուկ մշակված հարցարանի միջոցով ամփոփվել են հոգեշտկողական աշխատանքի գործընթացում կիրառված մեթոդների հայեցակարգային նախադրյալները ու յուրահատկությունները: Վերլուծության համար ընտրվել է խորհրդատվության, թերապիայի և հոգեբանական այլ ներազդող մեթոդների իրականացման գործընթացներում պարտադիր գիտական հիմնավորված հոգեբանական գնահատման կիրառման սկզբունքը: Տվյալ հետազոտությունը միանշանակ կարող է համարվել փորձագիտական, քանի որ հարցվողների մասնագիտական գործունեության փորձը միջինը կազմել է $M=14,2$ տարի, իսկ մասնակիցների կրթական մակարդակը լիովին

* Հոդվածը ներկայացվել է 19.04.2022թ., գրախոսվել՝ 15.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ գիտական նախագծի շրջանակներում №21T-SA203

համապատասխանում է ընդունված պահանջներին (գիտությունների թեկնածուներ - 54.2%, մագիստրոս կամ դիպլոմավորված մասնագետներ - 45.8 %): Տեսական մոտեցումների մանրամասն վերլուծությունը և աշխատանքի պրակտիկ փորձի ընդհանրացումը արտակարգ, հետպատերազմյան և համաճարակաբանական բարդ իրավիճակներում թույլ կտա մշակել հոգեբանական ծառայությունների կազմակերպման հատուկ մոտեցում, որն իր հերթին կարող է նպաստել բնակչության ֆիզիկական ու հոգեկան առողջության վերականգնմանն ու պահպանմանը:

Հիմնաբառեր՝ տեսական նախադրյալներ, մեթոդաբանություն, գնահատում, հարցում, հոգեբանական միջամտություն, խորհրդատվություն, անձ, հոգեվիճակ, հետպատերազմյան իրավիճակ, Covid-19:

Ներածություն

Անձի առանձնահատկությունների և նրա հոգեկան վիճակի հուսալի գնահատումը կարևոր նշանակություն ունի հոգեբանական միջամտության մեթոդների նպատակային կիրառման համար, քանի որ այդ բնույթի հետազոտումը նպաստում է կոնկրետ և իրավիճակային երևույթի բացահայտմանը: Այս առումով պրակտիկ հոգեբանը պետք է տիրապետի հոգեբանական գնահատման մասնագիտական հմտություններին, ինչը ենթադրում է երևույթի արտաքին նշանների և մարդու ներքին հոգեբանական բնութագրերի միջև կապեր հաստատելու ունակություն:

Միևնույն ժամանակ առանձնահատուկ դեր է տրվում գիտական հոգեբանության մեթոդների ծագումնաբանական հիմքերին և պրակտիկային, որոնք անմիջականորեն ազդում են փսիոխումբերիկ չափանիշների մեկնաբանության և այդ տվյալների կիրառման վրա՝ խորհրդատվության, թերապիայի և միջամտության այլ ձևերի ռազմավարության ընտրության համար:

Ժամանակակից սոցիալական, տեխնոլոգիական, տեղեկատվական ու բնապահպանական վերափոխումների լայն շրջանակը նոր մարտահրավերներ է ստեղծում տեսական ու կիրառական հոգեբանության համար՝ բարեփոխելու գիտական դիսկուրսները, մեթոդաբանական մոտեցումները, պրակտիկ գործունեությունը, որոնք ընդհանուր առմամբ ազդում են գիտական մտածողության ոճի վրա: Այս համատեքստում տեղին է Է. Մորինի (Morin) պնդումը, որ իրականության մեջ կարգ ու պարզություն մտցնելու համար անհրաժեշտ է դիմել հստակ ու պարզ մտածողության գործընթացներին (Morin):

Գիտության համակարգի ճանաչողության ուղիների և գործունեության վերաբերյալ քննադատական հոդվածներից մեկում, ժամանակի ընթացքում բացահայտվել են տարբեր հիմնարար հակասություններ: Հեղինակը, վերլուծելով փիլիսոփայական ու հոգեբանական մոտեցումները, մատնանշում է, թե ինչպես են հոգեբանները կիրառում գիտական հոգեբանությունը, որը պահանջում է լրացուցիչ հայեցակարգային աշխատանք, հատկապես երբ այն օգտագործում է փիլիսոփայական գիտության նվաճումները (Flis 158-181):

Նման միտում է նկատվում ռուսական հոգեբանության մեջ, որտեղ երկար տարիներ քննարկման առարկա է գիտական ու կիրառական հոգեբանության հիմնախնդիրը, քանի որ վերջինս առանձնացել է անցյալ դարի վերջին, անցել է տարբեր տեսություններով և սկսել արագ զարգանալ: Ըստ Ֆ. Վասիլյուկի՝ հոգեբանական պրակտիկան և հոգեբանական գիտությունը տեղափոխվել են զուգահեռ աշխարհներ և կորցրել հետաքրքրությունը միմյանց նկատմամբ: Անդրադառնալով փիլիսոփայական խորը արմատներ ունեցող մշակութային ու պատմական հայեցակարգին՝ հեղինակը բացահայտում է, որ հենց գիտակցությունն ըստ Լ. Ս. Վիգոտսկու հասկացվում էր որպես «մշակութային» և «գործնական» իր

ծագման, կառուցվածքի և գործունեության մեջ (Василюк 25-40): Հետևաբար եթե պրակտիկ հոգեբանը հավատարիմ է գիտական հոգեբանական գիտելիքներին, ապա դա թույլ կտա հասկանալ ակադեմիական ու գործնական հոգեբանության հարաբերակցությունը, ինչպես նաև կուրվագծի տարբերությունն արդի հոգեբանության հետ: Ի.Ն. Կարիցկին, ուսումնասիրելով հոգեբանական պրակտիկայի հիմնական կառուցվածքը, մատնանշում է համակարգի վերլուծության չափանիշները, որոնք հիմքում ընկած են հիմնական տեսակները՝ ինքնակարգավորումը, թրեյնինգը, խորհրդատվությունը, թերապիան, անձնային աճի պրակտիկան և պրակտիկայի որոշ այլ ենթատեսակներ (Карицкий, *Психологическая практика: базовая структура*):

Հոգեբանական գիտության մեթոդաբանական ու հայեցակարգային հիմքերն ուղղակիորեն ազդում են ապացույցների վրա հիմնված կիրառական հոգեբանության ձևավորման վրա՝ դրանով իսկ գործնական գիտելիքներ տալով՝ ինչպես աշխատել այցելուների հետ՝ անհատական կամ խմբային, ինչպես անցկացնել խորհրդատվություն կամ թերապևտիկ աշխատանքներ: Ի. Ն. Կարիցկին ճշգրիտ նշեց, որ հոգեբանական պրակտիկայի մեթոդաբանական հիմքերը սահմանում են դրա կառուցվածքը որպես անմիջական գործունեություն, ուղղորդում և կազմակերպում հոգեբանի գործունեության ընթացքը (Карицкий, *Базовая структура психологической практики* 64):

Այս առումով հոգեբանների վերապատրաստումը հոգեբանական ախտորոշման մասնագիտական հմտություններին տիրապետելու համար ներառում է երևույթի արտաքին նշանների և անձի ներքին հոգեբանական բնութագրերի միջև կապեր հաստատելու ունակություն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ախտորոշում կատարելիս անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ գործողություններ հատուկ նպատակով և կոնկրետ ծագումնաբանական բովանդակությամբ, ինչպես նաև տրամաբանական եզրակացություն անել մարդու վիճակի վերաբերյալ՝ հիմնված նրան բնորոշ հատկանիշների մեթոդական ուսումնասիրության վրա (Костромина): Հայտնի են պնդումներ հոգեբանական հետազոտության և ախտորոշման գործընթացում տեսական նախադրյալները հաշվի առնելու կարևորության մասին, մասնավորապես պրոյեկտիվ հոգեբանական ախտորոշման ընթացակարգում (Аванесян 110-115):

Ի. Սարատնը նշում է, որ անձնային առանձնահատկությունների ուսումնասիրության հիմնական խնդիրներից է այն, որ որակական վերլուծությամբ դուրս բերված անձնային կոնստրուկտները բազային են ու ֆունդամենտալ, իսկ մյուս դեպքում տարրական կոնստրուկտների միացությունն են, որոնք կպահանջեն ապարդյուն ջանքեր չափելու համար: Կարևոր է ընտրել, թե չափման որ մեթոդներն են ավելի արդյունավետ և հարմար գնահատման համար՝ հարցման միջոցով անձի չափում՝ իրականացնել, թե՞ խնդրել նրանց պատասխանել՝ օրինակ՝ ինչի՞ հետ են ասացվելու թանաքի բիծը, կամ երկնքում ամպը (Sarason):

Բազմաթիվ հեղինակներ նշում են ժամանակակից միտումների այն առանձնահատկությունները, որոնք կապված են անհատական ու խմբակային հոգեթերապիայի հիմնական մոտեցումների ու մեթոդների նպաստավոր բնույթի հետ: Այդ մոտեցումների շնորհիվ ստեղծվում են նոր ծրագրեր և այցելուներին սովորեցնում են անձնային աճի, ինքնատիրապետման և ինքնակարգավորման մեթոդների կիրառման յուրահատուկ ձևերին: Այս առումով նկատվում են հոգեթերապևտիկ տարբեր դպրոցների ինտեգրման, միաձուլման կամ փոխլուսացման միտումները (Chisholm 1981, Pollock 1974, Bonjour 1985, Lehrer 1974, Dretske 1981, Goldman 1986, DeRose 1995 and Lewis 1996): Այս նպատակն իրականացնելու համար Մ. Բիսկոպը առաջարկեց, որ իմացաբանության նատուրալիստական տեսությունը վերցնի Էմպիրիկ տեսությունը որպես իր առանցք, որպես իր ելակետ: Հեղինակի առաջադրած հինգ վարկածներից մեր ուշադրությունը գրավեց այն, որ վերջին կես դարում որոշ առաջատար հոգեբանական գիտություններ չափորոշիչներ և առաջարկներ ունեն, թե

ինչպես զարգացնել գիտակցությունը լուրջ խնդիրների լուծման համար (Bishop and Trout 696-714):

Այս ազդեցությունը վերլուծելու համար Ա.Ի. Գոլդմանն առանձնացրել է երեք այդպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ նկարագրական, վերլուծական և նորմատիվ ծագումնաբանություն: Հեղինակը այնուհետև նշում է, որ եթե այս հասկացություններից առաջինն ընդունվի, ապա անկասկած հոգեբանությունը կենսական դեր է խաղում: Ընդհակառակը, եթե երրորդ հայեցակարգն ընդունվի, կարող է խիստ կասկածելի թվալ, որ հոգեբանությունն ընդհանրապես արդիական է (Goldman 29-68):

Հիմնվելով պատմական ու տեսական մտորումների վրա՝ պնդում են, որ ենթադրությունները չեն կարող արմատախիլ անել հոգեբանությունից, և որ այն էմպիրիկ հետազոտության անհրաժեշտ մասն է, հատկապես, երբ դա վերաբերում է տվյալների մեկնաբանմանը: Այս մեկնաբանված ենթադրությունների որակը, այսինքն՝ հետազոտական տվյալների վերաբերյալ էմպիրիկ հոգեբանության հերմենևտիկական հատկապես կարևոր է, երբ դրանք վերաբերում են մարդկանց խմբերին և նրանց միջև եղած տարբերություններին: Թոմաս Թեոն պնդում է, որ բացահայտված վերակառուցումները և մանրամասն վերլուծությունից ստացված փաստարկները տալիս են էմպիրիկ հոգեբանության մեջ ենթադրությունների և մեկնաբանության խնդիրների մեկնաբանություն: Այս հոդվածում հեղինակը պնդում է՝ այսպես թե այնպես «շահարկումը ուրվական է, որն ուղեկցել է հոգեբանությանը իր պատմության ողջ ընթացքում» (Teo 47-67): Սա տազնապալի ախտանիշ է գործնական հոգեբանության զարգացման համար, որը, մեր կարծիքով, նկատվում է նաև հայ մասնագետների շրջանում: Տեսական վերլուծության ընդհանուր եզրակացությունն այն էր, որ հոգեբանական գիտության մեթոդաբանական ու հայեցակարգային հիմքերը ուղղակիորեն ազդում են կիրառական հոգեբանության ապացուցողական գործիքակազմի զարգացման վրա:

Էմպիրիկ հետազոտություն:


Աշխատանքի նպատակն է հետազոտել հետպատերազմական բարդ իրավիճակներում հոգեբանական ծառայության մատուցման գործընթացում հոգեբանների գործնական փորձի և տեսական մոտեցումների կիրառման առանձնահատկությունները: Հատուկ մշակված հարցարանի միջոցով ամփոփվել են հոգեշտկողական աշխատանքի գործընթացում կիրառված մեթոդների հայեցակարգային նախադրյալները և յուրահատկությունները:

Հարցմանը մասնակցել են 51 պրակտիկ հոգեբաններ, որոնք 44-օրյա Արցախյան պատերազմից հետո մինչև մեկ տարի հոգեբանական ծառայություններ են մատուցել պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին: Երևանի պետական համալսարանի Փորձարարական հոգեբանության լաբորատորիայում կազմվել և մշակվել է հատուկ հարցարան՝ բաղկացած 23 բաժիններից և համապատասխան ենթաբաժիններից՝ լրացուցիչ մեկնաբանությունների համար: Կարելի է վստահ ասել, որ տվյալ հետազոտության մեջ իրականացվել է փորձագիտական հարցման մեթոդը, քանի որ պրոֆեսիոնալ գործունեության փորձը (միջինը կազմել է $M=14.2$ տարի) և մասնակիցների կրթական մակարդակը (գիտությունների թեկնածու - 54.2%, մագիստրոսի կոչում - 20.8 % և շրջանավարտներ 25 %) լիովին համապատասխանում են ընդունված պահանջներին: Ժամանակավոր հոգեբանական ծառայություններ էին մատուցում համալսարանի հոգեբանության ամբիոնի հոգեբանները, մասնավոր հոգեբանական կենտրոնների և դպրոցների մասնագետները, ինչպես նաև հոգեբանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ենթադրվում էր, որ կազմված հարցերի պատասխանները կբացահայտեն և կընդգծեն գիտահոգեբանական գիտելիքների պահպանման կարևորությունը

Ժամանակակից ախտորոշիչ մեթոդների և հոգեկարգավորող միջոցառումների կիրառման գործընթացում:

Դիտարկենք հարցերի հիմնական խմբերը, որոնք արտացոլում են մասնագետների մասնագիտական իրավասությունը հոգեբանական ախտորոշման գիտական ասպեկտներում և նրանց վերաբերմունքը այս ընթացակարգերին հոգեբանական խորհրդատվության և հոգեթերապիայի գործընթացում: Այսպիսով՝ 1-ին նկարը ցույց է տալիս փորձագետների կարծիքը այցելուների հետ առաջին զրույցի վերաբերյալ (համապատասխան՝ տեղեկատվական - 39%, կապի հաստատում - 35%, գնահատող - 22% և այլ - 4%): Այս պատասխանների հիման վրա կարելի է փաստել դրանց համարժեքությունը զրույցի մեթոդի կիրառման՝ հոգեբանության մեջ ընդունված մոտեցումներին, այսինքն՝ սա կապի հաստատումն է և՛ անձի, և՛ նրա վիճակի մասին. առաջնային տեղեկատվության ստացումը:




Նկար 1. Նախնական զրույցի նշանակության վերաբերյալ հարցվողների պատասխանների հարաբերակցությունը (N=51):

Պրակտիկ գործունեության ընթացքում ախտորոշման հաշվառման այլ հիմնական հատկանիշների թվում հարցվածները նշել են տարիքը, սոցիալական կարգավիճակը, գենդերային տարբերությունները, կրթությունը և մասնագիտությունը (ավելի քան 67%): Այցելուի գնահատման և հոգեախտորոշման առավել նախընտրելի մեթոդների մասին հարցին տրվել են հետևյալ պատասխանները. զրույց - 20.8%, պրոյեկտիվ թեստեր - 18,2%, դիտում- 16,9%, հոգեբանական թեստեր - 13%, և համակցված գնահատական - 31,1%: «Համակցված գնահատում» պարունակող պատասխանը տրամաբանական է, քանի որ այս պատասխանի մեկնաբանությունները ցույց են տալիս, որ այն ենթադրում է զրույցի, թեստերի և դիտարկման օգտագործում:

Հաջորդիվ դիտարկենք ախտորոշիչ մեթոդների կիրառման տվյալները՝ շատ կարևոր - 54.2%, կարևոր - 41.6%, կարևորություն չեմ տալիս - 4.2%.

Ենթադրվում է, որ մասնագետների այս փոքր խումբը հիմնված է ինտուիտիվ մոտեցման վրա: Նմանատիպ օրինաչափություն է բացահայտվել նաև գիտական մոտեցումը հաշվի առնելու կարևորությունը գնահատելիս: Հարցման մասնակիցների կարծիքով՝ հոգեբանական ծառայությունների մատուցումը ստացիոնար և ամբուլատոր պայմաններում կիրառվող մեթոդների առումով չի տարբերվում: Այն հարցին, թե «Որքան հաճախ եք հաշվի առնում այցելուի գենետիկ նախատրամադրվածությունը», մասնակիցները պատասխանել են հետևյալ կերպ. «միշտ» – 37.5, «երբեմն» - 16.7%, «երբեք» - 45.8%:

Հոգեախտորոշիչ մեթոդների կիրառման ժամանակ առանձնահատուկ նշանակություն է տրվում մշակութային, սոցիալական, ազգային, լեզվական միջոցների և հաղորդակցման ուղիների բազմազանությանը: Այս առումով մասնավորապես նախատեսվել է գնահատման աշխատանքների իրականացման ժամանակ սոցիալ-մշակութային և այլ ասպեկտները հաշվի առնելու կարևորության հարցը: 33.3% և 45.8% հարցվածները նշել են այս ասպեկտների առանձնահատուկ նշանակությունը, և նրանց հոգեբանների 20.8%-ը անտեսում է այս գործոնը: Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև ինտուիտիվ մոտեցման ճշգրտության աստիճանին, որի պատասխանները ներկայացված են սկար 2-ում:



Նկար 2. Հարցվողների պատասխանների հարաբերակցությունը այցելուի հոգեկան վիճակի գնահատման ինտուիտիվ տարրի ճշգրտության աստիճանի վերաբերյալ (N=51):

Կիրառական հոգեբանության մեջ կա ինտուիտիվ մոտեցում, որն ազդում է ինչպես հետազոտության մեթոդների ընտրության գործընթացի, այնպես էլ հոգեախտորոշիչ տվյալների մեկնաբանման վրա: Ինչպես տեսնում ենք (սկ. 2), 79%-ը դրական է պատասխանել վիճակը գնահատելու համար մասնագիտական ինտուիցիայի դերի կարևորությունը (ճշգրիտ և մոտավոր), իսկ հոգեբանների միայն 21%-ն է բացասական արտահայտվել: Այնուամենայնիվ, ինչպես տեսնում եք, պրակտիկ հոգեբանների մեծ մասը գնահատել են այս մոտեցումը որպես օրինակելի

կամ մոտավոր: Սա ցույց է տալիս, որ ինտուիտիվ որոշումների կայացման ռազմավարության ազդեցության աստիճանը այցելուի հետ խորհրդատվական և բուժական աշխատանքի գործընթացի վրա մշտական չէ:

Եզրակացություններ

Տեսական վերլուծության ընդհանուր եզրակացությունն այն էր, որ հոգեբանական գիտության մեթոդաբանական և հայեցակարգային հիմքերը ուղղակիորեն ազդում են կիրառական հոգեբանության ապացուցողական գործիքակազմի զարգացման վրա: Հարցման արդյունքները թույլ տվեցին ամփոփել հոգեբանների պատասխանների հարաբերակցությունը այցելուի հոգեկան վիճակի գնահատման չափանիշների հիմնական տարերի ճշգրտության աստիճանի վերաբերյալ:

Այսպիսով՝ տեսական մոտեցումների ու գործնական փորձի ընդհանրացումը ծայրահեղ, հետպատերազմյան պայմաններում և համաճարակաբանական բարդ իրավիճակում թույլ կտա մեզ մշակել հատուկ մոտեցում հոգեբանական ծառայության կազմակերպման համար (հոգեբանական ախտորոշման և ուղղման մեթոդների ընտրություն), որն իր հերթին կարող է նպաստել բնակչության ֆիզիկական ու հոգեկան առողջության նպատակային վերականգնմանն ու պահպանմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Morin, Edgar. *Introduction à la pensée complexe*. Éditions du Seuil, Paris, 2005.
2. Карицкий, Игорь. *Психологическая практика: базовая структура*. МАПН, Москва, 2006.
3. Alvin, Goldman. "The Relation between Epistemology and Psychology". *Synthese, Naturalistic Epistemology*, Vol. 64, No. 1, Part 1, Jul. 1985, pp. 29-68, <https://www.jstor.org/stable/20116146>. Accessed: 13.11.2021.
4. Bishop, Michael, and John Trout. "The Pathologies of Standard Analytic Epistemology". *Noûs*, Vol. 39, No. 4, Dec. 2005, pp. 696-714. <https://www.jstor.org/stable/3506117>. Accessed: 11.04.2022.
5. Flis, Ivan. "Psychologists psychologizing scientific psychology: An epistemological reading of the replication crisis". *Theory & Psychology*, Volume 29, Issue 2, pp. 158-181, <https://doi.org/10.1177/0959354319835322>. Accessed: 05.04.2022.
6. Sarason, Irwin. "Personality assessment". *Encyclopedia Britannica*, 1, Oct. 2019, <https://www.britannica.com/science/personality-assessment>. Accessed: 06.12.2021.
7. Teo, Thomas. "From Speculation to Epistemological Violence in Psychology". *A Critical-Hermeneutic Reconstruction*, February 1, 2008, pp. 47–67, DOI: 10.1177/0959354307086922. Accessed: 30.01.2022.
8. Аванесян, Грант. «Принципы совершенствования методики преподавания проективных тестов в вузе». *Высшая школа: опыт, проблемы, перспективы. Материалы X Международной научно-практической конференции*, Часть 1, 2017, с. 110-115.
9. Василюк, Федор. «Методологический смысл психологического схизиса». *Вопросы психологии*, № 6. 1996, с. 25-40, http://psylib.org.ua/books/_vasif03.htm. Доступно: 13.12.2021.
10. Карицкий, Игорь. «Базовая структура психологической практики». *Перспективы психологической науки и практики: сборник статей Международной научно-практической конференции*, РГУ им. А. Н. Косыгина, под ред. В. С. Белгородского и др., ФГБОУ ВО «РГУ им. А. Н. Косыгина», 2017, с. 62-66.
11. Костромина, Светлана. «Психологический диагноз: классификация и типология». *Вестник Санкт-Петербургского университета. Политология. Международные отношения*, № 2-1, 2007, с. 203-217,

<https://cyberleninka.ru/article/n/psihologicheskij-diagnoz-klassifikatsiya-i-tipologiya>.

Доступно: 13.11.2021.

WORKS CITED

1. Karickij, Igor. *Psihologicheskaja praktika: bazovaja struktura*. MAPN, Moskva., [Psychological Practice: Basic Structure. IAPS, Moscow] 2006. (In Russian)
2. Morin, Edgar. *Introduction à la pensée complexe*. Éditions du Seuil, Paris. [Introduction to Complex Thinking. Editions Seuil, Paris] 2005. (In French)
3. Alvin, Goldman. "The Relation between Epistemology and Psychology". *Synthese*, Naturalistic Epistemology, Vol. 64, No. 1, Part 1, Jul. 1985, pp. 29-68, <https://www.jstor.org/stable/20116146>. Accessed: 13.11.2021.
4. Avanesyan, Grant. "Principy sovershenstvovanija metodiki prepodavanija proektivnyh testov v vuze". *Vysshaja shkola: opyt, problemy, perspektivy. Materialy X Mezhdunarodnoj nauchno-prakticheskoy konferencii*, Chast' 1, s. 110-115. ["Principles of Improving the Methodology of Teaching Projective Tests at the University". *Higher school: Experience, Problems, Prospects. Materials of the X International Scientific and Practical Conference*, Part 1, pp. 110-115] 2017. (In Russian)
5. Bishop, Michael, and John Trout. "The Pathologies of Standard Analytic Epistemology". *Noûs*, Vol. 39, No. 4, Dec. 2005, pp. 696-714. <https://www.jstor.org/stable/3506117>, Accessed: 11.04.2022.
6. Flis, Ivan. "Psychologists Psychologizing Scientific Psychology: An Epistemological Reading of the Replication Crisis". *Theory & Psychology*, Volume 29, Issue 2, pp. 158-181, <https://doi.org/10.1177/0959354319835322>. Accessed: 05.04.2022.
7. Karickij, Igor. "Bazovaja struktura psihologicheskoy praktiki". *Perspektivy psihologicheskoy nauki i praktiki: sbornik statej Mezhdunarodnoj nauchno-prakticheskoy konferencii*, RGU im. A. N. Kosygina, pod red. V. S. Belgorodskogo i dr., FGBOU VO "RGU im. A.N. Kosygina", s. 62-66. ["Basic Structure of Psychological Practice". *Perspectives of Psychological Science and Practice: Collection of Articles of the International Scientific and Practical Conference*, Russian State University named after A. N. Kosygin, ed. V. S. Belgorodsky and others, FSBEI HPE "Russian State University named after A. N. Kosygin", pp. 62-66] 2017. (In Russian)
8. Kostromina, Svetlana. "Psihologicheskij diagnoz: klassifikacija i tipologija". *Vestnik Sankt-Peterburgskogo universiteta. Politologija. Mezhdunarodnye otnoshenija*. № 2-1, s. 203-217. ["Psychological Diagnosis: Classification and Typology". *Bulletin of St. Petersburg University. Political science. International relations*, № 2-1, pp. 203-217, <https://cyberleninka.ru/article/n/psihologicheskij-diagnoz-klassifikatsiya-i-tipologiya>. Accessed: 13.11.2021] 2007. (In Russian)
9. Sarason, Irwin. "Personality Assessment". *Encyclopedia Britannica*, 1, Oct. 2019, <https://www.britannica.com/science/personality-assessment>. Accessed: 06.12.2021.
10. Teo, Thomas. "From Speculation to Epistemological Violence in Psychology". *A Critical-Hermeneutic Reconstruction*, February 1, 2008, pp. 47-67, DOI: 10.1177/0959354307086922. Accessed: 30.01.2022.
11. Vasiljuk, Fedor. "Metodologicheskij smysl psihologicheskogo shizisa". *Voprosy psihologii*, № 6, s. 25-40, (Ayts` 13.12.2021). ["Methodological Meaning of Psychological Schism". *Questions of psychology*, № 6, pp. 25-40, http://psylib.org.ua/books/_vasif03.htm. Accessed: 13.12.2021] 1996. (In Russian)

ANALYSIS OF THE APPLICATION OF PRACTICAL EXPERIENCE AND THEORETICAL APPROACHES OF PSYCHOLOGISTS IN EMERGENCY SITUATIONS

HRANT AVANESYAN

*Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology,
Head of General Psychology Chair,
Journal "Scientific Artsakh", Member of the Editorial Board,
Doctor of Psychology, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

IRINA BABAJANYAN

*Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology, General
Psychology Chair Ph.D. Student, Armenia,
Aurora Health Care Center, Case Manager, Covina, CA, USA*

The purpose of this article is to study the features of the application of practical experience and theoretical approaches of psychologists in the process of providing psychological services in difficult post-war situations. The conceptual premises and features of the methods used in the process of psychological research were summarized using a specially designed questionnaire. For the analysis, the principle of the mandatory use of evidence-based psychological assessment in the implementation of counseling, therapy and other methods of psychological influence was chosen. This survey can definitely be considered expert, since the professional experience of the respondents averaged $M = 14.2$ years and the level of education of the participants fully complies with the accepted requirements (PhD - 54.2%, masters or graduates' psychologists - 45.8%). A detailed analysis of theoretical approaches and generalization of practical experience in emergency, post-war and epidemiological difficult situations will allow us to develop a special approach to the organization of psychological services, which in turn can help restore and maintain the physical and mental health of the population.

Keywords: *theoretical predictors, methodology, assessment, survey, psychological intervention, counseling, personality, condition, Covid-19, post-war situation.*

АНАЛИЗ ПРИМЕНЕНИЯ ПРАКТИЧЕСКОГО ОПЫТА И ТЕОРЕТИЧЕСКИХ ПОДХОДОВ ПСИХОЛОГОВ В ЭКСТРЕМАЛЬНЫХ СИТУАЦИЯХ ¹

ГРАНТ АВАНЕСЯН

*заведующий кафедрой общей психологии
факультета философии и психологии
Ереванского государственного университета,
член редакционного совета журнала «Научный Арцах»,
доктор психологических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

¹ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта №21Т-SA203

ИРИНА БАБАДЖАНЯН

аспирант кафедры общей психологии факультета философии и психологии Ереванского государственного университета, кейс-менеджер Аврора Центра ухода за здоровьем «Аврора», г.Ковина, США

Целью данной статьи является изучение особенностей применения практического опыта и теоретических подходов психологов в процессе оказания психологических услуг в сложных послевоенных ситуациях. Концептуальные предпосылки и особенности методов, используемых в процессе психологического исследования, были обобщены с помощью специально разработанной анкеты. Для анализа был выбран принцип обязательного применения научно обоснованной психологической диагностики при осуществлении консультирования, терапии и других методов психологического воздействия. Данный опрос однозначно можно считать экспертным, так как профессиональный стаж респондентов в среднем составил $M = 14.2$ года, а уровень образования участников полностью соответствует принятым требованиям (кандидаты наук - 54,2%, магистры или дипломированные специалисты - 45,8%). Результаты опроса позволили обобщить соотношение ответов психологов к степени точности основных элементов критериев оценки психического состояния посетителя. Детальный анализ теоретических подходов и обобщение практического опыта работы в чрезвычайных, послевоенных и эпидемиологических сложных ситуациях позволит выработать особый подход к организации психологической службы, что, в свою очередь, может способствовать восстановлению и поддержанию физического и психического здоровья населения.

Ключевые слова: *теоретические предикторы, методология, диагностика, опрос, психологическая интервенция, консультирование, личность, состояние, поствоенная ситуация, Ковид-19.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ***

ՀՏԴ 330

DOI: 10.52063/25792652-2022.2.13-174

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
samvelser@gmail.com

ՄԱՐԻԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների
միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, Արցախի պետական համալսարանի
տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության և
կառավարման ամբիոնի դասախոս,
ք. Ճարտար, Արցախի Հանրապետություն
marianna.khachatryan95@gmail.com

Մրցունակ տնտեսության ձևավորման գրավականներից մեկը զարգացած գյուղատնտեսությունն է: Թեև երկրների տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշների շարքում առաջնահերթությունը տրվում է գիտատեխնիկական առաջընթացի վրա հիմնված արդյունաբերությանը, այնուհանդերձ, գյուղատնտեսությունը եղել և մնում է ազգային տնտեսության կենսականորեն կարևոր ոլորտը: Այն իր ուրույն ու էական ազդեցությունն է թողնում երկրի ողջ տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի վրա, այդ իսկ պատճառով աշխարհի երկրների գերակշիռ մասը մեծ ուշադրություն են դարձնում ազրոպարենային ոլորտի զարգացման համար պետական աջակցության կայուն մեխանիզմների ստեղծմանը:

Հողվածի նպատակն է ուսումնասիրել Արցախի Հանրապետության ազրոպարենային ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը և դրանց արդյունքները: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ վերլուծել ԱՀ գյուղատնտեսության ոլորտի հիմնական ցուցանիշները վերջին 5 տարիների կտրվածքով, վեր հանել պետական բյուջեից ոլորտին հատկացվող գումարների դինամիկան, ԱՀ Գյուղի ու գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացվող ծրագրերի ուղղվածությունները նախապատերազմյա և հետպատերազմյա ժամանակահատվածում:

* Հողվածը ներկայացվել է 20.06.2022թ., գրախոսվել՝ 27.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային վերլուծության, համադրման, վիճակագրական վերլուծության մեթոդները:

Հաշվի առնելով պատերազմի հետևանքով գյուղընտրված առաջացած հիմնախնդիրները՝ առաջարկվում է պետական աջակցության քաղաքականությունն ուղղորդել առավելապես գյուղատնտեսության ինտենսիվ զարգացմանը, նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը և գյուղատնտեսության վարման գիտական մոտեցումներին:

Հիմնաբառեր՝ ագրոպարենային ոլորտ, բյուջետային ծախսեր, գյուղատնտեսություն, պետական քաղաքականություն, պետական աջակցություն, ծրագրեր, արդյունավետություն:

ԱՅ գյուղատնտեսության ոլորտի վերլուծություն

Պատմականորեն գյուղատնտեսությանը աջակցության տրամադրումը պայմանավորված է եղել մի շարք նպատակներով, որոնցից ամենակարևորները «եռակի մարտահրավերի» հիմնական բաղադրիչներն են՝ պարենային անվտանգության ապահովում, ֆերմերների եկամուտների ու ապրուստի միջոցների ավելացում և շրջակա միջավայրի բարելավում: Այս նպատակներին հասնելու համար ընտրված գործիքները տարբեր են: Որոշ երկրներ պարենային անվտանգությունն ապահովելու համար հույսը դնում են առևտրի և շուկաների բաց հասանելիության վրա, իսկ մյուսները կարևորում են ներքին արտադրությունը և ինքնաբավության բարձր ցուցանիշները, որոնք ապահովվում են սուբսիդիաների տրամադրման և արտաքին առևտրի սակագնային կարգավորման միջոցով:

Արցախի Հանրապետությունում մինչև 2020թ. 44-օրյա պատերազմը գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության քաղաքականությունը հիմնականում ուղղված էր գյուղատնտեսության ինտենսիվության մակարդակի բարձրացմանը, գյուղական տարածքների համաչափ զարգացմանն ու երկրի պարենային անվտանգության ապահովմանը:


Արցախն ինքնաբավ էր հացահատիկով և ձվի արտադրանքով, իսկ նվազագույն սպառողական զամբյուղում ներառված մնացած պարենամթերքների մասով տարբեր տարիներին պակասուղղը լրացվում էր ներմուծման միջոցով: Վերջին հինգ տարիների ընթացքում Արցախի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշը անկման միտում է դրսևորել, ընդ որում, նվազել են և՛ անասնաբուծության, և՛ բուսաբուծության արտադրանքի ծավալները: Դրա հիմնական պատճառները բնական աղետներն էին, 2016թ. ապրիլյան պատերազմը ու 2020թ. 44-օրյա պատերազմը:

Ստորև ներկայացված է ԱՅ գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2015-2021թթ. կտրվածքով:¹

Ներկայացվող գծապատկերից տեսանելի է, որ 2015թ. ԱՅ-ում գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 30.8 տոկոս, իսկ 2020թ.-ին այդ ցուցանիշը նվազել է 10 տոկոսային կետով և կազմել է 20.8 տոկոս:

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակների կողմից, Նյուլթի աղբյուրը՝ ԱՅ ազգային վիճակագրական ծառայություն, <http://stat-nkr.am/hy/component/content/article/1204-----2020>, 30.06.2022:

Գծապատկեր 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում



Դիտարկենք, թե որ գործոններով է պայմանավորված գյուղատնտեսության մասնաբաժնի՝ ավելի քան 2.5 անգամ կրճատումը: Նախ 2020թ.-ին 2015թ.-ի համեմատությամբ ԱՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժնի կրճատման գլխավոր պատճառը բուսաբուծության համախառն արտադրանքի՝ շուրջ 43.3%-ով կրճատումն է: Այս ցուցանիշի վրա ազդել է բուսաբուծության գլխավոր արտադրանքի՝ հացահատիկի, բերքատվության 53.4%-ով և համախառն բերքի 34.7 %-ով կրճատումը: Ինչ վերաբերում է 2021թ.-ի խիստ ցածր ցուցանիշին, ապա այստեղ գլխավոր գործոնը պատերազմի հետևանքն է:

Պատերազմի հետևանքը ցայտուն կերպով արտացոլված է հատկապես 2021թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշում: Բացարձակ արտահայտությամբ այն կազմել է 30310,8 մլն դրամ, ինչը 2.5 անգամ զիջում է 2015թ. նույն ցուցանիշին: Փաստորեն վերջին յոթ տարիների կտրվածքով ԱՀ-ում գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 18.6 տոկոսային կետով:

Ուսումնասիրելով Համաշխարհային բանկի վերլուծությունները տարբեր երկրների գյուղատնտեսության ոլորտում կարող ենք նշել, որ մինչև 2021թ. Արցախի Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի ծավալը ՀՆԱ-ում միջինից բարձր մասնաբաժին է ունեցել (Համաշխարհային բանկի տվյալների վրա հիմնվելով՝ հաշվարկել ենք 161 երկրների ցուցանիշների մեդիանը՝ 7.8 %, միջինը՝ 10.8 %, մոդը՝ 18.02%):


Արցախի Հանրապետության գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության առանձնահատկությունները

Հաշվի առնելով ԱՀ ագրարային ոլորտի առանձնահատկությունները, գյուղատնտեսությունում ստեղծված իրավիճակը, ծառացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը՝ կարևորվում է գյուղատնտեսության պետական ակտիվ աջակցությունն ու պետական կարգավորման գործիքակազմի կիրառումը:

ԱՅ-ում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության քաղաքականությունը նպատակաուղղված է պարենային անվտանգության ապահովմանը, տնտեսության ինտենսիվ զարգացմանը, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործմանը, սերմնաբուծությանն ու սերմարտադրությանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացմանը: 2020թ. պատերազմից հետո ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմակայելու և փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու համար անհրաժեշտություն է առաջացել գյուղատնտեսության ոլորտում իրականացնելու պետական աջակցության լրացուցիչ միջոցառումներ:

Վերջին հինգ տարիներին գյուղատնտեսության ոլորտին ուղղվող պետական ծախսերը միջին հաշվով աճել են 20 %-ով: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է 2016-2020թթ. ընթացքում ԱՅ գյուղօլորտում պետական աջակցության ծրագրերին հատկացվող միջոցների շարժընթացը:

Գծապատկեր 2. ԱՅ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացվող գումարները, դրամ



Դիտարկելով ԱՅ գյուղատնտեսության զարգացման շարժընթացը՝ կարելի է նկատել, որ գյուղատնտեսության ոլորտի խնդիրների որոշակի լուծմանը, գյուղատնտեսական ռիսկերի բացասական հետևանքների վերացմանը, առաջացած կորուստները մեղմելուն և, ընդհանրապես, կայուն զարգացմանը նպաստել է ոլորտում իրականացված պետական աջակցության քաղաքականությունը:

2017-2019թթ. պետական բյուջեից հատկացվող մի շարք ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսավորման ծավալները ներկայացված են 1-ին աղյուսակում:

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից, աղբյուրը՝ 2016թ., 2017թ., 2018թ. և 2019թ.՝ ԱՅ պետական բյուջեի հաշվետվություններ, 2020թ. տվյալները վերցված են ԱՅ ֆինանսների ու եկոնոմիկայի նախարարությունից:


<https://www.minfin-nkr.am/?section=resources/index&type=6&subtype=85>, 30.06.2022:

Աղյուսակ 1. ԱՅ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող հիմնական ծրագրերի ֆինանսավորմանն ուղղված գումարները 2017-2019 թթ., դրամ¹

Հ/Հ	Ծրագրի անվանումը	2017թ.	2018թ.	2019թ.
1	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացում	2 092 474.60	2 342 384.4	2 358 0 2 7.6
2	Աջակցություն ԳԳԱՀ-ին	1 020 000.0	1 350 600.0	1 474 740.0
3	Անասնաբուժական և սակիտար. սպասարկման միջոցառումներ	294 347.70	295 743.7	2 94 6 0 9.2
4	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	60 357.90	100 286.8	116 365.6
5	Ջրամբարների, ջրանցքերի, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	79 981.60	72 352.4	335 628.4
	Ընդամենը	3547161.8	4161367.3	4579370.8

Պետական ծախսերում գյուղատնտեսության ոլորտին ուղղված միջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2019թթ.-ի ընթացքում այս ցուցանիշը համարյա չի փոխվել, կազմել է 4.6-4.7%, իսկ 2020թ.-ին 2019թ.-ի համեմատ այն աճել է 42.9 տոկոսով:

Գծապատկեր 3. Գյուղատնտեսության ոլորտի պետական ծախսերի մասնաբաժինը բյուջետային ծախսերում,%²



Պետական աջակցության կարևորագույն նախաձեռնություններից է գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագիրը, որին 2019թ.-ին տրամադրվել է շուրջ 2.3 միլիարդ դրամ: Ծրագիրը բավականին ընդարձակ է և ներառում է հետևյալ կարևոր հոդվածները՝ բուսաբուծության համալիր զարգացման

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից, աղբյուրը՝ ԱՅ պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ՝ գործառնական դասակարգման Բ04 Խ1 Դ1 և Բ06 Խ3 Դ1 հոդվածներ, <https://www.minfin-nkr.am/?section=resources/index&type=6&subtype=85>, 30.06.2022:

² Ցուցանիշները հաշվարկվել են, և գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից, աղբյուրը՝ ԱՅ պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, <https://www.minfin-nkr.am/?section=resources/index&type=6&subtype=85>, 30.06.2022:

ծրագիր, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն, աջակցություն Տոհմային կայան ՓԲԸ-ին, արտեզյան ջրհորների կառուցում, վերանորոգում, ազնվացեղ խոշոր եղջերավոր կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորում և այլն:

Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը ընդունվել է 2018թ.-ին, ինչը նպատակաուղղված է պետական աջակցության այնպիսի մեխանիզմների կիրառմանը, որոնք կխթանեն բուսաբուծության ճյուղի աճը՝ ջրային ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացման, նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացման, ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման, գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի իրականացման միջոցով: Մասնավորապես, հատուկ կարևորություն է տրվում սերմերի ձեռքբերման աջակցությանը, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության դիմաց անհատույց գումարների տրամադրմանը, ծխախոտի մթերման դիմաց լրավճարների տրամադրմանը, ջերմոցային տնտեսություններին աջակցությանը և այլն:

«ԱՀ բուսաբուծության համալիր զարգացման 2019 թվականի» ծրագրի շրջանակներում հանրապետության 155 համայնքների ավելի քան 1330 հողօգտագործողներ օգտվել են անհատույց տրամադրվող տարբեր մշակաբույսերի սերմերից՝ ընդհանուր առմամբ 16445.0 հեկտար հողի մշակության համար:

Պետք է արձանագրենք, որ հացահատիկային և հատիկընդդեմային մշակաբույսերի ցանքատարածությունների 45 %-ը գտնվում էր Շահումյանի, Հաղորւթի ու Բաշաթաղի շրջաններում, որոնք 2019-2020թթ.-ին ապահովում էին համախառն բերքի 47-50 %-ը, իսկ բուստանային մշակաբույսերի հիմնական մասը մշակվում էր Բաշաթաղի շրջանում: Ցանքատարածությունների 80%-ը կենտրոնացած էր Բաշաթաղի, Հաղորւթի ու Շահումյանի շրջանում, ինչը ապահովում էր համախառն բերքի 63-67 %-ը:

Ջերմատնային տնտեսությունների արդիականացման և ընդլայնման նպատակով 2019թ.-ին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ և ծրագրի շրջանակներում հանրապետության 10 համայնքների 12 ջեռուցվող ջերմատնային տնտեսությամբ (նվազագույնը 135 մ² մակերեսով) զբաղվող հողօգտագործողներին տրամադրվել է 2 267 000 ՀՀ դրամ անհատույց ֆինանսական աջակցություն¹:

Ջերմոցային տնտեսությունների զարգացումը բխում է նաև պատերազմի հետևանքով գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքների կտրուկ կրճատմամբ, քանզի կորուստը մասամբ վերականգնելու նպատակով անհրաժեշտ է սահմանափակ տարածքից ստանալ կրկնակի քանակությամբ բերք:

2020թ.-ին ավելի ինտենսիվ կերպով շարունակվել է ֆինանսավորվել «ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում» ծրագիրը: Ընդհանուր առմամբ վերջին տարիներին այս ուղղությամբ հատկացվել են մեծ գումարներ, սակայն այժմ դժվար է խոսել այդ ծրագրի արդյունավետության մասին, որովհետև պատերազմից հետո գրեթե բոլոր ջրամբարները, շատ ջրատարներ մնացին թշնամու տիրապետության տակ անցած տարածքում՝ առաջացնելով լուրջ խոչընդոտներ ագրոպարենային ոլորտի զարգացման համար:

Այժմ անհրաժեշտ է դիտարկել ոռոգման այլընտրանքային եղանակների ստեղծման հնարավորությունները, արտեզյան հորերի քանակների և աշխարհագրության ընդլայնումը, գետերի ջրերի ամբարման հնարավորությունները:

Մեկ այլ կարևոր ուղղություն է գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր

¹ Տվյալները տրամադրել են ԱՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության առավել հասցեական ու նպատակային աջակցության իրականացումը: Այդ նպատակով իրականացվել է փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցության ծրագիրը, որի շրջանակներում ՓՄՁ-ներին վերադարձվել է վճարված ավելացված արժեքի հարկը:

Տեղական հումքով գյուղատնտեսական արտադրանք արտադրելը տարիներ շարունակ խրախուսվում էր պետության կողմից՝ հարկային արտոնությունների տրամադրման միջոցով:

Այսպես՝ ԱԱՀ օրենքի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանք արտադրողից ձեռք բերված հումքի բազայի վրա գյուղատնտեսական մթերքների ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող վերամշակումը և վերամշակողի կողմից իրացումը ազատված է ԱԱՀ-ից:


Հաշվի առնելով հետպատերազմյա շրջանում հացահատիկի պակասուրդը և նպատակ ունենալով կանխել հացի ու լավաշի գների բարձրացումը՝ 2022թ.-ի մայիսին օրենքում կատարվել է փոփոխություն. ըստ որի՝ այդ արտոնությունը գործում է ոչ միայն տեղական, այլ նաև ներմուծված հումքով արտադրված հացի ու լավաշի օտարման դեպքում (ԱՀ օրենք) :

Պատերազմի հետևանքով մեծապես տուժել է նաև գյուղատնտեսական հումքի վերամշակումը, այժմ գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մի մասը գործունեություն չի իրականացնում, մյուս մասն էլ գործում է ոչ լիարժեքորեն:

ԱՀ գյուղնախարարության կողմից իրականացվող կարևոր քայլերից է նաև գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին ծրագիրը:

Այս նպատակով 2020թ.-ին հիմնադրամին տրամադրվել է 1 776 193.811 դրամ: Ընդհանուր առմամբ հիմնադրամը տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրել է 9 188 489.0 հազար դրամի չափով աջակցություն: Աջակցության կեսից ավելին՝ 69 տոկոսը, ուղղվել է հողագործության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը :

Գծապատկեր 4. ԱՀ գյուղատնտեսության աջակցության ծրագրերի կառուցվածքը²:




¹ Տվյալները վերցվեն են ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից ներկայացված տարեկան հաշվետվության հիման վրա, <http://agrofund.am/2020-2/06.30.2022>:

² Նույն տեղում:

Իրականացված աջակցության ձևերում գերակշիռ մաս են կազմում փոխառությունների տրամադրումը, անհատույց աջակցությունը և ուղղակի առուվաճառքը:

Գծապատկեր 5. ԱՀ գյուղատնտեսության աջակցության ծրագրերի աղբյուրների կառուցվածքը¹



Գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը դիտարկելիս կարևոր է վերլուծել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից առաջարկող ցուցանիշը՝ գյուղատնտեսության կողմնորոշման համաթիվը: Այս ցուցանիշով համեմատվում է գյուղատնտեսության ոլորտում պետական ներդրումների ծավալը ՀՆԱ-ում գյուղատնտեսության ստեղծած արդյունքի հետ և հաշվարկվում է որպես պետական ծախսերում գյուղատնտեսության ոլորտին հատկացվող մասնաբաժնի և ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժնի հարաբերություն:

ՄԱԿ-ի ՊԳԿ կայուն զարգացման նպատակներից մեկը գյուղատնտեսության ոլորտում ներդրումների աճի ապահովումն է: Դիտարկումները ցույց են տալիս, որ չնայած գյուղատնտեսության՝ ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժնի աճին, երկրների պետական ծախսերը այս ոլորտում նվազման միտում են ցուցաբերում: Մասնավորապես՝ համաշխարհային մակարդակով գյուղատնտեսության կողմնորոշման համաթիվը 2001թ. 0.52 միավորից 2020թ. նվազել է մինչև 0.51 միավորի (FAO, *Government expenditures in agriculture 2001–2020: Global and regional trends* 6):


Ցուցանիշի նվազումը պայմանավորված է ոչ այնքան ՀՆԱ-ում գյուղորրոտի աճով, որքան պետական ծախսերի կրճատմամբ:

Այս ցուցանիշը ԱՀ-ում տատանվել է 0.1-0.2 միջակայքում, իսկ 2020թ. այն կազմել է 0.32, ինչը արտացոլում է գյուղորրոտում աջակցության չափերի ընդլայնման դրական ազդեցությունը տնտեսության վրա, մյուս կողմից խոսում է ընդհանուր առմամբ գյուղատնտեսության ոլորտին պետության նվազ կողմնորոշման մասին: Վերոնշյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցության մասնաբաժինը աճել է, այնուամենայնիվ, գյուղատնտեսությունը զարգացման ռազմավարական ճյուղ

¹ Նույն տեղում:

հռչակած ագրարային ոլորտի ֆինանսավորման ծավալը շարունակում է մնալ ոչ բավարար մակարդակի վրա:

Գծապատկեր 6. ԱԶ գյուղատնտեսության կողմնորոշման համաթիվը¹



Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող աջակցությունը շարունակում է աճել ամբողջ աշխարհում, բայց խնդիրն այն է. որ քաղաքականությունը հաճախ չի հասնում հայտարարված նպատակին՝ սննդի անվտանգության, կենսամակարդակի և էկոլոգիական կայունության բարձրացման տեսանկյունից:

Համաձայն ՏՀԶԿ-ի կողմից 2021թ. իրականացված «Գյուղատնտեսական քաղաքականության մոնիթորինգ ու գնահատում» ուսումնասիրության՝ 54 երկրներում 2018-2020 թվականների ընթացքում գյուղատնտեսությանն աջակցելու համար տրամադրվել է 720 մլրդ ԱՄՆ դոլար:

Բոլոր բյուջետային տրանսֆերտների ընդամենը 6%-ը կամ տարեկան 26 մլրդ ԱՄՆ դոլար ծախսվել է գյուղատնտեսության նորարարական համակարգերի վրա (Organization for Economic Co-operation and Development):

Եզրակացություն

Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսությունը պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և տնտեսության առանցքներից մեկը: Ուստի տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում: Այժմ, առավել քան երբևէ, կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման՝ գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը, ուստի առաջարկում ենք.

¹ Համաթիվը հաշվարկվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության մեթոդաբանությունը: Գծապատկերը կազմվել է՝ հիմնվելով վերևում վերլուծված ցուցանիշների վրա, <https://unstats.un.org/sdgs/metadata/files/metadata-02-0a-01.pdf>, 30.06.2022:

Իրականացնել բարեփոխումներ տեղեկատվական ու խորհրդատվական համակարգում, բարձրացնել համակարգի նորամուծական ու ինտենսիվ գործունեության արդյունավետությունը:

Վերջին երկու տասնամյակում գյուղատնտեսության ճյուղի ինտենսիվ զարգացմանն ուղղված արմատական միջոցառումները հիմք հանդիսացան Չինաստանի, Կորեայի Հանրապետության և մի շարք այլ արագ աճող ինդուստրիալ տիպի ասիական տնտեսություններում կառուցվածքային խորը վերափոխումների համար: Այս երկրների գյուղատնտեսության և կրթության ոլորտներում կատարված ներդրումները ստեղծեցին ոչ միայն գյուղատնտեսական արտադրության աճ, աջակցեցին պարենամթերքի իրական գները ցածր մակարդակում պահելուն, այլև օգնեցին խթանելու ընդհանուր տնտեսական աճը:

Գյուղատնտեսության դերը աղքատության հաղթահարման գործում կարևոր է բոլոր երկրներում՝ անկախ դրանց տեսակից: Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, գյուղատնտեսությունից առաջացած ՀՆԱ-ի աճը առնվազն կրկնակի արդյունավետ է աղքատության հաղթահարման գործում, քան գյուղատնտեսությունից դուրս ՀՆԱ-ի աճը (World Development Report 6):

Մեր երկրում սա առանձնակի կարևոր է, քանզի ԱՀ գյուղական համայնքներում մարդիկ հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և եկամուտները ձևավորվում են այդ ոլորտից:

Գյուղատնտեսական ծրագրերի արդյունավետությանը նպաստող հանգամանք կլինի նաև ոլորտում գիտելիքահենք մոտեցումների կիրառման խրախուսումը տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որպեսզի գյուղատնտեսությամբ զբաղվելը, հետևաբար նաև ծրագրերից օգտվելը մարդկանց համար լինի գիտակցված ընտրություն, այլ ոչ թե պարզապես Էժան ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորություն և վերջինս ոչ նպատակային կամ նվազ նպատակային օգտագործելու երևույթ: Անհրաժեշտ է բարձրացնել մոնիթորինգի և վերահսկողության ծառայության արդյունավետությունը: Կարևոր է ճիշտ գնահատել իրականացված ծրագրերի արդյունքները, պարզել դրա որակական վերջնարդյունքները տնտեսության և բնակչության համար, որպեսզի ծրագրերը մոլորակալիկատիվ էֆեկտով նպաստեն բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Կլինի դա պարենային ապահովվածության աճ՝ գյուղատնտեսական ապրանքների որակական ու քանակական հատկանիշներով պայմանավորված, աշխատատեղերի ավելացում կամ թե գների կայուն մակարդակի ապահովում գյուղմթերքի շուկայում:

Հետպատերազմյա շրջանում սահմանափակ պետական միջոցները պետք է օգտագործվեն առավել արդյունավետ և թիրախավորված՝ կողմնորոշված դեպի զարգացում ապահովող երկարաժամկետ ծրագրերի իրականացումը, և գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտի պետական քաղաքականությունը պետք է ուղղվի մասնավոր կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային ժողով. *ԱՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին*. 19 մայիսի 2022 թ.:
2. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն. *ԱՀ վիճակագրական տարեգիրք 2020թ.*, <http://stat-nkr.am/files/publications/2020/Taregirq/15%20gyuxatntesutyun.pdf>:
3. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն. *ԱՀ վիճակագրական տարեգիրք 2021թ.*, [http://stat-nkr.am/files/yearbooks/2021/Taregirq 2021 kr.pdf](http://stat-nkr.am/files/yearbooks/2021/Taregirq%2021%20kr.pdf):
4. ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, 2020թ. *տարեկան հաշվետվություն*, <http://agrofund.am/2020-2/>:

5. ԱՅ կառավարություն, *ԱՅ կառավարության 2021թ. մարտի 15-ի N 220-Ն որոշում*:
6. ԱՅ ֆինանսների նախարարություն, *2016-2020թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ*:
7. FAO. Government expenditures in agriculture 2001–2020: Global and regional trends, <https://www.fao.org/3/cb8314en/cb8314en.pdf>, 30.06.2022.
8. Macro indicators. FAO, <http://www.fao.org/faostat/en/#data/MK>, Accessed: 30.06.2022.
9. Organization for Economic Co-operation and Development, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5990/WDR%202008%20-%20English.pdf?sequence=3&isAllowed=y>. Accessed: 30.06.2022.
10. The world bank, Agriculture, forestry, and fishing, value added (% of GDP), <https://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS>.
11. World Development Report 2008, Agriculture for Development, 6, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5990/WDR%202008%20-%20English.pdf?sequence=3&isAllowed=y>. Accessed: 30.06.2022.

WORKS CITED

1. Azgayin jhoghov, *AH o'renqy' «Avelacvac' arjheqi harki masin» o'renqum p'op'oxut'yun katarelu masin*, 2022 t'. mayisi 19.[AR Law on amending the Value Added Tax Law], 2022. (In Armenian)
2. AH azgayin vitwakagrakan c'ar'ayut'yun. *AH vitwakagrakan taregirq 2020t'*, [National Statistical Service of the Republic of Artsakh. PC Statistical Yearbook for 2020], <http://stat-nkr.am/files/publications/2020/Taregirq/15%20gyuxatntesutyun.pdf>
3. AH azgayin vitwakagrakan c'ar'ayut'yun. *AH vitwakagrakan taregirq 2021t'*, [National Statistical Service of the Republic of Artsakh. PC Statistical Yearbook for 2021], http://stat-nkr.am/files/yearbooks/2021/Taregirq_2021_kr.pdf
4. AH Gyughi & gyughatntesut'yan ajakcut'yan himnadram, *2020t'. tarekan hashvetvut'yun [Rural and Agricultural Assistance Fund of the Republic of Artsakh, Annual Report for 2020]*, <http://agrofund.am/2020-2/>
5. AH kar'avarut'yun, *AH kar'avarut'yan 2021t'. marti 15-i N 220-N oroshum*. [AR Government Decision N 220 of March 15 2021]. (In Armenian)
6. AH finansneri naxararut'yun, *2016-2020t't'. petakan byujei katarman hashvetvut'yunner*. [2016-2020 State Budget Execution Reports]. (In Armenian)
7. FAO. Government Expenditures in Agriculture 2001–2020: Global and Regional Trends, <https://www.fao.org/3/cb8314en/cb8314en.pdf>, 30.06.2022.
8. Macro indicators. FAO, <http://www.fao.org/faostat/en/#data/MK>, Accessed: 30.06.2022.
9. Organization for Economic Co-operation and Development, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5990/WDR%202008%20-%20English.pdf?sequence=3&isAllowed=y>. Accessed: 30.06.2022.
10. The World Bank, Agriculture, Forestry, and Fishing, Value Added (% of GDP), <https://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS>.
11. World Development Report 2008, Agriculture for Development, 6, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5990/WDR%202008%20-%20English.pdf?sequence=3&isAllowed=y>, Accessed: 30.06.2022.

AGRICULTURE STATE SUPPORT PROGRAMS AND THEIR RESULTS**SAMVEL AVETISYAN**

*Armenian State University of Economics,
«Amberd» Research Center; Senior Expert,
Doctor of Economics, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

MARIANNA KHACHATRYAN

*Union of Young Scientists and Specialists of Artsakh, Member;
Artsakh State University, Faculty of Economics, Department of Economics and
Management, Lecturer,
Chartar, the Republic of Artsakh*

One of the guarantees of building a competitive economy is a developed agriculture. Although among the indicators characterizing the level of economic development of the countries, the priority is given to the industry based on scientific and technical progress, nevertheless, agriculture has remained a vital sector of the national economy. It has a unique impact on the development of the entire economy and the living standards of the population, which is why most countries in the world pay great attention to the establishment of sustainable mechanisms of state support for the development of the agri-food sector.

The purpose of the article is to study the state support programs implemented in the agri-food sphere of the Artsakh Republic and their results. The aim is to analyze the main indicators of the agricultural sector of the Republic of Artsakh over the last 5 years, to identify the dynamics of funds allocated to the sector from the state budget, the main directions of the Rural and Agricultural Support Fund of the Republic of Artsakh, the directions of the implemented programs in the pre-war and post-war period, to analyze the results of the programs on the development of the sector and to present proposals.

Systematic analysis, comparison and statistical analysis methods were used during the research.

Taking into account the problems arising in the field of agriculture due to the war, it is proposed to direct the policy of state support mainly to the intensive development of agriculture, the use of the latest technologies and scientific approaches to agricultural management.

Key words: *agrofood complex, agriculture, state policy, state support, programs, budget expenditures, efficiency.*

**ПРОГРАММЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА И ИХ РЕЗУЛЬТАТЫ****САМВЕЛ АВЕТИСЯН**

*старший эксперт исследовательского центра «Амберд» Армянского
Государственного экономического университета,
доктор экономических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

МАРИАННА ХАЧАТРЯН

*член Объединения молодых ученых и специалистов Арцаха,
преподаватель кафедры экономики и управления экономического
факультета Арцахского государственного университета,
г.Степанакерт, Республика Арцах*

Одной из гарантий построения конкурентоспособной экономики является развитое сельское хозяйство. Несмотря на то, что среди показателей, характеризующих уровень экономического развития стран, приоритет отдается промышленности основанной на научно-техническом прогрессе, сельское хозяйство остается жизненно важной отраслью народного хозяйства.

Оно оказывает уникальное влияние на развитие всей экономики и уровень жизни населения, именно поэтому большинство стран мира уделяют большое внимание созданию устойчивых механизмов государственной поддержки развития агропродовольственного сектора.

Цель статьи – изучить программы государственной поддержки, реализуемые в агропродовольственной сфере Республики Арцах, и их результаты. Из цели вытекают следующие задачи: проанализировать основные показатели сельскохозяйственного сектора Республики Арцах за последние 5 лет, выявить динамику средств, выделяемых в отрасль из государственного бюджета, основные направления Фонда поддержки села и сельского хозяйства Арцахской Республики, направления реализованных программ в довоенный и послевоенный период, а также проанализировать результаты программ развития отрасли и представить свои предложения.

В ходе исследования использовались следующие методы: систематического анализа, сравнения, статистический анализа.

С учетом проблем, возникших в области сельского хозяйства в связи с войной, предлагается направить политику государственной поддержки преимущественно на интенсивное развитие сельского хозяйства, использование новейших технологий и научных подходов к работе в сфере сельского хозяйства.

Ключевые слова: *агропродовольственный комплекс, сельское хозяйство, государственная политика, государственная поддержка, программы, бюджетные расходы, эффективность.*

ՎԱՐԿԱՆՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ*

ՀՏԴ 336.7

DOI: 10.52063/25792652-2022.2.13-187

ԱՆՆԱ ՀԱԿՈՔՉԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,
«Շուկայագիտություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
annahakobjan@ysu.am

ՆԱՐԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
narinemirzoyan@ysu.am

Գիտական հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ-ում գործող առևտրային բանկերում փոխառուների վարկունակության գնահատման նպատակով կիրառվող վարկանշման մոդելների ընդհանուր դրույթները: Փոխառուների վարկանշումը որպես առևտրային բանկերում իրացվելիության ռիսկի գնահատման գործիք դառնում է արդիական: Նշված նպատակին հասնելու համար, ուսումնասիրվել և տեղեկություններ են հավաքագրվել հինգ առևտրային բանկերից: Ուսումնասիրվել են վերոնշյալ առևտրային բանկերի վարկանշման մոդելները, քանզի տրամադրվող վարկերի ծավալների մեծացման ֆոնին արդիական ու հրատապ է դառնում փոխառուների վարկանշումը: Փոխառուի վարկանիշը ամբողջությամբ պայմանավորում է բանկ-հաճախորդ համագործակցության պայմանները, ինչպես նաև նախանշում բանկի քաղաքականությունը տվյալ փոխառուի գծով գրավի ու սահմանաչափի կիրառման շրջանակներում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գործոնային վերլուծության, համեմատության և վիճակագրական վերլուծությունների մեթոդները:

Կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ առևտրային բանկերի վարկանշման մոդելների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր անհատական վարկանշման մոդելը, որը, սակայն, ունի որոշակի թերություններ, որոնք մատնանշվել են հոդվածում: Կարևորվում է նաև այն, որ առևտրային բանկերը ներքին վարկանիշ շնորհելու նպատակով վերլուծում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարչական հաշվետվությունները, ինչն առավել իրատեսական է դարձնում շնորհված վարկանիշը:

* Հոդվածը ներկայացվել է 19.06.2022թ., գրախոսվել՝ 01.07.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:


Հիմնաբառեր՝ վարկանշում, իրացվելիության ռիսկ, Կենտրոնական բանկ, առևտրային բանկ, վերաֆինանսավորման տոկոսադրույք, փոխառուների վարկունակություն:

Ներածություն

Վերջին տարիներին առաջ եկած աշխարհաքաղաքական գլոբալ խնդիրները, այդ թվում՝ համավարակը, պատերազմները, որոնց արդյունքում եղան սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում, փոխարժեքի տատանումներ, վարկային ռեսուրսների թանկացում և այլն, անդրադարձել են նաև ՀՀ-ի վրա: 2020 թվականի պատերազմը հանգեցրեց ինչպես բարոյահոգեբանական ճգնաժամի, այնպես էլ ֆինանսական ռեսուրսների մեծ կորուստների: Հասարակության մեջ ձևավորվեցին բացասական սպասումներ, ինչն էլ ավելի էր խորացնում տնտեսության վայրէջքը: Իրավիճակը բարդանում էր նաև աշխարհը բոլորած համավարակի պատճառով, ինչը նվազեցրել էր տնտեսական ակտիվությունը աշխարհի բոլոր երկրներում, բայց հատկապես այն ազդել էր փոքր, զարգացող երկրների վրա: Վերոնշյալի համատեքստում առանցքային կարևորություն ունեն ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, որը պայմանավորված էր ՀՀ ԿԲ-ի իրավիճակին համարժեք արձագանքելու կարողությամբ, վերջինիս կողմից Բազելյան կոմիտեի համաձայնագրերին հետևելով, մասնավորապես ռիսկերի կառավարման մասով, որոնց շրջանակներում կապիտալի համարժեքության և այլ նորմատիվները այնքան բարձրացվեցին, որ հնարավոր էր դիմակայել էլ ավելի մեծ փորձությունների, բացի այդ ՀՀ ԿԲ-ն հմուտ օգտագործում է իր մակրոպրոլեկցիալ գործիքները՝ մասնավորապես կապիտալի հակացիկլիկ բուֆերը, որը 2022 թվականի առաջին կիսամյակում ևս սահմանվեց 0% (Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, 05.06.2022, www.cba.am)¹:


Խնդրի գործնական վերլուծությունը

Վերը նկարագրված բարդ իրավիճակը համալրվեց 2022 թվականի փետրվարին սկսված ՌԴ-ի հատուկ գործողությամբ Ուկրաինայում, ինչի արդյունքում առաջ եկավ և դեռևս շարունակվում են փոխարժեքի տատանումները: Ռուսական ռուբլին մի քանի օրվա ընթացքում գրանցեց իր պատմական ամենացածր արժեքը (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ռուբլու փոխարժեքի դինամիկան²


¹ Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx, Accessed 5 June 2022
² Փոխարժեքների արխիվ, <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022



Գծապատկեր 2. Եվրոյի և դոլարի փոխարժեքների դինամիկան¹

Վերոնշյալը խուճապ առաջացրեց օտար փոխարժեքի տնօրինողների շրջանում, ինչպես նաև բացասական ազդեց ՅՅ-ի արտահանման ծավալների վրա: Սակայն կարճ ժամանակում ՌԴ կառավարության քայլերի արդյունքում, մասնավորապես վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման միջոցով՝ շուրջ 15 տոկոս (Գծապատկեր 3), հնարավոր եղավ փոքր թանկացնելով որոշ չափով կարգավորել ինֆլյացիայի անկառավարելի տեմպերը:

Վերը թվարկածը որոշ չափով կայունացրեց ռուբլին նաև ՅՅ-ում, ինչը շատ կարևոր էր ՅՅ-ի համար, քանի որ բնակչության որոշակի տոկոս դեռ մեծ կախվածություն ունի ՌԴ-ից եկող տրանսֆերտներից:



Գծապատկեր 3. ՅՅ և ՌԴ վերաֆինանսավորման տոկոսադրույքների դինամիկան¹

¹ Փոխարժեքների արխիվ, <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022

Ինչպես արդեն նշվեց, վերը նկարագրված իրավիճակին և՛ ՀՀ, և՛ ՌԴ ԿԲ-երը արձագանքեցին վերաֆինանսավորման տոկոսադրույքի գործիքը լայնորեն կիրառելով: Երկու երկրներում էլ բարձրացավ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը համապատասխանաբար բարձրացրեց առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքները, որոնք ձևավորվում են հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$S_{\text{վո}} = S_{\text{բ}} + S_{\text{շ}} + S_{\text{նվ}} \quad (1) \quad (\text{Գրիգորյան և Միրզոյան})$$

որտեղ՝

$S_{\text{վո}}$ - վարկային ռեսուրսի տոկոսադրույք

$S_{\text{բ}}$ - բազային տոկոսադրույք

$S_{\text{շ}}$ - շահույթի տոկոսադրույք

$S_{\text{նվ}}$ - ռիսկի վճարի տոկոսադրույք (հավելյալ տոկոսադրույք):

Նշված բանաձևի բազային՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման հաշվին բարձրացվեցին առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, ինչը պատերազմի և համավարակի արդյունքում առաջացած սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետ մեկտեղ առանցքային պատճառներից են չաշխատող վարկերի տեսակարար կշռի բարձրացման մեջ: Առևտրային բանկը առանձին վերցված չի կարող ազդել ո՛չ վերաֆինանսավորման տոկոսադրույքի, ո՛չ էլ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա, այն ընդամենը այդ ռիսկերից բխող հետևանքների կրողն է: Մասնավորապես, վերոնշյալ պայմանները հանգեցնում են փոխառու և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց շրջանում վարկի սպասարկման խնդիրների, արդյունքում ավելանում են չաշխատող վարկերը և առևտրային բանկերի մոտ իրացվելիության ռիսկ է առաջանում: Դեպքերի հաջորդականության նշված շղթայի մեջ առևտրային բանկերը իրենց իրացվելիությունը և վճարունակությունը պահպանելու համար պետք է ավելի լուրջ մոտենան իրենց մոտ կիրառվող վարկանշման մոդելների իրատեսությանը և անընդհատ հարմարեցնեն վերջիններիս հանդեպ կիրառվող պահանջները արտաքին միջավայրին:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում գործող և փոխառուների վարկունակության գնահատման համար վարկանշման մոդել կիրառող առևտրային բանկերի վարկանշման մոդելների ընդհանուր դրույթները: Սույն հոդվածի շրջանակներում առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելները ուսումնասիրելով, թերությունները բացահայտելով և մոդելներն ամբողջականացնելու առաջարկությունները ներկայացնելով՝ փորձ է արվել նվազեցնել առևտրային բանկերում վարկային ռիսկի շրջանակներում ծագող իրացվելիության ռիսկը:

Ինչպես արդեն նշվեց, տրամադրվող վարկերի ծավալների մեծացման ֆոնին արդիական է փոխառուների վարկանշումը: Փոխառուի վարկանիշն ամբողջությամբ պայմանավորում է բանկի՝ վերջինիս հետ համագործակցության պայմանները, ինչպես նաև նախանշում բանկի քաղաքականությունը տվյալ փոխառուի գծով գրավի ու սահմանաչափի կիրառման շրջանակներում:

Վարկանշման ծածկույթը դեռևս շատ փոքր է ՀՀ-ում՝ պայմանավորված միջազգային վարկանշման գործակալությունների կողմից վարկանշման բարձր գներով և առաջ քաշվող խիստ պահանջներով: Բացի այդ, միջազգային վարկանշման գործակալությունների կողմից վարկանշումը հետապնդում է մի շարք այլ նպատակներ՝ օտարերկրյա վարկերի ներգրավում, բորսայական առևտրի մասնակցություն և այլն: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում բորսան թերևս զարգացած չէ, ինչպես նաև օտարերկրյա վարկերի ներգրավման սուր կարիք առևտրային կազմակերպությունները չունեն զարգացած ֆինանսական համակարգի պայմաններում: Ըստ այդմ, ՀՀ-ում միջազգային վարկանշման գործակալությունների՝

¹ Ключевая ставка https://www.cbr.ru/hd_base/KeyRate/, Accessed 5 June 2022

մասնավորապես Moody's-ի կողմից տրված արտաքին վարկանիշ ունեն միայն որոշ առևտրային բանկեր:

Վերոնշյալը էլ ավելի է հիմնավորում ներքին՝ կոնստրազենտ առևտրային բանկի կողմից շտրիվող վարկանիշի իրատեսության անհրաժեշտությունը:

ՀՀ ֆինանսական համակարգը գտնվում է կայուն զարգացման փուլում, դրա մասին են խոսում վերջին մի քանի տարիներին տեղի ունեցած արհավիրքների պարագայում մասնավորապես առևտրային բանկերի շրջանում սնանկությունների բացակայությունը և կարևոր ֆինանսական ցուցանիշների բարելավումը: Իհարկե, նման կայունության երաշխավորն ու ապահովողը՝ իր ճիշտ մակրոտնտեսական քաղաքականության գործիքների կիրառմամբ, ՀՀ ԿԲ-ն է: ՀՀ ԿԲ-ն հետևում և կիրառում է Բազելյան համաձայնագրերում արձանագրված խորհուրդ-պահանջները: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ դեռևս Բազելյան երրորդ համաձայնագրում առկա էր պահանջ, որ յուրաքանչյուր առևտրային բանկ պետք է ունենա իր սեփական ներքին վարկանշման համակարգը, այն դեռևս լիովին բավարարված չէ: Սույն հոդվածի շրջանակներում դիտարկվել են ՀՀ բոլոր 17 առևտրային բանկերը, և ընտրվել այն բանկերը (բանկային գաղտնիքի առկայության պարագայում դիտարկվող բանկերի անվանումները չեն հրապարակվում), որոնք ունեն մշակված համապարփակ վարկանշման մոդել, այլ ոչ թե վարկունակության գնահատման առանձնացված փոքր քանակի ռանդոմ ցուցանիշներ:

Նշված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել և տեղեկություններ են հավաքագրվել հինգ առևտրային բանկերից¹:

Ուսումնասիրված առևտրային բանկերում, ինչպես կարգն է, վարկանշման մոդելները անցել են վալիդացման շրջան, որի ընթացքում շտկվել և համալրվել են նոր արտաքին մարտահրավերներին համապատասխան: Վերոնշյալներում վարկանշման մոդելները ենթարկվում են տարեկան մոնիթորինգի, և վարկանշման գործընթացի վերանայման համար սովորաբար պատասխանատու են լինում հետևյալ ստորաբաժանումները՝ Ռիսկերի վարչություն, Վարկերի մոնիթորինգի բաժին, Ֆինանսական վերլուծությունների բաժին և այլն: Ինչպես արդեն նշվել է, վերլուծված յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր սեփական վարկանշման մոդելը, որը բավարարում է իր ռիսկ-ախորժակին: Սակայն յուրաքանչյուր մոդել ունի իր ռիսկը այն առումով, որ կարող է ոչ իրատեսական վարկանիշ շտրիվել փոխառուներին: Առևտրային բանկերը իրենց վարկանշման մոդելների շրջանակներում շտրիվում են փոխառուներին ներքին վարկանիշ, սակայն արտաքին վարկանիշի առկայությունը դյուրինացնում է վարկանշման գործընթացը, քանզի միջազգային վարկանշային գործակալությունների (Moody's, Fitch և S&P) կողմից շտրիված վարկանիշները վստահելի են և ընդունվում են ամբողջ աշխարհում:

Վերլուծված առևտրային բանկերում ելակետային վարկանիշի գնահատումը հիմնվում է քանակական և փորձագիտական (ֆինանսական և ոչ ֆինանսական) գործոնների գնահատականների վրա՝ օգտագործելով տարբեր կշիռներ: Գրականության մեջ առկա մոդելներում հեղինակներն առաջարկում են վարկանիշը շտրիվելիս ավելի մեծ տեսակարար կշիռ տալ քանակական գործոններին, քանզի դրանց հաշվարկը բացառում է փորձագետի սուբյեկտիվությունը (Маталова и Маталов): Սակայն մեր կողմից ուսումնասիրված առևտրային բանկերից երեքը գերադասել են քանակականին տալ 0,4, իսկ փորձագիտականին՝ 0,6 կշիռը, իսկ մնացած երկու բանկերը՝ 0,5 քանակականին և 0,5 փորձագիտականին: Վարկանիշի շտրիվման գործընթացում բոլոր հինգ առևտրային բանկերում ընդհանուր միավորների քանակը 100 է:

¹ Զանի որ վարկանշման մոդելները հանդիսանում են յուրաքանչյուր առևտրային բանկի գաղտնիք, տվյալները տրամադրվել են առևտրային բանկերի անվանումները չներկայացնելու պայմանով:

Ուսումնասիրված բոլոր հինգ առևտրային բանկերը ոչ ֆինանսական գործունեության առանձնացրել են վարկային պատմությունը, որն իր մեջ ներառում է ինչպես տվյալ բանկի հետ ունեցած վարկային պատմությունը, այնպես էլ մնացածների հետ շուկայում զբաղեցրած դիրքը, ինչի տակ նկատի են ունեցել փոխառուի գործունեության ոլորտում ունեցած տեսակարար կշիռը, կառավարման որակը, համբավը և այլն: Նշված հինգ բանկերում էլ թվարկած ոչ ֆինանսական գործունեությունը էին հավասար կշիռներ:

Քանակական գործոնների գնահատման համար առևտրային բանկերը ընդհանուր առմամբ ընտրել են հետևյալ ցուցանիշները (Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1. Ուսումնասիրված առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելների շրջանակներում հաշվարկվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները¹

Ֆինանսական ցուցանիշներ	Կշիռ²
Կախվածության գործակից	
Ֆինանսական ռիսկի գործակից	
Իրացման շահութաբերություն՝ Չուստ շահույթ/ հասույթ	
Չուստ շահույթով վարկային մարումների ծածկման գործակից	
Ընդհանուր իրացվելիություն	
Ընթացիկ իրացվելիություն	
Հասույթի աճ	
Եկամտաբերության շեմ	
Ակտիվների շրջանառելիություն	
Ոչ ֆինանսական ցուցանիշներ	
Վարկային պատմություն	
Համբավի վերլուծություն	
Կառավարման օղակներում գտնվող անձանց փոփոխության հաճախականություն	
Բանկի հետ հարաբերություններ	
Մատակարարների դիվերսիֆիկացիա	
Ոլորտի ներուժ	
Գործունեության ժամկետ և ծավալ	
Մրցակցային միջավայր	
Ընդամենը	100.0%

Վերոնշյալ յուրաքանչյուր գործոն, թույլատրելի միջակայքում լինելու պարագայում իր կշռից ելնելով, շնորհում է փոխառուին բալեր: Փոխառուի կողմից հավաքագրված բալերի ընդհանուր գումարը համապատասխանեցվում է վարկանիշին հետևյալ սկզբունքով (Աղյուսակ 2.):

¹ Կազմվել է հեղինակների կողմից:

² Յուրաքանչյուր առևտրային բանկ ինքն է որոշում նշված գործոնի կարևորությունը, կախված իր ներքին վարկանշման մոդելից:

Աղյուսակ 2. Կազմակերպության հավաքած միավորների և դրանց համապատասխանեցված վարկանիշերի սանդղակ¹

Միավորներ	Վարկանիշ 2 (Moody's)	Վարկանիշ (Fitch)	Կորստի հավանականություն և PD	Ռիսկի որակ	Նկարագրություն
0% - 20%	Caa3	CCC-	80%	Անընդունելի Ռիսկ	Կասկածելի
21% - 39%	Caa2	CCC	50%	Անընդունելի Ռիսկ	Ստանդարտ ից քիչ
40% - 50%	Caa1	CCC+	27.08%	Անընդունելի Ռիսկ ² Ընդունելի ռիսկ ³	Անբավարար
51% - 59%	B3	B-	6.49%	Բարձր Ռիսկ	Բավարար
60% - 70%	B2	B	3.20%	Ընդունելի Ռիսկ	Ընդունելի
71% - 84%	B1	B+	1.98%	Միջին Ռիսկ	Նորմալ
85% - 90%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ
90% - 95%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ
95% - 100%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ

Եզրակացություն

Հարկ է նշել, որ նույնիսկ 100% միավոր հավաքելու դեպքում ՀՀ-ում վարկանշվող կազմակերպությունը չի կարող A կարգի վարկանիշ ստանալ: Զանգի կազմակերպության վարկանիշը չի կարող ավելի բարձր լինել, քան այն երկրի վարկանիշը, որտեղ այն գործում է:

Վերոհիշյալ հինգ առևտրային բանկերի վարկանշման մոդելների վերլուծությունը ցույց տվեց, որ, իհարկե, յուրաքանչյուր առևտրային բանկ պետք է ունենա իր անհատական վարկանշման մոդելը, ինչպես խորհուրդ է տալիս Բազելյան կոմիտեն, քանի որ տարբեր է յուրաքանչյուրի ռիսկ-ախորժակը, յուրաքանչյուրն ունի իր տեսլականը, թե որ ֆինանսական կամ ոչ ֆինանսական ցուցանիշներն են առավելագույնս բնութագրում կազմակերպության վիճակը, նույնիսկ նման ցուցանիշներ օգտագործելիս յուրաքանչյուրը տարբեր կարևորության կշիռ է հաղորդում ցուցանիշին և այլն: Այդուհանդերձ, կան նաև նմանություններ. մասնավորապես, բոլոր առևտրային բանկերը վարկանշման մոդելի մեջ ներգրավում են կազմակերպության իրացվելիության, գործարար ակտիվության, շահութաբերության և ֆինանսական կայունության ցուցանիշները:

Վերլուծությունը ցույց տվեց, որ բանկերը ներքին վարկանիշ շնորհելու նպատակով վերլուծում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարչական հաշվետվությունները, ինչն ավելի իրատեսական է դարձնում շնորհված վարկանիշը, և ևս մեկ անգամ հիմնավորվում է «Բանկային գաղտնիք» հասկացության պահպանման անհրաժեշտությունը:

¹ Կազմվել է հեղինակների կողմից:

² Վերլուծվող 4 բանկերում ռիսկի որակը դասակարգվել էր անընդունելի, մեկ բանկում՝ ընդունելի:

³ Վերլուծվող 4 բանկերում ռիսկի որակը դասակարգվել էր միջին, մեկ բանկում՝ ցածր:

Այնուամենայնիվ, մեր կողմից վերլուծված առևտրային բանկերի վարկանշման մոդելներում առկա էին մի շարք բացթողումներ. մասնավորապես, չէին վերլուծվում կազմակերպություններին բնորոշ ռիսկերը, և վերջիններս չէին ներգրավվում վերջնական բալային գնահատականի որոշման գործընթացում: Հստակ չէր, թե ինչպես են կազմակերպությունները առևտրային անցած փոխառուների առևտրական եզրակացությունները հաշվի առնում վարկանիշի շտրիման ժամանակ, բավականին սեղմ էր վերլուծվող ցուցանիշների շրջանակը՝ հատկապես գործարար ակտիվության վերլուծության կտրվածքով և այլն:

Կազմակերպությունների վարկանշումը վերջիններիս միջև վստահության դաշտի ստեղծման առանցքային, ժամանակակից գործիք է, և առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելների կատարելագործումը բանկային համակարգի կայունության և, առանձին վերցրած, առևտրային բանկի իրացվելիության ռիսկի կառավարման ամենաազդեցիկ գործիքն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան, Լիանա և Նարինե Միրզոյան. *Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն և վարկանշում*. Տնտեսագետ, Երևան, 2018:
2. Alexander, Carol, and Elizabeth Sheedy. *The Professional risk managers' handbook: a comprehensive guide to current theory and best practice*. PRIMA risk management series, New York, 2005.
3. Basel Committee on Banking Supervision. *International Convergence of Capital Measurement and Capital Standards*. Basel, 2005.
4. Вяткин, Валерий, и Владимир Гамза. *Базельский процесс, Базел II – управление банковскими рисками*. Москва, 2007.
5. Шаталова, Елена, и Александр Шаталов. *Оценка кредитоспособности заемщиков в банковском риск-менеджменте*. КНОРУС, Москва, 2011.
6. Փոխարժեքների արխիվ,
<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022
7. Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, 05.06.2022,
https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx
8. Ключевая ставка https://www.cbr.ru/hd_base/KeyRate/, Accessed 5 June 2022

WORKS CITED

1. Alexander, Carol, and Elizabeth Sheedy. *The Professional Risk Managers' Handbook: a Comprehensive Guide to Current Theory and Best Practice*. PRIMA Risk Management Series, New York, 2005.
2. Basel Committee on Banking Supervision. *International Convergence of Capital Measurement and Capital Standards*. Basel, 2005.
3. Grigoryan, Liana ev Narine Mirzoyan. *Kazmakerput'yunneri finansakan verluts'ut'yun ev varkanshum*. Tntesaget, Erevan. [*Financial Analysis of Organizations and Rating*. Economist, Yerevan] 2018. (In Armenian)
4. Vjatkin, Valerij, i Vladimir Gamza. *Bazel'skij process, Bazel II – upravlenie bankovskimi riskami*. Moskva. [*Basel Process, Basel II - Management of Banking Risks*. Moscow] 2007. (In Russian)
5. Shatalova, Elena, i Aleksandr Shatalov. *Ocenka kreditosposobnosti zaemshnikov v bankovskom risk-menedzhmente*. KNORUS, Moskva. [*Assessment of Creditworthiness of Borrowers in Bank Risk Management*. KNORUS, Moscow] 2011. (In Russian)
6. Փոխարժեքների արխիվ,
<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022

7. Մակրոպրուդենցիալ քաղաքականության հայեցակարգ, [The concept of macroprudential policy] https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx, Accessed 5 June 2022

8. Ключевая ставка, [Key rate] https://www.cbr.ru/hd_base/KeyRate/, Accessed 5 June 2022.

RATING AS A LIQUIDITY RISK MANAGEMENT TOOL IN THE FINANCIAL SYSTEM

ANNA HAKOBYANYAN

*Yerevan State University,
Faculty of Economics and Management,
Chair of Management and Business,
Ph.D. in Economics, Associate Professor,
Head of Marketing Master's Degree Program
Yerevan, the Republic of Armenia*

NARINE MIRZOYAN

*Yerevan State University,
Faculty of Economics and Management,
Chair of Management and Business,
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the scientific article is to examine the general provisions of borrowers' creditworthiness assessment models of commercial banks in the Republic of Armenia. In the framework of this, borrower's ratings are becoming more popular as a method for assessing liquidity risk in commercial banks. To achieve this goal the necessary data from five commercial banks in RA was gathered and studied.

As borrowers' ratings are becoming increasingly important due to the growth of provided loans, the rating models of the above-mentioned commercial banks were studied and analyzed.

The borrower's rating fully determines the terms of cooperation between the bank and the client, as well as outlines the bank's policy within the framework of the application of the mortgage's and its limits.

During the research the methods of factor analysis, comparison, and statistical analysis were applied.

It can be concluded that the analysis of the above models of ratings of commercial banks showed that each commercial bank has its own individual rating model, which, however, has certain disadvantages, which were discussed in the article. It is also important that commercial banks analyze both financial and management reports in order to assign an internal rating, which makes the latter more realistic.

Keywords: *Rating, Liquidity Risk, Central Bank, Commercial Bank, Refinancing Rate, Borrowers' Creditworthiness.*

РЕЙТИНГОВАНИЕ КАК ИНСТРУМЕНТ УПРАВЛЕНИЯ РИСКОМ ЛИКВИДНОСТИ В ФИНАНСОВОЙ СИСТЕМЕ

АННА АКОПДЖАНЫ

*руководитель магистерской программы «Маркетинг»,
доцент кафедры управления и бизнеса факультета экономики и
управления Ереванского государственного университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

НАРИНЕ МИРЗОЯН

*доцент кафедры управления и бизнеса
факультета экономики и управления
Ереванского государственного университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

Целью научной статьи является исследование общих положений рейтинговых моделей, применяемых для оценки кредитоспособности заемщиков в коммерческих банках РА. Рейтингование заемщиков как инструмент оценки риска ликвидности становится очень актуальным. Для достижения цели проанализированы и исследованы данные пяти коммерческих банков. Были исследованы рейтинговые модели вышеупомянутых коммерческих банков, поскольку на фоне увеличения объемов предоставляемых кредитов рейтингование заемщиков становится все более актуально и неотложно. От рейтинга заемщика полностью зависят условия сотрудничества банка и заемщика, они также обуславливают политику банка в отношении применения ссуды и лимита кредита.

В исследовании были применены факторный анализ, методы сравнения и статистического анализа.

Вследствии анализа данных рейтинговых моделей вышеупомянутых коммерческих банков стало ясно, что каждый коммерческий банк имеет свою рейтинговую модель, которая имеет недостатки, выявленные в статье. Важно также отметить, что коммерческие банки с целью присуждения внутреннего рейтинга анализируют как финансовую, так и управленческую отчетность, что делает присужденный рейтинг более достоверным.

Ключевые слова: *рейтингование, риск ликвидности, Центральный банк, коммерческий банк, ключевая ставка, кредитоспособность заемщика.*

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

ՀՏԴ 658.7:339.186

DOI: 10.52063/25792652-2022.2.13-197

ԼՈՒԻԶԱ ՍԱՐԱԳՅԱՆ

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շիաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
luiza.sarafyan.97@mail.ru*

Գրեթե բոլոր՝ և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում պետական գնումները հանդիսանում են հզոր ռազմավարական գործիք պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման, պետության ռազմավարական նպատակների իրագործման համար: Զարգացած երկրներում կիրառվում են օրենսդրական այնպիսի առանձնահատկություններ, որոնք նպաստում են պետական բյուջեի միջոցների խնայողաբար օգտագործմանը:

Ուստի սույն հոդվածի նպատակն է վերհանել զարգացած և պետական գնումների գործընթացի կազմակերպման և իրականացման ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրների պետական գնումների գործընթացի իրականացման օրենսդրական առանձնահատկությունները և համեմատական վերլուծության միջոցով պարզել վերոնշյալ առանձնահատկությունների տեղայնացման հնարավորությունների ՀՀ-ում՝ պետական գնումների գործընթացը առավել արդիական, թափանցիկ իրականացնելու համար:

Աշխատանքի խնդիրն է՝ ուսումնասիրել պետական գնումների գործընթացի իրականացման՝ մի շարք երկրների առաջավոր փորձը՝ օրենսդրական առանձնահատկությունների բացահայտման միջոցով և ՀՀ-ում վերոնշյալ ոլորտի օրենսդրական առանձնահատկությունների համեմատման միջոցով պարզել պետական գնումների՝ առավել արդյունավետ, ռեսուրսախնայող ու թափանցիկ իրականացման ուղիները:

Աշխատանքը շարադրված է տարբեր երկրներում պետական գնումների գործընթացը կարգավորող օրենսդրական ու ենթօրենսդրական ակտերի մանրամասն ուսումնասիրությամբ և առանձնահատկությունների վերլուծմամբ:

Ամփոփելով հոդվածում կատարված ուսումնասիրությունները՝ հարկ ենք համարում նշել, որ նշված առանձնահատկությունների կիրառումը կարող է նպաստել պետական գնումների գործընթացի արդիականացմանը, պետական գնումների գործընթացում վերահսկողական նորագույն լծակների կիրառմանը, պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռնելով պատվիրատու կազմակերպություններին ունենալ նաև իրենց որոշումների կայացման գործընթացում անկախություն և պետական գնումների պրոցեսը կազմակերպել ըստ առաջնահերթությունների և նպատակահարմարության:

* Հոդվածը ներկայացվել է 31.05.2022թ., գրախոսվել՝ 21.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Հիմնաբառեր՝ պետական գնումներ, Հայաստանի Հանրապետություն, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, ԵՄ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, օրենսդրական առանձնահատկություններ:

Նախաբան

Վերջին ժամանակներում պետական գնումները դարձել են պետության տնտեսական ու քաղաքական աճի կարևոր գործիք: ԱՊՀ և Եվրամիության անդամ երկրներում պետական գնումները ՀՆԱ-ում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն (14 տոկոս) (“Public procurement” [European Commission]), սակայն դրանց ռազմավարական օգտագործումը, որպես քաղաքական տնտեսության գործիքի, առաջացնում է բազմաթիվ հարցեր: Դրանցից են՝ բյուջեի և գնումների պլանավորման թափանցիկության անբավարարությունը, գնումներով զբաղվող ինստիտուտների անկախությունը, կոռուպցիան և այլն (Anderson and Ose-Lah):

ՀՀ-ում ևս պետական գնումների համակարգում առկա են նմանատիպ հիմնախնդիրներ՝ կապված օրենսդրական դաշտի համեմատաբար ուշ ներդրման և դաշտի կատարելագործմանն ուղղված քայլերի իրականացման հետ: Նշված խնդրի լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել միջազգային առաջավոր փորձը և համեմատական վերլուծության միջոցով պարզել ՀՀ-ում վերջինիս տեղայնացման հնարավորությունները:

Պետական գնումների գործընթացի իրականացումը Մեծ Բրիտանիայում

Նախկինում ԵՄ անդամ, բայց Բրեքսիթից՝ 2020 թ.-ի հունվարից հետո ԵՄ-ից դուրս եկած Մեծ Բրիտանիայում ևս պետական գնումները բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն և կազմում են 357 մլրդ ֆունտ ստերլինգ ՀՆԱ-ում (“Procurement statics: a short guide”): Մեծ Բրիտանիան, ինչպես և մի շարք ինչպես ԵՄ անդամ, այնպես էլ ԵՄ չանդամակցող պետություններ իրենց պետական գնումների գործընթացը իրականացնում են՝ հենվելով Առևտրի համաշխարհային կազմակերպության մշակած համաձայնագրի վրա: Պետական գնումների համաձայնագիրն իրենից ներկայացնում է հզոր գործիք միջազգային մրցակցության և կառավարման զարգացման համար: Համաձայնագրի կարևորագույն ասպեկտը հանդիսանում է դրա մասնակից երկրների շրջանում թափանցիկության, առանց խտրականության, ինչպես նաև արդյունավետության միջազգային ստանդարտներին հասնելը պետական գնումների ոլորտում: Համաձայնագրին միացումը շահավետ է անդամների համար, քանի որ այն ապահովում է անարգել հասանելիություն համաձայնագրի այլ մասնակիցների գնումների շուկային, ինչպես նաև տարբեր առավելություններ է տալիս, որոնք հանդիսանում են սեփական գնումների համակարգի միասնականության, թափանցիկության և արդյունավետության բարձրացման արդյունք: Պետական գնումների համաձայնագիրը հանդիսանում է Առևտրի համաշխարհային կազմակերպության կարևորագույն իրավական ակտերից մեկը պետական գնումների ոլորտում: Համաձայնագրի տեքստը պարունակում է երկու իրավական պարտականություն իր մասնակիցների համար: Դա առանց խտրականության սկզբունքն է, ինչպես նաև մի շարք կանոնները, որոնք վերաբերում են պայմանագրերի կնքման թափանցիկությանը (*Համաձայնագիր պետական գնումների մասին*):

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայում իրականացվող պետական գնումների գործընթացին, ապա Բրեքսիթից հետո ԵՄ-ը պետական գնումների իրականացման գործընթացում մտցրեց մի շարք սահմանափակումներ Մեծ Բրիտանիայի համար: Չնայած ինչպես նախկինում, այնպես էլ հիմա պահպանվեց ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքը Մեծ Բրիտանիայի և ԵՄ անդամ երկրների միջև, սակայն

սահմանափակվեց անգլիական ծագման ապրանքների մուտքը ԵՄ շուկա: Մասնավորապես, պետական կառավարման մարմինները պետական գնումների իրականացման, մրցույթների կազմակերպման գործընթացում կարող են մերժել այն ներկայացված հայտերը, որոնցում ապրանքների 50 տոկոսից ավելիի համար որպես ծագման երկիր նշվում է Մեծ Բրիտանիան: Իսկ մնացյալ սկզբունքները, որոնք հիմնականում վերաբերում են գնումների գործընթացի իրականացման սկզբունքներին, պայմանագրերի կնքմանը, մնացին նույնը, ինչպես ԵՄ անդամակցող երկրներում է, քանի որ դրանք չեն հակասում Առևտրի համաշխարհային կազմակերպության մշակած համաձայնագրի դրույթներին, իսկ Մեծ Բրիտանիան դեռևս պահպանում է նշված համաձայնագրի դրույթները՝ համատեղելով լրկալ օրենսդրության հետ: Այսինքն՝ Մեծ Բրիտանիայում կարող են կիրառվել նաև ներքին օրենսդրական ակտեր՝ չհակասելով Առևտրի համաշխարհային կազմակերպության մշակած համաձայնագրի դրույթներին (“Public procurement policy”):

Մեծ Բրիտանիայում պետական գնումների գործընթացի իրականացման սկզբունքները հետևյալն են՝

- ոչ խտրականություն,
- ապրանքների ազատ տեղաշարժի իրավունք,
- ծառայությունների մատուցման գործընթացի անխափան իրականացում

Իրավունքի Եվրոպական դատարանի կողմից ավելացել են նաև հետևյալ սկզբունքները՝

- համաչափ վերաբերմունք գնումների գործընթացի բոլոր մասնակիցների նկատմամբ, գործընթացի թափանցիկություն (“Public procurement policy”):

Մեծ Բրիտանիայում պետական գնումների օրենսդրական կարգավորման հիմքերը դրվել են դեռևս 1970-ական թվականներից՝ նպատակ ունենալով ստեղծել բաց և մրցակցային շուկա, որտեղ բոլոր մասնակիցների համար հավասար մրցակցային պայմաններ կնախատեսվեին: Դա վերաբերում էր և պայմանագրերի կնքման գործընթացին և տույժերի ու տուգանքների կիրառմանը պայմանագրային կաևորագույն դրույթները խախտելու դեպքում:

Օրենսդրական վերջին կարգավորումները իրականացվել են 2014 թվականից՝ առավել ճկուն, պարզ օրենսդրական ռեժիմ սահմանելով պետական գնումների ոլորտում: Կիրառությունը ԵՄ անդամ երկրներում սկսվեց 2016 թվականից:

Մեծ Բրիտանիայում գնումների գործընթացը կարգավորվում է երկու մակարդակով. առաջին մակարդակը վերաբերում է կառավարության, պետական կառավարման այլ մարմինների, այլ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից պետական գնումների գործընթացի օրենսդրական կարգավորումներին, իսկ երկրորդը՝ պաշտպանության և անվտանգության ապահովման համար իրականացվող պետական գնումների գործընթացի օրենսդրական կարգավորումներին:

Առանձին կարգավորվում են նաև կոմունալ ծառայությունների ձեռքբերումը, կոնցենսիայի պայմանագրերի հիման վրա կատարվող գնումների իրականացման գործընթացը:

Ըստ բրիտանական օրենսդրության՝ պատվիրատու են համարվում պետական, տարածաշրջանային, տեղական կառավարման մարմիններն ու ասոցիացիաները, որոնք ստեղծվել են վերջիններիս կողմից: Դրանց հիմնական կանոնադրական նպատակը հանրային նշանակության կարիքների բավարարումն է: Դրանց առանձնահատկությունները հետևյալն են՝


- չեն հետապնդում առևտրային նպատակներ,
- ղեկավարվում են վերահսկող համարվող պետական այլ մարմնի կողմից, տնօրենների խորհրդի կեսից ավելին նշանակվում է վերահսկող կազմակերպության կողմից:

Կան նաև բացառիկ դեպքեր, երբ մասնավոր հատվածի կազմակերպությունը պետք է իրականացնի գնման գործընթացի կազմակերպումը՝ որպես պատվիրատու: Դա այն դեպքում է իրականացվում, երբ մասնավոր հատվածի կազմակերպությունը ստանում է նպատակային սուբսիդիա՝ հանրային նշանակության ինչ որ կարիքների բավարարման համար:

Պայմանագրերի կնքման գործընթացը այստեղ ևս եռամակարդակ է ապրանքների մատակարարման աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման մասով: Աշխատանքների իրականացման գործընթացը ներառում է շինարարարական, ինժեներական աշխատանքների իրականացում, ապրանքների մատակարարման գործընթացը ոչ միայն ապրանքների գնման գործընթաց է, այլ նաև՝ վարձակալության: Եթե ապրանքի գնումը միաժամանակ ենթադրում է նաև ծառայության մատուցում, ապա հաշվարկվում են կատարվելիք ծախսերի ծավալը և, կախված նրանից, թե ապրանքի մատակարարման գործարքն է մեծ տեսակարար կշիռ կազմում, թե՞ ծառայության մատուցման գործարքը, կնքվում է մեկ տեսակի պայմանագիր առավել գերակշռող գործարքի մասով:

Մեծ Բրիտանիայում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների, կոնցեսիոն համաձայնագրերի շրջանակներում կնքվող պայմանագրերի բազային շեմերը ներկայացնենք գծապատկերով:

Գծապատկեր 1. Մեծ Բրիտանիայում ապրանքների, ծառայությունների աշխատանքների, կոնցեսիոն համաձայնագրերի շրջանակներում կնքվող պայմանագրերի բազային շեմեր (Հազ. ֆունտ ստերլինգ)



Գնման ընթացակարգերը Մեծ Բրիտանիայում հետևյալն են՝

1. Բաց մրցույթ: Երբ մրցույթը հրապարակվում է հստակ նախահաշվային գներով: Մրցութային այս ձևը իրականացվում է մշտական գնվելիք ապրանքների համար և մրցույթում չկան բանակցելու հնարավորություններ գնային առաջարկի շուրջ:

2. Փակ մրցույթ, երբ հայտատուների համար կա հստակ պահանջ նախաորակավորվելու և միայն նախաորակավորված մասնակիցները կարող են մասնակցել վերջնական մրցույթին՝ գնային առաջարկով: Այստեղ ևս չկա բանակցության հնարավորություն:

3. Մրցակցային երկխոսություն: Մրցութային այս ընթացակարգը կիրառվում է կոմպլեքս գնումների դեպքում: Մրցութային այս ձևի առանձնահատկությունն այն է, որ պատվիրատուն ներկայացնում է իր կարիքները, պահանջմունքները և մրցակցային երկխոսությամբ փորձում է գտնել պահանջվող ապրանքը,

ծառայությունը կամ աշխատանքը: Երկխոսության նպատակը բանակցողների թվաքանակը նվազեցնելն է՝ վերջնական պայմանագիր կնքելու բանակցողներից միայն մեկի հետ:

4. Նորարարական մասնակցություն: Մրցութային այս ձևը իրականացվում է այն ժամանակ, երբ պատվիրատուն նորարարական, շուկայում դեռևս գոյություն չունեցող արտադրանքի, ծառայության գաղափար է զարգացնում: Մրցութային այս ձևը հնարավորություն է տալիս բանակցություններ իրականացնելու:

Մրցույթների ժամանակ Մեծ Բրիտանիայում որակավորման գնահատումը իրականացվում է տնտեսապես առավել նպատակահարմար գնային առաջարկին նախապատվություն տալու (MEAT) սկզբունքով: Բայց այն չի ելնադրում ապրանքի որակական հատկանիշների անտեսում: Կախված գնվելիք ապրանքների, ծառայությունների տեսակից, եթե էական է համարվում միայն ցածր գնային առաջարկը, ապա առաջնորդվում են դրանով, հակառակ դեպքում՝ համամասնությամբ՝ համապատասխանաբար գնային և ոչ գնային առաջարկին տեսակարար կշիռ տալու սկզբունքով:

Երբ մրցույթի մասնակիցները շատ ցածր գնային առաջարկով են հանդես գալիս, ապա պատվիրատուն իրավունք ունի պահանջել բացատրություններ արտադրության պրոցեսի, մատուցվող ծառայությունների բնույթի, այդ պրոցեսներում ներգրավված աշխատակիցների պարտականությունների, վարձատրության, պետական օգնության չափաբաժնի վերաբերյալ:

Մեծ Բրիտանիայում իրականացվող պետական գնումների գործընթացի հիմնական մյուս առանձնահատկությունը համատեղ գնումների իրականացումն է: Համատեղ գնումների իրականացման երեք մոդել է առանձնացվում՝

1. ադմինիստրատիվ, երբ ապրանքանյութական արժեքների փոխանակություն է իրականացվում պետական կառավարման երկու մարմինների միջև, առանց որոշակի կառուցվածքային փոփոխությունների,

2. կորպորատիվ մոդել, երբ գործում է նաև երրորդ միջնորդ կազմակերպությունը, որը ապրանք է մատակարարում այդ երկու կառավարման մարմիններին,

3. պայմանագրային մոդել, երբ ապրանքները մատակարարվում են, ծառայությունները մատուցվում են նախապես կնքված պայմանագրի հիման վրա:

Պետական գնումների գործընթացի իրականացումը ԵՄ անդամ և տարածաշրջանային երկրներում

ԵՄ անդամ Ֆրանսիայում մեծ է վերահսկողությունը պետական գնումների գործընթացի նկատմամբ, և Ֆրանսիան ևս պետական գնումների վերաբերյալ իր օրենսդրությունը համապատասխանեցրել է ԵՄ կանոնակարգերին:

Ինչպես Մեծ Բրիտանիայում, այնտեղ ևս վերահսկողությունը մեծ է մասնակից կազմակերպությունների, նրանց իրականացրած օրինական գործունեության վերաբերյալ:

Զանի որ պետական գնումների գործընթացը միտված է պետության ռազմավարական ծրագրերի իրականացմանը, հետևաբար պատվիրատու հանդիսացող կազմակերպությունները մրցութային հրավերներում կարող են նաև ներառել պահանջներ՝ կապված սոցիալական, բնապահպանական չափորոշիչների պահպանման հետ:

Ֆրանսիայում պատվիրատու են հանդիսանում հետևյալ կազմակերպությունները՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները և այլ պետական ֆինանսավորում ունեցող կազմակերպությունները,

- մասնավոր հատվածում գործող այն կազմակերպությունները, որոնք՝

1. ստեղծված են հասարակական կարիքների բավարարարման համար և չեն հետապնդում առևտրային նպատակներ

2. ֆինանսավորվում են կամ ղեկավարվում պատվիրատու հանդիսացող կազմակերպության կողմից (“Public Procurement Laws and Regulations France 2022”):

Ֆրանսիայում, ինչպես նաև ԵՄ անդամ այլ երկրներում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման համար հստակ շեմ է սահմանված, որը գերազանցելու դեպքում գործում է մրցութային ընթացակարգը (“Public Procurement” [Federal Ministry for Economic Affairs and Climate Action]):

Մասնավորապես Գերմանիայում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման բազային շեմը կազմում է 139000 եվրո, իսկ աշխատանքների կատարման դեպքում՝ 5350000 եվրո:

Այլ բազային շեմեր են սահմանված նաև պաշտպանության, անվտանգության կարիքների ապահովման, էներգամատակարարման, խմելու ջրի մատակարարման գործարքների համար: Նշված գործարքների համար նվազագույն շեմը կազմում է 428000 եվրո, իսկ մնացյալ այլ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման դեպքում բազային շեմը կազմում է 214000 եվրո:

Պետական գնումների հաջորդ կարևորագույն առանձնահատկությունը, որը դեռևս չի գործում ՀՀ-ում, նորարարությունների պետական գնումների իրականացման ընթացակարգն է (“Public procurement for innovation in OECD countries: Issues & risks”): Սա իրենից ենթադրում է մրցույթի հայտարարում ինչ-որ նոր ստեղծագործական գաղափարի զարգացման համար, և հաջորդ փուլում միայն իրականացվում է տվյալ գաղափարի կյանքի կոչման համար ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման գործընթաց:

Նորարարությունների կյանքի կոչմանն ուղղված գործողությունների իրականացումը հնարավորություն է տալիս պետական գնումների գործընթացում ներգրավել մեծաթիվ փոքր ու միջին բիզնեսներ, նպաստել տնտեսական ակտիվությանն ու նորագույն գաղափարների զարգացմանը: Նշված ընթացակարգը կիրառվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամակից երկրներում:

Արևելյան գործընկերության երկրներում, որին անդամակցում է Հայաստանը, քաղաքական կողմնորոշումը մեծապես ազդում է գնումների գործընթացի, օրենսդրական առանձնահատկությունների վրա: Դրա վառ ապացույցն այն է, որ վերջինիս անդամ Վրաստանում և Ուկրաինայում պետական գնումների գործընթացը իրականացվում է ամբողջությամբ էլեկտրոնային տարբերակով՝ հատուկ էլեկտրոնային հարթակների միջոցով: Իսկ ՀՀ-ում էլեկտրոնային գնումներին զուգահեռ՝ կիրառվում է նաև գնումների գործընթացի իրականացման թղթային տարբերակը՝ պատվիրատու հանդիսացող պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար: Գնումների գործընթացի՝ էլեկտրոնային տարբերակով իրականացումը նպաստում է վերջինիս թափանցիկ իրականացմանը: Այս փորձը որդեգրել են գրեթե բոլոր զարգացած երկրները, այդ թվում՝ ԵՄ անդամ երկրները, ինչպես նաև նրանք, ովքեր փորձեր են կատարում անդամակցել ԵՄ-ին:

ՀՀ հարևան երկրներից միայն Ադրբեջանում են դեռևս գնումների գործընթացի օրենսդրական կարգավորումները սահմանափակ, և այստեղ գնումների գործընթացը թերևս ամբողջությամբ իրականացվում է ավանդական թղթային եղանակով:

ՀՀ-ում ևս գնումների մասին օրենսդրությունը հիմնվում է ԱՀԿ գնումների համաձայնագրերի կանոնների վրա, ուստի շատ կարևոր է այստեղ ևս տեղայնացել միջազգային առաջավոր փորձը, ինչպես ԵՄ, այնպես էլ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների օրինակով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով առաջատար երկրներում պետական գնումների ոլորտում առկա լավագույն փորձը և վերլուծելով դրա տեղայնացման առանձնահատկությունները՝ առաջնահերթ ենք համարում կատարել մի շարք բարեփոխումներ կապված գնումների բազային շեմի փոփոխման հետ, որտեղ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման անփոփոխ 1 մլն դրամի շեմը կարող է փոփոխվել՝ կախված գործարքի տեսակից, ինչպես դա արվում է մի շարք զարգացած երկրներում: Այս փոփոխությունը կարող է նպաստել գնումների գործընթացին առավել մեծաթիվ մասնակիցների, հայտատուների ներգրավմանը:

Պետական գնումների վերաբերյալ միջազգային փորձում գործող օրենսդրության հետ կապված հաջորդ կարևորագույն առանձնահատկությունը, որը նույնպես համարում ենք ՀՀ օրենսդրության փոփոխությունների առումով կիրառելի, առնչվում է վերահսկողական լծակների կիրառմանը գնումների գործընթացին մասնակից կազմակերպությունների նկատմամբ: Սա իր հերթին կարող է նպաստել առավել մատչելի, բայց միևնույն ժամանակ որակյալ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնմանը՝ ի վերջո նպաստելով պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Հատկանշական են նաև Մեծ Բրիտանիայում կիրառվող գնման մոդելները, որոնք վերապահված են պատվիրատուների ընտրությանը՝ ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ պատվիրատուն հանդես է գալիս առանձնացված և արդեն ներկայիս օրենսդրությամբ չի կարող կնքել շրջանակային համաձայնագրեր:

Միջազգային պրակտիկայում որպես գնման ընթացակարգ օրենքով ամրագրված է նաև մրցակցային երկխոսությունը, որը ՀՀ-ում որպես գնման ընթացակարգ չի առանձնացվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն և կիրառվում է բանակցությունների տեսքով միայն հավասար գնային առաջարկ ներկայացնելու և նախարարակազմի ընթացակարգերին մասնակցելու դեպքում («Գնումների մասին» ՀՀ օրենք):

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն ենք համարում նորարարությունների «գնման» պրոցեսը, որը կիրառվում է Ա՝ ԵՄ, Ա՝ ՏՆտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության կողմից և նպաստում է ինչպես նորարարական գաղափարների զարգացմանը, այնպես էլ փոքր ու միջին բիզնեսի՝ տվյալ գործընթացում առավել լայն ընդգրկմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համաձայնագիր պետական գնումների մասին. 15 Մեպ. 2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80573>.
2. ՀՀ Ազգային ժողով. «Գնումների մասին» ՀՀ օրենք. 25 Ապրիլ 2017, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820>. Մուտքի ամսաթիվ՝ 15.04.2022.
3. Anderson, Robert and Kodjo Ose-Lah. "Forging a More Global Procurement Market: Issues Concerning". *The WTO Regime on Government Procurement: Challenge and Reform*, Cambridge University Press, 2011, pp. 61-91.
4. "Procurement Statics: a Short Guide". *House of Commons Library*, 29 October 2021, <https://researchbriefings.files.parliament.uk/documents/CBP-9317/CBP-9317.pdf>. Accessed: 19.04.2022.
5. "Public Procurement for Innovation in OECD Countries: Issues & Risks". *Organization for Economic Co-operation and Development*, 14-15 September 2009, <https://www.oecd.org/sti/inno/43726826.pdf>. Accessed: 01.03.2022.

6. “Public Procurement Laws and Regulations France 2022”. *ICLG: Legal Guides, Business Reports and Events*, 04 February 2022, <https://iclg.com/practice-areas/public-procurement-laws-and-regulations/france>. Accessed: 20.04.2022.

7. “Public Procurement Policy”. *GOV.UK*, 8 January 2015, <https://www.gov.uk/guidance/public-sector-procurement-policy?fbclid=IwAR3sNiNp-uhUU5Plmkg5fbhf7gthtjMeK2BVuEkkwhMx20iTMO5X-Av3gxq#the-legal-framework>. Accessed: 20.04.2022.

8. “Public Procurement”. *European Commission*, https://ec.europa.eu/growth/single-market/public-procurement_en. Accessed: 19.04.2022.

9. “Public Procurement”. *Federal Ministry for Economic Affairs and Climate Action*, <https://www.bmwi.de/Redaktion/EN/Dossier/public-procurement.html>. Accessed: 15.04.2022.

WORKS CITED

1. *Hamad'zaynagir petakan gnumneri masin*. 15 Sep. 2011. [*Public Procurement Agreement*. 15 Sep. 2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80573>]. (In Armenian)

2. HH Azgayin zhoghov. «*Gnumneri masin*» HH o'renq. 25 April 2017. [RA National Assembly. “*RA Law on Procurement*”. 25 April 2017, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820>. Accessed: 15.04.2022]. (In Armenian)

3. Anderson, Robert and Kodjo Ose-Lah. “Forging a More Global Procurement Market: Issues Concerning”. *The WTO Regime on Government Procurement: Challenge and Reform*, Cambridge University Press, 2011, pp. 61-91.

4. “Procurement Statics: a Short Guide”. *House of Commons Library*, 29 October 2021, <https://researchbriefings.files.parliament.uk/documents/CBP-9317/CBP-9317.pdf>. Accessed: 19.04.2022.

5. “Public Procurement for Innovation in OECD Countries: Issues & Risks”. *Organization for Economic Co-operation and Development*, 14-15 September 2009, <https://www.oecd.org/sti/inno/43726826.pdf>. Accessed: 01.03.2022.

6. “Public Procurement Laws and Regulations France 2022”. *ICLG: Legal Guides, Business Reports and Events*, 04 February 2022, <https://iclg.com/practice-areas/public-procurement-laws-and-regulations/france>. Accessed: 20.04.2022.

7. “Public Procurement Policy”. *GOV.UK*, 8 January 2015, <https://www.gov.uk/guidance/public-sector-procurement-policy?fbclid=IwAR3sNiNp-uhUU5Plmkg5fbhf7gthtjMeK2BVuEkkwhMx20iTMO5X-Av3gxq#the-legal-framework>. Accessed: 20.04.2022.

8. “Public Procurement”. *European Commission*, https://ec.europa.eu/growth/single-market/public-procurement_en. Accessed: 19.04.2022.

9. “Public Procurement”. *Federal Ministry for Economic Affairs and Climate Action*, <https://www.bmwi.de/Redaktion/EN/Dossier/public-procurement.html>. Accessed: 15.04.2022.

OPPORTUNITIES FOR LOCATION OF INTERNATIONAL PUBLIC PROCUREMENT EXPERIENCE IN ARMENIA

LUIZA SARAFYAN

*Armenian State University of Economics, Faculty of Accounting and Audit,
Chair of Financial Accounting, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

In almost all developed and developing countries, public procurement is a powerful strategic tool for the efficient use of state budget funds, for the realization of strategic goals of the state. In developed countries, legislative features are applied that promote the economical use of state budget funds.

Therefore, the purpose of this article is to reveal the legislative peculiarities of the implementation of the public procurement process of the developed countries with advanced experience in the field of organization, implementation of public procurement process, to conduct comparative analysis for finding out the possibilities of localization of the above features in the RA.

The problem of the work is to study the best experience of a number of countries in the implementation of the public procurement process, by revealing the legislative peculiarities, to find out the most efficient, resource-saving and transparent ways of realizing public procurement in Armenia by comparing the legislative peculiarities of the above-mentioned sphere.

The work is presented by a detailed study of the legislative "by-laws" regulating the public procurement process in different countries, with an analysis of the above mentioned features.

Summing up the studies conducted in the article, it should be noted that the application of these features can contribute to the modernization of the public procurement process, the use of modern control levers in the public procurement process, efficient use of state budget funds, at the same time enabling contracting organizations organize the procurement process according to priorities and expediency.

Keywords: *Public Procurement, Republic of Armenia, Great Britain, France, Germany, EU, Organization for Economic Cooperation and Development, Legislative features.*

ВОЗМОЖНОСТИ РАЗМЕЩЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА ГОСЗАКУПОК В АРМЕНИИ

ЛУИЗА САРАФЯН

*соискатель кафедры финансового учета
факультета бухгалтерского учета и аудита
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения*

Практически во всех развитых и развивающихся странах государственные закупки являются мощным стратегическим инструментом эффективного использования средств государственного бюджета, реализации стратегических целей государства. В развитых странах применяются законодательные особенности, способствующие экономному использованию средств государственного бюджета.

Целью данной статьи является раскрытие законодательных особенностей осуществления процесса государственных закупок развитых стран с передовым опытом в области организации, осуществления процесса государственных закупок, проведение сравнительного анализа для выяснения возможностей локализация вышеперечисленных признаков в РА. Проблема, поставленная в работе, работы заключается в попытке изучения передового опыта ряда стран в осуществлении процесса государственных закупок, выявлении законодательных особенностей, выявлении наиболее эффективных, ресурсосберегающих и прозрачных способов осуществления государственных закупок в Армении. путем сопоставления законодательных особенностей указанной сферы.

Работа представлена в результате детального изучения законодательных, подзаконных актов, регулирующих процесс государственных закупок в разных странах, с анализом вышеперечисленных особенностей.

Подводя итог исследованиям, проведенным в статье, следует отметить, что учет и применение данных особенностей может способствовать модернизации процесса государственных закупок, использованию современных рычагов управления в процессе государственных закупок, эффективному использованию средств государственного бюджета, в то же время давая возможность организациям организовать процесс закупок в соответствии с приоритетами и целесообразностью.

Ключевые слова: *государственные закупки, Республика Армения, Великобритания, Франция, Германия, ЕС, Организация экономического сотрудничества и развития, особенности законодательства.*

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՉՏԴ 338.43

DOI: 10.52063/25792652-2022.2.13-207

ԼՈՒՍԻՆԵ ԾՊՆԵՑՅԱԼ

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի
ազրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tspnetsyanlusine@gmail.com

Հոդվածի նպատակն է քննել և առաջարկել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության Եուրոպան, հնարավորություններին, կատարելագործման ուղղություններին, եղանակների և գործիքների վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ առկա տեսական ու մեթոդաբանական դրույթների ուսումնասիրությամբ մոտեցումներ, ինչը հնարավորություն կտա առավել ամբողջական պատկերացում կազմելու այդ ամենի մասին:

Հոդվածի խնդիրներն են՝ գյուղատնտեսության ֆինանսական աջակցության գործիքների համեմատական վերլուծության արդյունքում հիմնավորել ոլորտի մրցունակության բարձրացման նպատակին առավելապես ծառայող գործիքները, բացահայտել վերջիններիս արդյունավետ կիրառման ուղիները, ճյուղի մրցունակության բարձրացման քաղաքականության հնարավորությունները պայմանավորող գործոնները և դրանց ընդլայնման ուղղությունները:

Հոդվածում կիրառվել են դիալեկտիկայի, գիտական վերացարկման, համեմատական վերլուծության տրամաբանական մեթոդները:

Հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

- դոտացիաների, փոխհատուցումների և սուբսիդիաների համեմատական վերլուծությունից հետևում է, որ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման նպատակին առավելապես ծառայում են սուբսիդիաները, հատկապես երբ դրանք ավելի մեծ չափով են ուղղվում ճյուղի տեխնիկական արդիականացմանը, արդյունավետության, արտադրողականության բարձրացմանը և նորարարությանը,

- սուբսիդիաների, փոխհատուցումների, դոտացիաների, հարկային, վարկային և գնային լծակների օգտագործմամբ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունները որոշվում են դրանցից յուրաքանչյուրի կիրառական նշանակությամբ, շրջանակներով, ճյուղին ֆինանսական աջակցության պահանջով, վերջինիս բավարարման համար պահանջվող ծախսերի մեծությամբ, երկրի բյուջեի հնարավորություններով, նշված լծակների արդյունավետ կիրառման խթանմանն ուղղված պետության որդեգրած քաղաքականությամբ,

* Հոդվածը ներկայացվել է 23.05.2022թ., գրախոսվել՝ 28.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

- այդ քաղաքականության հնարավորությունները կարող են ընդլայնվել նաև գյուղատնտեսական կոոպերացմամբ, արդյունաբերականացմամբ, ճյուղում կլաստերային քաղաքականության ներդրմամբ:

Հիմնաբառեր՝ գյուղատնտեսություն, մրցունակություն, քաղաքականություն, հնարավորություններ, սուբսիդիաներ, փոխհատուցումներ, դոտացիաներ, հարկեր, վարկեր, գներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում ոլորտի առջև ծառայած բազմաթիվ խնդիրների մեջ իր կարևորությամբ առաձևանում է մրցունակության բարձրացումը: Մրցունակության ապահովումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց շրջանակը ունի լայն ընդգրկում. այն ներառում է ինչպես բուն գյուղատնտեսության արտադրական գործընթացները, այնպես էլ գյուղատնտեսական ներդրանքների, ինչպես նաև պարենամթերքների արտաքին և ներքին շուկայական իրավիճակը և տարբեր ենթակառուցվածքների առկայությունն ու դրանց գործունեության կատարելության մակարդակը: Հիշատակված գործոնների շրջանակը ներառում է նաև գյուղատնտեսության ոլորտը կարգավորող իրավաօրենսդրական դաշտը և դրանց համապատասխան պետական լծակներն ու մեխանիզմները: Հետևաբար գյուղատնտեսության մրցունակության խնդրի լուծման արդյունավետ լծակներից մեկը այդ բնագավառում պետական նպատակային քաղաքականության իրականացումն է:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման խնդրի լուծումը կարևորվում է երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավման առումով: Գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը կարևորվում է նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացման և արտադրության արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Դրա հետ մեկտեղ, ոլորտի մրցունակության բարձրացման հիմնավորված մոտեցումների առաջադրումը բարդ խնդիր է և պահանջում է համակողմանի ուսումնասիրություններ:

ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման, մասնավորապես այդ բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների կատարելագործումը պահանջում է այս բնագավառում ընդգրկուն գիտական ուսումնասիրություններ և դրա հիման վրա հիմնավորված մոտեցումների առաջադրում: Վերջինս անհնար է պատկերացնել առանց գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունների, ուղղությունների, եղանակների ու գործիքների մասին լիարժեք պատկերացում կազմելու, առավել ևս, որ ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ այդ ամենի վերաբերյալ առկա մեկնաբանություններում հանդես չի բերվում համալիր մոտեցում: Այս համատեքստում արդիականություն է ձեռք բերում վերը նշված քաղաքականության հնարավորությունների, կատարելագործման ուղղությունների, եղանակների ու գործիքների պարզաբանումը:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության գործիքների արդյունավետ կիրառման մոտեցումները

Ինչպես նշվել է, գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները հանդես են գալիս մակրո, միկրո և մեզա մակարդակներում: Սույն հետազոտության հետաքրքրությունից բխող մակրոտնտեսական գործոնը վերաբերում է

կառավարության ազդարային քաղաքականությանը, որը նկատելի ազդեցություն է ունենում գյուղատնտեսության մրցունակության վրա: Թեպետ այդ քաղաքականության ազդեցության օբյեկտների շրջանակը չի սահմանափակվում միայն մրցունակությամբ, իսկ նպատակները՝ մրցունակության բարձրացմամբ, բայց և այնպես նշված քաղաքականությունը կարելի է դիտարկել տվյալ դեպքում մեզ հետաքրքրող, գյուղատնտեսության մրցունակության վրա ազդեցության, դրա բարձրացմանն ուղղված նպատակի իրականացման հնարավորությունների գնահատման համատեքստում: Այդ նպատակին ուղղվածության առումով գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականությունն ազդարային քաղաքականության դրսևորումներից է: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը փոխկապակցված է ազդարային քաղաքականության մյուս նպատակների հետ: Նպատակներից մեկի իրականացումը նպաստում է մյուսների կենսագործմանը: Մասնավորապես գյուղատնտեսության կայուն աճի ապահովումը նպաստում է տվյալ ոլորտի մրցունակության բարձրացմանը:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականությունն ունի իր առավել կոնկրետ ուղղվածությունը, նպատակները: Գյուղատնտեսության մրցունակության չափանիշներին համապատասխան այն ուղղված է գյուղատնտեսական արտադրանքի և գյուղատնտեսությունում հանդես եկող տնտեսավարող սուբյեկտների մրցունակության, դրա տեխնիկական զինվածության, ռեսուրսային ապահովվածության մակարդակի, այդ ճյուղում ռեսուրսների օգտագործման և դրա կառավարման արդյունավետության, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կողմնորոշման աստիճանի, ճյուղի ինքնաբավության և համակենտրոնացման մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսության ներդրումային և նորարարական ակտիվության, գրավչության աճին, նշված ճյուղի կայունության ապահովմանը, տնտեսության մեջ մրցակցային դիրքի ամրապնդմանը: Նկատենք, որ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականությունը թեպետ բնութագրվում է ազդեցության օբյեկտների և նպատակների հստակ շրջանակով, բայց և այնպես բովանդակում է այդ ճյուղի պետական կարգավորման և աջակցության տարրեր: Վերջիններս վերաբերում են նաև նշված կարգավորման և աջակցության, ինչպես նաև առհասարակ ազդարային քաղաքականության (գյուղատնտեսությանը վերաբերող մասով) իրականացման միջոցառումներին, մեթոդներին, լծակներին ու մեխանիզմներին, թեպետ դրանք որակապես նոր բովանդակություն են ձեռք բերում գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության պարագայում:

Նշված քաղաքականության մեջ առանձնակի դերակատարում ունի գյուղատնտեսությանը պետական աջակցությունը: Միանգամայն ընդունելի է այն, որ «Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության չափը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ երկրի տնտեսական զարգացման աստիճանով, բյուջետային հնարավորություններով, գյուղատնտեսական արտադրանքի ինքնաբավության աստիճանով, գյուղացիական տնտեսությունների չափերով և եկամտաբերությամբ, բնակլիմայական պայմաններով, հողային ու ջրային ռեսուրսների քանակով և այլն» (Կարապետյան 48):

Գյուղատնտեսության պետական աջակցության առանցքը ֆինանսականն է, որն իրականացվում է տարբեր եղանակներով. դոտացիաների, սուբսիդիաների, սուբվենցիաների տրամադրմամբ, փոխհատուցումներով, վարկավորմամբ: Ընդ որում, դոտացիաները, սուբսիդիաները, սուբվենցիաները, փոխհատուցումները և վարկերը հանդես են գալիս որպես գյուղատնտեսության ֆինանսական աջակցության գործիքներ:

Դոտացիաները պետական և տեղական բյուջեներից ֆինանսական աջակցության ցուցաբերման համար առանձնացվող դրամական միջոցներ են վնասող աշխատող ձեռնարկություններին, որոնց արտադրված արտադրանքի իրացումից ստացված դրամական հասույթը փոքր է այդ արտադրանքի արտադրության և իրացման ծախսերից (Дотация): Այլ խոսքով՝ այդ դրամական միջոցներն ուղղված են նշված հասույթի և ծախսերի միջև առկա ճեղքվածքի ծածկմանը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ձեռնարկությունների՝ վնասող աշխատելը կարող է պայմանավորված լինել իրենց գործունեության բնույթով և ոչ արդյունավետ աշխատանքով: Այս իմաստով ընդունելի է այն, որ բյուջետային դոտացիաները վճարվում են այն ծախսերի հատուցման համար, որոնք օբյեկտիվ պատճառներով չեն կարող ծածկվել ապրանքային արտադրության հիմնական գոտիներում արտադրված արտադրանքի իրացման գներով (Коваленко 93): Ընդունելի է նաև այն, որ «Ձեռնարկություններին դոտացիաների տրամադրումը թույլ է տալիս մի կողմից՝ կանխել նրանց սնանկացումը, մյուս կողմից՝ թույլ չտալ առաձին սպառողական ապրանքների ու ծառայությունների մանրածախ գների բարձրացում, քանի որ այդ ապրանքների գների մի մասը վճարվում է դոտացիաների հաշվին բյուջետային միջոցներից» (Дотация): Նշված գների բարձրացում թույլ չտրվելու առումով դոտացիաները մասամբ նպաստում են ապրանքի մրցունակության նվազումը կանխելուն: Սակայն «դոտացիաները լայնորեն տարածված են այն երկրներում, որտեղ գերակշռում է տնտեսության պետական-վարչական կառավարումը և անհամեմատ քիչ չափով է հատուկ տնտեսության շուկայական տիպին, որում ինքնաֆինանսավորման և ինքնաձախաձածական պահանջները հանդիսանում են բավականին խիստ» (Дотация): Շուկայական տնտեսության պայմաններում դոտացիաները կիրառական են հատկապես գյուղատնտեսության պարագայում: Գյուղատնտեսության բնագավառում դոտացիաներն ուղղվում են համապետական ու տարածաշրջանային տոհմային անասնաբուծության, էլիտային սերմնաբուծության, եգիպտացորենի հիբրիդային սերմնացունների, արևածաղկի և շաքարի ճակնդեղի արտադրությանը (Минаков и др. 312): Այլ խոսքով՝ դոտացիաները վերաբերում են գյուղատնտեսության առանձին ուղղություններին: Կարծում ենք, որ դոտացիայի կիրառման շրջանակները միայն վերը նշված ուղղություններով սահմանափակվել արդարացված չէ և պետք է վերաբերեն նաև այն գյուղատնտեսական արտադրանքին, որի արտադրության ծախսերը օբյեկտիվ պատճառներով չեն կարող ծածկվել դրա իրացման գներով:

Ինչպես նշվել է, գյուղատնտեսության ֆինանսական աջակցության գործիքներից են նաև փոխհատուցումները: Տնտեսագիտական գրականության մեջ փոխհատուցում են անվանում տնտեսավարող սուբյեկտի կրած ծախսերի՝ պետության կողմից փոխհատուցումը (Минаков и др. 313): Ընդ որում, փոխհատուցվում է մասնագիտացված ձեռնարկություններում փակ գրունտում բանջարեղենի աճեցման ժամանակ օգտագործվող էլեկտրաէներգիայի և վառելիքի ծախսերի, խոզաբուծական համալիրների և բրոլերային թռչնաֆաբրիկաների կողմից գնվող համակցված կերերի արժեքի մի մասը, գյուղատնտեսական ապրանքարտադրողների հանքային պարարտանյութերի և բույսերի պաշտպանության քիմիական միջոցների ձեռքբերման, նշված ապրանքարտադրողների բերքի ապահովագրության ծախսերը (Коваленко 97): Ինչպես երևում է, փոխհատուցումները վերաբերում են գյուղատնտեսությունում իրականացվող ծախսերի առանձին ուղղություններին: Այդ ուղղություններից էլեկտրաէներգիայի, վառելիքի, համակցված կերերի գնման ծախսերի հետ կապված կարծում ենք, որ փոխհատուցման ենթակա պետք է լինեն գյուղատնտեսական արտադրությանը վերաբերող էլեկտրաէներգիայի ու վառելիքի ձեռքբերման ծախսերն առհասարակ (դրանց թանկացումների պարագայում արտադրանքի ինքնարժեքի բարձրացում և դրա մրցունակության անկում թույլ չտալու նկատառումներից ելնելով),

ինչպես նաև խոզաբուծական համալիրների և բրոյլերային թռչնաֆաբրիկաների հետ մեկտեղ առհասարակ անասնաբուծական համալիրների կողմից գնվող անասնակերի արժեքի մի մասը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ և ընդունելի համարել այն, որ «Բյուջետային փոխհատուցումները պետք է վճարվեն առանձին արտադրության միջոցների արդյունավետ սպառման նվազագույն պահանջների բավարարման համար, որոնց թանկացումը չի կարող փոխհատուցվել գյուղատնտեսական արտադրանքի գների բարձրացմամբ: Այսպիսով, դոտացիաների և փոխհատուցումների օգնությամբ պետությունն աջակցում է արտադրության առանձին ռազմավարական կարևոր ուղղություններին, այդ թվում՝ ճյուղի վերարտադրական պոտենցիալն ապահովող, սոցիալական և տնտեսական նշանակություն ունեցող» (Коваленко 93): Ինչպես երևում է, գյուղատնտեսական արտադրանքի գների բարձրացում թույլ չտալու առումով փոխհատուցումները ևս մասամբ նպաստում են ապրանքի մրցունակության նվազումը կանխելուն: Այս առումով առանձնապես կարևորվում է այն, որ փոխհատուցումները չեզոքացնեն օբյեկտիվ պատճառներով (մասնավորապես՝ համապատասխան ռեսուրսների թանկացումների) տնտեսավարող սուբյեկտների արտադրության և իրացման ծախսերի աճի բացասական ազդեցությունը:

Գյուղատնտեսական արտադրողներին ֆինանսական աջակցության հարցում առանձնակի տեղ է զբաղում նրանց սուբսիդավորումը: Առանձին հեղինակների կարծիքով՝ սուբսիդիան դրամական օգնություն է, որը ծառայում է որպես ծախսերի ծածկման լրացուցիչ աղբյուր (Минаков и др. 313): Կարծում ենք, որ սուբսիդիայի նման մեկնաբանությունը մասամբ կարելի է ընդունելի համարել: Բայն այն է, որ սուբսիդիան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որպես կանոն, բյուջեից տրամադրվում է նպատակային ծախսերի բաժնային ֆինանսավորմամբ: Ինչ վերաբերում է բյուջետային սուբսիդիավորման ուղղություններին, ապա առանձին հեղինակների կարծիքով՝ «Որպես կանոն, նպատակային պետական սուբսիդիաները կարող են տրվել արտադրական շինարարության, տեխնիկայի գնման, անասնապահական շինությունների վերասարքավորման, վարկի էժանացման համար» (Коваленко 92): Ինչպես երևում է, սուբսիդիաներն առավելապես վերաբերում են գյուղատնտեսությունում իրականացվող կապիտալ ծախսերի իրականացմանը և այս առումով դրանք առավել մեծ չափով կարող են նպաստել ճյուղի մրցունակության բարձրացմանը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական նպատակային սուբսիդիաների տրամադրման ուղղությունները չեն սահմանափակվում միայն վերը նշվածներով: Գաղտնիք չէ, որ այդ սուբսիդիաները կարող են ուղղվել նաև գյուղատնտեսության զարգացմանը, դրա առանձին ճյուղերի զարգացման նպատակային ծրագրերի ֆինանսավորմանը, գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացմանը, տեխնիկական և տեխնոլոգիական արդիականացմանը, նորարարության ծավալմանը, ներդրումային գործունեության և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանմանը, գյուղատնտեսական նշանակության հողերի մելորացիայի համակարգի զարգացմանը, հատկապես ռազմավարական և կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսական մշակաբույսերով (մասնավորապես՝ հացահատիկային և կերային) զբաղեցված ցանքատարածության 1 հա-ի հաշվով հողերի պտղաբերության և որակի բարձրացմանը: Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առումով նշված ուղղություններից, մեր կածիքով, առանձնապես կարևորվում է ճյուղի տեխնիկական զինվածության մակարդակի աճին ուղղված սուբսիդավորումը:

Ինչպես երևում է, սուբսիդիաները դոտացիաների ու փոխհատուցումների համեմատությամբ աչքի են ընկնում բազմակի նշանակությամբ և պատահական չէ, որ մի շարք երկրներում դրանք պատկառելի մեծություն են կազմում ապրանքային արտադրանքի արժեքում. «ԵՄ երկրներում սուբսիդիաները հասել են ֆերմերների

կողմից արտադրված ապրանքային արտադրանքի արժեքի 45-50 %-ին, Ֆինլանդիայում և Ճապոնիայում 70 %-ի» (Гуркаева 46):

Չնայած նշանակության տարբերություններին, սուբսիդիաները, դոտացիաները և փոխհատուցումները հանդես են գալիս որպես ուղղակի պետական վճարումների դրսևորումներ: Որպեսզի դրանք իրապես ծառայեն նպատակին, անհրաժեշտ է, որ տրվեն ժամանակին, լրիվ և հասցեական՝ բյուջետային նշանակությանը և սահմանված կարգին համապատասխան: Ընդ որում, առանձին տնտեսագետների կարծիքով՝ ուղղակի պետական վճարումները սահմանվում են արտադրության անբարենպաստ պայմաններում կամ հողի 1 հա-ի կամ անասունների գլխաքանակի հաշվով (Коваленко 92): Կարծում ենք, որ նշված մոտեցումն այդքան էլ արդարացված չէ: Բանն այն է, որ հողի 1 հա-ի կամ անասունների գլխաքանակի հաշվով կատարված ծախսերը ոչ ամբողջովին կարող են վերաբերել ապրանքային արտադրանքին: Ուստի առավել ընդունելի կարելի է համարել վերը նշված վճարների սահմանումը ապրանքային արտադրանքի միավորի հաշվով: Դրա հետ մեկտեղ կարծում ենք, որ հողի 1 հա-ի կամ անասունների գլխաքանակի հաշվով պետական վճարների սահմանումն առավել ևս ընդունելի չի կարող լինել սուբսիդիաների պարագայում: Բանն այն է, որ սուբսիդիաները դոտացիաների և փոխհատուցումների համեմատությամբ աչքի են ընկնում բազմակի նշանակությամբ և սուբսիդավորման առանձին ուղղությունների (հատկապես՝ գյուղատնտեսության տեխնիկական արդիականացման) պարագայում սուբսիդիայի չափը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել սուբսիդիավորման տվյալ ուղղության հետ կապված պահանջվող ծախսերի մեծությունը:

Դոտացիաների, փոխհատուցումների և սուբսիդիաների՝ վերը նշված համեմատական նկարագրությունից պարզորոշ երևում է, որ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման նպատակին առավելապես ծառայում են սուբսիդիաները, հատկապես, երբ դրանք ավելի մեծ չափով են ուղղվում ճյուղի տեխնիկական արդիականացմանը, արդյունավետության, արտադրողականության բարձրացմանն ու նորարարությանը: Վերջիններիս հնարավորությունները մեծանում են գյուղատնտեսությունում խոշոր տնտեսությունների, գյուղացիական կոպերատիվների գերակշռության պարագայում: Այս դեպքում հարաբերականորեն նվազում է վերը նշված ուղղակի պետական վճարների, հատկապես դոտացիաների նկատմամբ պահանջը:

Գյուղատնտեսությանը սուբսիդիաների, փոխհատուցումների և դոտացիաների տրամադրումը հնարավորություն է տալիս ֆինանսական միջոցների նկատմամբ նրա պահանջը բավարարել անհատույց կարգով, սակայն ոչ ամբողջովին: Նշված միջոցների նկատմամբ պահանջի մի մասն էլ բավարարվում է վարկերի հաշվին: Միանգամայն ընդունելի է այն, որ գյուղատնտեսության մեջ դրանք ձեռք են բերում առավել մեծ նշանակություն, քան մի այլ ոլորտում. «Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ծախսերի և եկամտի ստացման միջև առաջանում է ժամկետային՝ սեզոնային խզում: Յետևաբար՝ գյուղատնտեսական ապրանքարտադրողները պետք է ունենան զգալի շրջանառու միջոցներ: Հիմնականում այս միջոցների մեծ մասը զարգացած երկրներում ձևավորվում է ի հաշիվ փոխառությունների» (Թովմասյան 25): Ընդ որում, վարկերի նկատմամբ գյուղատնտեսության պահանջները կարող են բավարարվել ինչպես առևտրային, այնպես էլ պետական բանկերի կողմից, պետության աջակցությամբ՝ երաշխիքային վարկերի տրամադրմամբ, տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմամբ: Այս իմաստով առանձնապես ուշագրավ է գյուղատնտեսության վարկավորման ԱՄՆ-ի փորձը. «ԱՄՆ-ում կարևոր նշանակություն է տրվում գյուղատնտեսության վարկավորման հարցերին և բավականին զարգացած է ագրարային ոլորտի վարկավորման բանկային համակարգը, որն ընդգրկում է գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող շուրջ 800 բանկեր, որոնց միայն 26

տոկոսն է հանդիսանում մասնավոր առևտրային, մնացած 74 տոկոսը պետական բանկեր են:

Այստեղ գյուղատնտեսական ձեռնարկությունները վարկերի միջոցով ֆինանսավորում են իրենց ընդհանուր ծախսերի 35-70 %-ը: Անշարժ գույքի գնման համար հատկացվում է վարկ՝ գործարքի մինչև 70 %-ի չափով, մեքենաների և սարքավորումների գնման դեպքում՝ 40-70» (Կարապետյան 44-45): Ինչպես երևում է, ԱՄՆ-ում գյուղատնտեսության վարկավորումն առավելապես իրականացվում է պետական բանկերի կողմից (թեպետ երկրների մեծ մասում գյուղատնտեսության վարկավորումը հիմնականում իրականացնում են առևտրային բանկերը), իսկ գյուղատնտեսական ձեռնարկությունների ընդհանուր ծախսերի առնվազն 1/3-ից ավելին ֆինանսավորվում է վարկերի հաշվին:

Վարկերը, բավարարելով ֆինանսական ռեսուրսների նկատմամբ գյուղատնտեսության պահանջը, խթանում են գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի աճին և դրա արդյունքում գևի իջեցմանն ու նշված արտադրանքի մրցունակության բարձրացմանը: Վարկերը գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների ծախսերի ֆինանսավորման միջոցով նպաստում են նաև ճյուղի տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացմանը և հետևաբար աշխատանքի արտադրողականության աճին: Սակայն վարկավորման միջոցով գյուղատնտեսության ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջի բավարարման հնարավորությունները սուբսիդիաների, դոտացիաների և փոխհատուցումների համեմատ ավելի սահմանափակ են՝ կապված հատուցելի կարգով դրա իրականացման հետ: Այս պարագայում առանձնապես կարևորվում է արտոնյալ պայմաններով (հատկապես վերը նշված երաշխիքային վարկերի տրամադրմամբ և տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմամբ) գյուղատնտեսության վարկավորման շրջանակների ընդլայնումը, ինչն իր հերթին կախված է տվյալ երկրի բյուջեի հնարավորություններից, գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող պետական բանկերի տարածվածությունից, գյուղատնտեսությանը նշված պայմաններով վարկավորելու հարցում առևտրային բանկերին պետության շահադրդումից՝ նրանց նկատմամբ հարկային արտոնությունների կիրառմամբ (հաշվի առնելով նշված բանկերի կողմից ներդրումների վարկավորման ցածր տոկոսադրույքը և դրա՝ համեմատաբար կարճ ժամանակահատվածը): Ընդ որում, վարկավորման արտոնյալ պայմանները պետք է հատկապես վերաբերեն գյուղացիական տնտեսությունների կողմից տարբեր շրջանառու միջոցների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների, նոր տեխնիկայի, անասունների գնմանը, ինչը միաժամանակ կնպաստի բուսաբուծությունում բերքատվության, անասնաբուծությունում մթերատվության աճին, գյուղատնտեսության տեխնիկական զինվածության մակարդակի և աշխատանքի արտադրողականության և, վերջին հաշվով, ճյուղի մրցունակության բարձրացմանը: Այս առումով, մեր կարծիքով, առանձնապես կարևորվում է գյուղատնտեսական նոր տեխնիկայի ձեռքբերման հարցում գյուղացիական տնտեսություններին անտոկոս ու երկարաժամկետ վարկերի տրամադրումը (իսկ սհա կարճաժամկետ վարկերի տրամադրումը նպատակահարմար է սեզոնային ծախսերի ֆինանսավորման պարագայում): Դրա հետ մեկտեղ ընդունելի է այն, որ գյուղատնտեսության վերելքի, դրա մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է ընդլայնել գյուղատնտեսական օբյեկտների վերակառուցմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և հիմնական միջոցների արդիականացմանն ուղղված ներդրումային բնույթի վարկը, նաև լայնորեն կիրառել պետության մասնակցությամբ լիզինգը (Минаков и др. 317): Վերջինիս հետ կապված՝ առանձնապես կարևորվում է լիզինգային ընկերությունների կանոնադրական կապիտալում պետական 50-60 % մասնակցությունը: Այս դեպքում պետությունը նաև լծակ կունենա մասնավոր

դեպքերում արտոնյալ տոկոսադրույքով լիզինգային պայմանագրերի կնքման համար (Թովմասյան 131):

Գյուղատնտեսության վարկավորման հնարավորությունների ընդլայնման հարցում համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք կարևորում են գյուղատնտեսական կոոպերատիվ բանկերի ստեղծման դերը և գյուղատնտեսական վարկային կոոպերացիայի լայնորեն տարածումը (Коваленко 92): Պետությունը կոչված է խթանել այդ գործընթացը՝ նշված բանկերի նկատմամբ հարկային արտոնությունների կիրառմամբ, վարկային կոոպերատիվներին երկարատև վարկավորմամբ նրանց կանոնադրական կապիտալը ձևավորելիս:

Այսպիսով՝ գյուղատնտեսության վարկավորումը լրացնում է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պակասը, նպաստում դրանցով ճյուղի ապահովվածության մակարդակի և, այս առումով ևս, նրա մրցունակության բարձրացմանը:

Ինչպես նշվել է, գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականությունը սուբսիդիաների, դոտացիաների, փոխհատուցումների և վարկի տրամադրմամբ այդ ճյուղին ֆինանսական աջակցության տարրերից բացի ներառում է կարգավորման տարրեր: Խոսքը հատկապես վերաբերում է հարկային, գնային և արդեն իսկ քննության առնված վարկային լծակներին:

Հայտնի է, որ հարկերը անուղղակի և զգալի ներգործություն են ունենում գյուղատնտեսական արտադրանքի գնի ձևավորման և մրցունակության վրա: Գյուղատնտեսությունում հանդես եկող տնտեսավարողներն ունեն որոշ առավելություններ այդ ոլորտում: Շուկայական տնտեսությամբ երկրների մեծ մասում գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ավելացված արժեքի հարկ չի գանձվում, ինչը դրականորեն է անդրադառնում նշված արտադրանքի մրցունակության վրա: Նրանք ազատված են նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված շահութահարկից, սակայն վերջինիս վճարումը պարտադիր է այլ գործուներություններից ստացված շահույթի դեպքում: Գյուղատնտեսության պարագայում հարկային արտոնությունները, մեր կարծիքով, կարող են տարածվել նաև հողի հարկի վրա: Խոսքը վերաբերում է գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավվող նոր, մշակելի հողատարածքների սեփականատերերին առաջիկա առնվազն հինգ տարիներին հողի հարկի վճարումից ազատելուն: Դա կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի ընդհանուր ծավալի աճին, գնի իջեցմանը և մրցունակության բարձրացմանը: Վերը նշված արտոնությունները գյուղատնտեսությունում հանդես եկող տնտեսավարողներին հնարավորություն են տալիս տնտեսված միջոցներն ուղղել արտադրության արդիականացմանը:

Ինչպես երևում է, հարկային լծակի կիրառմամբ պետությունը ներգործում է ոչ թե անմիջապես գյուղատնտեսության, այլ նրա արտադրանքի մրցունակության վրա: Դա վերաբերում է նաև գնին, որի ներգործությունը նշված արտադրանքի մրցունակության վրա դրսևորվում է պետության կողմից կարգավորվող գների տարբեր տեսակների կիրառմամբ: Խոսքը վերաբերում է շուկայական տնտեսությամբ երկրների գյուղատնտեսության պարագայում կիրառվող և տնտեսագիտական գրականության մեջ հայտնի գների այնպիսի տեսակներին, ինչպիսիք են՝ երաշխավորված, նպատակային, ապահովագրական, շեմային կամ պաշտպանական, սահմանային նպատակային և ֆիքսված գները: Դրանցից յուրաքանչյուրը ծառայում է կոնկրետ նպատակի (մասնավորապես՝ տնտեսավարողների համար նվազագույն շահութաբերության, ընդլայնված վերարտադրության ապահովում) և, վերջին հաշվով, այս կամ այն կերպ ազդում է գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի, դրա մրցունակության մակարդակի փոփոխության վրա: Գյուղատնտեսական արտադրանքի գների կարգավորման հետ մեկտեղ պետությունը, մեր կարծիքով, պետք է իրականացնի գյուղատնտեսությանը մատակարարվող որոշակի նյութական ռեսուրսների (հատկապես՝ թունաքիմիկատների, պարարտանյութերի,

գյուղատնտեսական տեխնիկայի) գների և գյուղատնտեսությանը տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման սակագների կարգավորում, դրանց վերին սահմանի ֆիքսմամբ (մենաշնորհների կողմից առաջարկի պարագայում) կամ այդ ամենի գնման հարցում տնտեսավարողներին ֆինանսական աջակցություն՝ ծախսերի մասնակի փոխհատուցմամբ՝ տվյալ երկրի բյուջեի հնարավորություններին համապատասխան: Նման մոտեցումը, վերջին հաշվով, կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի և գնի իջեցմանը, մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի կիրառման և գյուղատնտեսությանը տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման շրջանակների ընդլայնմանը, ճյուղի տեխնիկական զինվածության, աշխատանքի արտադրողականության և նրա մրցունակության աճին:

Այսպիսով՝ սուբսիդիաների, փոխհատուցումների, դոտացիաների, հարկային, վարկային ու գնային լծակների օգտագործմամբ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունները, վերջին հաշվով, որոշվում են դրանցից յուրաքանչյուրի կիրառական նշանակությամբ, շրջանակներով, նշված ճյուղին ֆինանսական աջակցության պահանջով, վերջինիս բավարարման համար պահանջվող ծախսերի մեծությամբ, տվյալ երկրի բյուջեի հնարավորություններով, նշված լծակների լայնորեն և արդյունավետ կիրառման խթանմանն ուղղված՝ պետության որդեգրած քաղաքականությամբ:

Վերը նշված լծակները՝ հատկապես սուբսիդիաներն ու վարկերը, կիրառվում են նաև գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, որոնք ևս հանդես են գալիս որպես ճյուղի մրցունակության բարձրացման պետական քաղաքականության կարևորագույն գործիք: Ավելին՝ այդ ծրագրերը որոշում են գյուղատնտեսության պետական աջակցության և դրա շրջանակներում ճյուղի մրցունակության բարձրացմանն ուղղված լծակները նաև երկարաժամկետ կտրվածքով, բովանդակում են կոնկրետ հիմնախնդիրների լուծմանն ուղղված բազմաբնույթ միջոցառումներ՝ ռեսուրսների, կատարողների և կատարման ժամկետների հստակ մատնանշմամբ: Նշված ծրագրերը սովորաբար մշակվում են գյուղատնտեսության պետական աջակցության և դրա շրջանակներում մրցունակության բարձրացման առանձին ուղղությունների կտրվածքով, կոնկրետ հիմնախնդիրների լուծման նպատակով: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդպիսի ծրագրերի թիվը, պետական բյուջետային միջոցների անբավարարության հետ կապված, մեծ չէ: Բյուջետային ռեսուրսների դեֆիցիտի պայմաններում դրանց մի մասը ֆինանսավորվում է նաև բանկային վարկերի, օտարերկրյա ներդրումների, կազմակերպությունների, ձեռնարկատիրական կառուցվածքների միջոցների հաշվին և այլն:

Մեր հանրապետությունում ևս մշակվել և իրականացվում են գյուղատնտեսության պետական աջակցության և դրա շրջանակներում ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության», «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության», «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագրերը, «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիրը», «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձևական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության արտադրության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձևական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության արտադրության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձևական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը»:

տակի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը» (Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն): Մասնավորապես՝ առանձին ծրագրերի նպատակի և դրանից բխող գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հնարավորությունների մասին ակնառու պատկերացում կարելի է կազմել 1-ին աղյուսակից:

Աղյուսակ 1: ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերը, դրանց նպատակն ու մրցունակության բարձրացման հնարավորությունները

ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերը	Ծրագրերի նպատակը	Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հնարավորությունները
1	2	3
Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման	Տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսավարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը:	Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների կարողությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը կնպաստեն ոլորտի արդյունավետության և արդյունքում մրցունակության բարձրացմանը:
ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության	Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը:	Գյուղատնտեսության տեխնիկական զինվածության մակարդակի աճը կնպաստի ոլորտի արդյունավետության և արդյունքում մրցունակության բարձրացմանը:
Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության	Պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրանքի արտադրության ծավալները, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:	Ջերմատնային տնտեսությունների մակերեսի ու արտադրանքի արտադրության ծավալների ավելացումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը, արտադրված արտադրանքի մրցունակության բարձրացումը:
1	2	3
Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության	Ծախսերի մասնակի փոխհատուցման և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները:	Կենդանիների պահվածքի պայմանների բարելավումը, արդյունքում՝ նրանց մթերատվության ցուցանիշների բարելավումը կնպաստեն անասնաբուծության մրցունակության բարձրացմանը:
ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության	Բուսաբուծության ճյուղում տնտեսավարողների համար ապահովել բավարար պայմաններ, մասնավորապես՝ հողօգտագործողներին հնարավորություն ստեղծել գնաճի աննախադեպ պայմաններում շուկայական գներից ավելի ցածր գներով պարարտանյութեր ձեռքբերել:	Բուսաբուծական արտադրանքի ինքնարժեքի իջեցման արդյունքում մրցունակության բարձրացումը:

<p>Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր</p>	<p>Հստակեցնել գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմները և իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման ուղղված քաղաքականություն:</p>	<p>Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի նվազումը, արյունքում կորուստների փոխհատուցման հնարավորությունների ստեղծումը կնպաստեն ճյուղի մրցունակության բարձրացմանը:</p>
<p>ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր</p>	<p>Անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման համար կատարվող ներդրումների մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել ճյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:</p>	<p>ՀՀ անասնաբուծության ճյուղում ներդրումների ավելացումը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, տեղական արտադրության աճը, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացումը կնպաստեն ճյուղի մրցունակության բարձրացմանը:</p>
<p>1</p>	<p>2</p>	<p>3</p>
<p>ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների</p>	<p>Խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնուներ և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, ավելացնել մրցունակ խաղողի, պտղի և հատապտղի արտադրության և արտահանման ծավալները, խթանել ոչ ավանդական բարձր արժեք ապահովող մշակաբույսերի արտադրությունը և այլն:</p>	<p>Ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնուներ և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, ոչ ավանդական բարձր արժեք ապահովող մշակաբույսերի արտադրության աճը կնպաստեն բուսաբուծական արտադրանքի մրցունակության բարձրացմանը:</p>
<p>ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ.</p>	<p>ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով տոհմային ԽԵԿ-ի մատակարարմամբ բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել ինքնարժեքը:</p>	<p>ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով տոհմային կենդանիների մատակարարման արդյունքում տեղական կենդանիների մթերատվության բարելավումը կնպաստի այդ ճյուղի արտադրանքի արդյունավետության մրցունակության բարձրացմանը:</p>
<p>Գյուղատնտեսական հունքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման</p>	<p>Հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հունք մթերողներին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:</p>	<p>Գյուղատնտեսական հունքի մթերման հնարավորությունների ընդլայնումը կնպաստի դրա իրացման աճին և մրցունակության բարձրացմանը:</p>

Կարծում ենք, որ վերը նշված ծրագրերը կարող են ծառայել նպատակին՝ ժամանակին իրականացման, ընթացքի պատշաճ վերահսկման, գյուղացիական տնտեսություններին ծրագրերում սահմանված կարգով ընդգրկման, վճարունակ և անվճարունակ գյուղացիական տնտեսությունների նկատմամբ տարբերակված գնային քաղաքականության և վճարման կարգի կիրառման պարագայում: Իսկ առհասարակ գյուղատնտեսության պետական աջակցության և դրա շրջանակներում ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերից ակնկալվող արդյունքների հետ կապված ընդունելի է այն մտացումը, որով կարևորվում է վարկի ցածր տոկոսադրույքը, դրա գումարի ու տոկոսադրույքի սուբսիդավորման մասնաբաժնի հարաբերականորեն մեծ լինելը:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունների ընդլայնման ուղիները

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունները կարող են ընդլայնվել բազմափառ տնտեսավարողների սեփականության ներքո գտնվող մանր հողակտորների խոշորացման, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և լայնորեն տարածման պարագայում՝ հաշվի առնելով մանրերի նկատմամբ խոշոր տնտեսությունների անկնհայտ մրցակցային առավելությունները՝ հատկապես տեխնիկական զինվածության և աշխատանքի արտադրողականության մակարդակի առումով (ինչն անդրադառնում է գյուղատնտեսության մրցունակության վրա): Սակայն գյուղատնտեսական կոոպերատիվների տարածման ճանապարհին ի հայտ են գալիս մի շարք խոչընդոտներ՝ կապված գյուղացիական տնտեսությունների միավորման և իրավաբանական անձ դառնալու արդյունքում նոր հարկման դաշտ մուտք գործելու՝ գյուղացիների ցանկության բացակայության, կոոպերատիվի անդամների միջև փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման բարդությունների, կոոպերատիվների կազմակերպման սկզբնական փուլում տնտեսական բազա ստեղծելու համար զգալի պետական միջոցներ (մասնավորապես՝ սուբսիդիաների և արտոնյալ վարկերի տրամադրմամբ) հատկացնելու անհրաժեշտության հետ (Կարապետյան 104-105): Այս պարագայում պետությունը կոչված է խթանելու հողերի խոշորացման, գյուղատնտեսական կոոպերատիվների՝ լայնորեն տարածման գործընթացը համապատասխան օրենսդրական, տնտեսական, կազմակերպական, տեխնիկական և աջակցության միջոցառումների իրականացմամբ, տարբեր տնտեսական լծակների՝ հատկապես հարկային ու վարկային լծակների կիրառմամբ: Այս առումով հատկանշական է Մերձավոր Արևելքի երկրների Նորաստեղծ կոոպերատիվներին անվճար տեխնիկա և երկարաժամկետ անտոկոս վարկեր տրամադրելու փորձը (Կարապետյան 49):

Ինչ վերաբերում է մեր հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման խոչընդոտների յուրահատկությանը, ապա որպես այդպիսին՝ ընդունելի կարելի է համարել անհատական գյուղացիական տնտեսությունների հողերի ցրվածությունը (Կարապետյան 105): Սակայն վերջինիս հաղթահարման առաջարկվող ուղին՝ կոոպերատիվի մեջ մտնողի և չմտնողի միջև հողերի փոխանակության վերաբերյալ ոչ միանշանակ կարելի է ընդունելի համարել՝ կողմերի՝ գործնականում փոխադարձ համաձայնության գալու հարցում նրանցից մեկի շահագրգռվածության հնարավոր բացակայության առումով: Սա ևս վկայում է այն մասին, որ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը էվոլյուցիոն գործընթաց է: Այս առումով ընդունելի ենք համարում այն մոտեցումը, ըստ որի՝ անհրաժեշտ է սկզբնական շրջանում կոոպերատիվները կազմակերպել առանձին ենթաօլորտների շրջանակներում (մասնակարարում, իրացում, վերամշակում, բաժանման աշխատանքներ, տեխնիկայի ու գործիքների օգտագործում և այլն), որոնք ցատկահարթակ կդառնան գյուղատնտեսության լիարժեք կոոպերացման ճանապարհին (Կարապետյան 105):

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության նոր հնարավորություններ ի հայտ կգան այդ ճյուղի արդյունաբերականացման պարագայում: Ոլորտի արդյունաբերականացմանը միտված քայլերի ձեռնարկումը գյուղատնտեսության մրցունակության բարձրացման կարևոր ուղղություններից է: Ընդհանուր առմամբ արդյունաբերականացման քայլերը հանգեցնում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, վերջինս էլ հանդիսանում է արդյունաբերականացման մակարդակը բնորոշող ցուցանիշներից մեկը: Այսինքն՝ արտադրողականության ավելացման միջոցները հանդիսանում են արդյունաբերականացման մակարդակի բարձրացման բաղադրիչներ:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության արդյունաբերականացման միջոցները բազմազան են, սակայն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ դրանցից հիմնականներին:

Այսպիսով՝ գյուղատնտեսության արդյունաբերականացման առանցքային ուղղություններից մեկը պետք է լինի գուղատնտեսության՝ արդիական տեխնիկական միջոցներով համալրումը, գյուղատնտեսության ճյուղերում արդիական տեխնոլոգիաների ներդրումը:

Հաշվի առնելով գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակության ներկայիս մակարդակը, գյուղացիական տնտեսությունների տեխնիկական զինվածությունն իրատեսական է ապահովել տեխնիկական հագեցվածության տարբեր ծրագրերով, որոնք ներառում են տնտեսավարողների համար մատչելի մեխանիզմներ:

Արդյունաբերականացմանը միտված կարևոր քայլերից է պետություն-մասնավոր հատված համագործակցության պետական աջակցության ծրագրերի իրականացումը, որոնց հիմնական մասը ներառում է արդիական տեխնոլոգիաների ներդրումը և արդյունաբերականացման մակարդակի բարձրացումը, սակայն դրանցում ներառվող մեխանիզմները հատկապես աջակցության տարրերի մասով վերանայման անհրաժեշտություն ունեն:

Գյուղատնտեսությունում արդյունաբերականացմանն ուղղված քայլերից է տնտեսավարողների ֆինանսական ապահովվածության ընդլայնումը, վերջինս հնարավոր է համարվում նպատակային տեխնիկայի և տեխնոլոգիաների արդիականացմանն ուղղված մատչելի, երկարաժամկետ վարկերի տրամադրմամբ:

Ոլորտի արդյունաբերականացման ուղղություններից է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողատեսքերի տարածքների ընդլայնումը և անասնազիսաքանակի ավելացումը:

Այսպիսով՝ վերը նշված ուղղություններով պետական քաղաքականության կատարելագործումն ու բարելավումը կնպաստի ոլորտի արդյունաբերականացմանը, որը ճյուղի մրցունակության բարձրացման կարևոր երաշխիքներից և միջոցներից է:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության հնարավորությունների ընդլայնումը կապված է նաև կլաստերների հետ: Դիտարկումները ցույց են տալիս, որ ագրոպարենային ոլորտում, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում մրցունակության բարձրացման մոտեցումներից մեկը կարող է լինել այս բնագավառում կլաստերային քաղաքականության ներդրումը: Վերջինս մեր հանրապետության համար հնարավոր է համարվում այս բնագավառում համապատասխան պետական քաղաքականության մշակման և ներդրման միջոցով:

Ըստ Մայքլ Պորտերի՝ «Կլաստերը դա փոխկապակցված կազմակերպությունների և հաստատությունների տեղաբաշխումն է մեկ աշխարհագրական վայրում, առանձին տարածաշրջանի կտրվածքով» (Acayn 110):

Այսպես՝ մեկ վարչատարածքային միավորի շրջանակներում գյուղատնտեսական արտադրական միավորների, սպասարկող և մատակարարող սուբյեկտների, խորհրդատվական, տեղեկատվական և կրթական օղակների, իրացման գործառույթ ունեցող կառույցների փոխկապակցված՝ միասնական, համաձայնեցված գործունեությունը հանգեցնում է գյուղատնտեսական արտադրանքի՝ արտադրողից մինչև սպառումը շղթայի օղակների արդյունավետ գործունեությանը, որի արդյունքում ապահովվում է գյուղատնտեսական արտադրանքի բարձր որակ, արտադրության ծավալների ավելացում և ամենակարևորը՝ միավոր արտադրանքի հաշվով նվազագույն կյուրա-դրամական ծախսեր: Վերջինս դրական է անդրադառնում գյուղատնտեսական արտադրանքի և ոլորտի մրցունակության վրա: Գյուղատնտեսությունում կլաստերային քաղաքականության հնարավորությունների նախընտրելի ուղղություններին սույն

հողվածում չենք անդրադարձել՝ այն չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով, առավել ևս, որ դրանք առանձին քննարկման առարկա են:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունների օգտագործման տեսակետից կարևոր նշանակություն կարող է ունենալ ագրարային ոլորտի գիտական նվաճումների առևտրայնացման խնդիրների լուծումը, որը առանձնապես կարևոր է համարվում գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմաբուծության, տոհմային անասնաբուծության, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի, անասնաբուժության, տնտեսավարման ձևերի կատարելագործման (կոոպերացիայի, կլաստների ներդրում) և այլ կարևոր ուղղությունների համար: Գիտական նվաճումների առևտրայնացման խնդիրների լուծումն առավել իրատեսական է համարվում այս բնագավառում համապատասխան պետական քաղաքականության իրականացման և անմիջական միջամտության ձևով:

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունները իրավականորեն ծագում և իրացվում են համապատասխան օրենսդրական դաշտի հիման վրա: Այլ խոսքով՝ այդ հնարավորությունները կախված են ամենից առաջ այն բանից, թե տվյալ երկրի օրենսդրական դաշտը որքանով է նպաստավոր նշված քաղաքականության իրականացման համար: Այս առումով առանձնապես կարևոր է, որ օրենսդրությունը հստակ սահմանի այդ քաղաքականության իրականացման իրավական հիմքերն ու մեխանիզմները, ինչպես նաև ամրագրի դրա համար անհրաժեշտ նպաստավոր պայմաններ: Մասնավորապես բացակայում են մի շարք հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմքերը. այսպես՝ դեռևս գույություն չունի գյուղատնտեսության և գյուղի մասին օրենքը, որը գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների կարգավիճակի իրավական հստակեցման հետ մեկտեղ կկանոնակարգեր գյուղատնտեսության բնագավառի այլ մի շարք կարևոր հարաբերություններ, մասնավորապես՝ գյուղատնտեսության աջակցության, մրցունակության բարձրացման պետական քաղաքականության քայլերն ու մոտեցումները: Օրենսդրական կարգավորման առումով լուծում չի ստացել նաև գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների հաշվառման և հաշվետվողականության հարաբերությունները և այլն:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության վերաբերյալ առկա մեկնաբանություններում շեշտը դրվում է դրա առանձին կողմերի, բնութագրիչների վրա, ինչը թույլ է տալիս այս կամ այն տեսանկյունից մեկնաբանել այդ քաղաքականությունը, գնահատել վերջինիս հնարավորությունները: Մինչդեռ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության հնարավորությունների, կատարելագործման ուղղությունների, եղանակների ու գործիքների մասին լիարժեք պատկերացում կարելի է կազմել դրանց մեկնաբանության հարցում համալիր մոտեցում ցուցաբերելու դեպքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան, Արսեն. *Ագրարային քաղաքականության իրականացման տնտեսական լծակների կատարելագործման մի քանի հիմնահարցեր Հայաստանի Հանրապետությունում*. Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2007:

2. Կարապետյան, Լիլիթ. *Պետական կարգավորման տնտեսական լծակների կատարելագործման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում*. Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2012:

3. Асаул, Анатолий. *Организация предпринимательской деятельности*. Учебник. Санкт-Петербург, 2005.
4. Гугкаева, Софья. *Государственная поддержка как основа повышения конкурентоспособности сельскохозяйственных предприятий (на материалах Республики Северная Осетия-Алания)*. Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук, Владикавказ, 2016.
5. Коваленко, Николай, и Юрий Агирбов. *Экономика сельского хозяйства: учебник для студентов высших учебных заведений и др.*. Москва, 2004.
6. Минаков, Иван, и др.. *Экономика отраслей АПК*. Под ред. И. А. Минакова, Москва, 2004.
7. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն. <http://www.mineconomy.am>:
8. «Дотация». *Википедия* — свободная энциклопедия, <https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%BE%D1%82%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F>.

WORKS CITED

1. Asaul, Anatolij. *Organizacija predprinimatel'skoj dejatel'nosti*. Uchebник. Sankt-Peterburg. [*Organization of Entrepreneurial Activity*. Textbook. St. Petersburg] 2005. (In Russian)
2. Gugkaeva, Sofia. *Gosudarstvennaja podderzhka kak osnova povyshenija konkurentosposobnosti sel'skohozjajstvennyh predpriyatij (na materialah Respubliki Severnaja Osetija-Alanija)*. Dissertacija na soiskanie uchenoj stepeni kandidata jekonomicheskikh nauk, Vladikavkaz. [*State Support as a Basis for Increasing The Competitiveness Of Agricultural Enterprises (based on the materials of the Republic of North Ossetia-Alania)*. Thesis for the degree of candidate of economic sciences, Vladikavkaz] 2016. (In Russian)
3. Karapetyan, Lilit. *Petakan kargavorman tntesakan lts'akneri katarelagorts'man ughinery' HH agrarayan volortum. t'eknats'uakan atenakhosut'yun*, Erevan. [*Ways to Improve the Economic Levers of State Regulation in the RA Agrarian Sphere*. PhD dissertation, Yerevan] 2012. (In Armenian)
4. Kovalenko, Nikolay, i Yuri Agirbov. *Jekonomika sel'skogo hozjajstva: uchebник dlja studentov vysshih uchebnyh zavedenij i dr.*. Moskva. [*Economics of Agriculture: a Textbook for Students of Higher Educational Institutions and Others*. Moscow] 2004. (In Russian)
5. Minakov, Ivan, i dr.. *Jekonomika otraslej APK*. Pod red. I. A. Minakova, Moskva. [*Economics of Branches of the Agro-industrial Complex*. Ed. I. A. Minakova, Moscow] 2004. (In Russian)
6. Tovmasyan, Arsen. *Agrarayan qaghaqakanut'yan irakanatsman tntesakan lts'akneri katarelagorts'man mi qani himnahartser Hayastani Hanrapetut'yunum. t'eknats'uakan atenakhosut'yun*, Erevan. [*Some Issues of Improving the Economic Levers for the ilmplementation of Agrarian Policy in the Republic of Armenia*. PhD dissertation, Yerevan] 2007. (In Armenian)
7. “Dotacija”. *Vikipedija* — svobodnaja jenciklopedija. [“Subsidy”. *Wikipedia – The free encyclopedia*, <https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%BE%D1%82%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F>]. (In Russian)
8. *Hayastani Hanrapetut'yan e'konomikayi naxararut'yun*. [*Ministry of Economy of the Republic of Armenia*. <http://www.mineconomy.am>]. (In Armenian)

OPPORTUNITIES FOR IMPROVING THE STATE POLICY OF INCREASING THE COMPETITIVENESS OF AGRICULTURE

LUSINE TSPNETSYAN

*National Agrarian University of Armenia,
Department "Agribusiness Management and Politics", Ph.D.Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to study and propose approaches with the study of theoretical and methodological provisions of the economic literature on the essence, possibilities, directions, methods and tools of the policy of increasing the competitiveness of agriculture, which will make it possible to get a more complete picture of all this.

The purpose of the article is to study and propose approaches, taking into account the theoretical and methodological provisions in the economic literature on the essence, opportunities, directions, methods and tools of the policy to increase the competitiveness of agriculture, which will provide an opportunity to get a more complete picture of all this.

The article used logical methods of dialectics, scientific abstraction, comparative analysis:

As a result of the study, the following main conclusions were drawn:

- a comparative analysis of subventions, compensations and subsidies states that subsidies serve the most to increase the competitiveness of agriculture, especially when they are more focused on the technical modernization of the industry, increasing efficiency, productivity and innovation,
- the possibilities of the state policy of increasing the competitiveness of agriculture using subventions, compensations, subsidies, tax, credit and price levers are determined by the applied value of each of them, the circles, the requirement of financial support for the industry, the amount of expenses necessary to meet it, the budgetary capabilities of the country, the state policy aimed at stimulating the effective use of these levers,
- the possibilities of this policy can also be expanded by agricultural cooperation, industrialization, and the introduction of cluster policy in the industry.

Keywords: *agriculture, competitiveness, policy, opportunities, subsidies, compensation, subventions, taxes, loans, prices.*

ВОЗМОЖНОСТИ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ ПО ПОВЫШЕНИЮ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

ЛУСИНЕ ЦПНЕЦЯН

*соискатель кафедры «Управление Агробизнесом и политика»
Национального аграрного университета Армении,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является на основе изучения теоретико-методологических положений, представленных в литературе по экономике, рассмотреть и предложить подходы относительно содержания, возможностей, инструментов и путей совершенствования политики повышения конкурентоспособности сельского хозяйства, что позволит дать более полную картину описанных факторов.

Задачи статьи заключаются в том, чтобы в результате сравнительного анализа средств финансовой поддержки сельского хозяйства обосновать инструменты, служащие цели повышения конкурентоспособности отрасли, выявить пути их эффективного применения, факторы, определяющие возможности политики повышения конкурентоспособности отрасли и пути их расширения.

В статье использованы диалектический метод, метод, научной абстракции и логического и сравнительного анализа.

В результате исследования были сделаны следующие выводы:

– из сравнительного анализа дотаций, компенсаций и субсидий следует, что цели повышения конкурентоспособности сельского хозяйства в большей степени служат субсидии, особенно если они направлены в большей степени на техническое перевооружение отрасли, повышение эффективности, производительности и использование инноваций;

– возможности государственной политики повышения конкурентоспособности сельского хозяйства с использованием субсидий, компенсаций, дотаций, налоговых, кредитных и ценовых рычагов определяются практическим значением каждого из этих инструментов, их границами, требованиями финансовой поддержки отрасли, величиной необходимых расходов, бюджетными возможностями страны, политикой государства, направленной на стимулирование эффективного применения указанных рычагов;

– возможности этой политики могут быть расширены за счет сельскохозяйственной кооперации, индустриализации, внедрения кластерной политики в различные отрасли сельского хозяйства.

Ключевые слова: *сельское хозяйство, конкурентоспособность, политика, возможности, субсидии, компенсации, дотации, налоги, кредиты, цены.*

A CONFORMER BASED AUTOMATED SPEECH RECOGNITION FOR ARMENIAN LANGUAGE*

UDC 004.85 + 004.522

DOI: 10.52063/25792652-2022.2.13-224

DAVIT KARAMYAN

Russian-Armenian University,
Faculty of Informatics and Computer Engineering,
Department of Mathematical Modeling,
Computational Methods and Software Complexes, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia
davitkar98@gmail.com

TIGRAN KARAMYAN

Yerevan State University,
Faculty of Economics and Management
Department of Mathematical Modeling in Economics,
Lecturer, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia
t.qaramyan@ysu.am

The article is aimed to represent Armenian automated speech recognition model and its applications in different fields of economy. Because of the lack of Armenian speech corpora, in this article we fine-tuned the voice recognition and text symbol generating parts using a Conformer pre-trained model and a compact Armenian language model.

The article focuses the attention of readers on the problem of recognizing human speech and transforming it to a text, especially for non-mainstream languages.

The paper is prepared with scientific abstraction and a combined analysis of many recent implementations of the discussed approach. The sources' credibility, relevance and authenticity have been confirmed by their extensive research.

As to conclude, though it is pretty challenging to develop ASR model for non-mainstream languages, it was proven that the employment of Conformer-based transformers in conjunction with language models is effective for Armenian speech recognition. It was also proven that the technique employed in this article is applicable for other languages too, with some adjustments.

Keywords: *automated speech recognition, conformer, language model, n-grams, transformers, word error rate, transfer learning, NeMo.*

Introduction. For more than 60 years, researchers have been working on automated speech recognition (ASR). During this period a lot of industrial products have been made that employed ASR and they were extremely helpful and prevalent for users. ASR makes machine turn the speech signal to the corresponding text or command after identifying and processing the voice signal. This process includes the extraction and

* Հոդվածը ներկայացվել է 25.05.2022թ., գրախոսվել՝ 22.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
արվեստի ինստիտուտի ասպիրանտ,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս,
Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս,
p. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ruza_mik@yahoo.com

Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծելու և ներկայացնելու պատմական արժեք ունեցող դիտադահլիճային շինության՝ «Նաիրի» կինոթատրոնի՝ տարբեր ժամանակաշրջանների ինտերիեր դիզայնը: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև Նաիրի կինոթատրոնի ստեղծման պամոլոգիանը և առաջին շենքի ինտերիերի մանրամասներին:

Աշխատանքի խնդիրն է նկարագրել և վերլուծել կինոթատրոնի ինտերիեր դիզայնի առանձնահատկությունները՝ անդրադառնալով հատակագծային, ոճային, գոտևորման, միջավայրի հորինվածքային լուծումներին ու խնդիրներին:

Հոդվածում կիրառված են նկարագրական և վերլուծական մեթոդները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ «Նաիրի» կինոթատրոնը, բացի մշակութային կարևոր օջախ հանդիսանալուց, մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև որպես դիտադահլիճային պատմական շենք, հատկապես այն առումով, որ ժամանակի ընթացքում ձևափոխվելու հետ զուգահեռ չի կորցրել իր դեմքը և նշանակությունը:

Որոշ փոփոխություններով հանդերձ՝ կինոթատրոնում պահպանվել է իր նախնական տեսքը մասնակիորեն չկորցրած և Երևանում հազվադեպ հանդիպող բեմ ունեցող դիտադահլիճը, որի գեղազարդմանն ու ոճավորմանն առանձին անդրադարձ է կատարվել հոդվածի շրջանակներում: Ուսումնասիրության ընթացքում հնարավորություն ստեղծվեց դիտարկել և ուսումնասիրել նաև տևական ժամանակ սովորական հանդիսատեսի համար փակված օվալաձև ճեմասրահը, որի ոճային լուծումները կարելի է համարել ազգային նեոդասականության փայլուն օրինակ:

Հիմնաբառեր՝ «Նաիրի» կինոթատրոն, դիտադահլիճ, ինտերիեր դիզայն, հատակագիծ, կտրվածք, նեոդասականություն, ոճ:

Նախաբան

Կինոյի դերը հատկապես կարևորվում էր Խորհրդային Միությունում, քանի որ դա քաղաքական քարոզչության նշանակալից գործիքներից մեկն էր, այդ իսկ պատճառով կինոթատրոնների շուտափույթ կառուցումը հատկապես առաջին տասնամյակի տարիներին առաջնահերթ նշանակություն ուներ կառավարության համար: 1922թ.-ի մայիսին ՀՍԽՍՀ ժողովուրդի որոշմամբ պետականացվում են «Ապոլլո» և Ալեքսանդրապոլի «Էրատո» կինոթատրոնները. վերջիններս

* Հոդվածը ներկայացվել է 14.05.2022թ., գրախոսվել՝ 24.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

վերանվանվում են՝ ստանալով «Պրովետար» և «Շիրակ» անվանումները, որից հետո սկսվում են այլ շենքերի փնտրտուքներ՝ կինոթատրոն բացելու նպատակով:

«Նաիրի»-ն Խորհրդային Հայաստանում բացված 2-րդ կինոթատրոնն էր՝ Արծվյան փողոցում կառուցված ամառային փայտաշեն կինոթատրոնից հետո: Դեռևս հնարավորություն չունենալով կառուցել ձմեռային առանձին կինոթատրոնի շենք՝ «Պետլուսկինո»-ն, որը պատասխանատու էր Խորհրդային Հայաստանում կինոյի զարգացման համար, գտնում է համապատասխան շինություն՝ այնտեղ կինոթատրոն բացելու նպատակով: Հետագայում Գևորգ Թամանյանի նախագծով իրականացված Մաշտոց և Իսահակյան փողոցների խաչմերուկում գտնվող Էլեկտրոլամպի գործարանի աշխատողների համար նախատեսված բնակելի շենքի ճակատային հատվածը հատկացվում է կինոթատրոնին, որտեղ էլ առ այսօր գտնվում է «Նաիրի» կինոթատրոնը:

Կինոթատրոնի առաջին շենքը

Շենքը գտնվում էր Ամիրյան փողոցի վրա և ծառայում էր որպես ավետարանական եկեղեցու աղոթարան: Ավետարանական եկեղեցու առաջնորդը չի համաձայնվում շենքը հանձնել՝ հրաժարվելով տեղափոխվել ուրիշ վայր: Վերջինիս անդրդվելիությունը ի վերջո հանգեցնում է նրան, որ «Պետլուսկինո»-ի ներկայացուցիչը բառիս բուն իմաստով դուրս է հանում աղոթարանի կահույքը, և հոգևորականը ստիպված համաձայնվում է տեղափոխվել: Դրանից հետո ձեռնամուխ են լինում տարածքը կինոթատրոնի վերածելու գործընթացին:

Հատակագիծ և գոտևորում: Շինության առաջին հարկում տեղակայված էին արհեստանոցներ և «Դրուժբա» անունը կրող հրուշակեղենի խանութը: Երկրորդ հարկը, որտեղ նախատեսված էր տեղակայել կինոդահլիճը, իրենից ներկայացնում էր նեղ ուղղանկյուն դահլիճ: Առաջին հերթին դահլիճի մի մասը ներկվում է կանաչ գույնով, որը ծառայում էր որպես ճեմասրահ: Դահլիճի մի պատին կառուցվում են օթյակները և կինոխցիկը, տեղադրվում է Էկրանը: 1924թ.-ին «Կոմունալ» բանկից ձեռք բերված վարկով կինոթատրոնի մակերեսը ընդարձակվում է հրուշակեղենի խանութի երկրորդ հարկի մի մասի հաշվին, նորոգվում է տանիքը, հետագայում ձեռք է բերվում նաև առաջին հարկի տարածքը, որը այնուհետև պետք է դառնար «Պիոներ» կինոթատրոնի անդրանիկ շենքը: «Պիոներ» կինոթատրոնի մի մասը տրամադրվում է «Նաիրի» կինոթատրոնին՝ որպես ճեմասրահ: Այս շենքում «Նաիրին» գործեց մինչև 1950թ.-ը:

«Նաիրի» կինոթատրոնի ներկայիս շենքը: Հանրապետության հրապարակի կառուցման աշխատանքներով պայմանավորված՝ 1950թ.-ի մայիսին Ամիրյան փողոցի վրա գտնվող այս փոքրիկ շենքը քանդվեց: 1954թ.-ին «Նաիրի» կինոթատրոնը տեղափոխվեց (Նախկինում՝ Ստալինյան և Մռավյան) Մաշտոցի և Իսահակյան փողոցների անկյունի նորակառույց շենքը: «Նաիրի»-ն ներկառուցված կինոթատրոնի ամենահաջող օրինակն է Հայաստանում:

Հատակագիծ և գոտևորում: Ի տարբերություն շինության արտաքին տեսքի՝ կինոթատրոնի ինտերիերը բազմիցս փոփոխվել է: Դրա հետ մեկտեղ փոփոխության է ենթարկվել նաև կինոթատրոնի հատակագիծը: Կինոթատրոնը բաղկացած է 3 հարկից, որի ընդհանուր տեսքը իրենից ներկայացնում է լատիներեն v- տառի ձև ունեցող ծավալ, որին սիմետրիկ կերպով միանում է աստիճանավանդակային մասը: Կինոթատրոն տասնող մուտքերը երեքն են. կենտրոնական և երկու կողային մուտքերը: Նախկինում առաջին հարկում էր գտնվում դրամարկղը և օվալաձև ճերմակ ճեմասրահը, որի երկու կողմերից հանդիսատեսը աստիճաններով բարձրանում էր երկրորդ հարկ, որտեղ գտնվում էին առաջին և երկրորդ դահլիճները: Երրորդ հարկում տեղադրված էր ադմինիստրատիվ գոտին: 1985թ.-ին «Նաիրի» կինոթատրոնը վերահատակագծվում է: Դրա արդյունքում դրսում գտնվող տոմսարկղը, որը բավականին խնդրահարույց էր, քանի որ առիթ էր դառնում դրսում

հերթերի կուտակման համար, բերվում է ներս: Տոմսարկղի համար հատկացվում է մեծ ընդարձակ հատված մուտքի մասում: Պատուհաններից մեկը նախատեսված էր տոմսերի նախնական վաճառքի համար: Բացի այդ, «Նաիրի» կինոթատրոնը ուներ նաև տոմսերի առաքման ծառայություն: Ձևափոխվում են նաև ճեմասրահները, որտեղ տեղադրվում են Էկրաններ՝ «Բուլմերանգ» կոչվող փոքր մանրապատումների դիտման համար: Նկուղային հատվածը վերածվում է կինոբարի, որը նույնպես ուներ Էկրան: Բացի այդ, ձեռք են բերվում կիսանկուղային կից բնակարանները՝ դրանք կինոդահլիճների վերածելու նպատակով: Այստեղ կառուցվում է 70 տեղանոց դահլիճ, որը նախատեսված էր մանկական ու մասնագիտական ֆիլմերի ռետրոսպեկտիվ ցուցադրման համար: 1997թ.-ին կինոթատրոնում դարձյալ իրականացվեցին վերանորոգման աշխատանքներ. տեղադրվեցին նստարաններ, Էկրան, ավելացավ «Սինեմա» բարը: Ի վերջո, ներկայիս վերջնական տեսքը կինոթատրոնը ստացավ 2011թ.-ին: Ներկայումս առաջին հարկի կենտրոնական մուտքը, ինչպես նաև օվալաձև ճեմասրահը փակ են: Հանդիսատեսը կինոթատրոն կարող է մտնել միայն կողային մուտքերից: Գործող կինոթատրոնի առաջին հարկը այլևս չունի տոմսարկղ, այն տեղափոխվել է երկրորդ հարկ: Առաջին հարկը ունի բավականին փոքրացված նախասրահ: Առաջին հարկում ճեմասրահին կից նախատեսված են փոքր անկյունային սենյակներ՝ ադմինիստրատիվ աշխատանքների համար: Կինոթատրոնի ակտիվ գոտին այժմ գտնվում է երկրորդ հարկում: Այստեղ է կենտրոնացված տոմսարկղը, փոքր ճեմասրահը, որի դիմաց գտնվում է կինոդահլիճը: Երրորդ հարկի գործառույթը մնացել է անփոփոխ: Ըստ այժմյան գոտևորման՝ կինոթատրոնն ըստ էության զուրկ է ճեմասրահից ու սպասարանից: Եթե նախկինում առաջին հարկի ճեմասրահը կարող էր տեղավորել մի ողջ նվազախումբ՝ իր բեմով, ապա այսօր հանդիսատեսի հոսքի խնդիրն անգամ դժվար է կազմակերպել: Երկրորդ հարկի պայմանական ճեմասրահը բավարարում է միայն տոմսակրի դիմաց հերթ կանգնողներին, այդ իսկ պատճառով սեանսից 15-20 րոպե առաջ տոմսակրի մոտ և նույն հարկում գտնվող դահլիճի հարևանությամբ առաջանում են մարդկային կուտակումներ:

Կինոդահլիճ: Նախկինում կինոթատրոնը ուներ երկու հիմնական դահլիճ՝ մեծ և փոքր, որոնց, ինչպես նշվեց վերևում, հետագայում միացան մանկական դահլիճը և ռետրոսպեկտիվ ցուցադրության համար դահլիճը: Փոքր դահլիճը գտնվում է առաջին և երկրորդ հարկերի միջև, մեծը՝ երկրորդ հարկում՝ սպասարկելով մոտ 400 հանդիսատեսի: Այս բոլոր դահլիճներից այսօր գործում է միայն մեծ դահլիճը: Փոքր դահլիճը չի գործում: Ինչ վերաբերվում է մեծ դահլիճին, ապա այստեղ պահպանվել են երբեմնի շքեղ դահլիճի բեկորները՝ դասական օրդերի առաստաղը, մոնումենտալ քիվը և եզրագարդը, բարդ կտրվածք ունեցող օթյակը:

Կինոդահլիճի հատակագիծ: Կինոդահլիճը իրենից ներկայացնում է սեղանաձև ծավալ՝ երկու կողային մուտքերով ու էլեքտրով, որոնք իրար են կապում կինոթատրոնի հյուսիսասային ու հարավային մասերը: Բեմի ու դահլիճի միջև առկա է թատերական դահլիճներին բնորոշ բավականին խորը նախաբեմ:

Կտրվածք: Դահլիճը ունի բավականին զգալի թեքություն, որը շեշտվում է պարտերի միջև գտնվող թեքահարթակներով: Կինոդահլիճի վերին մակերեսը զբաղեցնում է նրբագեղ օթյակը, որի մուտքը գտնվում է կինոթատրոնի չորրորդ հարկում: Օթյակը ունի բարդ ծավալային լուծում, որով էլ տրամադրություն և դինամիկա է հաղորդում ողջ դահլիճին:

Առաստաղ: Հատուկ ուշադրության է արժանի առաստաղը: Ի տարբերություն կինոդահլիճի մնացյալ տարրերի՝ առաստաղը մնացել է անփոփոխ կինոթատրոնի ստեղծման օրվանից: Իր շքեղությամբ այն չի զիջում Թամանյանի կողմից կատարված Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճի առաստաղային լուծումներին: Կինոթատրոնի ողջ դահլիճի առանցքն է

կազմում հսկա կենտրոնում տեղադրված ար դեկո ոճի ջահը, որը ներդաշնակվում է առաստաղի ընդհանուր հորինվածքի հետ:

Դասավորությունը և մանրամասները: Սեղանաձև դահլիճի առանցքը կազմում են լայնադեղ Էկրանը, խորը բեմը և նախաբեմային մասը, վերջինները թույլ են տալիս նաև այս բեմում թատերական ներկայացումներ բեմականացնել: Բեմի երկու կողմերում տեղակայված մուտքերը միմյանց նկատմամբ զուգահեռ չեն տեղադրված: Դրանցից առաջինը գտնվում է բեմի անմիջական հարևանությամբ, իսկ մյուսը սկսվում է պարտերի կեսից: Նույն սեղանաձև սկզբունքով են դասավորված դահլիճի պարտերը: Նստարանների շարքը միասնական է՝ առանց ուղղահայաց բաժանումների: Որպես առանձին և բնութագրական ինտերիերի տարր՝ կարելի է նշել դահլիճի հսկա ջահը, որը միակն է, որ պահպանվել է սկզբնական ինտերիերից: Նրա ողջ ծավալը և ձևերը ամբողջականորեն կարելի է տեսնել ամֆիթատրոնի օթյակների հատվածից: Ջահը եռաշար կառուցվածք ունի, որի մեջտեղի հատվածը կրկնում է լոտոսի գլխամասը: Երբ ջահը չի լուսավորվում, նրա միջին մասում երևում է նուրբ վարդագույն պլաստիկ կաղապարը, որի թափանցիկությունը նրբագեղ տեսք է հաղորդում ընդհանուր հորինվածքին:

Գունային լուծումները: Կինոթատրոնի գունային լուծումները համարձակ են. հատկապես դահլիճում պարտերի մուգ կարմիր թավշյա նրբախաղերը ինքնատիպ հակադրություն են կազմում մանուշակագույն հագեցված երանգին՝ ստեղծելով ար դեկո ոճի՝ արևմտյան կինոթատրոններին բնորոշ բարդ ձևերի և գույների միաձուլում: Սպիտակ առաստաղը կոտրում է մուգ և տաք երանգների խաղը, սակայն ընդհանուր գունային տպավորությունը դրանից չի նվազում: Սպիտակ առաստաղի քիվը և զարդաքանդակները ստեղծում են հավելյալ լուսաստվերային խաղեր, որոնք էլ ավելի հանդիսավորություն են հաղորդում տպավորիչ ինտերիերին:

Ֆակտուրային լուծումները: Կինոթատրոնի երրորդ հարկում պահպանել է 1950թ.-ի երբեմնի շքեղ ինտերիերը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել նյութի ընտրությանը և ֆակտուրային լուծումներին: Երրորդ հարկի սյունասարահը երեսապատված է մոխրագույն ու սպիտակ մարմարով, իսկ հաստաբուն սյուները սլացիկ տեսք են հաղորդում ընդհանուր միջավայրին: Ցավոք, ճամսարահը և աստիճանավանդակը չեն պահպանվել նախկին տեսքով: Այստեղ արդեն կիրառվել են շուկայում տարածված ու հասանելի նյութեր, որոնց տպավորությունը կարելի է նկարագրել «չեզոք» բառով: Խոսելով դահլիճի մասին՝ այստեղ հատկապես շեշտվել է թավշյա նյութերի կիրառումը, որը ավելի բնորոշ է համերգային դահլիճին, քան կինոթատրոնին:

Կոմպոզիցիան և ոճը: Ընդհանուր առմամբ, դահլիճի ոճային լուծումները ավելի մոտ են դասական թատերական դահլիճի տիպին կամ ար դեկո ոճի՝ 1920-30-ական թվականների կինոթատրոնի ինտերիերներին: Երրորդ հարկի ճեմասարահը պահպանել է իր նախնական հարդարանքը՝ երեսապատված մարմարներով ու գրանիտով, հաստ կիսասյուներով: Կինոթատրոնի արտաքին ու ներքին լուծումները և ծավալատարածական հորիվածքը հարում են թամասյանական նեոդասական ոճին:

Ակուստիկա և լուսավորություն: Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս լիարժեքորեն լուծել դահլիճի թե՛ տեսանելիության և թե՛ լսելիության հարցը՝ հատկապես նման փոքր դահլիճի պարագայում: Բացի այդ, դահլիճի հատակաձևը ևս օժանդակում է ճիշտ դիտելիության և լսելիության օրինաչափություններին:

Օվալաձև ճեմասարահ: 2022թ.-ին Հայկական «Գլոբինգ» ընկերությունը վարձակալության իրավունքով ձեռք բերեց «Նաիրի» կինոթատրոնի նախկին օվալաձև ճեմասարահը, որը այժմ ծառայում է որպես արտերկրից ներմուծված ապրանքների ստացման կետ: Չնայած ինտերիերի կահույքի փոփոխմանը՝ ինտերիերի հիմնական հարդարանքը պահպանվել է: Աչքի են ընկնում հատկապես հոնիական օրդերի կաթնագույն ու ճերմակ մարմարից կերտված կեղծ որմնասյուները,

որոնց նրբագեղ խոյակները, գրեթե չկրկնելով մեկը մյուսին, դիսամիկ բազմազանություն են ստեղծում դիտողի համար:

Եզրակացություն

Տվյալ հոդվածի շրջանակներում կատարված հետազոտությունը թույլ է տալիս պարզաբանել «Նաիրի» կինոթատրոնի ինտերիեր դիզայնի առանձնահատկությունները և մանրամասները՝ արձանագրելով մի շարք ոճային ուղղությունների միաձուլումը կամ համատեղումը մի շինության մեջ, ինչպես նաև նրա պատմական նշանակությունը՝ որպես դիտադահլիճային շինության կարևոր օրինակ՝ վեր հանելով հետաքրքրական մանրամասեր հայտնի կինոթատրոնի ստեղծման ու կայացման վերաբերյալ: Ցավոք, այսօր «Նաիրի» կինոթատրոնը, որը երկար տարիներ մի քանի սերունդների համար եղել է կինոաշխարհի մեծագույն նվաճումների հաղորդակցվելու ավանդական վայր, այսօր փակ է հանդիսատեսի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դզնունի, Դանիել: Ուրվագիծ հայկական կինեմատոգրաֆիայի պատմության. ՅՍՍՐ կուլտուրայի մինիստրության հրատ., Երևան, 1961:
2. Ջուլիակյան, Սանդրո. «Հրավիրում է Նաիրի կինոթատրոնը». Էկրան, № 9, Սեպտեմբեր 1984, էջ 12:
3. Խեչումյան, Վիգեն. «Մի շատ հին կինոկադր». Էկրան, № 5, Մայիս 1973, էջ 10-11:
4. Министерство культуры СССР. Кинематография Армении. издательство Восточной литературы, Москва, 1962:
5. Դալիչյան, Նարինե: ««Նաիրի» կինոթատրոնում ֆիլմերի ցուցադրությունը դադարեցվել է. ի՞նչն է պատճառը». հոկտեմբերի 8: 2021, Youtube, վերբեռնել է Factor TV,
6. https://www.youtube.com/watch?v=rMK0UZ_J9oc. Հասանելի է 01.05.2022:

WORKS CITED

1. Dznuni, Daniel. *Urvagic' haykakan kinematografiayi patmut'yan*. Erevan. [Outline of the History of Armenian Cinematography. Yerevan] 1961. (In Armenian)
2. Julhakyanyan, Sandro. *Hravirum e' Nairi kinot'atrony'*. Ekran № 9, September 1984, p. 12. [Invites to Nairi Cinema. Screen № 9, September 1984, p. 12.] (In Armenian)
3. Khechumyan, Vigen. *Mi shat hin kinokadr*. Ekran № 5, May 1973, pp.10-11 [A very old film. Screen № 5,] May 1973, pp.10-11 (In Armenian)
4. Ministerstvo kul'tury SSSR. *Kinematografija Armenii*, izdate'stvo Vostochnoj literatury, Moskva, 1962. [Ministry of Culture of the USSR. *Cinematography of Armenia*, publishing house of Eastern literature ,Moscow,1962.] (In Russian)
5. Jalichyan, Narine. ««Nairi» kinot'atronum filmeri tsutsadrut'yuny' dadaretsvel e'. Ի՞նչն է պատճառը». *Youtube*, verber'nel e' Factor TV, hoktemberi 8, 2021. [Jalichyan, Narine. The Screening of Films in "Nairi" Cinema has been Stopped. What is the Reason?". *Youtube*, uploaded by Factor TV, 8 October, 2021,
6. https://www.youtube.com/watch?v=rMK0UZ_J9oc. Accessed: 01.05.2022].

THE INTERIOR DESIGN OF THE NAIRI CINEMA

RUZANNA MIKAYELYAN

National Academy of Sciences of Armenia Institute of Arts, Ph.D. Student; State Academy of Arts of Armenia, Polytechnic University of Armenia, Lecturer, Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to analyze and present the interior design of the Nairi cinema, a historical spectacular building type of importance for different periods and times. The article also presents the history of the creation of the "Nairi" cinema and the details of the interior of the first building.

The task of the work is to describe and analyze the features of the interior design of the cinema, regarding the layout, style, zoning, inventive solutions and environmental problems.

The research was done with the use of descriptive and analytical methods.

As a result of the study, it can be stated that the Nairi cinema, in addition to being a culturally significant center, is of great interest as a historical building of a spectacular type, especially in the sense that it has not lost its face and significance over time.

Apart from some changes, the cinema hall has been partially preserved, with a stage, which is a rarity for Yerevan, the style and decoration of which are discussed separately in the article. Also, as part of the study, it became possible to study the oval foyer of the cinema, which was closed to the audience for a long time, and its stylistic solutions can be considered a vivid example of national neoclassicism.

Keywords: *Nairi, cinema, auditorium, interior design, plan, section, neoclassicism, style.*

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «НАИРИ»

РУЗАННА МИКАЕЛЯН

аспирант Института Искусств

Национальной академии наук Республики Армения., преподаватель

Государственной академии художеств Армении и Национального

политехнического университета Армении

г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – проанализировать и представить дизайн интерьеров кинотеатра «Наири», исторического здания зрелищного типа, имеющего важное значение, для разных исторических периодов. В статье также говорится об истории создания кинотеатра «Наири» и деталях интерьера его первого здания.

Задача работы – описать и проанализировать особенности оформления интерьера кинотеатра, в том числе планировки, стиля, зонирования, а также изобретательских решений.

В статье использованы описательно-аналитические методы.

В результате исследования можно констатировать, что кинотеатр «Наири», являясь культурно значимым центром, представляет большой интерес и как историческое здание зрелищного типа, не утратившего со временем своего исторического облика.

За исключением некоторых изменений, в кинотеатре частично сохранился зрительный кинозал со сценой, и сцена, редких для ереванских зданий, стилистика и отделка которого, отдельно обсуждается в статье. Также в рамках исследования изучается овальное фойе кинотеатра, которое долгое время было закрыто для зрителей: его стилистические решения можно считать ярким образцом национального неоклассицизма.

Ключевые слова: *кинотеатр «Наири», зрительный зал, дизайн интерьера, план, разрез, неоклассика, стиль.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՐԻ ԱՄԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

**ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԿԱՐՄԻՐ ԶՐՈՍՏԱՆԻ» ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ
 ՓՈՐՁԵՐԸ (1988-1992)***

ՀՏԴ 93/94

DOI: 10.52063/25792652-2022.2.13-248

ՍԱԹԵՆԻԿ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
 իրանագիտության ամբիոնի մագիստրոս,
 ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
tarverdiansatenik@gmail.com

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել 1988-1992թթ. ընկած ժամանակահատվածում այսպես կոչված «Կարմիր Զրոստանի» վերականգման փորձերը: Սա Հայաստանի ու Արցախի համար ուսումնասիրման արժանի մի թեմա է, քանզի խոսքը գնում է Արցախի տարածքում Բերձոր կենտրոնով 1992թ.-ին քրդական ինքնավարություն հռչակելու մասին: Հոդվածում ներկայացված են Հարավային Կովկասում ԽՍՀՄ քուրդ գործիչների կողմից իրականացված միջոցառումները, որոնք ուղղված էին քրդական ինքնավարության հռչակմանը: Շարադրված է նաև հայերեն թարգմանությամբ «Կարմիր Զրոստանի» անկախության հռչակագրի տեքստը մասնակիորեն:

Հոդվածում ուշադրության է արժանացել «Կարմիր Զրոստանի» նախապատմությունը ևս. 1923-1929թթ.-ին ստեղծված Զրոստան երկրամասի վերաբերյալ առկա են պատմական փաստեր:

Աշխատանքում որոշակիորեն ներկայացված են զուգահեռաբար տեղի ունեցող իրադարձությունները Արցախում ու Ադրբեջանում:

Խնդիր է դրվել ներկայացնել քրդական ինքնավարության հաստատմանը միտված գործողությունները, դրանց նպաստող գործոններն ու հետևանքները:

Թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները շատ չեն, ուստի մենք գերազանցապես փորձել ենք տեղեկություններ հավաքել իրադարձություններին մասնակցած անձանցից: Նյութի հիմնական աղբյուր են հանդիսացել Ալեքսան Հակոբյանի հիշողությունները և «Յակբուն» քրդական համամիութենական ասոցիացիայի փոխնախագահ Վաքիլ Մուստաֆանի «Կովկասյան Զրոստանի պատմություն» գիրքը: Հոդվածում տեղ են գտել նաև եզրի շեյխ Բրո Հասանյանի հիշողությունները Արցախյան առաջին պատերազմի տարիներից:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են դեպքերի ակննատեսի և մասնակցի վկայությունները, հիշողությունները, պատմա-համեմատական և վերլուծական մեթոդները:

* Հոդվածը ներկայացվել է 15.06.2022թ., գրախոսվել՝ 29.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Ուսումնասիրությունը կատարելիս հանգել ենք այն եզրակացությանը, որ չնայած քրդական ինքնավարություն չհաստատվեց Արցախի տարածքում, սակայն այն առիթ դարձավ Ադրբեջանի կողմից հայ-քրդական հարաբերությունների մասին նարատիվների ստեղծման:

Հիմնաբառեր՝ «Կարմիր Զրդստան», Արցախյան առաջին պատերազմ, Զրդական ազատագրական շարժում, Զրդական համամիութենական ասոցիացիա՝ «Յակբուն», Բերձոր (Լաչին), Յայաստան, Ադրբեջան, ԽՍՀՄ:

Նախաբան

Քրդական պետության մասին պատկերացումները, դարձել են մեր տարածաշրջանի ամենաքննարկվող թեմաներից մեկը: Չնայած երբևէ քրդական անկախ պետություն գոյություն չի ունեցել և պետականություն չի ձևավորվել, սակայն պատմական զարգացումներին զուգահեռ՝ քրդական որոշ միավորներ են կազմավորվել, որոնք երկար չեն գոյատևել: Այս համատեքստում են տեղավորվում այսպես կոչված «Կարմիր Զրդստանը» և Մահաբադի Յանրապետությունը: Այս թեմայի շրջանակներում կուսումնասիրենք «Կարմիր Զրդստանի» վերականգնման փորձերի շրջանը 20-րդ դարի վերջին տասնամյակի սկզբին, սակայն մինչ դրան անդրադառնալը ուսումնասիրենք նախապատմությունը:

1923թ.–ին ստեղծված այսպես կոչված «Կարմիր Զրդստանը»¹ «փոխեց քրդերի կարգավիճակը» Լեռնային Ղարաբադի մի հատվածում: 1923թ.–ի հուլիսի 16-ին Ադրբեջանի ԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի հրամանով դրվեց Զրդստան երկրամասի (Курдистанский уезд) կարճատև գոյության հիմքը: Այն միտված էր խորհրդային իշխանությունների կողմից քրդերի հետ կապված որոշ հարցեր կարգավորելուն՝ խորհրդային միությունում քրդական տարածքներում խորանալու նպատակներից² մինչև Յայաստանի ու Ադրբեջանի միջև տարածքային վեճերի կարգավորում երրորդ տարրի գոյությամբ, այս դեպքում քրդերի:

Այսպես կոչված «Կարմիր Զրդստանը»³ (քրդ. Kurdistana sor, ադրբ. Qızıl Kürdüstan) ներառում էր Զեյրաջարի¹ (Զարվաճառ), Լաչինի (Բերձոր), Կուբաթլիի (Որոտան) և Զաբրայիլի (Զրական) շրջանները (Yilmaz 802)²:

¹ Դա այն տարածքն էր, որտեղ 19-րդ դարի ռուս-պարսկական երկու (1804-1813թթ. և 1826-1828թթ.) պատերազմներից վերջինի արդյունքներով կնքված Թուրքմենչայի պայմանագրի 5-րդ կետով Իրանում բնակվող քրդերը հնարավորություն ստացան անցնել Արաքսը և հաստատվել Մեխակավան (Զրական)–Կովսական (Զաբրայիլ–Կուբաթլի) գոտում և տարածվել դեպի հյուսիս՝ մինչև Զարվաճառ (Аверьянов):

² Դա այն ժամանակաշրջանն էր, երբ խորհրդային Միության՝ քրդաբնակ ամբողջ տարածքներում հետագա տարածման խորքային ծրագիր էր իրականացվում: ԽՍՀՄ իշխանությունները նպատակ ունեին պահելու ազգային փոքրամասնությունների ինքնությունը, լեզուն, որն առավել մեծ հեղինակություն կբերեր ԽՍՀՄ-ին: Սա նկատելի է նաև քրդերի պարագայում, քանզի, ինչպես օրինակ Թուրքիայում քրդերը ունեին ինքնության պահպանման խնդիր, այնպես և մյուս հարևան երկրների համար ԽՍՀՄ քրդերի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը կարող էր դրական օրինակ հանդիսանալ (Yilmaz 800-801): Բացի այդ, խորհրդային Միության վերնախավը սովետական հանրապետությունների ներքում զարգացնում էր նաև ազգային փոքրամասնությունների կրթական մակարդակը՝ որոշակի հանգամանքներից ելնելով (Yilmaz 806): Սրանով ենթադրվում է, որ Կրեմլի իշխանությունները կանխում էին ադրբեջանացման գործընթացը և քրդերին հնարավորությունների որոշակի շրջանակ տրամադրելով՝ պահում էին իրենց վերահսկողությունը ԱխՍՀ-ի վրա:

³ Զրդստան երկրամասը կազմված էր վեց դայրաներից (քաղաքի վարչ. շրջան)՝ Ղարաղլաղի (Բերդաձորի), Զեյրաջարի (Զարվաճառ), Կուբաթլիի (Որոտան), Կոթուրլիի, Զյուրդ-Յաջիի և Մուրադխանլիի (Յակարի): Լաչին ավանը դարձավ Գավառի կենտրոն: 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Զրդստան գավառի բնակչությունը կազմում էր 51,2 հազ. մարդ, որից քուրդ էր 37470-ը (73,1%), թյուրք՝ 13520-ը (26,3%), հայ՝ 256-ը (0,5%)

1929թ.–ի ապրիլի 8-ին Խորհուրդների VI համաաղբրեջանական համագումարի որոշմամբ այն լուծարվեց: Դա կապված էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից գավառների փոխարեն օկրուգներ ստեղծելու որոշման հետ: Աղբրեջանական ԽՍՀ-ում գոյություն ունեցող 13 գավառների փոխարեն կազմավորվեցին 8 օկրուգներ: Բայց այդ օկրուգների թվում Քրդստանը չկար: Դրա տարածքը ներառված էր վերակազմավորված Ղարաբաղի օկրուգի մեջ, որն ընդգրկում էր նաև Չանգեյանի

(«Всесоюзная перепись населения, 1926 г.»): Բոլոր դայրաներում, բացի Կուբաթլիից, քրդերը բացարձակ մեծամասնություն էին կազմում. Ղարաղշաղում՝ 99,7%, Քելբաջարում՝ 99,8%, Կոթուրլիում՝ 99,9%, Զյուրդ-Յաջիում՝ 98,6%, Մուրադխանլիում՝ 98,2%: Կուբաթլիի դայրայում բնակչության մեծամասնությունը թյուրք էր՝ 98,9%: Յայերը բնակչության թվով երկրորդն էին Կուբաթլիի (1%) և Մուրադխանլիի (1,6%) դայրաներում (Բաբայան 84): Սակայն, չենք կարող չնշել, որ վերոնշյալ տարածքներում քրդերի և թյուրքերի թվաքանակը պայմանավորված էր ժամանակի ընթացքում հարևան տերությունների կողմից հայերին այդ տարածքներից հանելու և քրդերին վերաբնակեցնելու պատճառով, և նախորդող դարերում այստեղ հայերը մեծամասնություն էին կազմում:

Պարսկական ու թուրքական իշխանությունների կողմից վարած քաղաքականության հետևանքով տեղի էր ունենում հայ բնակչության որոշ զանգվածների շրջանում մահմեդականության ընդունում և ուժացում: Ամբողջ Յայաստանում բռնագաղթված հայ բնակչության տեղում 16-19-րդ դդ. հաստատվում էին իրանալեզու (քրդական), թյուրքալեզու, նախո-դաղստանյան և մահմեդական այլ էթնիկ տարրեր, այս ամենին գումարվում էր 19-րդ դարի առաջին երեսնամյակում ռուս-պարսկական, ռուս-թուրքական և թուրք-պարսկական պատերազմների ընթացքում բնակչության մշտական տեղաշարժերը: Դրա արդյունքում Արարատյան դաշտում հայերի թվաքանակը ռուս-պարսկական երկրորդ պատերազմի նախօրյակին նվազեց մինչև շուրջ 16 հազար: Այս հանգամանքն Աղբրեջանը որպես առիթ օգտագործում է՝ ներկայիս ՅՅ տարածքն իրեն վերագրելու: Աղբրեջանում չեն ներկայացնում 16-18-րդ դդ. Յայաստանից հայ բնակչության բազմաթիվ բռնագաղթերը, չեն նշում այն հանգամանքը, որ ոչ միայն Բագրատունյաց Յայաստանում, այլև նույնիսկ 16-րդ դ. առաջին կեսին հայերը կազմում էին բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Միայն 16-17-րդ դդ. (հատկապես՝ շահ Աբաս առաջինի կազմակերպած մեծ գաղթի պատճառով) Արարատյան դաշտն զգալիորեն դատարկվեց իր բնիկ էթնիկական տարրի մեծամասնությունից: Իսկ Արցախի մասին Աղբրեջանի նման շահարկություններն ընդհանրապես անսիման են, քանզի 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբին Արցախի բնակչության թվի և էթնիկական կազմի վերաբերյալ Ռուսական կայսրության ռազմական զեկուցագրերի համաձայն հայերն այստեղ նույնիսկ ավելին էին, քան Արևելյան Յայաստանի մնացյալ շրջաններում: Ըստ Ռուսաստանի՝ Այսրկովկասում անցկացրած վիճակագրության՝ 1798 թ. Ղարաբաղի խանությունում 110 հազար հայ ընտանիք էր բնակվում: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախում հայկական մեկ ընտանիքում նույնիսկ 20-րդ դարի սկզբին միջինը մոտավորապես 5,5 մարդ է հաշվվել, ապա 1798 թ. խանությունում ավելի քան 600 հազ. հայ է բնակվել: Այդ ժամանակ Ղարաբաղի խանության կազմի մեջ էին մտնում նաև ստվար հայ բնակչությամբ Չանգեզուրը, Ուտիքի մի մասն ու ընդհուպ մինչև Կուրի և Արաքսի միախառնման կետը ձգվող տարածքը (Մալխասյան 72-73):

Ըստ Մ.Մալխասյանի Ղարաբաղի խանության (այն Արցախի տարածքից 3 անգամ մեծ տարածք էր) ավելի քան 600 հազ. հայ բնակչությունից Արցախում բնակվում էր շուրջ 350-400 հազարը:

¹ Յայկական անվանումը՝ Զարվաճառ: 1989թ.-ին Շահումյանի շրջանը և նրա կազմում Գետաշենի եկթաշրջանը միավորվել են ԼՂԻՄ-ի հետ, և 1991թ.-ի սեպ. 2-ին հռչակվել է ԼՂՀ-ի: Սակայն 1991թ.-ին Շահումյանի անկումից հետո շրջանը Աղբրեջանի հսկողության տակ է հայտնվել: «ԼՂՀ վարչատարածքային կառուցվածքի մասին» ԼՂՀ օրենքի (26.06.1998) համաձայն՝ 1993թ.-ին ազատագրված Քելբաջար (Զարվաճառ) և Շահումյանի շրջանների հիմքի վրա կազմավորվել է Շահումյանի շրջանը: 1995-1998թթ. շրջանի կենտրոն է եղել Ակնաբերդ գյուղը, 1998թ.-ից՝ Զարվաճառը («Յայաստան» հանրագիտարան 1038):

² Ավելի մանրամասն տես՝ Букчапан 10-11:

(Կովսական), Ջաբրայիլի (Ջրական), Ֆիզուլիի (Վարանդա), Աղոսի (Ակնա) նախկին շրջանները, ինչպես և Աղջեբեդիի և Ժղանովի շրջանների մի մասը¹:

1930թ.–ի մայիսի 25-ին այնուհանդերձ հրապարակվեց Աղբրեջանի ԽՍՀ ԿԳԿ որոշումը Զրդստանի, այս անգամ՝ օկրուգի կազմավորման մասին²: Օկրուգի կենտրոնը կրկին Լաչին ավանն էր, սակայն Զրդստան գավառի համեմատ՝ օկրուգը տարածքով ավելի մեծ էր և ներառում էր նաև Չանգեվանի ամբողջ շրջանն ու Ջաբրայիլի շրջանի մի մասը:

Զրդստանի օկրուգը, սակայն, ևս երկար չգոյատևեց, քանզի 1930թ.–ի հուլիսի 23-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ԿԳԿ համատեղ որոշմամբ օկրուգները, որպես վարչական միավորներ, լուծարվեցին: Օգոստոսի 8-ին ընդունվեց շրջաններ կազմավորելու որոշումը: Չնայած Զրդստանի օկրուգը վերացվեց, սակայն դրա փոխարեն Զրդստանի շրջան չձևավորվեց:

Հիմնական հրամայականն այստեղ Հայաստանի ու Ղարաբաղի միջև էթնիկական անջրպետի ստեղծումն էր և խնդիր էր դրված հայերից վերջնականապես «մաքրել» Լեռնային Ղարաբաղի արևմտյան լեռնային շրջանները: Դեռևս Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1920թթ.) տարիներին իշխող մուսավաթական վարչակարգը քրդերին որպես վճռորոշ տարր օգտագործում էր առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի դեմ պայքարում: 1918-1920թթ.–ին վերջնականապես հայերին այդ տարածքներից³ մաքրելու համար 1918թ.–ին ձևավորված Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետությունը սկսեց օգտագործել քրդերին⁴:

Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև մշտապես մտածված էթնիկ տարանջատումը ձևավորելուց հետո արդեն սկսեցին չեզոքացնել նաև քրդական տարրը: Աղբրեջանի իշխանություններն ամեն կերպ նպաստում էին «Կարմիր Զրդստանի» թյուրքացմանը⁵, որի համար արվում էր ամեն հնարավոր գործողություն⁶,

¹ Չի բացառվում նաև աղբրեջանական իշխանությունների կողմից այդ քայլին գնալու պայմանավորված լինել օկրուգի՝ ԼՂԽՄ-ին միացնելու ծրագրերի հետ, որը հնարավորություն էր կտար ստեղծելու առավելապես թյուրքական վարչատարածքային միավոր (Բաբայան 84):

² Աղբրեջանի ԽՍՀ ԿԳԿ-ն մտադիր էր Ղարաբաղի օկրուգի տարածքում Ջաբրայիլ կենտրոնով Արաքսի օկրուգ կազմավորել՝ միավորելով Կարյազինոյի, Չանգեվանի, Կուբաթլիի և Լաչինի շրջանները: Այս նախագիծը լուրջ առարկություններ առաջացրեց, քանի որ դրա իրագործմամբ ծայրամասային Զելբաջարի և Կոթուրլիի շրջանները կտրվում էին օկրուգի կենտրոնից՝ կորցնելով նույնիսկ տարածքային ուղղակի կապը նրա հետ (Բաբայան 85):

³ 1918թ. Ակերա գետի ավազանում, որը մտավ «Կարմիր Զրդստանի» կազմի մեջ, ընդամենը մի քանի հայկական բնակավայրեր էին մնացել, որոնցից ամենամեծը Հակ (Մինքենդ, 811 հայ), Ալդուլի, Հարար գյուղերն էին (Բաբայան 88): Սրանք բոլոր նախկին դարերում եղել են ամբողջապես հայաբնակ:

⁴ Աղբրեջանական ԽՍՀ-ում խնդիր էր դրվել համայն աշխարհին ներկայացնել, թե հայերն ու քրդերը սոցիալ-տնտեսական խնդիր ունեն: Նախ ազատվելով հայերից՝ աստիճանաբար կանհետանար նաև քրդական խնդիրը: Քրդերին հետագայում չեզոքացնելու ավելի հեշտ կլիներ, քանզի նրանք շիա մուսուլմաններ էին, ըստ որի՝ ավելի հեշտ կձուլվեին:

Քրդերին ստիպում էին հրաժարվել իրենց լեզվից, ազգային պատկանելությունից: Նրանց նաև ուղարկում էին Բաքու ուսում ստանալու, որով ավելի հեշտ կլիներ ազգային գաղափարները թուլացնել (Եյկաբաև 69-73):

Ըստ Էուլթյան՝ սա նույն սցենարն էր, ինչ արվում էր Օսմանյան Կայսրությունում. նախ քրդերին որպես միջոց օգտագործում էին հայերից ազատվելու համար, ապա նաև ազատվում քրդական տարրից:

⁵ Որոշ ժամանակ անց սկսվեց իրական նպատակի գործընթացը: Նախ «Կարմիր Զրդստանի» ղեկավար Նշանակվեց Շուշից Էթնիկ աղբրեջանցի Գ.Հաջինը, և քանի որ ԱԽՍՀ 4 լիազորմար նիստերի ընթացքում չէին լուծվել սահմանային խնդիրները, «Կարմիր Զրդստանի» կազմի մեջ ներառվեց նաև Կուբաթլիի դարյան, որը 98%-ով թյուրքաբնակ էր, սրանով լուծվում էր նաև քրդական տարրի ձուլման խնդիրը: Շուտով Աղբրեջանը ընտրեց Կրեմլին համոզելու

այդ թվում՝ քրդական դպրոցների բացման արգելքից մինչև քրդերենի կիրառման սահմանափակում, որը հակասում էր նաև Ստալինի կողմից պետական լեզվի չպարտադրման հրամանին² (Բաբայան 95-96): 1923թ.–ին «Կարմիր Զրդստանի» 7-ամյա կյանքը չնայած ավարտվեց, բայց այն մնաց որպես քրդական առաջին ինքնավար կազմավորում Հարավային Կովկասում:

«Վերականգման Նախադրյալներ»

«Կարմիր Զրդստանի» կարճատև գոյությունից մոտ 60 տարի անց Հարավային Կովկասում սկսվեցին որոշ հիշողություններ արթնանալ: Այսպես կոչված «Կարմիր Զրդստանի» պատմական ուղին կարելի է պայմանականորեն բաժանել 2 շրջափուլի՝ 1923-1929թթ. և 1988-1992թթ.:

1987թ.–ի վերջերից ԽՍՀՄ բոլոր շրջանների քրդերի ներկայացուցիչները, հավաքվելով Մոսկվայում, պահանջում էին վերականգնել «Կարմիր Զրդստանը» (PUKmedia): Ավելի վաղ՝ դեռ 1985թ.–ին, Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ՆԳՆ քրեական հետախուզության պետ Վաքիլ Մուստաֆանը դիմել էր ԽՍՀՄ Կենտկոմի պատասխանատու պաշտոնյա Սմիրնովին՝ «Կարմիր Զրդստանի» վերականգնման պահանջով (Мустафаев 151-152):

Քրդերի կողմից Զրդստան երկրամասի վերաբերյալ հիշողությունները համընկան Արցախյան շարժման Նախապատմության հետ: 1988թ.–ի փետրվարի 20-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը, և որոշում կայացվեց դիմել ՀԽՍՀ, ԱԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն խորհուրդներին՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին (Սիմոնյան 712-713):

Սկսվեցին հանրահավաքներ. 1988թ.–ի փետրվարի 26-ին ԽՍՀՄ ԿԿ գլխավոր քարտուղար Գորբաչովը կոչով դիմեց Հայաստանին և Ադրբեջանին՝ դադարեցնելու հանրահավաքները, սակայն սրան ի պատասխան՝ փետրվարի 27-ին կազմակերպվեց սումգայիթահայության ջարդը: Ողբերգական դեպքերը տևեցին 3 օր՝ մինչև փետրվարի 29–ը, երբ խորհրդային զորքը մտավ Սումգայիթ (Սիմոնյան 716-717):

Այդ նույն թվականին՝ հրապարակայնության (Գլաստոնստ) ժամանակաշրջանում, Ադրբեջանից 10 հազ. քուրդ դիմեց Մոսկվային՝ քրդական ինքնության վերականգման բացահայտ խնդրանքով, քանզի նրանց Ադրբեջանը այլևս դադարել էր քուրդ համարել և, առհասարակ, Ադրբեջանում գործում էր միայն «ադրբեջանցի»³ անվանումը, որը տրվում էր բոլոր էթնոսներին (McDowall 493):

մարտավարությունը, թե քրդերը թյուրքացել են և ձուլվել: (Ավելի մանրամասն տես՝ Букчан 50-55):

¹ «Քուրդ» բառին համառոտ են տրվում էր վիրավորական նշանակություն՝ այն պատկերացմամբ, թե քրդերն անգրագետ, հետամնաց մարդիկ էին, խոսք լինել չէր կարող քրդական դպրոցների մասին: Մինչև 1930-ականների սկիզբը (գործել են միայն 1931-1938թթ. և փակվել) քրդական դպրոցներ նույնիսկ չեն եղել: Եթե ՀԽՍՀ-ում քրդական աշխատությունները ավելի շատ ՀԽՍՀ-ում գործող քրդերի մասին էր, ապա հակառակ պատկերն էր ԱԽՍՀ-ում, որտեղ հրապարակվում էին արտասահմանի քրդերի մասին ադրբեջաներենով, նույնիսկ «Կարմիր Զրդստան» թերթը, որը հիմնադրվել էր 1931թ.–ին Լաչինում և գոյություն է ունեցել մինչև 1962թ.–ը, լույս էր տեսնում ադրբեջաներեն (Բաբայան Դ.: 2005; 96-97):

² Այն ենթադրում էր ցանկացած մարզում և՛ մեծամասնության, և՛ փոքրամասնության լեզուների իրավահավասարություն՝ թե՛ կրթության, թե՛ դատավարության մեջ: Մարզի լեզուն որոշվում էր՝ ըստ բնակչության կազմի (Центр гуманитарных наук 21-ого века):

³ Դեռ 1930 թվականին, երբ «Կարմիր Զրդստանը» վերացվեց, տեղի քրդերը սկսեցին «ադրբեջանցիներ» կոչվել: Ըստ քրդական համայնքի ղեկավարներից Շամիլ Ասքերովի՝ 2000թ.–ի դրությամբ Ադրբեջանում մոտ 200 հազ. քուրդ է ապրում, սակայն պաշտոնական

Միաժամանակ իրենց ոտնահարված իրավունքների մասին էին բարձրաձայնում ևսև թյուրք-մեսխեթները, Ղրիմի թաթարները և այլ էթնիկ խմբեր: 1989 թվականի սեպտեմբերին ԽՍՀՄ Կենտկոմի 28-րդ համագումարը որոշեց. «Ձեռնարկել բոլոր միջոցները Ղրիմի թաթարների, խորհրդային գերմանացիների, հույների, քրդերի, մեսխեթցի թուրքերի և այլ ժողովուրդների խնդիրները լուծելու համար» (ԿՊՇՇ):

Քուրդ մտավորականությունը սկսեց մտածել, որ փլուզվող ԽՍՀՄ տարածքում նրանց շահերը անպաշտպան են մնալու, ծրագրերը՝ անիրագործելի: Վերջինիս խանգարում էին ինչպես ներքին համախմբվածության բացակայությունը, այնպես էլ արտաքին դրդպատճառները (PUKmedia):

1990թ.–ին Հայաստանից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ Չորի Բալայանը, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը և այլ պաշտոնատար անձինք Գորբաչովին առաջարկեցին վերականգնել «Կարմիր Քրդստանը», որին հաջորդեց Ադրբեջանի պատգամավորների՝ Նիստի դահլիճը լքելը:

Նույն թվականին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կից ստեղծվեց քուրդ բնակչության հիմնախնդիրների հարցերով պատգամավորական հանձնաժողով՝ Վ.Պ.Սորոլևի նախագահությամբ, որի առաջին նիստը տեղի ունեցավ 1990թ.–ի նոյեմբերի 20-ին: Խորհրդարանական հանձնաժողովը, որն ուներ ամբողջ արխիվային փաստաթղթերը, հանգեց այն եզրակացության, որ Անդրկովկասի տարածքում գոյություն ունի քրդական պետություն, որը ապօրինաբար լուծարվել է և պետք է վերականգնվի: Այդ նպատակով կազմավորվեց «Յակբուն» քրդական համամիութենական ասոցիացիան:

1991թ.–ի մարտի 27-ին ԽՍՀՄ արդարադատության նախարարությունը, գրանցելով «Յակբուն» քրդական համամիութենական ասոցիացիայի կանոնադրությունը, հաստատեց սահմանադրական միջոցներով քրդական ինքնավարության վերականգմանը միտված միջոցառումների կազմակերպման, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում քուրդ բնակչության շահերի ներկայացման և պաշտպանության իրականացման, ազգամիջյան հակամարտություններից տուժած քրդերին բարոյական ու նյութական աջակցության, այլ պետությունների քրդերի հետ մշակութային կապերի զարգացման վերաբերյալ որոշումները:

Ադրբեջանում¹, սակայն, ցանկություն չունեին սա ընդունելու, և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորական հանձնաժողովի նիստին հրավիրված Ադրբեջանի ներկայացուցիչները, այդ թվում՝ փոխնախագահ Մամեդովը, նշում էին, որ վաղ է դեռ քրդերին ունենալ իրենց պետությունը, և պետք է գոհանան մշակութային կենտրոնների ստեղծմամբ:

Երկրորդ նիստին, որին ներկա էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 120-ից ավելի պատգամավորներ, Մամեդովը, ի պատասխան պատգամավորների հարցերի, հայտարարեց. «Ադրբեջանում Կարմիր Քրդստան չի եղել, մեր երկրում բնակվում է 12600 քուրդ: Ուզում եք, որ ժողովուրդը քրդերի հետ վարվի այնպես, ինչպես հայերի հետ»: Երրորդ հանդիպման ժամանակ Մամեդովը, հակադարձում ստանալով, զիջողաբար պատասխանեց. «Ղարաբաղյան հակամարտության լուծումից հետո մենք կլուծենք քրդական հարցը»:

1991թ.–ի մայիս ամսին Կրեմլում քրդերին տրված խոստումները օգոստոսին փլուզված ԽՍՀՄ-ի հետ անհետացան (PUKmedia):

վիճակագրությունը վկայում է 12 հազ. մասին (Thomas de Waal 133): Այսինքն՝ չի բացառվում, որ նրանց մեծ մասն արդեն ինքնությամբ իրեն քուրդ չի համարում:

¹ Ըստ Մուստաֆանի՝ 1988-1992թթ. «Յակբուն» ԶՀԱ-ի ղեկավարությունը բազմիցս դիմել է Մուրադիբովի և Ելչիբեյի կառավարությանը՝ Ադրբեջանի կազմում ինքնավար «Կարմիր Քրդստանի» վերականգնման խնդրանքներով, սակայն Ադրբեջանի կառավարիչները չեն ցանկացել անգամ լսել «քուրդ» բառը (Мустафаев 168):

1991 թվականի հուլիսի 23-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ քրդերի երկրորդ արտահերթ համագումարը: Երկու համագումարների պատվիրակները բոլոր քրդերի անունից միաձայն պահանջեցին ԽՍՀՄ կառավարությունից վերականգնել «Կարմիր Քրդստանի» ինքնավարությունը: Համագումարների ընթացքում ընտրվեց 15 հոգուց բաղկացած բյուրո, կազմկոմիտե և 100 հոգուց բաղկացած պլենում: «Յակբուն»¹ քրդական համամիութենական ասոցիացիայի նախագահ ընտրվեց Մամեդ Բաբան Սուլեյմանովիչը, իսկ փոխնախագահ՝ Վաքիլ Մուստաֆան Մուստաֆանիչը: Նախագահի տեղակալներ ընտրվեցին Ալիե Աբդուրահմանը և Տարել Բրուն Միխայլովիչը (PUKmedia):

Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանում² իրենց իրավունքների համար սկսեցին բարձրաձայնել տարբեր ազգային փոքրամասնություններ, այդ թվում՝ քրդերն ու հայերը: Լեռնային Արցախի հայությունը ցանկություն էր հայտնում Հայաստանին միանալու, իսկ քրդերը, համաձայնության չգալով, բաժանվեցին երկու խմբի, մի մասը կողմ էր ինքնավարությանը, իսկ մյուս մասը՝ անկախ պետության ձևավորմանը:

ԱԽՍՀ-ն արագ չեզոքացնում էր քրդերի ակտիվությունը երկրի ներսում, իսկ հայերի ցանկություններին որոշում կայացրեց պատասխանել ռազմական ճանապարհով, և ինդրին հանգուցալուծում տալու համար իրականացվեց «Օղակ» (Кольцо) գործողությունը: Ապրիլի 30-ին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին գործերը և Ադրբեջանի օմոնականները սկսեցին լայնածավալ գործողությունները: Այդ գործողության հիմնական նպատակը ԼՂ Շահումյանի, Շուշիի, Մարտակերտի, Գետահատի (Հադրութ) շրջանները հայաթափելն էր (Ջուլիական և Ասատրյան 243):

1991 թ.-ի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում կայացավ անկախության համահանրապետական հանրաքվե: Ընտրելու իրավունք ունեցող 132 328 հոգուց քվեարկությանը մասնակցեց 108 736-ը (82,2 %), անկախությանը «կողմ» քվեարկեց 108 615 (քվեարկողների 99,89 %-ը), «դեմ»՝ 24 (0,02 %) հոգի, 96 քվեաթերթիկ անվավեր ճանաչվեց (Ախ ԱԳԼ):

Արցախյան առաջին պատերազմին նվիրված գրքերում չենք հանդիպում Լաչինում քրդական պետություն հիմնելու մասին փաստերի: Սակայն ականատեսները պնդում են, որ Լաչինը պատերազմի երկրորդ փուլում³ հանդես եկավ

¹ «Յակբունի» ղեկավարությունը որոշեց՝ ԶԶԱ նախագահին ու փոխնախագահը համարվում են քուրդ ժողովրդի միակ ներկայացուցիչները, որոնք պաշտպանում և ներկայացնում են իրենց շահերը խորհրդային, կուսակցական, վարչական և այլ մարմիններում, հասարակական կազմակերպություններում: Այն չէր ընդունում մշակութային ինքնավարությունները, քանզի համարում էր թշնամու կողմից կազմակերպված «կեղծ օգնություն», դեմ էր քաղաքական կուսակցությունների ձևավորմանը, քանզի կարծում էր, որ դրանք խոչընդոտում էին քուրդ ժողովրդի միասնականությանը և առաջնորդվում էր «ազատություն և անկախություն» կարգախոսով, որը, ըստ նրանց, միավորում էր քուրդ հասարակության բոլոր շերտերը՝ անկախ սոցիալական վիճակից, կրոնական ուղղությունից և քաղաքական հայացքներից (PUKmedia):

² 1991թ.-ի օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով 1918թ.-ի մայիսի 28-ի Ազգային խորհրդի որոշումը, հռչակեց երկրի անկախությունը (Конституционный Акт №222-ХІІ):

³ 1991թ.-ի մայիս-հունիս ամիսներին սկսվեց Արցախյան ազատագրական պատերազմը, այն ունեցավ ժամանակագրական 3 փուլ:

1. 1991թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին տեղի ունեցավ «Օղակ» գործողությունը, հայկական մի շարք բնակավայրերի բռնազավթումը և բնակչության բռնի գաղթեցումը,

2. 1992թ. հունիս-1993թ. հունվար ժամանակահատվածում լայնածավալ ազդեցիկ հետևանքով Շահումյանի և Մարտակերտի շրջանների մեծ մասի զավթումը,

3. 1993թ. դեկտեմբեր-1994թ. հունվար ամիսներին կազմակերպվեց ազատագրական լայնածավալ ռազմական գործողություններ ԼՂՅ սահմանների ողջ երկայնքով:

որպես «Կարմիր Քրդստանի» մայրաքաղաք: Այստեղ բարձրացվեց նույնիսկ քրդական դրոշմը: Հայտարարվեց «Կարմիր Քրդստանի» վերականգնման մասին: Սակայն պատերազմական իրավիճակում քրդերի արտագաղթը հայկական հիմնական տարածքներից այլևս հնարավորություն չտվեց իրապես վերականգնելու «քրդական առաջին ինքնավար պետության» երկրորդ գոյությունը:

Խորհրդային միության փլուզման վաղ շրջանից Ադրբեջանի քրդերը, հատկապես Վաքիլ Մուստաֆանի և մի քանի այլ մտավորականների գլխավորությամբ «Յակբուն» ԶԶԱ-ի շրջանակներում ակտիվ գործունեություն էին ծավալում քրդական պետության ստեղծման համար:

Այս ամենին զուգընթաց տեղի էր ունենում ԽՍՀՄ ողջ տարածքում քրդական տարրի միգրացիա: Մյուս կողմից շարունակվում էին ցույցերը՝ «Կարմիր Քրդստանի» վերականգնման պահանջով, որի ձախողման դեպքում պահանջում էին Ռուսաստանի հարավում հող հատկացնել քրդերի բնակության համար:

Ադրբեջանական իշխանությունները «Կարմիր Քրդստանի» վերականգնումը կանխելու համար քուրդ մտավորականների մի մասին գրավեցին իրենց կողմը: Բաքվի վարչախումբը շուտով սկսեց տարածել լուրեր, թե իբրև Հայաստանի եզդիները միավորվել են հայերի շուրջ և ցանկանում են անջատվել քրդերից: Թերթերով, նույնիսկ քուրդ մտավորականների միջոցով տարածում էին, թե եզդիները «մուսուլման քրդերի ամենավատ թշնամիներն են» (Мустафаев 156):

Մենք կարծում ենք, որ Ադրբեջանի կողմից նման շահարկումները կարող էին կապված լինել եզդիական ջոկատի մասնակցության հետ, որի ներկայությունը պատերազմում Ադրբեջանը խեղաթյուրելով շահարկում էր՝ հոգուտ իր նպատակների, հատկապես Հայաստանի եզդիների ու քրդերի միջև լարվածություն մտցնելու համար: 1989թ.–ին՝ Արցախյան հակամարտության հենց սկզբից եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի գլխավորությամբ ստեղծվեց «Ջանգիր Աղայի» կամավորական ջոկատը: Այն բաղկացած էր 300 անդամից: Դրա կազմից 100 հոգանոց մարտական խումբը, որի անդամ էր նաև եզդի շեյխ Բրո Հասանյանը, կռվում էր Երասխի հատվածում, Նոյեմբերյանում, Սիսիանում, Ղափանում (Հարցազրույց Բրո Հասանյանի հետ): Ադրբեջանում լուրեր էին տարածվում, թե հայերը քրդերի դեմ են օգտագործում եզդիներին, որը բնավ իրականությանը չէր համապատասխանում: Պարզապես եզդիները, ի աջակցություն իրենց բարեկամ հայ ժողովրդի, կռվում էին պատերազմում (Հարցազրույց Բրո Հասանյանի հետ):

Շուտով Ադրբեջանի իշխանությունները սկսեցին նաև օգտագործել քրդերին՝ Արցախյան պատերազմ ներքաշելով: Սկսվեց քրդական խոշոր կազմավորումների ստեղծումը՝ հայերի դեմ կռվի ուղարկելու համար: Ստեղծվեց քրդական ջոկատ՝ Մստոյի հրամանատարությամբ: Ադրբեջանական քարոզչությունը գրեթե ամեն օր գովաբանում էր քրդական ջոկատը, իսկ նրա հրամանատար Մստոյին անվանում Ադրբեջանի հերոս:

Հայաստանի քրդերի մի հատված համախմբվեց քրդական «Ոյա Թագա» թերթի շուրջ: Որոշ քրդեր երեք անգամ մեկնեցին Թբիլիսի՝ հանդիպումներ ունենալով տեղի քրդերի հետ, որի նպատակը միասնության կոչ անելն էր: Սակայն Մոսկվայում որոշ հայտնի քաղաքական գործիչներ, իրենց անվանելով Հայաստանի, Վրաստանի ու Ղազախստանի քրդերի ներկայացուցիչներ, դեմ են արտահայտվել «Կարմիր Քրդստանի» վերականգնմանը՝ հայտարարելով, որ «ժողովուրդը ցանկանում է մշակութային ինքնավարություն կոմպակտ բնակության վայրերում»:

Սակայն ԽՍՀՄ բոլոր քրդերը չէին, որ կիսում էին միևնույն գաղափարը, նրանք ունեին տարբեր հայացքներ. մտավորականների մի մասը կողմ էր միայն մշակութային

1991-1994թթ. Արցախյան պատերազմի կարևոր իրադարձություններից էին 1991թ.–ի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի հանրապետության) հռչակումը և 1992թ.–ի մայիսի 9-ին Շուշիի ազատագրումը: (Ջուլիանյան և Ասատրյան 243):

ինքնավարության, սակայն «Յակբուն» համամիութենական ասոցիացիան ղեկավարում էր «Կարմիր Քրդստանի» վերականգնման քրդական շարժումը:

Նույն շրջանում ռազմական գործողություններ էին տեղի ունենում Արցախում, սկսվել էր հակամարտության երկրորդ փուլը: 1992թ.–ի մայիսի 8-ին առավոտյան սկսվեց Շուշիի ազատագրման՝ «Հարսանիք լեռներում» ծածկանունը կրող մարտական գործողությունը, սակայն դրա ազատագրման կարևոր մաս էին հանդիսանում նաև «26»-ի (հյուսիսային) ուղղության, Շոշի (արևելյան), Բերձոր (հարավային), Ջանհասան-Քյոլհասարի (հյուսիսարևմտյան ուղղություն) գործողությունները: Այդ փուլի գործողությունները ավարտվեցին մայիսի 9-ին Շուշիի¹ ազատագրմամբ (Վարդանյան 35-36):

«Կարմիր Քրդստանի» վերականգնման համար այսպիսով լուրջ նախադրյալներ կային, որոնց հիման վրա միջոցառումներ էին իրականացնում մի շարք քուրդ հասարակական-քաղաքական գործիչներ ու մտավորականներ: ԽՍՀՄ փլուզման գործընթացին զուգահեռ, նոր ձևավորվող պետությունների կողքին Հարավային Կովկասում քննարկվում էր քրդական պետական միավոր ստեղծելու հարցը, որը ըստ էության՝ 1920-ականներին գոյություն ունեցած այսպես կոչված «Կարմիր Քրդստանի» պատմության շարունակությունը պիտի լիներ:

Լաչինի ազատագրումն ու անկախության հռչակագիրը

1992թ.–ի մայիսի 17-18-ին հայկական ուժերին հաջողվեց ազատագրել Լաչինի² մարդասիրական միջանցքը, որը Հայաստանի հետ Արցախը կապող միակ օղակն էր: Մայիսի 17-ին ազատագրվեցին Բերդաձոր գյուղախումբը, Շուշիի շրջանի հայաբնակ գյուղերը՝ Հինշեն, Մեծշեն, Յեղցահող, Տասվերստ, Կանաչ Թալա: Մայիսի 18-ին ազատագրվեցին Լաչինը, Աղավնոն, Սուս գյուղը (Լսորք պատմական), դրանից 4-5 օր հետո՝ ամբողջ շրջանը մինչև Բևեռաթափի լեռնաշղթա (Միխթոքյան, բաժանում է Բերձորի շրջանը Զարվաճառից) և հարավում Ծաղկաբերդ գյուղը (Բազմաձակք, Մազմազակ³, Գյուլիբերդ): Այդ օրերին քրդաբնակ⁴ մնացել էին Աղավնո գետի վերնահովտի գյուղերը. ամենամեծ քրդաբնակ գյուղերն էին Հակը (Մինքենդ), Հերիկը

¹ Շուշի-Բերձոր մայրուղու երկաթուղունը ձգվում էր ավելի քան 20 կմ: Ելման կետից մինչև մարտական գործողությունների վերջնակետը ձգվում էր 10-15 կմ: Ռազմագործողության հարավային ուղղության ուժերին առաջադրանք էր տրված՝ առաջանալով Շուշի-Բերձոր մայրուղու ուղղությամբ՝ թիկունքն ապահովել Կուբաթլիի շրջանից հակառակորդի հնարավոր թափանցումից (Տե՛ս նույն տեղում՝ 51):

² Մինչև Հայաստանի խորհրդայնացումը և 1992թ. ազատագրումից հետո, Լաչինի շրջանը դարձել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի մաս՝ Կովսականի ու Որոտանի հետ միասին: Արցախյան երրորդ պատերազմից (2020թ.) հետո Բերձորի 5 կմ լայնությամբ միջանցքը, որը, շրջանցելով Շուշի քաղաքը, ապահովելու է Արցախի Հանրապետության մնացյալ տարածքների կապը Հայաստանի Հանրապետության հետ, ըստ եռակողմ հայտարարության, մտնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո (Փախյան 15):

³ Մազմազակը հին հայկական պատմական Բազմաձակք գյուղի թուրքական-արդրեջանական հորջորջումն է. մինչև 18-րդ դարի երկրորդ կեսը գյուղը եղել է հայաբնակ, և Իբրահիմ Խանի վարած քաղաքականության արդյունքում տեղի հայերը բռնազաղթել են դեպի Կրաստան՝ Կախեթ (Հյուսիսային Լոռի), Թիֆլիս (Հարցագրույց Ա. Հակոբյանի հետ):

⁴ 1990-ականներին այս տարածներում արդեն քիչ քանակությամբ քրդեր էին մնացել: 1989թ. ԽՍՀՄ վերջին մարդահամարի տվյալներով Արդրեջանական ԽՍՀ-ում մոտ 12. հազ քուրդ էր բնակվում («Всероссийная перепись населения, 1989 г.»): Եթե հաշվի առնենք Արդրեջանի կողմից տեղի քրդերին թուրքացնելու և երկրի արևմտյան շրջաններից դեպի կենտրոն տանելու քաղաքականությունը, ապա կարելի է ենթադրել, որ մինչև 1992թ.–ը Արցախի տարածքում եղել է ընդամենը 5000 քուրդ: Նրանք ամբողջությամբ լքեցին տարածքը մինչև 1992թ.–ի մայիս (Հարցագրույց Ա.Հակոբյանի հետ) :

(Ահմեդյու), Լեռնահովիտ (Եզնագոմեր, Ղարաքեշիշ, Լենիքեմ), Սպիտակաջուրը (Աղբուլար), Կատոսը¹, Ուխտածորը (Չեղարլու, Քամարլու), որոնք գտնվում էին Հակարի գետի վերնահովտում (Հարցագրույց Ա. Հակոբյանի հետ):

Այս ընթացքում Լաչին է գալիս Վաքիլ Մուստաֆանը, ով սկսում է կազմակերպչական աշխատանքներով զբաղվել: Լաչինում մի շարք շրջանների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվում է Զրդական ազատագրական շարժումը², քանի որ «Ցակբուն» արդեն կորցրել էր իր իրավական իմաստը, որը պայմանավորված էր նաև ԽՍՀՄ փլուզմամբ (Мустафаев 159):

Վաքիլ Մուստաֆանի գլխավորությամբ Բերծոր (Լաչին) քաղաքում Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանում տեղադրվում է քրդական դրոշը և ընթերցվում «Կարմիր Զրդստանի» վերականգման հռչակագիրը: Այդ արարողությանը ներկա էին մի քանի տասնյակ քրդեր, ինչպես նաև մի շարք հայ քաղաքական և հասարակական գործիչներ, որոնց թվում էր 1991-1992թթ. Հայաստանի կառավարությանը առընթեր փախստականների կոմիտեի նախագահ Ալեքսան Հակոբյանը (Հարցագրույց Ա. Հակոբյանի հետ):

«Կարմիր Զրդստանի» վերականգման հռչակագրի տեքստը հետևյալն էր. *«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սոցիալ-տնտեսական համակարգի քայքայումը միանգամայն բնական է ազդում այսպես կոչված հանրապետական մակարդակներում տեղի ունեցող գործընթացների վրա: Այն ժողովուրդները, որոնք ստիպողաբար ընգրկվել են այս կամ այն հանրապետության վարչական կառուցվածքի մեջ, գիտակցում են սեփական պետության, ինքնորոշման իրավունքի անհրաժեշտությունն ու գնահատում են պատմական հնարավորությունը:*

ԽՍՀՄ սոցիալ-քաղաքական և տնտեսական շրջանակներում ձևավորված Հոկտեմբերյան Ադրբեջանի Հանրապետությունը ընդգրկում էր Կովկասյան թաթարների, քրդերի, հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի, ավարների վաղնջական բնակության տարածքները: Նախկին Ադրբեջանական ԽՍՀ ազգային-

¹ Կատոս գյուղի քրդաբնակ լինելու և քուրդ բնակչության կողմից Կատոսվանքը հայերեն «Վանք» կոչելու մասին (Акопян):

² ԶԱՀ հրամանատարությունը տարածում է հայտարարություն, որում ասվում է.

«Վերջին ժամանակներս տարբեր երկրների ՉԼՄ-ները թերթերում հրապարակում են կյուրթեր քրդական հարցի վերաբերյալ՝ կապված Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների, Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության սահմանների հետ:

Այս հարցում ցանկացած տեսակի խեղաթյուրումներից խուսափելու համար Զրդական ազատագրական շարժման հրամանատարությունը նշում է.

1. Նախկին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Զեյթաջարի, Լաչինի, Կուբաթլիի, Չանգելանի և Ջաբրայիլի շրջանների տարածքներում քուրդ ժողովուրդը միակ սեփականատերն է,

2. ԱԴՀ-ի քուրդ ժողովուրդը և Զրդական ազատագրական շարժման հրամանատարությունը պայքարելու են քրդական պետականության ամբողջական վերականգման համար և երախտագիտությամբ կընդունեն ընկերների օգնությունը այս նպատակին հասնելու համար,

3. Զուրդ ժողովուրդը հարգում է ցանկացած ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ցանկանում է խաղաղ ապրել այլ ժողովուրդների և հարևան պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ:

ԶԱՀ հրամանատարությունը կոչ է անում Զեյթաջարի, Լաչինի, Կուբաթլիի, Չանգելանի և Ջաբրայիլի շրջանների այն քաղաքացիներին, որոնք, չնայած Ադրբեջանի իշխանությունների դաժան ուժացման քաղաքականությանը, իրենց քուրդ են համարում, չտրվել սադրիչ գործողություններին, չլքել իրենց հողը և չհիմադրել ԶԱՀ-ին, այլ միավորվել ինքնապաշտպանական ստորաբաժանումների՝ ետ մղելու նրանց, ովքեր սիրում են ղեկավարել օտար երկրում» (Мустафаев 162):

պետական և վարչական կառույցների ձևավորման ժամանակ, ավելի հաճախ սուբյեկտիվ պատճառներով, ինքնավար կազմավորումներով չեն ապահովել բոլոր ժողովուրդներին, քուրդ ժողովուրդը, որը ստացել է Ադրբեջանի կազմում Կարմիր Քրդստանի Հանրապետության տեսքով, իսկ այնուհետև 1930թ. ստալինյան հատուկ հրամանագրով գրկվել է այդ կարգավիճակից, ենթարկվել է ոչ միայն տեղահանության և ամենադժան բռնաճնշումների, այլ նաև ադրբեջանական իշխանությունների կողմից բռնի թյուրքացման: Նրանք Չանգեյանի, Ջաբրայիլի, Զելբաջարի, Լաչինի շրջաններում ենթարկվել են բռնի ձուլման, քրդական դպրոցները լուծարվել են, փակվել են թատրոնները, դադարեցվել՝ գրքերի և պարբերականների հրատարակումները և այլ սահմանափակումներ դրվել քրդերի առաջ:

Այժմ Ադրբեջանի քրդերը գտնվում են լիակատար ուժացման եզրին: Սեփական ժողովրդի պահպանման և բարգավաճման և որպես համաշխարհային հանրության լիիրավ անդամ վերածնվելու մտահոգությամբ տոգորված, հաշվի առնելով Ադրբեջանի հետագա անսահմանափակ գերիշխանության հետևանքով քրդերին սպառնացող լիակատար անհետացումը և առաջնորդվելով՝ միջազգայնորեն ընդունված իրավական նորմերով, առաջնորդվելով քուրդ ժողովրդի պատմական անցյալով և ապագայում նրա ճակատագրի համար պատասխանատվության զգացումով, պատմական արդարությունը վերականգնելու մտադրությունով, քրդական ազատագրական շարժման հիմնադիր ժողովը և նախկին ԽՍՀՄ քրդերի հասարակական և քաղաքական բոլոր կազմակերպությունները հայտարարում են.

1. Քրդստանի նախկին մայրաքաղաք Լաչին կենտրոնով քրդական պետականության վերականգնման,
2. Քրդական ազատագրական շարժման վարչության կողմից ամբողջ իշխանության իրականացման (մինչև ընտրովի մարմինների ձևավորումը),
3. Քրդստանի բնակչության լիազոր ներկայացուցիչների համապետական ընտրությունները 1992 թվականի հուլիսի 19 նշանակելու մասին (ժողովի նախագահ Վաքիլ Մուստաֆան Հունիսի 09.1992 Լաչին)» (Мустафаев 161):

ԲԱՇ հռչակագիրը և հայտարարություններն ընդունվել են միաձայն և հրապարակվել քրդերեն ու ռուսերեն լեզուներով¹:

Միաժամանակ նշվում էր, որ հայ-ադրբեջանական պատերազմում քրդերը մտում են չեզոք և ցանկանում են բարիդրացիական հարաբերություններ ունենալ իրենց հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Իրանի հետ:

Տասնյակ հազարավոր թռուցիկների միջոցով Քարվաճառի, Որոտանի, Ջրականի, Վարանդայի, Չանգեյանի, Պարտավի և այլ շրջանների քուրդ բնակչությանը կոչ է արվել չլքել իրենց հողերը: Շարժման անդամները Հայաստանի բոլոր այն գյուղերում, որտեղ բնակվում էին քրդերը, բացատրական աշխատանք էին տանում բնակչության շրջանում: Դրանք իրականացնում էին Շարաֆ Աշիրին (պրոֆեսոր), Կարլեն Չաչանին (Հայաստանի քուրդ գրողների միության նախագահ), Ամարիկե Սարդարը (քրդական «Ոյա Թագա» թերթի խմբագիր), լրագրողներ Ազիզե Ջավին, Թոսնե Ռաշիդը, Իշխանե Ասլանը, բանաստեղծ Ալիխանե Մամեն և շատ ուրիշներ (Мустафаев 163), սակայն մինչև 1992թ.-ի մայիսի կեսերը քրդերի մեծ մասն արդեն լքել էր իր բնակավայրերը (Հարցազրույց Ա. Հակոբյանի հետ):

Այս ամենին զուգընթաց այլ քարոզչություն էր տարվում մուսուլման շեյխերի կողմից: Նրանք, քրդերին մեկնաբանելով Ղուրանի կանոնները, որ «Աստված արգելում է զենք բարձրացնել իրենց մահմեդական եղբայրների դեմ» և «անհավատների կողմից ստեղծված պետությունը ընդունելի չէ», աստիճանաբար հետ էին մղում քրդերի մտադրությունները:

¹ Տեքստը տե՛ս <https://www.saradistribution.com/vakilmustafaev.htm>

Թուրքիան ևս ուներ իր շահերը այս շրջանի հետ: «Կարմիր Զրդստանի» տարածքը չունեի որևէ սահման Թուրքիայի հետ, սակայն վերջինս ակտիվություն էր դրսևորում՝ խրախուսելով այդ տարածքներում Ադրբեջանի կողմից իշխանության հաստատումը: Խորհրդային միության փլուզումից հետո համարվում էր, որ եկել է մեծ հաշվեհարդարի ժամանակը: «Թուրանական կայսրության» ստեղծման ճանապարհին, որը պետք է ներառեր առաջին հերթին նախկին ԽՍՀՄ թյուրքական ժողովուրդներին, առանձնահատուկ նշանակություն էր տրվում Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքին (Мустафаев 165):

«Կարմիր Զրդստանի» պատմությունն այսքանով կարելի է ավարտված համարել: Չնայած այն 1990-ականներից այդպես էլ չվերականգնվեց, սակայն մնաց պատմության մեջ Արցախյան առաջին պատերազմի տարիների չուսումնասիրված էջերից մեկը: Սա առիթ դարձավ Ադրբեջանի կողմից ցանկացած առիթի դեպքում շահարկելու հայ-քրդական հարաբերությունները: 1990-ականներին Ադրբեջանը ասելություն էր տարածում քրդերի շրջանում հայերի նկատմամբ՝ կեղծորեն հայտարարելով, որ հայերը Հայաստանի քրդերին տրամադրում են Ադրբեջանի քրդերի դեմ: 2020թ. Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ Ադրբեջանը կրկին հիշեց քրդերին. այս անգամ սկսեց տարածել լուրեր, որ Սիրիայից և Իրաքից քրդեր են մեկնում Արցախ՝ Ադրբեջանի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու համար: Սրանք ամբողջապես կեղծ հայտարարություններ էին, որոնցով Ադրբեջանը փորձում էր շեղել միջազգային հանրությանը իրականությունից:

Եզրակացություն

Այսպես կոչված «Կարմիր Զրդստանի» պատմությունը, դեռ չսկսված, ավարտվեց: Չնայած ԽՍՀՄ քրդերի կողմից այն վերականգնելուն միտված ջանքերին՝ այն չվերականգնվեց:

Մեր կարծիքով՝ դրա վերականգնմանը խոչընդոտեց մի քանի հանգամանք: Առաջին հերթին իրապես բացակայում էր քրդերի շրջանում միասնականությունը, հաջորդիվ Ադրբեջանին հաջողվեց Արցախի տարածքում ապրող քրդերին համոզել այն թյուր կարծիքը, որ հայերը միմյանց դեմ են տրամադրում Հայաստանի և Ադրբեջանի քրդերին: Մյուս կողմից Կովկասում այն չունեի հստակ աջակցություն քրդերի շրջանում. ԽՍՀՄ նախկին պետությունների տարածքում գտնվող քրդերը տարակուսանքի մեջ էին. ինչպես արդեն նշեցինք, մի մասը կողմ էր լույս մշակութային ինքնավարությանը, իսկ մյուս մասը՝ անկախությանը: Այսպիսով՝ Հարավային Կովկասում քրդերի կողմից այսպես կոչված «Կարմիր Զրդստանի» վերականգնմանը միտված միջոցառումները ավարտվեցին լույս փորձերով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբայան, Դավիթ. «Կարմիր Զրդստան. Կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները». *21-րդ դար*, թիվ 4 (10), 2005, 83-106.
2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեն». *Արտաքին գործերի նախարարություն, Արցախի հանրապետություն*, <http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh>. Գրառված է: 11.04.2022.
3. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա. Հայաստան. «Հայկական Հանրագիտարան». Երևան, 2012, 1164.
4. Մալխասյան, Միքայել. *Պատմաժողովրդական ուսումնասիրություններ*. ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 248.
5. Ջուլիսկյան, Դավիթ և Ասատրյան, Կարինե. «Արցախյան պատերազմը 1991-1994 թթ. և նրա արժևորումը հայ պատմագրության կողմից». «*Պատմություն և մշակույթ*» հայագիտական հանդես, ԵՊՀ, Երևան, 2017, 243-250.
6. Սիմոնյան, Հրաչիկ. *Հայոց Պատմություն*. ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 874.

7. Վարդուհանյան, Զովիկ. *Շուշի ազատագրումը*. Տոներ, Երևան, 2007, 80.
8. Փախլյան, Աննա. «Արցախի տնտեսական ներուժը «Նոր սահմանազատումից» հետո. Սահմանից անդին մնացած հնարավորություններ». «Ամբերդ» *Տեղեկագիր*, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակություն, 2020.13-21.
9. Аверьянов, Петр. *Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов. Исторический очерк*. Издательство отдела Генерального штаба при штабе Кавказского военного округа. Тифлис, 1900, 489/504.
10. Акопян, Алексан. *Албания-Алуанк В Греко-Латинских и древнеармянских источниках*. АН АрмССР, 1987, 304.
11. Букшпан, Александр. *Азербайджанские курды*. Баку, 1932, 89.
12. «Всесоюзная перепись населения, 1926 г.»: Национальный состав населения по республикам СССР». *Демоскоп*, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php. Доступно: 20.04.2021.
13. «Всесоюзная перепись населения, 1989 г.»: Национальный состав населения по республикам СССР». *Демоскоп*, http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=7. Доступно: 20.04.2021.
14. «История Кавказского Курдистана». *PUKmedia*, 18.01.2013, <https://www.pukmedia.com/RU/details/?Jimare=285> . Доступно: 01.04.2022.
15. «Конституционный Акт Азербайджанской Республики о Государственной Независимости», от 18 октября 1991 года №222-XII. *Законодательство Стран СНГ*. https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889. Доступно: 15.04.2022.
16. «Материалы Пленума Центрального Комитета КПСС, 19-20 сентября 1989 г.». *Защита памяти*, <http://soveticus5.narod.ru/85/pl890919.htm>. Доступно: 14.04.2022.
17. Мустафаев, Вакил. *История Кавказского Курдистана, эл.версия*: <https://docplayer.com/26380929-Vakil-mustafaev-istoriya-kavkazskogo-kurdistana.html> . 173.
18. Центр гуманитарных наук 21-ого века Зеркало Библиотеки Михаила Грачева, Архив И. В. Сталина. «*Права федерирующихся областей. Права национальных меньшинств*». Сталин И.В. Организация Российской Федеративной Республики: Беседа с сотрудником газеты «Правда» Источник: Сталин И.В. Сочинения. – Т. 4. – М.: ОГИЗ; Государственное издательство политической литературы, 1947. С. 66–73. Примечания 12–13: Там же. С. 418. https://c21ch.newcastle.edu.au/stalin/t4/t4_16.htm
19. McDowall, David. *A Modern History of the Kurds*. Reprinted in 2007 by I.B.Tauris & Co Ltd, 6 Salem Road, London W2 4BU, 175 Fifth Avenue, New York NY 10010, 2007, 374.
20. Thomas de Waal. *Black Garden. Armenia and Azerbaijan through Peace and War*. New York University Press, New York, London, 2003, 337, E-version: <http://library.asue.am/open/1876.pdf> .
21. Yilmaz, Harun. “The Rise of Red Kurdistan”. *Iranian Studies*, London, vol. 47, no. 5, Aug. 2014, 799–822, doi: 10.1080/00210862.2014.934153, <http://dx.doi.org/10.1080/00210862.2014.934153> .
22. *Kurdistana A Paş Qefqazê*, <https://www.saradistribution.com/vakilmustafaev.htm>. Nivîsandi: 12.04.2022.

WORKS CITED

1. «Ler'nayin Gharabaghi Hanrapetut'yan ankaxut'yan hanraqven». Artaqin gorc'eri naхарarut'yun, Arcaxi hanrapetut'yun, Grar'vac' e': 11.04.2022. [Nagorno Karabakh

Republic Independence Referendum] <http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh>. (In Armenian).

2. Babayan, Davit'. «Karmir Qrdstan. Kazmavorman ev luc'arman ashxarhaqaghaqakan aspektneri'». 21-rd DAR, t'iv 4 (10), 83-106. [Red Kurdistan. Geopolitical Aspects of Formation and Dissolution] 2005. (In Armenian).

3. Hayastani Hanrapetut'yan gitut'yunneri azgayin akademia. Hayastan. «Haykakan Hanragitaran». Erevan, 2012, 1164. [Armenian Encyclopedia]. (In Armenian).

4. Malxasyan, Miqayel. Patmajhoghovrdakan usumnasirut'yunner. EPH hrat., Erevan, 248 [Historical Studies.] 2015. (In Armenian).

5. Julhakan, Davit' ev Asatryan, Karine. «Arcaxyan paterazmy' 1991-1994 t't'. ev nra arjhevoromy' hay patmagrut'yan koghmic». «Patmut'yun ev mshakuyt'» hayagitakan handes, EPH, Erevan, 243-250. . [The Artsakh war in 1991-1994 . and its Appreciation by Armenian Historiography] 2017. (In Armenian).

6. Simonyan, Hrachik. Hayoc Patmut'yun. EPH hrat., Erevan, 874 [Armenian History] 2012. (In Armenian).

7. Vardumyan, Hovik. Shushi azatagrumy'. Toner, Erevan, 80 [Liberation of Shushi] 2007. (In Armenian).

8. P'axlyan, Anna. «Arcaxi tntesakan nerujhy' «Nor sahmanazatomic» heto. Sahmanic andin mnacac' hnaravorut'yunner». «Amberd» Teghekagir, HPTH «Tntesaget» hratarakut'yun, 2020.13-21, [Artsakh's Economic Potential after the 'New Delimitation' . Opportunities beyond the Border] 2020. (In Armenian).

9. Aver'janov, Petr. Kurdy v vojnah Rossii s Persiej i Turciej v techenie HIH stoletija. Sovremennoe politicheskoe polozhenie tureckih, persidskih i russkih kurdiv. Istoricheskij ocherk. Izdatel'stvo otdela General'nogo shtaba pri shtabe Kavkazskogo voennogo okruga, Tiflis, 489/504, [Kurds in the Wars of Russia with Persia and Turkey during the 19th century. The Present Political Situation of Turkish, Persian and Russian Kurds. Historical outline] 1900. (In Russian).

10. Akopjan, Aleksan. Albanija-Aluank V Greko-Latinskih i drevnearmjanskikh istochnikah. AN ArmSSR, 304 [Albania-Aluank in Greco-Latin and Ancient Armenian sources] 1987. (In Russian).

11. Bukshpan, Aleksandr. Azerbajdzhanskije kurdy. Baku, 89 ["Azerbaijani Kurds] 1932. (In Russian).

12. «Vsesojuznaja perepis' naselenija, 1926 g.»: Nacional'nyj sostav naselenija po respublikam SSSR». Demoskop, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php. Dostupno: 20.04.2021. [All-Union Population Census, 1926: The national Composition of the Population in the Republics of the USSR]. (In Russian).

13. «Vsesojuznaja perepis' naselenija, 1989 g.»: Nacional'nyj sostav naselenija po respublikam SSSR». Demoskop, http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_89.php?reg=7. Dostupno : 20.04.2021. [All-Union Population Census, 1989: The National Composition of the Population in the Republics of the USSR]. (In Russian).

14. «Istorija Kavkazskogo Kurdistanana». PUKmedia, 18.01.2013, <https://www.pukmedia.com/RU/details/?Jimare=285>. Dostupno: 01.04.2022. [History of Caucasian Kurdistan]. (In Russian).

15. «Konstitucionnyj Akt Azerbajdzhanskoj Respubliki o Gosudarstvennoj Nezavisimosti», ot 18 oktjabrja 1991 goda №222-XII. Zakonodatel'stvo Stran SNG. https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2889. Dostupno: 15.04.2022. [Constitutional Act of the Republic of Azerbaijan on State Independence. October 18, 1991 No. 222-XII]. (In Russian).

16. «Materialy Plenuma Central'nogo Komiteta KPSS, 19-20 sentjabrja 1989 g.». Zashhita pamjati, <http://soveticus5.narod.ru/85/pl890919.htm> . Dostupno: 14.04.2022. [Materials of the Plenum of the Central Committee of the CPSU, September 19-20, 1989]. (In Russian).
17. Mustafaev, Vakil. Istorija Kavkazskogo Kurdistan, jel.versija: <https://docplayer.com/26380929-Vakil-mustafaev-istoriya-kavkazskogo-kurdistana.html>.173. [History of Caucasian Kurdistan]. (In Russian).
18. 17. Centr gumanitarnyh nauk 21-ogo veka Zerkalo Biblioteki Mihaila Gracheva, Arhiv I. V. Stalina. «*Prava federirujushhihsja oblastej. Prava nacional'nyh men'shinstv*». Stalin I.V. Organizacija Rossijskoj Federativnoj Respubliki: Beseda s sotrudnikom gazety "Pravda" Istochnik: Stalin I.V. Cochinenija. – T. 4. – M.: OGIZ; Gosudarstvennoe izdatel'stvo politicheskoy literatury, 1947. S. 66–73. Primechanija 12–13: Tam zhe. S. 418. https://c21ch.newcastle.edu.au/stalin/t4/t4_16.htm. [Rights of Federated Regions. Rights of National Minorities]. (In Russian).
19. McDowall, David. *A Modern History of the Kurds*. I.B.Tauris, London, New York, 2007, 374 (In English).
20. Thomas de Waal. *Black Garden. Armenia and Azerbaijan through Peace and War*. New York University Press, New York, London, 2003, 337, E-version: <http://library.asue.am/open/1876.pdf>. (In English).
21. Yilmaz, Harun. "The Rise of Red Kurdistan". *Iranian Studies*, London, vol. 47, no. 5, Aug. 2014, 799–822, doi: 10.1080/00210862.2014.934153, <http://dx.doi.org/10.1080/00210862.2014.934153> . (In English).
22. Kurdistan A Pash Qafqaza, [A Post-Caucasian Kurdistan] <https://www.saradistribution.com/vakilmustafaev.htm>. Ny'visandy': 12.04.2022.(In Kurdish)

THE RECOVERY ATTEMPTS OF THE SO-CALLED «RED KURDISTAN» 1988-1992

SATENIK TARVEDIAN

*Yerevan State University, Faculty of Oriental Studies,
Chair of Iranian Studies, Master Degree,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to highlight the attempts to restore the so-called "Red Kurdistan" in the period 1988-1992.

This is a topic worth studying for Armenia and Artsakh, as it refers to the establishment of Kurdish autonomy with Berdzor center on the territory of Artsakh in 1992. The article presents the measures taken by the Kurds in parallel with the collapse of the USSR, which were aimed at establishing Kurdish autonomy.

The text of the declaration of independence of "Red Kurdistan" in Armenian translation is partially presented.

The article draws attention to the prehistory of "Red Kurdistan". The historical facts referring to the Kurdistan county, created in 1923-1929 are also presented. The work presents the parallel events taking place in Artsakh and Azerbaijan.

The task is to study actions aimed at the establishment of Kurdish autonomy, the contributing factors and consequences.

There is not much research on the subject, so we have mostly tried to gather information from the people who took part in the events. The main sources of the study

were A. Hakobyan's memories and the book "History of Caucasian Kurdistan" by V. Mustafaev.

The research methodology is based on the witness and participant testimonies, memories, historical-comparative and analytical methods.

As a result of the study, the conclusion is drawn that although Kurdish autonomy was not established on the territory of Artsakh, it became an occasion for Azerbaijan to create narratives on Armenian-Kurdish relations.

Keywords: *«Red Kurdistan», the first Artsakh war, Kurdish liberation movement, Kurdish All-Union Association - «Yakbun», Berdzor (Lachin), Armenia, Azerbaijan, USSR.*

ПОПЫТКИ ВОССТАНОВЛЕНИЯ ТАК НАЗЫВАЕМОГО «КРАСНОГО КУРДИСТАНА» 1988-1992

САТЕНИК ТАРВЕРДЯН

*магистр кафедры иранистики
факультета востоковедения*

*Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является освещение попыток восстановления так называемого «Красного Курдистана» в период 1988-1992 гг. Это тема актуальна для изучения как в Армении, так и в Арцахе, так как речь идет об установлении курдской автономии в Бердзорском центре на территории Арцаха в 1992 году. В статье представлены меры, предпринятые курдскими деятелями СССР на Южном Кавказе для провозглашения курдской автономии. Частично представлен текст декларации независимости «Красного Курдистана» в армянском переводе. В статье обращается внимание на предысторию «Красного Курдистана», есть исторические факты о Курдистанском уезде, созданном в 1923-1929гг. В работе представлены события, происходящие в Арцахе и Азербайджане.

Задача исследования состоит в том, чтобы представить действия, направленные на создание курдской автономии.

На эту тему существует очень мало исследований, поэтому мы в большей степени старались собирать информацию от людей, принимавших участие в описанных событиях. Основным источником материала послужили воспоминания А. Акопяна, книга В. Мустафаева «История Кавказского Курдистана».

Методология исследования основана на показаниях и воспоминаниях свидетелей и участников, историко-сравнительном и аналитическом методах.

Проводя исследование, мы пришли к выводу, что хотя курдская автономия не была создана на территории Арцаха, это стало поводом для Азербайджана создавать нарративы об армяно-курдских отношениях.

Ключевые слова: *«Красный Курдистан», первая Арцахская война, курдское освободительное движение, Курдское Всесоюзное объединение - «Якбун», Бердзор (Лачин), Армения, Азербайджан, СССР.*

ՀՈԳԵՔԱՆԻ ԴԵՐՈ ԱՆՀԱՓԱՅԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՍԲ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ*

ՀՏԴ 159.98

DOI: 10.52063/25792652-2022.2.13-264

ԼԱՍԻՈԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ Ոստիկանության բժշկական վարչության պոլիկլինիկայի հոգեբան,
Երևանի պետական համալսարանի մագիստրոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
khachatryanlamira@gmail.com

Տվյալ հոդվածի նպատակն է առանձնացնել և հստակեցնել հոգեբանի դերը և հիմնական գործառույթները անչափահասների մասնակցությամբ հարցաքննությունների ժամանակ: Աշխատանքի խնդիրն է տեսական վերլուծության արդյունքում մատնանշել նախևառաջ այն մասնագետի նպատակահարմարությունը, ով պետք է ներկա գտնվի անչափահասների հարցաքննությունների ժամանակ, ինչը կապահովի տարվող աշխատանքի արդյունավետությունը՝ օժանդակելով արդարադատությանը, ինչպես նաև չի վնասի անչափահասին: Աշխատանքում ներկայացված են մի շարք հեղինակների տեսակետների վերլուծություններ՝ կապված անչափահասների հարցաքննության ժամանակ հոգեբանի դերի և գործունեության հետ, ինչպես նաև հոգեբանի ներգրավումն անչափահասների մասնակցությամբ հարցաքննությունների արտասահմանյան փորձը: Որպես հետազոտության տեսական մեթոդներ՝ օգտագործվել են համադրությունը, ինդուկցիան, վերլուծությունը:

Այսպիսով՝ աշխատանքում կատարված տեսական վերլուծությունները ցույց են տալիս որոշ հեղինակների կողմից մանկավարժի ու հոգեբանի մասնագիտությունների նույնացում, մինչդեռ այլ հեղինակներ նախապատվությունը տալիս են այն մասնագետին ով ունի գիտելիքներ հոգեբանության տարբեր ոլորտներում: Արևմտյան և ռուսաստանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս հենց հոգեբանի ներգրավման կարևորությունը՝ առաջին հերթին անչափահասի կրկնազոհականացումից խուսափելու նպատակով:

Հիմնվելով նաև օրենսդրական գալիք փոփոխությունների վրա, որոնցում հոգեբանի ներգրավումն անչափահասների մասնակցությամբ հարցաքննություններին լինելու է պարտադիր, հոգեբանի դերի և գործառույթների հստակեցման համար անհրաժեշտ տեսական և հետազոտական աշխատանքների իրականացումը էլ ավելի կհստակեցնի հոգեբանի դերն ու գործառույթները, որոնք վերջինս կօգտագործի իր առջև ծառայած խնդիրների լուծման նպատակով:

Հիմնաբառեր՝ անչափահաս, հարցաքննություն, արդարադատություն, երեխայի լավագույն շահ, մասնագետի ներգրավում, մանկավարժ, հոգեբանի գործառույթներ:

* Հոդվածը ներկայացվել է 15.05.2022թ., գրախոսվել՝ 18.06.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:

Ներածություն

Անչափահասների մասնակցությամբ հարցաքննությունների ժամանակ հոգեբանի դերի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ քննիչները և այն մասնագետները, որոնք ունեն իրավահարաբերություններ անչափահասների հետ, հնարավոր է՝ չունենալով բավարար գիտելիք տարիքային հոգեբանության բնագավառում՝ անգուշակությամբ առաջացնեն մի շարք բարդություններ՝ թե՛ իրենց գործունեության, թե՛ անչափահասների վրա բացասական ազդեցության տեսանկյունից: Գործող քրեական դատավարության օրենսգիրքը անչափահասների հարցաքննության համար պարտադիր պայման է համարում հոգեբանի կամ մանկավարժի ներգրավումը: Մասնավորապես ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի երկրորդ մասի՝ «մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի կամ որակավորված հոգեբանի մասնակցությամբ:…» (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք): Սակայն հարց է առաջանում՝ արդյոք այս երկու մասնագետները կարող են, ունենալով համընդհանուր մասնագիտական նպատակներ, օժանդակել արդարադատությանը՝ չվնասելով անչափահասին, քանի որ փաստացի նրանք համարվում են տարբեր գործառույթներ իրականացնող մասնագետներ: Գործող քրեական դատավարության օրենսգրքի՝ վերը նշված հոդվածի որոշ մասերի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ հոգեբանի և մանկավարժի գործառույթները անչափահասների հարցաքննության ժամանակ ամբողջությամբ չեն նույնացվում: Հատկանշական է սույն հոդվածի հինգերորդ մասի բովանդակությունը, որտեղ նշվում է երեխայի լավագույն շահի կարևորությունից ելնելով՝ հենց հոգեբանի՝ հարցեր տալու հնարավորության մասին: Իսկ վեցերորդ մասում նշվում է, թե որ դեպքերում հենց հոգեբանը կարող է հարցեր տալ անչափահաս վկային կամ տուժողին: Կարելի է գալ այն ենթադրության, որ մանկավարժի ու հոգեբանի գործառույթները հավասարապես բաշխված չեն տվյալ գործընթացում: Վերլուծելով վերը նշվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ ինչպես մանկավարժի, այնպես էլ հոգեբանի դերն անչափահասների հարցաքննության գործընթացում սահմանափակվում է երեխայի լավագույն շահի պաշտպանությամբ, այնինչ մենք կարծում ենք, որ ներգրավված մասնագետի դերն ավելի մեծ է, իսկ գործառույթների շրջանակը՝ ավելի լայն: Սույն կարծիքն արտացոլվում է նաև մի շարք հեղինակների կողմից կատարված գիտական աշխատանքներում, որոնց մենք կանդրադառնանք ստորև:

Հոգեբանի և մանկավարժի դերը քրեադատավարական գործընթացում. համեմատական վերլուծություն

Որոշ ռուս հեղինակներ կարծում են, որ մանկավարժը և հոգեբանը մասնագետի դատավարական գործառույթ են կատարում, քանի որ նրանք ունեն հատուկ գիտելիքներ տարիքային հոգեբանությունից ու մանկավարժությունից: Ե.Վ. Ստրելցովան, նշելով, որ նրանք, լինելով հատուկ գիտելիքների կրող, ներգրավվում են հարցաքննությանը որպես մասնագետներ (Стрельцова): Նույն կերպ մտածում է Ս. Վ. Մատվենը մանկավարժի մասին, որ մասնագետ է, ոչ թե գործընթացի մասնակից, քանի որ նրան հարցաքննությունից առաջ ներկայացվում են մասնագետի իրավունքներն ու պարտականությունները, ինչը կարգավորվում է տվյալ պետության քրեական դատավարության օրենսգրքով (Матвеев): Օ. Յու. Սկիչկոն առաջարկում է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում «մանկավարժ» տերմինը փոխարինել «տարիքային և մանկավարժական հոգեբանության ոլորտի մասնագետ» տերմինով և պարտադիր ներառել նրանց բոլոր քննչական այն գործողություններում, որոնցում ներգրավված են անչափահասներ (Скичко): Ըստ Մակարենկոյի՝ քրեադատավարական գործընթացին մասնակցող այն մանկավարժը, որը ճանաչում է

հարցաքննվող անչափահասին և հեղինակությունն ունի վերջինիս մոտ, պետք է համարել ինքնուրույն մասնակից, այսինքն՝ ոչ մասնագետ (Макаренко 9):

Է. Բ. Մելնիկովան կարծում է, որ ավելի օգտակար կլինի հարցաքննության համար հատուկ գիտելիքները ոչ թե մանկավարժի, այլ հոգեբանի կամ հոգեթերապևտի, ով ներկա է գտնվում անչափահասների մասնակցությամբ հարցաքննությանը, ինչն էլ ապահովում է ճիշտ ձևակերպված հարցերը (Мельникова): Մամայչուկը նաև նշում է, որ մանկավարժի՝ որպես անչափահասի հարցաքննության մասնակցի գործառույթը կարող է ավելի արդյունավետ իրականացնել մանկական հոգեբանը կամ մասնագետը, որ երեխաների ու դեռահասների հոգեբանության բնագավառում գիտելիքների և երեխաների հետ շփման մասնագիտական հմտությունների է տիրապետում (Мамайчук): Ս. Գ. Բաշիրովան տարանջատում է հոգեբանի ու մանկավարժի դերերն ու գործառույթները քննչական գործընթացում: Նա նշում է, որ անչափահասի հարցաքննության ժամանակ քննիչը պետք է ապահովի մանկավարժի կամ օրինական նեկայացուցչի ներկայությունը՝ անչափահաս հարցաքննվողի օրինական շահերը և իրավունքները պաշտպանելու նպատակով: Այս նպատակին ծառայում է նաև դատապաշտպանի ներկայությունն անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը: Ինչ վերաբերվում է հոգեբանին, ապա նա կարծում է, որ մինչև հարցաքննություն սկսելը քննիչն իր ցանկությամբ կարող է հոգեբանից ստանալ խորհրդատվություն այն տարիքի երեխաների ու դեռահասների հոգեբանական առանձնահատկությունների մասին, որոնք համարվում են տուժողներ կամ վկաներ: Հոգեբանի օգնությունն օգտակար կարող է լինել նաև հարցերի ձևակերպման մեջ, որոնք, ենթադրվում է, հարցվելու են անչափահասին: Ս. Գ. Բաշիրովան հարկ է համարում նշել, որ հոգեբանի հիմնական գործառույթը անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ նախաքննության ժամանակ կայանում է հոգեբանական գիտելիքների օգտագործման, հարցաքննվողի հետ հոգեբանական կոնտակտի ձևավորման, հարցերի ճիշտ ձևակերպման, նրա հոգեկան առողջության պաշտպանման, նրա համար անսովոր իրավիճակում և միջավայրում տրավմատիկ ազդեցությունից զերծ պահելու մեջ: Հոգեբանի օգնությունը նաև կարող է օգտագործվել քննչական գարծունեության արձանագրություն կազմելիս հարցաքննվող անչափահասի խոսքի մանրամասն նկարագրման, նրա ցուցմունքների ու վարքի ճիշտ գնահատման համար (Баширова):

Ե.Վ. Միշենկոն (Мищенко 142) կարծում է, որ մանկավարժի մասնակցությունը անչափահասների հարցաքննության գործընթացին պայմանավորված է ինչպես «...հարցաքննության բարդությամբ, այնպես էլ՝ այդ կատեգորիայի քրեական գործերում մանկավարժական և հոգեբանական գիտելիքների կիրառման անրաժեշտությամբ»: Նա նշում է, որ ցանկացած քննչական գործողության արդյունք կախված է նրանից՝ որքանով է քննիչը հաշվի առնում անչափահասի տարիքային, մտավոր ու հոգեբանական առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով քննիչի առջև դրված նպատակներից մեկն է լիարժեք հոգեբանական կոնտակտի ձևավորումն անչափահասի հետ: Հոգեբանական կոնտակտը ենթադրում է ոչ միայն հոգեբանական որոշակի մթնոլորտի ստեղծում, այլ նաև պատրաստակամությունը քննիչի ու մեղադրյալի հետ շփման:

Ե. Վ. Միշենկոն (Мищенко) նաև բարձրացնում է այն հարցը, թե ում է հարկավոր ներգրավել տվյալ գործընթացում որպես մասնագետ՝ հոգեբանին կամ մանկավարժին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ անչափահասը և մասնագետը պետք է ծանոթ լինեն, և վերջինս պարտադիր պետք է հեղինակություն հանդիսանա անչափահասի համար, հակառակ դեպքում հարցաքննության արդյունավետությունը կասկածի տակ կդրվի:

Այստեղ մենք նույնպես տեսնում ենք հոգեբանի և մանկավարժի՝ հարցաքննության գործընթացում դերի նույնացում, բացի այդ, մի փոքր խեղաթյուրված պատկերացում վերջիններիս մասնագիտական գործառույթների

վերաբերյալ: Նաև չի քննարկվում այն, որ անչափահասի մասնակցությամբ հարցաքննության ժամանակ մասնագետի՝ անչափահասին ծանոթ լինելը կարող է բացասական ազդեցություն ունենալ վերջինիս վրա, հատկապես կարող է լինել պիտակավորման, կրկնակի զոհականացման (անչափահաս տուժողի դեպքում) ռիսկ: Սա չի նշանակում, որ մանկավարժի կամ հոգեբանի՝ անչափահասին ճանաչելը կամ հեղինակություն ունենալը միակ պատճառն է, որը կարող է բերել բացասական հետևանքների: Հետևաբար հարկ ենք համարում հասկանալ և առանձնացնել հոգեբանի կամ մանկավարժի գործառույթները քրեադատավարական գործընթացում և այն խնդիրները, որոնք նրանք կարող են լուծել:

Հոգեբանի և մանկավարժի տարբերության մասին նաև խոսել են Ի. Ա. Ֆոմինան և Ե. Վ. Գորբաչյովան (Фомина и Горбачева)՝ մասնավորապես նշելով, որ հոգեբանը մասնագետն է, ով զբաղվում է անձի հոգեկան երևույթների դրսևորումները, ձևերը մարդկային գործունեության տարբեր ոլորտներում գիտահետազոտական և կիրառական խնդիրների լուծման, ինչպես նաև հոգեբանական օգնության, աջակցության նպատակով: Մանկավարժը մանկավարժության մասնագետն է, ով զբաղվում է դաստիարակչական և դասապատրաստական աշխատանքով: Այս կերպ, եթե մանկավարժի համար անչափահասը դաստիարակչական ազդեցության օբյեկտ է, հոգեբանի համար նա անձ է հոգեբանական խնդիրներ լուծելու համար: Հենց հոգեբանն է կարողանում տարբերել հուզական վիճակները, որոնցում գտնվում է անչափահասը, օգնում հաղթահարել քննիչի և անչափահասի շփման բարդությունները հարցաքննության ժամանակ, կանխել մոլորությունները և անհասկացվածությունը, սահմանել երևակայելու հակումները և գնահատել դրա աստիճանը: Մանկավարժին նպատակահարմար է ներգրավել միայն որպես վկա, այսինքն՝ մարդու, ով անձնապես ճանաչում է անչափահասին. օրինակ՝ դասավանդում է և այդ առումով կարող է գնահատել նրա անձնային որակները, պատմել հասակակիցների և այլ մանկավարժների հետ փոխհարաբերությունների մասին, տեղեկացնել առաջադիմության հետ կապված հարցերի մասին և այլն: Հոգեբանին հարկավոր է դիտարկել որպես մասնագետ հոգեբանության ոլորտում, հետևաբար հենց նրա ներգրավումն անչափահասի հարցաքննությանը կնպաստի անչափահասի հարցաքննության նպատակներին:

Այնուհետև նրանք շեշտում են, որ հոգեբանի մասնակցությունը հարցաքննությանը նպաստում է այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝

- Ըննիչի և անչափահասի միջև հոգեբանական կոնտակտի ստեղծման օգնությունը

- Անչափահասների վարքում ագրեսիայի նվազեցում, ինչպես նաև քննիչի և անչափահասի միջև անհասկացվածության կանխում

- Նախապատրաստական փուլում ճիշտ ու նպատակային հարցերի ձևակերպում

- Հարցաքննության ընթացքում անչափահասի վարքի ու արձագանքների դիտում ինչպես ազատ պատմելու, այնպես էլ հարցերին պատասխանելու ժամանակ

- Ըննիչին օգնության տրամադրում անչափահասի կողմից տրվող ցուցմունքի հավաստիության գնահատման հարցում և այլն (Фомина и Горбачева):

Այսպես՝ Մ. Ֆ. Լիֆանովան (Фомина и Горбачева) կարծում է, որ մանկավարժը կամ հոգեբանը անչափահասի հարցաքննության շրջանակներում կատարում են երկու հիմնական գործառույթ՝

1. օժանդակում են քննչական գործունեությանը,
2. պաշտպանում են անչափահասների իրավունքներն ու շահերը:

Առաջին գործառույթի շրջանակներում հոգեբանի կամ մանկավարժի հիմնական խնդիրները հետևյալն են՝

- օժանդակում են քննիչին հոգեբանական կոնտակտի հաստատման գործընթացում,
- ի վիճակի են օգնել քննիչին անչափահասի անձի, անհատական առանձնահատկությունների վերհանման հարցում,
- անչափահաս մեղադրյալին ուղղված համապատասխան հարցերի ձևակերպումների հարցում օգնություն քննիչին,
- աջակցում են քննիչին ապացույցների ամրապնդման հարցում, մասնավորապես վերահսկում են ցուցմունքների շարադրումը,
- կարող են օգնել քննիչին հարցաքննության արդյունքների գնահատման հարցում:

Ինչ վերաբերվում է երկրորդ գործառնության, մանկավարժի կամ հոգեբանի առջև դրված խնդիրներից է անչափահասի վրա բացասական ազդեցության կանխումը, ինչի արդյունքում կպաշտպանվեն անչափահասների իրավունքներն ու շահերը:

Կարծում ենք՝ առաջին գործառնության ակնհայտ բխում է, որ համապատասխան մասնագետը, որի առջև դրված են վերոնշված խնդիրները, պետք է օժտված լինի գիտելիքներով տարիքային և ներագրման հոգեբանությունից, ինչպես նաև հոգեդիագնոստիկայից: Եթե քննիչին անչափահասի հետ հոգեբանական կոնտակտի հաստատման օժանդակման համար մանկավարժի կրթությունն ու որոշակի փորձառությունը բավարար են (եթե վերացարկվենք այն փաստից, որ որոշ քննիչների՝ հարցաքննելու բազում տարիների փորձը նրանց թույլ է տալիս առանց որևէ մեկի օգնության հարցաքննվողի հետ համապատասխան կոնտակտ հաստատելու), ապա վերոշարադրած մագած խնդիրների լուծման համար պահանջվող գիտելիքները մանկավարժական գիտության տիրույթից դուրս են, քանի որ հարցաքննությունն ուսումնական կամ դաստիարակչական ասպեկտներ չի պարունակում: Վ. Մ. Լիֆանովայի նշած հոգեբանի/մանկավարժի երկրորդ գործառնությունը, ըստ էության, կարծում ենք ներկայացնում է իրենից առաջինի տրամաբանական շարունակությունը, քանի որ առաջին գործառնության շրջանակներում նշված խնդիրները լուծելիս հնարավոր է բացահայտել, գնահատել և, հետևաբար, կանխել համապատասխան բացասական ազդեցությունները՝ պաշտպանելով անչափահասի իրավունքներն ու շահերը:

Այստեղ հարկ ենք համարում խոսել նաև հարցաքննվող անչափահասի կարգավիճակի (մեղադրյալ, տուժող և վկա) հետ կապված հարցաքննության անցկացման առանձնահատկությունների, ինչպես նաև տարիքային այն շեմի մասին, որից սկսած անչափահասը կարող է մասնակցություն ունենալ հարցաքննության գործընթացին: Ըստ Մ. Ի. Ենիկենի՝ երեխան պետք է հարցաքննվի այն դեպքում, երբ մասնագետ-հոգեբանը կորոշի՝ տվյալ երեխայի մտավոր զարգացման, ընկալման, հիշողության զարգացման մակարդակը բավարար է հետաքննության համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանցման համար (Еникеев и Черных):

Ի. Ա. Ժուրավյովան, իր «Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունները» աշխատությունում խոսելով երեխայի հարցաքննության գործընթացում օրենսդրությամբ նախատեսված մասնակիցների մասին, որպես պրոցեսուալ մասնակից շեշտում է մանկավարժին (Журавлёва), թեպետ ՌԴ ԶԴՕ 191 հոդվածում նշված են և՛ մանկավարժը, և՛ հոգեբանը (*Уголовно-процессуальный кодекс Российской Федерации*): Վերոնշված հեղինակը հոգեբանին հարցաքննության գործընթացի շրջանակներում տեսնում է մասնագետի դերում և կարծում է, որ երեխային կարելի է հարցաքննել այն ժամանակ, երբ «...մասնագետ-հոգեբանը կորոշի, արդյոք երեխայի մտավոր զարգացման մակարդակը, ընկալման, մտապահպանման և վերարտադրման կարողությունները կարող են ապահովել նախաքննության համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանցումը» (Журавлёва 75): Ի. Ա. Ժուրավյովան նաև շեշտում է անչափահասների հարցաքննությանը

հոգեբանի մասնակցության առավելությունը մանկավարժի համեմատ՝ թե՛ քննիչի հետ հոգեբանական կոնտակտի հաստատման հարցում, թե՛ երեխաների գործունեության արդյունքների վերլուծության և մեկնաբանության կարողությունների հետ կապված: Հեղինակը նշում է, որ պրակտիկայում երեխաների հարցաքննությանը մասնակցելու համար քննիչները հիմնականում հրավիրում են մասնագիտացված մանկական հոգեբանների և եզրակացնում է, որ հոգեբանների ներգրավվումը վերոնշյալ գործընթացում առավել արդարացված է:

Ինչպես տեսնում ենք, անչափահասի մասնակցությամբ անցկացվող հարցաքննություններում մասնագետ ներգրավելու հարցը՝ մանկավարժի՝, թե՛ հոգեբանի, քննարկվում է մի շարք հեղինակների կողմից: Հասկանալով, որ ակադեմիական կրթական ծրագրում առավել հավանական է, որ ներագրման, տարիքային/զարգացման, մանկան հոգեբանության, հոգեդիագնոստիկայի մասին գիտելիքի ստացումը տեղի է ունենում տարբեր բուհերի հենց հոգեբանության ֆակուլտետներում, կարծում ենք, որ սա այն պատճառներից մեկն է, որը հիմք է հանդիսանում նման գործունեության մեջ ներգրավել այն մասնագետին, ով ունի հոգեբանության մասնագիտության բարձրագույն կրթություն (մագիստրոսի աստիճան), մասնակցել է հատուկ վերապատրաստումների, ինչպես նաև ունի մասնագիտական աշխատանքային փորձ, ինչի շնորհիվ կկարողանա լուծել այն խնդիրները, որոնք առաջարկվում են տարբեր հեղինակների կողմից:

Չնայած որ ռուս հեղինակների՝ տվյալ հիմնախնդրի վերաբերյալ գիտական հոդվածներում բավականաչափ նյութեր կան անչափահասների հարցաքննության վերաբերյալ, սակայն այնտեղ հիմնականում ներկայացվում են դեռահասության տարիքի անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները, իսկ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հարցաքննության անցկացման վերաբերյալ կյուլթերը սակավ են: Ամեն դեպքում որոշ հեղինակներ անդրադարձել են տվյալ հիմնախնդրին, որոնց կարծիքը կներկայացնենք ստորև:

Լ. Վ. Բերտովսկին, խոսելով մինչև յոթ տարեկան երեխաների հարցաքննության մասին, օգտագործում է «հարցազրույց» հասկացությունը՝ նշելով, որ վերջինս կարող է լինել մի քանի տեսակ՝ կառուցվածքային, կիսակառուցվածքային և ոչ կառուցվածքային: Արդեն փակագծերում նա հավելում է, որ «...Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական գործընթացում նման հարցազրույցները ձևակերպվում են որպես հարցաքննություններ» (Бертовский 116): Վերոնշյալ կառուցվածքային հարցազրույցի օրինակ, որտեղ քննիչին հստակ տրված է՝ ինչպես իրեն պահել, ինչ խոսել, ինչ հարցնել երեխայից, կարող է ծառայել լայն տարածում ունեցող աշխատանքը, որը կազմվել է երեխայի առողջության և մարդու զարգացման ազգային ինստիտուտի (NICHD) հետազոտողների կողմից: Երևի դա արդարացի է այն դեպքերի համար, երբ քննիչը, չունենալով բավարար գիտելիք մանկան հոգեբանության ոլորտում, ինքնուրույն է իրականացնում երեխայի հարցաքննությունը: Նման դեպքերն ավելի տարածված են: Բավականին բարդ է բոլոր քննչական բաժիններում մանկան հոգեբանության համապատասխան գիտելիքներով աշխատակիցների ապահովումը: Այդ իսկ պատճառով նախապես պատրաստված, ձևակերպված հարցերը, որոնք երեխայի համար հասկանալի լեզվով են, անհրաժեշտ տեղեկատվության ստացման համար անգնահատելի օգնություն են: Սակայն կիսակառուցվածքային կամ ոչ կառուցվածքային հարցազրույցի առավելություններից է առաջին հերթին մեծ ծավալով տեղեկատվության ստացման հնարավորությունը, ինչը դժվար է կառուցվածքային հարցազրույցի դեպքում: Օրինակ՝ ՌԴ Մոսկովյան և Սանկտ Պետերբուրգյան Զննչական կոմիտեի բաժիններում, երբ անհրաժեշտություն է առաջանում երեխայի մասին տեղեկատվություն ստանալու, օգտագործում են հատուկ սարքավորումներով հագեցած սենյակներ այնպես, որ երեխան չզգա անհարմարություն անձանոթ միջավայրում: Այնտեղ կան խաղալիքներ, թղթեր,

մատիտներ և այլն: Զննիչի մոտ զրույցի ժամանակ կա աննշան ականջակալ, որի միջոցով նա լսում է մանկական հոգեբանի առաջարկները (ինչպես նշվեց վերևում, ՌԴ-ում անչափահասների հարցաքննության ժամանակ քննիչից բացի պարտադիր ներկա են լինում հոգեբաններ), ով գտնվում է հայելու հետևում (Бертовский):

Անդրադառնալով արևմտյան հեղինակների աշխատություններում ներկայացված տեղեկատվությանը անչափահասների հարցաքննության անցկացման առանձնահատկությունների վերաբերյալ՝ կարելի է նշել, որ բավականին քիչ տեղեկություն կա անչափահաս մեղադրյալների հարցաքննությունների մասին՝ ի համեմատ անչափահաս տուժողի և վկաների, և այդ տեղեկատվության մեծ մասը վերաբերում է բռնության դեպքերին: Հարկ է նշել, որ 20-րդ դարի 70-ական թվականներից ԱՄՆ-ն փոփոխությունների ենթարկեց վերոնշյալ կարգավիճակում հայտնված անչափահասների հարցաքննության մոտեցումները: Ընթացակարգը տարբերվում էր դասական հարցաքննությունից թե՛ մասնակիցների, թե՛ անցկացման առանձնահատկությունների տեսանկյունից: Տուժողի կամ վկայի կարգավիճակում հայտնված անչափահասների հետ հարցաքննությունն անցկացնում էր ոչ թե ոստիկան-քննիչը, այլ հենց այդ գծով հատուկ պատրաստված մասնագետը՝ «դատական հարցազրուցավարը» (“forensic interviewer”): ԱՄՆ-ում առաջին «դատական հարցազրուցավարները» հոգեկան առողջության ոլորտում կրթություն ստացած և աշխատանքային փորձ ունեցող անձինք էին, սակայն նրանք երեխայի սեռական բռնության դեպքեր վարող լիազորված մասնագետներ չէին, ինչպես երեխայի պաշտպանության աշխատակիցը (child protection worker) և իրավապահ մարմինների ծառայողները (law enforcement officer): Կարելի է ասել, որ այս հարցազրույցի նպատակը համընկնում է հարցաքննության նպատակին՝ կատարվածի վերաբերյալ երեխայից օբյեկտիվ տեղեկատվություն ստանալը՝ քրեական արդարադատությանը աջակցելու նպատակով: Հետագայում Children’s Advocacy Center շարժումը ԱՄՆ-ում 1980-ականներին առաջնորդեց մի խումբ հատուկ վերապատրաստած «դատական հարցազրուցավարների», որոնց սկզբնական դերը սեռական բռնության ենթարկվելու կասկածով հայտնաբերված երեխաների հետ հարցազրույց անցկացնելն էր, իսկ ժամանակի հետ նրանց արդեն վստահվեցին ընդհանուր առմամբ այլ տեսակի բռնության ենթարկված և անտեսված երեխաների հետ հարցազրույցները (Faller):

Մի քանի Եվրոպական երկրներում 2000-ականներից սկսեցին առաջնահերթություն տալ այսպես կոչված երեխայակենտրոն արդարադատությանը (child-friendly justice): Չեխիայի Հանրապետությունում 2007 թվականին նախաձեռնվեց սեռական և այլ բռնության արդյունքում տուժած կամ վկա հանդիսացող երեխաների դատական հարցազրույցի համար նախատեսված հատուկ սենյակների պատրաստում: Սենյակում տեղադրված էին համապատասխան ձայնագրող սարքավորումներ, որոնք թույլ էին տալիս խուսափել կրկնակի հարցադրումներից, որոնք երեխայի կրկնազոհացման ռիսկ են պարունակում: Նմանատիպ նախագծեր մեկնարկեցին Բուլղարիայում ու Լեհաստանում: Դրանցից մեկը՝ «Չայլդ-Ֆրենդլի-Ինտերվյու» նախագիծը, միտված էր բռնությունից տուժած և վկա երեխաների պաշտպանության ուժեղացմանը: Դատական հարցազրույցի համար նախատեսված սենյակները պետք է ունենային համապատասխան կահավորում և հագեցած լինեին տեսա և լսաձայնագրող սարքավորումներով: Երեխայի հետ հարցազրույցը անցկացնում է դատավորը՝ հոգեբանի մասնակցությամբ, այլ անձինք (հավանաբար ոստիկանության աշխատակիցները, օրինական ներկայացուցիչը, պաշտպանը) գտնվում են առանձին սենյակում և մասնակցում են համապատասխան հաղորդակցման համակարգի միջոցով (European Union):

Եզրակացություն

Այսպիսով՝ մեր կողմից կատարված տեսական վերլուծությունները ցույց են տալիս, որ մասնագետների ընտրության հարցում որոշ հեղինակներ նույնացնում են մանկավարժի ու հոգեբանի մասնագիտությունները, իսկ որոշ հեղինակներ նախապատվությունը տալիս են այն մասնագետին, ով ունի գիտելիքներ տարիքային, մանկական հոգեբանության, ինչպես նաև ներագրման հոգեբանության ոլորտում: Ինչպես նաև ուսումնասիրելով արևմտյան և ռուսաստանյան փորձը՝ գալիս ենք այն եզրակացության, որ հենց հոգեբանի, այլ ոչ թե մանկավարժի մասնակցությունն է կարևորվում: Մենք կարծում ենք, որ հոգեբանի դերն ու գործունեությունը հասկանալու համար հարկավոր է առանձնացնել հենց հոգեբանի ու մանկավարժի մասնագիտությունների տարբերությունը, ինչն արվել է աշխատանքում: Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգիրքը նոր օրենսդրական կարգավորումներ է նախատեսում անչափահասների հարցաքննության առանձնահատկությունների, ինչպես նաև անգործունակներին և հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար, որտեղ հենց հոգեբանի մասնակցությունը պարտադիր է, մեզ համար նոր տեսական վերլուծությունների և հետազոտությունների իրականացման հիմք է հանդիսանում, որպեսզի ավելի հստակեցնելով հոգեբանի դերը և գործունեությունը քննչական, ինչպես նաև քրեադատավարական գործընթացներում վերջինս կարողանա հստակ լուծել իր առջև դրված խնդիրները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. European Union. *Local and regional good practices on victims' rights*. Brussels, 2011.
2. Еникеев, Марат, и Эмма Черных. *Психология допроса*. Москва, 1994.
3. Журавлёва, Ирина. *Тактика допроса несовершеннолетних свидетелей и потерпевших: учеб. пособие*. ИПК СФУ, Красноярск, 2009.
4. Курмаева, Наталья. *Использование специальных психологических знаний в уголовном судопроизводстве по делам с участием несовершеннолетних*. Автореф. дис. ... канд. юрид. наук, Саранск, 2010.
5. Макаренко, Илона. *Криминалистическое учение о личности несовершеннолетнего обвиняемого*. Автореф. дис. ... доктора юрид. наук, Саратов, 2006.
6. Мамайчук, Ирина. *Экспертиза личности в судебно-следственной практике: Учебное пособие*. Санкт-Петербург, 2002.
7. Матвеев, Сергей. *Получение информации от несовершеннолетних, ее оценка и использование в уголовно-процессуальном доказывании*. Автореф. дис. ... канд. юрид. наук, Москва, 2003.
8. Мельникова, Эвелина. *Ювенальная юстиция: Проблемы уголовного права, уголовного процесса и криминологии: Учеб. пособие. 2-е изд., испр., доп.*, Москва, 2001.
9. Скичко, Ольга. *Тактико-психологические основы допроса несовершеннолетних свидетелей и потерпевших на предварительном следствии*. Юрлитинформ, Москва, 2006.
10. Стрельцова, Елена. *Тактические и психологические основы допроса несовершеннолетних подозреваемых, обвиняемых*. Автореф. дис. ... канд. юрид. наук, Саратов, 2007.
11. Faller, Kathleen Coulborn. "Forty years of forensic interviewing of children suspected of sexual abuse, 1974–2014: Historical benchmarks. *Social Sciences*, 4, 2015, pp. 34-65, doi: 3390/socsci4010034.

12. Баширова, Сагадат. «Психологические основы получение показаний от малолетних свидетелей и потерпевших на предварительном расследовании: некоторые замечание и рекомендации». *Вестник ВУиТ*, № 1, том 2, 2017.
13. Бертовский, Лев. «Особенности допроса детей в возрасте до 7 лет». *Вестник РУДН*, серия 1, Юридические науки, № 3, 2015, с. 113-133.
14. Фомина, Инна, и Елена Горбачева. «Отдельные аспекты участия педагога и психолога в тактике допроса несовершеннолетнего». *Сибирский юридический вестник*, (3), 2018, с. 94-99.
15. Лифанова Марина. «Участие педагога и психолога в допросе несовершеннолетнего подозреваемого, обвиняемого». *Эксперт-криминалист*, № 3, 2011, с. 18-19.
16. Мищенко, Елена. «Процессуальные и психологические особенности допроса несовершеннолетних обвиняемых (Электронный ресурс)». *Вестник Оренбургского государственного университета*, № 3-1 (41), 2005, с. 139-142.
17. ՀՀ Էրեսակալի դատախարհության օրենսգիրք. 1 հրվ. 1998, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=68011>
18. Уголовно-процессуальный кодекс Российской Федерации. № 174-ФЗ. 18.12.2001, (ред. от 02.08.2019), Собрание законодательства РФ. 24.12.2001. № 52, ч. 1.

WORKS CITED

1. Enikeev, Marat i Jemma Chernyh. *Psihologija doprosa*. Moskva. [Psychology of interrogation. Moscow] 1994. (In Russian)
2. European Union. *Local and Regional Good Practices on Victims' Rights*. Brussels, 2011.
3. Kurmaeva, Natal'ja. *Ispol'zovanie special'nyh psihologicheskikh znanij v ugovnom sudoproizvodstve po delam s uchastiem nesovershennoletnih*. Avtoref. dis. ... kand. jurid. nauk, Saransk. [The Use of Special Psychological Knowledge in Criminal Proceedings in Cases Involving Minors. Abstract of the thesis. dis. ... cand. legal sciences, Saransk] 2010.
4. Makarenko, Ilona. *Kriminalisticheskoe uchenie o lichnosti nesovershennoletnego obvinjaemogo*. Avtoref. dis. ... doktora jurid. nauk, Saratov. [Forensic Doctrine of the Personality of a Minor Accused. Abstract dis. ... Dr. legal sciences, Saratov] 2006.
5. Mamajchuk, Irina. *Jekspertiza lichnosti v sudebno-sledstvennoj praktike: Uchebnoe posobie*. Sankt-Peterburg. [Examination of Personality in Forensic and Investigative Practice: Textbook. St. Petersburg] 2002.
6. Matveev, Sergej. *Poluchenie informacii ot nesovershennoletnih, ee ocenka i ispol'zovanie v ugovno-processual'nom dokazyvanii*. Avtoref. dis. ... kand. jurid. nauk, Moskva. [Obtaining Information from Minors, its Evaluation and Use in Criminal Procedure Evidence. Abstract dis. ... cand. legal sciences, Moscow] 2003.
7. Mel'nikova, Jevlina. *Juvenal'naja justicija: Problemy ugovnogo prava, ugovnogo processa i kriminologii: Ucheb. posobie*. 2-e izd., ispr., dop., Moskva. [Juvenile justice: Problems of Criminal Law, Criminal Procedure and Criminology: Textbook. 2nd ed., corrected, supplemented, Moscow] 2001.
8. Skichko, Ol'ga. *Taktiko-psihologicheskie osnovy doprosa nesovershennoletnih svidetelej i poterpevshih na predvaritel'nom sledstvii*. Jurlitinform, Moskva. [Tactical and Psychological Bases of Interrogation of Juvenile Witnesses and Victims during the Preliminary Investigation. Yurлитinform, Moscow] 2006.
9. Strel'cova, Elena. *Takticheskie i psihologicheskie osnovy doprosa nesovershennoletnih podozrevaemyh, obvinjaemyh*. Avtoref. dis. ... kand. jurid. nauk,

Saratov. [Tactical and Psychological Bases of Interrogation of Juvenile Suspects, Accused. Abstract dis. ... cand. legal sciences, Saratov] 2007.

10. Zhuravljova, Irina. *Taktika doprosa nesovershennoletnih svidetelej i poterpevshih: ucheb. posobie*. IPK SFU, Krasnojarsk. [Tactics of Interrogation of Juvenile Witnesses and Victims: A Study Guide. IPC SFU, Krasnoyarsk] 2009. (In Russian)

11. Bashirova, Sagadat. "Psihologicheskie osnovy poluchenie pokazanij ot maloletnih svidetelej i poterpevshih na predvaritel'nom rassledovanii: nekotorye zamechanie i rekomendacii". *Vestnik VUIT*, № 1, tom 2. ["Psychological Foundations for Obtaining Testimony from Juvenile Witnesses and Victims during the Preliminary Investigation: Some Remarks and Recommendations". *Bulletin of Volzhsky University after V. N. Tatischev*, No. 1, Volume 2] 2017. (In Russian)

12. Bertovskij, Lev. "Osobennosti doprosa detej v vozraste do 7 let". *Vestnik RUDN*, serija 1, Juridicheskie nauki, № 3, s. 113-133. ["Peculiarities of Interrogation of Children under the Age of 7 Years". *RUDN Journal*, series 1, Legal Sciences, № 3, pp. 113-133] 2015. (In Russian)

13. Faller, Kathleen Coulborn. "Forty Years of Forensic Interviewing of Children Suspected of Sexual Abuse, 1974–2014: Historical benchmarks. *Social Sciences*, 4, 2015, pp. 34-65, doi: 3390/socsci4010034.

14. Fomina, Inna i Elena Gorbacheva. "Otdel'nye aspekty uchastija pedagoga i psihologa v taktike doprosa nesovershennoletnego". *Sibirskij juridicheskij vestnik*, (3), s. 94-99. ["Separate Aspects of the Participation of a Teacher and a Psychologist in the Tactics of Interrogating a Minor". *Siberian Legal Bulletin*, (3), pp. 94-99] 2018. (In Russian)

15. Lifanova Marina. "Uchastie pedagoga i psihologa v doprose nesovershennoletnego podozrevaemogo, obvinjaemogo". *Jekspert-kriminalist*, № 3, s. 18-19. ["Participation of a Teacher and a Psychologist in the Interrogation of a Minor Suspect, Accused". *Forensic expert*, No. 3, pp. 18-19] 2011. (In Russian)

16. Mishhenko, Elena. "Processual'nye i psihologicheskie osobennosti doprosa nesovershennoletnih obvinjaemyh (Jelektronnyj resurs)". *Vestnik Orenburgskogo gosudarstvennogo universiteta*, № 3-1 (41), s. 139-142. ["Procedural and Psychological Features of the Interrogation of Juvenile Accused (Electronic resource)". *Bulletin of the Orenburg State University*, № 3-1 (41), pp. 139-142.] 2005. (In Russian)

17. HH Qreakan datavarowt'yan o'rensgirq. [RA Criminal Procedure Code]. (In Armenian) 01.07.1998, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=68011>

18. Ugolovno-processual'nyj kodeks Rossijskoj Federacii. № 174-FZ. 18.12.2001, (red. ot 02.08.2019), Sobranie zakonodatel'stva RF. 24.12.2001. № 52, ch. I. [The Criminal Procedure Code of the Russian Federation. № 174-FZ. 18.12.2001, (ed. from 02.08.2019), Collection of Legislation of the Russian Federation. 24.12.2001. № 52, part I]. (In Russian)

THE ROLE OF A PSYCHOLOGIST DURING MINOR PARTICIPATION INVESTIGATIONS

LAMIRA KHACHATRYAN

*Police Polyclinic of Republic of Armenia, psychologist,
Yerevan State University, Master of Science,
Yerevan, the Republic of Armenia*

This article aims to highlight and clarify the role of the psychologist and the main functions during the interrogation of minors. The task of the work is to bring out the expediency of the specialist who should be present during the interrogation of minors as a

result of theoretical analysis, which will ensure the efficiency of the work done, supporting justice, as it will not harm the juvenile. The paper presents analyzes of the views of a number of authors related to the role and activities of the psychologist during the juvenile interrogation, as well as the psychologist's involvement and the foreign experience of the juvenile interrogation. Synthesis, induction and analysis were used as a theoretical research method.

Thus, the theoretical analyzes performed in the work show that some authors identify the professions of pedagogue and psychologist, while other authors prefer a specialist who has knowledge in different areas of psychology. The study of Western and Russian experience shows the importance of involving a psychologist, first of all, in order to avoid re-victimization of a minor.

Based on the forthcoming legislative changes, where the involvement of a psychologist in interrogations involving minors will be mandatory, the implementation of theoretical and research work necessary to clarify the role and functions of the psychologist will further clarify the role and functions of the psychologist, who will use it to solve problems.

Keywords: *juvenile, interrogation, justice, best interests of the child, involvement of specialist, pedagogue, functions of psychologist.*

РОЛЬ ПСИХОЛОГА В ПРОЦЕССЕ ДОПРОСА С УЧАСТИЕМ НЕСОВЕРШЕННОЛЕТНЕГО

ЛАМИРА ХАЧАТРЯН

*магистрант Ереванского государственного университета,
психолог в Поликлинике полиции Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является определение и уточнение истинной роли и основных функций психолога при допросе несовершеннолетних. Главная задача работы состоит в том, чтобы путём теоретического анализа работ на данную тему выявить целесообразность специалиста, присутствие которого при допросе несовершеннолетних повысит эффективность исхода данного процесса как в плане содействия осуществления правосудия, так и в плане уберечения допрашиваемых несовершеннолетних от потенциальных негативных психологических влияний в процессе допроса. В качестве теоретического метода исследования использовалась синтез, индукция, анализ.

Таким образом, проведенный в работе теоретический анализ точек зрения ряда авторов о роли и деятельности психолога при допросе несовершеннолетних показывает, что некоторые из них в этом плане отождествляют профессии педагога и психолога, а преобладающее число авторов отдают предпочтение специалисту, обладающему фундаментальными знаниями в разных областях психологии. Изучение западного и российского опыта показывает важность привлечения психолога, прежде всего, во избежание повторной виктимизации несовершеннолетнего.

В связи с предстоящими законодательными изменениями, по которым участие психолога в допросах несовершеннолетних станет обязательным, проведение теоретической и исследовательской работы, необходимой для уточнения роли и функций психолога, позволит дополнительно уточнить эту деятельность специалиста, психолога, который будет использовать его для решения проблем.


Ключевые слова: *несовершеннолетний, допрос, правосудие, наилучшие интересы ребенка, привлечение специалиста, педагога, функции психолога.*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԵՂԵՀՅՈՒ, REVIEWS



**ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԳՐԷԻ ԱՈՆՀՈՒԹՅԱՄԲ¹**

DOI: 10.52063/25792652-2022.2.13-275



Պետականագիտական և, մասնավորապես, սահմանադրագիտական առումով պրոֆեսոր Ղամբարյանի հետազոտությունը նորովի մոտեցում է պետականապահականության հույժ կարևոր ու արդիական հիմնախնդրի գիտական ուսումնասիրության առումով:

Դժբախտաբար, հայ իրականության մեջ խորությամբ հետազոտված և բազմազործոն վերլուծված չեն հայոց պետականության բազմադարյան կորստի պատճառները, պատմության դասերը չեն դարձել պետականաշինության կարևոր բաղադրատարրեր:

Իրավագիտության դոկտոր Ա. Ղամբարյանը հիմնախնդրին մոտենում է ոչ միայն դրա կարևորությունն ընդգծելու

դրդումով, այլև պատմատրամաբանական ու սահմանադրագիտական պատշաճ վերլուծության արդյունքում ներկայացնում է պետականության պահպանման երաշխիքների համակարգը՝ առանձնահատուկ կարևորելով սահմանադրականության երաշխավորման դերն այս հարցում:

Սահմանադրությունը, լինելով պատմական կոնկրետ ժամանակի մեջ տվյալ ժողովրդի համահավաք գոյի իմաստավորման արտացոլանքը, իրական կյանքում պետք է դառնա հանրության բոլոր շերտերի վարքագծի առանցքը՝ հիմքում ունենալով ամրագրված նորմ-նպատակներին ու նորմ-սկզբունքներին անշեղորեն հետևելու հրամայականը:

Գնահատելի է, որ «Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները» գրքի հեղինակի համար ելակետային է այս մոտեցումը՝ թե՛ պետականության անկման պատճառների բացահայտման, և

¹ Ղամբարյան Արթուր, Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները, Երևան, Տիգրան Մեծ, 2022. – 80 էջ:

թե՛ Զայաստանի Սահմանադրության պետականապահպան ներուժի հետազոտման առնչությամբ:

Չեղինակը, մեր կարծիքով, այն եզակի հետազոտողներից է, որ պատշաճ խորությամբ է անդրադառնում սահմանադրական արդարադատության պետականապահպան ներուժին: Այս հանգամանքի թերազնահատումն աղետաբեր կարող է լինել ցանկացած պետության համար՝ քանի որ գործնականում անհնարին կլինի երաշխավորել հանրային հարաբերությունների դինամիկ սահմանադրական ներդաշնակությունը:

Անհրաժեշտ չհամարելով անդրադառնալ հետազոտության կոնկրետ կյուբի մանրամասներին՝ ընդգծենք, որ մեթոդաբանական առումով գործ ունենք դարձյալ եզակի մի հետազոտության հետ, որում լայն իմաստով առանցքն իրավունքի գերակայության երաշխավորումն է, իրավունքով իշխանության սահմանափակումը, մարդակենտրոն սահմանադրաիրավական հարաբերությունների երաշխավորումը:

Միայն այս ճանապարհով է հնարավոր ապահովել կայուն զարգացում, պետականության կայացում ու ամրապնդում, անվտանգ ու երաշխավորված ապագա:

ԳԱԳԻԿ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սահմանադրական մշակույթ» միջազգային գիտավերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՄԱՌՈՏ ԱՎԵԱՐԿ Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԳՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹**

DOI: 10.52063/25792652-2022.2.13-277

«Երկիրը կը փոխուի, երբ մարդն ինքն ունենայ փոխուելու քաջութիւն»
Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետ

Հայոց առաջ ծառայած պետականության ու պետականապահպանության խիստ արդիական հարցի համար իր ուրույն կարևորությունն է ներկայացնում հատկապես գիտական մտքի ներուժը: Չուր չէ, որ պետության վերաբերյալ մոտեցումներն ու պատկերացումները դեռևս վաղուց գիտության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցրել, ինչի արդյունքում այսօր մարդկությանն է ընձեռված պետականակերտման գործում եզակի աշխատությունների ու մտքերի կիրառման հնարավորությունը: Իսկ ահա այս գործում հայ գիտական մտքի յուրօրինակ արձանագրումն է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Արթուր Ղամբարյանի «Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները» աշխատությունը: Այն նվիրված է պետականության պահպանության մի շարք կարևոր հարցերին, ինչպես օրինակ՝ պետականաստեղծ ակտերին, դրանց բնույթին, փոփոխություններին, Սահմանադրական դատարանի պետականապահպան դերին և այլն:

Հեղինակը նշում է, որ աշխատանքը նախատեսված է Հայոց պետականության պահպանման հարցով մտահոգ անձանց համար: Աշխատանքի հասցեատերերի նման լայն շրջանակի նախատեսումը պատահական բնույթ չունի, իրապես մենագրության շարադրանքի ոճն ու լեզուն յուրաքանչյուր անհատի համար հնարավորություն են ստեղծում մատչելիորեն ընթերցել ու գիտակցել առաջադրված հարցերի արդիականությունն ու առաջնայնությունը:

Աշխատանքը կառուցված է ոչ միայն համարժեք գիտական փաստարկների հենքի վրա, այլ նաև որոշ դեպքերում հեղինակը առաջ է քաշում անցյալի «ցավալի ճախողումները» ու վեր հանում դրանց պատճառները, որոնք ստիպում են դասեր քաղել պատմության այդ մռայլ իրողություններից: Եվ իրապես փորձն անտեսելը կարող է հանգեցնել

¹ Ղամբարյան Արթուր, Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները, Երևան, Տիգրան Մեծ, 2022. – 80 էջ:

անդամնալիի, իսկ «Կան աղետներ, որ չեն մոռացվում եւ որքան հնանում, այնքան դառնանում են»¹:

Պետականակերտման համար մղված տոկուն պայքարը պրոֆեսոր Ղամբարյանը բնորոշում է իբրև **արյան գործ** (*ընգծումս ըստ՝ հեղինակի*), որը երբեմն հաջողվել է, իսկ երբեմն էլ ձեռքբերված հաջողությունը կորսվել է (Էջ 11), ինչը թերևս պայմանավորված է *ոչ միայն սուբյեկտիվ (ներքին)* գործոններով: Այդուհաներձ այս հարցում այլ գործոնների գոյությունն ու ազդեցությունը երբեք չպետք է վերածվի ռեսենտիմենտալության, ի վերջո այս փաստը նախապաշարմունք դարձրած անձինք հենց իրենք են պետականակործանման գլխավոր «հովանավորները», ուստի տեղին է մեջբերել Գարեգին Նժդեհի խոսքերը.

«Այստեղ կայ մի խղճուկ ճշմարտություն, բայց դրա հանդեպ ի՞նչ հոյակապ առաւելութիւններ: Չէ՞ որ մեր բարձրաւանդակն անառիկ է, մեր լեռները՝ մէկ մէկ անխոցելի պատնէշներ: Անտեսել այս իրողութիւնը եւ ողբալ ճակատագիրը ոչ այլ ինչ է, քան թոյլի, անարիի ինքնարդարացում: Թոյլի ինքնարդարացում - տկարի հոգեբանութիւն»:

Պետության անկման հնարավորության գիտակցումը պետականապահպանության նախասկիզբ համարելով՝ Ղամբարյանը գրում է. «(...) պետության գոյության տևողությունը կախված է մարդուց: Եթե մարդը ստեղծում է լավագույնս կազմակերպված պետություն, ապա այն գոյություն կունենա տևական ժամանակ (եթե, իհարկե, անկանխատեսելի հանգամանքները նրան ավելի վաղ չկործանեն)» (Էջ 12): Այս առաջնային գաղափարի գիտակցումը պետք է ընկած լինի պետականաշինության հիմքում, թեպետ պետության անկման հավանականության իրական գիտակցումը (վտանգը) պետք է նպաստի ռացիոնալ որոշումների կայացմանը և ոչ թե «վախերի» ձևավորմանը:

Պետականապահպանությանն ուղղված ռազմավարական գործունեության խնդրի համար պրոֆեսորը հատկապես կարևորում է հասարակական կյանքի սահմանադրականացումը, որը պետք է զենքի կամ ուժի կիրառման փոխարեն գործածվի ներքին սպառնալիքների դեմ (Էջ 20): Ապա Հայաստանի երրորդ Հանրապետությունում սահմանադրականության՝ իշխանության ինքնասահմանափակման սահմանադրական մշակույթի և մտածողության ձևավորման նախասկիզբ է համարում 23.08.1990 թվականին ընդունված «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը և 05.07.1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությունը՝ նշելով, որ «այս փաստաթղթերը պետականապահպանության մասին են և ոչ թե պետության ինքնառնչացման» (22-23 էջեր): Ինչպես նշում է իրավաբանական

¹ Տե՛ս Նիկողայոս Ադոնց, Ասույթներ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին (կազմ. Պ. Հ. Հովհաննիսյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2015թ., էջ 9:

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր պարոն Յարոթյունյանը. «Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պատմության մեջ որակապես նոր էջ բացեց: Այն հիմնարար, հետևողականորեն համակարգված, պատմատրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է, որը երբեք չի կորցնի իր թե՛ պատմական և թե՛ գործնական իրավական նշանակությունը»¹: Պետութենաստեղծ այս ակտերի բարձրագույն բնույթի գիտակցմանը պետք է հետևի նաև դրանցում ամրագրված «պատվիրանների» կատարումը: Եվ խոսքն առավելապես վերաբերում է կրթական համակարգին ու կրթությանը՝ որպես սահմանադրական արժեքի: Հիշյալ փաստաթղթերը պարունակում են կրթության վերաբերյալ առնվազն բավարար իրավական երաշխքիներ, որոնք հասարակական կյանքի սահմանադրականացման համար ևս հենքային և առաջնային նշանակություն ունեն:

Սահմանադրությունը պետականապահպանության իրավական երաշխիք համարելով՝ հեղինակը այնպիսի կարևորագույն եզրակացություններ է կատարում, ինչպես օրինակ՝ որևէ սերունդի՝ պետության գոյությունը դադարեցնելու արգելքը (էջ 27), անհրաժեշտության դեպքում «սահմանադրական օրինականությունն առանց պետության անբովանդակ է» բանաձևի կիրառման հնարավորությունը (էջ 30), և հատկապես՝ պետաիրավական համակարգի գործունակությանն առնչվող որոշ հարցերի դեպքում դրանց քննարկումը ոչ այնքան իրավաքաղաքական ռեալիզմից կտրված, ֆորմալ-տրամաբանության կանոնների դիտակետից, որքան պետականապահպանության (պետաիրավական համակարգի անվտանգության) սկզբունքների տեսանկյունից (էջ 32):

Աշխատանքի հաջորդ՝ 2-րդ գլուխը նվիրված է պետականապահպանության գործում ՀՀ Սահմանադրական դատարանի դերին: Դատարանն իրապես բազմիցս ապացուցել է իր կարևորությունը՝ վեճերի քաղաքակիրթ լուծման եզակի տարբերակ հանդիսանալով: Ընդգծելով սահմանադրական մշակույթի ձևավորման ու զարգացման, իրավունքի գերակայության ապահովման համար Սահմանադրական դատարանի անգնահատելի դերի կարևորությունը՝ մինևույն ժամանակ կարծում ենք՝ պետականապահպանության ու պետականաշինության գործում մեծ ներուժ և պարտականություն ունի իշխանության ցանկացած թևի ներկայացուցիչ՝ որպես կոլեգիալ մարմին կամ անհատ: Այս առաքելության կարևորությունը

¹ Տե՛ս Գ. Յարոթյունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար հրատ., 2005թ., էջ 127:

պետք է ընկած լինի յուրաքանչյուրի հանապազօրյա գործունեության հիմքում և բացառի «սխալվելու» հավանականությունը:

Ընդգծելով Սահմանադրական դատարանի գոյաբանական արդարացվածությունը՝ հեղինակը հատկապես առանձնացնում է երկու կարևոր որոշումներ (16.04.2003 թվականի ՍԴՌ–412 և 12.01.2010թվականի ՍԴՌ-850 որոշումներ) և դրանց հանգամանալից անդրադառնում է ոչ միայն իրավական դիրքերից: Առաջինը վերաբերում է ՀՀ Նախագահի 2003 թվականի ընտրությունից հետո հասարակական դիմակայությունը հաղթահարելու նպատակով վստահության հանրաքվե կազմակերպելու Սահմանադրական դատարանի առաջարկին, և երկրորդ գործը վերաբերում է Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը սահմանադրականացնելուն:

Ձեռնպահ մնալով պատմության այս կարևորագույն որոշումների վերաբերյալ ավելին ասելու փորձից՝ սահմանափակվենք՝ նշելով, որ պրոֆեսոր Ղամբարյանը համապարփակ կերպով ցույց է տալիս ոչ միայն որոշումների կարևորությունը պետականության պահպանման տեսանկյունից, այլ նաև դիպուկ կերպով նկարագրում է դրանցով արտահայտված դիրքորոշումների «սուր» ընդունումը հանրության կողմից, ըստ մեզ՝ թերևս անկատարության պատճառով:

Ամփոփելով կարծում ենք՝ Արթուր Ղամբարյանի «Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները» աշխատանքը կոչ է պատմությունից «դասեր քաղելու», ինչպես նաև անտեսված, առանձնահատուկ կարևորություն ունեցող արժեքները վերաիմաստավորելու համար: Այս աշխատանքը հենք է նաև համարժեք գիտական այլ հետազոտությունների իրականացման համար: Թերևս աշխատանքի արժանիքներից է նաև պետականապահպանության խնդրի ստորադասման «թմբիրից» դուրս գալու ազդակ հանդիսանալը: Եվ կարևոր է հիշել՝ «Պատմությունը գրում են հաղթողները» (Ու. Չերչիլ):

Խորհուրդ է տրվում պարտադիր ընթերցանության հայոց պետականաշինության և պետականապահպանության առաքելությունն ատանձնած բոլոր անձանց:

ՌԱՖԻԿ ԽԱՆՂԱՆՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
ՀՀ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՄԱՅԱԽՈՍԱԿԱՆ

**ԱՐԱՄ ՀՐԱԶԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆ (1955-2022)՝
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱԿՈՐԸ**



Հայրենական գիտությունը մեծ կորուստ կրեց. 2022 թ.-ի հունիսի 8-ին 67 տարեկան հասակում կյանքից վաղաժամ հեռացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, գիտակրթական գործի հմուտ կազմակերպիչ, մեծավաստակ գիտնական, մանկավարժ ու ԵՊՀ նախկին ռեկտոր Արամ Հրաչիկի Սիմոնյանը:

Ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի (1928-2016) որդին՝ Արամ Սիմոնյանը, ծնվել է 1955 թ.-ի ապրիլի 12-ին Գորիս քաղաքում: 1961 թ.-ին նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1972 թ.-ին ավարտելով Երևանի թիվ 19 դպրոցը՝

Ա. Սիմոնյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1977-1981 թթ.-ին սովորել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1983 թ.-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 2000 թ.-ին՝ դոկտորական ատենախոսություններ, 2005 թ.-ին ստացել պրոֆեսորի կոչում:

1981-1985 թթ.-ին Ա. Սիմոնյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև՝ գիտաշխատող: 1986 թ.-ին վերադարձել է ԵՊՀ, որտեղ շուրջ երեք տասնամյակ ծավալել է գիտամանկավարժական ու կազմակերպչական բեղուն գործունեություն:

1986-2000 թթ.-ին աշխատել է ԵՊՀ ԽՍՀՄ պատմության ամբիոնում որպես ասիստենտ, այնուհետև՝ հայոց պատմության ամբիոնի դոցենտ՝ միաժամանակ ստանձնելով մի շարք պաշտոններ: 1993-1995 թթ.-ին նշանակվել է ԵՊՀ գիտքարտուղար, իսկ 1995-2000 թթ.-ին՝ ԵՊՀ ուսումնական վարչության պետ:

2000-2006 թթ.-ին ստանձնել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը: 2006 թ.-ի մայիսին ընտրվել, իսկ 2011 թ.-ին մայիսին վերընտրվել է ԵՊՀ ռեկտորի պաշտոնում՝ պաշտոնավարելով մինչև 2019 թ.-ի մայիսի 23-ը:

2006 թ.-ին նա դարձել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

2008 թվականից հուլիսի 10-ից ղեկավարել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը:

Ա. Սիմոնյանի ղեկավարությամբ պաշտպանվել է 12 թեկնածուական ատենախոսություն: Մասնակցել է բազմաթիվ միջազգային ու հանրապետական գիտաժողովների: Բազմիցս հրավիրվել է Իտալիայի,

Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և աշխարհի մի շարք այլ երկրների գիտակրթական կենտրոններ, որտեղ զբաղվել է գիտակրթական գործունեությամբ:

Լինելով հայ մեծանուն գիտնական ու հասարակական-քաղաքական գործիչ՝ Ա. Սիմոնյանը ծավալել է բեղուն գործունեություն: Իր բազմամյա գիտական գործունեության արդյունքները գիտնականն ամփոփել է չորս մեծարժեք մենագրություններում («Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX–начале XX вв. (Историко-статистический анализ)» (Երևան, 1995), «Չանգեզուրի հերոսամարտը 1917-1920 թթ.» (Երևան, 2009), «Չանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» (Երևան, 2017), «Չանգեզուրի գոյապայքարը 1917-1921 թթ.» (Երևան, 2017)) և 100-ից ավելի գիտական հոդվածներում:

Պատմաբանի գիտական ուսումնասիրությունների շրջանակը բովանդակում է Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախ-Չանգեզուրի գոյամարտերի և Հայոց պետականության հիմնախնդիրները, XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի պատմական իրողությունները: Հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը ներկայացվում է գիտական անկողմնակալ ու անաչառ լուսաբանմամբ, Նժդեհյան ոգով ու հայրենասիրական վեհ գաղափարներով: Սփյուռքին ու Արցախին առնչվող հարցերը մշտապես եղել են պատմաբանի գիտական ուսումնասիրությունների առանցքում:

Ա. Սիմոնյանը «Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն» (Եր., 1988) աշխատության մեջ արհիվային հարուստ նյութերի ու պատմագիտական առկա գրականության քննական մանրամասն վերլուծությամբ լուսաբանում է Արևելյան Հայաստանում տնտեսության զարգացման ընթացքը:

Երկրորդ մենագրության մեջ՝ «Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX- начале XX вв. (историко-статистический анализ)» (Եր., 1995), մեծանուն գիտնականը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Համբարյանի հետ հայ պատմագիտության մեջ մաթեմատիկական մեթոդի կիրառման սկիզբը դրեց:

Խիստ կարևոր ու հետաքրքրական են Ա. Սիմոնյանի՝ հայրենի երկրամասին՝ Սյունյաց աշխարհի ազգային-ազատագրական պայքարին նվիրված մենագրությունները, որոնցում անդրադարձ են կատարվում Չանգեզուրում ու Նախիջևանում թուրք-թաթարական նվաճողների դեմ զորավար Անդրանիկի ղեկավարությամբ մղված կռիվներին, ապա Նրան փոխարինած Գարեգին Նժդեհի զխավորած պայքարին՝ մինչև 1920 թ. համազանգեզուրյան առաջին համագումարը, ինչպես նաև Արցախում ընթացող համանման իրադարձություններին, տրվում են նաև Անդրանիկի՝ Արցախ չմտնելու, Արցախը Ադրբեջանին բռնակցելու գործում Կովկասյան բյուրոյի դրսևորած բացահայտ կամայականություններին առնչվող համապարփակ հիմնավորումներ, գիտական վերլուծություններ: Չանգեզուրին նվիրված երկու մենագրությունները միացնելով ու համադրելով նոր փաստերով՝ Ա. Սիմոնյանը 2017 թ.-ին հրատարակում է նույնանուն խորագրով մեծարժեք աշխատություն, որի առաջին ընթերցողը և գրքի խմբագիրը լինելու պատիվն են ունեցել:

Մեծ Է Ա. Սիմոնյանի վաստակը ոչ միայն հայոց պատմության գիտական ուսումնասիրության ու լուսաբանման, այլև ձեռք բերված արդյունքների հանրայնացման գործում: Ընդ որում՝ այդ ամենը արվել է թե՛ բազմամյա դասախոսական գործունեությամբ, թե՛ հանրապետական ու միջազգային ամենատարբեր գիտաժողովներում (Երևան, Մոսկվա, Լոնդոն, Բեռլին, Մադրիդ, Լյու Յորք, Բրյուսել, Յոնոմ, Փարիզ, Թեհրան և այլուր) կարդացած հետաքրքիր գեկուցումներով և թե՛ դպրոցական ու բուհական դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների պատրաստմանը գործուն մասնակցությամբ: Ա. Սիմոնյանը ղեկավարում էր նաև հայ անվանի պատմաբանների խումբը, որը զբաղվում էր Սփյուռքի համար նախատեսված հայոց պատմության դասագրքերի ստեղծման ու հրատարակման գործով:

2006 թ.-ին ընտրվելով ԵՊՀ ռեկտոր՝ Ա. Սիմոնյանը ձեռնամուխ եղավ Մայր բուհում ուսումնական գործընթացի բարեփոխմանը: Հենց նրա նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ համալսարանում ստեղծվեց Հայագիտական հետազոտությունների ինստիտուտն ու «Հայագիտության հարցեր» քառամսյա հանդեսը, ինչպես նաև բացվեցին Սփյուռքագիտության ամբիոնը, մի շարք նոր գիտական կենտրոններ ու ստորաբաժանումներ, մագիստրոսական կրթության շրջանակում ներառվեցին հայագիտական ու ցեղասպանագիտական ծրագրեր: Ա. Սիմոնյանն աչքի էր ընկնում կրթական գործի կազմակերպման բարձր հատկանիշներով, ինչն արտահայտվում էր կրթական գործում բանիմաց մասնագետների ընդգրկման, հայոց պատմության դասագրքերի ստեղծման, ուսանողների շրջանում գիտահետազոտական, վերլուծական կարողությունների զարգացման և առանցքային այլ ուղղություններով հետևողական աշխատանքների իրականացմամբ:

Ա. Սիմոնյանն իր բազմաբեղուն գործունեության ընթացքում արժանացել է մի շարք պետական պարգևների ու կոչումների՝ ՀՀ գիտության վաստակավոր գործչի տիտղոսի (2014), «Մովսես Խորենացի» մեդալի (2009), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման (2012), Ղազախստանի ու Թուրքմենստանի «Ղազախստանի անկախության 20-ամյակ» և «Մահթումկուլի Ֆրագի» պետական պարգևների (2011, 2014), «Վաչագան Բարեպաշտ» մեդալի (2016):

Արամ Սիմոնյանը վաստակաշատ գիտնական էր, սիրված ու հարգված մանկավարժ, գիտակրթական գործի հմուտ կազմակերպիչ: Ցավոք, անժամանակ մահը նրան հնարավորություն չտվեց շարունակելու գիտական բեղուն գործունեությունը հայագիտության ոլորտում: Արամ Սիմոնյանի հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների, ուսանողների ու նրան ճանաչողների սրտերում:

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,

ԵՊՀ գիտքարտուղար,

*Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 4 անգամ:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված (անպայմանորեն պետք է նշված լինի, որ տպագրության է երաշխավորվում «Գիտական Արցախ» պարբերականում):

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.scientificartsakh.com կայքում ծանոթանան «Գիտական Արցախ» պարբերականի գիտական հրատարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկել խմբագրության էլեկտրոնային փոստին: Նյութի հրատարակման և հեղինակին «Գիտական Արցախ» պարբերականի 1 անվճար օրինակի տրամադրման համար գանձվող գումարը կազմում է՝ 1 էջը 2,000 ՀՀ դրամ:

Բոլոր հոդվածներն ունենալու են DOI միջազգային ստանդարտ համարներ:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլին (հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը), 2-րդ համարը՝ հուլիսին (հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը), 3-րդը՝ հոկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հուլիսի 15-ը), իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 1-ը):

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhlib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել www.scientificartsakh.com կայքի միջոցով կամ scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ Arial:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի ձախ

կողմում նշվում է հոդվածի ՉՏԴ-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է (են) հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) նշվում են աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է լինի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Չիմնաբառեր**» և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որը պետք է ունենա ենթավերնագրեր: Տեքստի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Չոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Չղումները պարտադիր են:

MLA ձևաչափում կիրառվում է ներտեքստային հղումների հեղինակ-էջ եղանակը: Չամաձայն վերջինիս՝ հեղինակի ազգանունն ու համապատասխան աշխատանքի էջ(եր)ի համար(ներ)ը արտացոլվում են տեքստում, իսկ ամբողջական հղումը գետեղվում է գրականության (հղված աշխատանքների) ցանկի մեջ:

Չիմնական տեքստից հետո «WORKS CITED» բառակապակցության ներքո պարտադիր անհրաժեշտ է կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով, [...] փակագծերում թարգմանել աշխատության վերնագիրը և հրատարակության վայրը, որից հետո (...) փակագծերում նշել բնագրի լեզուն, օրինակ.

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Տառադարձումը կարող էք կատարել՝ օգտվելով www.translit.ru կայքից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող էք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ **Ավետիք Չարությունյանի** հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»

The journal «**Scientific Artsakh**» of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 4 times a year.

The journal «**Scientific Artsakh**» is posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal (it should be noted that the article is recommended for publication in the Journal «Scientific Artsakh»).

Before sending the article, the authors are obliged to familiarize themselves with the ethics of scientific publications of the journal «Scientific Artsakh» on the www.scientificartsakh.com website and strictly comply with it.

Once the article is accepted by the Editorial Board, the author is obliged to pay the amount provided for the publication of the article within 3 working days and send the scan of the payment order to the the Editorial Board e-mail. The cost of publishing and providing the author with one copy of the journal «Scientific Artsakh» is 2,000 AMD per 1 page.

All articles will have DOI International Standard Numbers.

The 1st issue is published in April (**articles are accepted until February 15**), the 2nd issue – in July (**articles are accepted until May 15**), the 3rd issue – in October (**articles are accepted until July 15**), and the 4th issue – in December (**articles are accepted until October 1**).

The articles published in the journal «Scientific Artsakh» are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent via the www.scientificartsakh.com website or to the scientific.artsakh@gmail.com e-mail, the mobile phone number and the address of the author's residence, indicating the index should also be stated.

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom) 20 mm.

Volume: 7-20 pages (summary inclusive).

Text font: Armenian, English and Russian – Arial.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree,

title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (ամփոփում, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work containing subtitles with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB.

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References are required.

In the MLA format, the author-page method of intra-text links is used. According to the latter, the author's surname and the corresponding page(s) of the work are displayed in the text, and the full link is placed in the list of references (referenced works).

After the main text, under the phrase «WORKS CITED», it is mandatory to attach a Latin transliteration of the used literature presented in non-Latin letters, placing it in alphabetical order, in square brackets [...] indicate the name of the work and the place of publication, after which in round brackets (...) the original language, for example:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetrnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Transliteration can be done by using www.translit.ru website.

For more information, please contact the Editor-in-chief of the journal «Scientific Artsakh», Ph.D in Law, Associate Professor **Avetik Harutyunyan**, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 4 раза в год.

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи,

рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью (обязательно должно быть отмечено, что статья рекомендуется к печати в журнале «Научный Арцах»).

Перед подачей статьи авторам предлагается ознакомиться с этикой научных публикаций журнала «Научный Арцах» на сайте www.scientificartsakh.com и неукоснительно следовать ей.

После принятия статьи редколлегией, автор обязан в течение 3 рабочих дней уплатить сумму, предусмотренную для публикации статьи, и выслать на электронный адрес редакции скан платежного поручения. Стоимость публикации и предоставления автору одного экземпляра журнала «Научный Арцах» составляет 2,000 драммов за 1 страницу.

Все статьи получат международные стандартные номера DOI.

1-ый номер публикуется в апреле (статьи принимаются до 15-го февраля), 2-ой номер – в июле (статьи принимаются до 15-го мая), 3-ий номер – в октябре (статьи принимаются до 15-го июля), а 4-ый номер – в декабре (статьи принимаются до 1-го октября).

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи следует присылать через сайт на адрес www.scientificartsakh.com или на электронную почту scientific.artsakh@gmail.com, при этом должен быть указан номер мобильного телефона автора и адрес проживания (с индексом).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее) ` 20 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский, английский и русский – Arial.

Язык представления статей: армянский, английский, русский.

На верхней строке первой строки (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (առաջադրում, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, дающий представление о нем без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы с подзаголовками кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть

выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя ТАВ.

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны.

В формате MLA используется способ внутритекстовых ссылок автор-страница. При этом фамилия автора и страница (страницы) соответствующей работы (страниц) отображаются в тексте, а полная ссылка помещается в список цитируемых работ в конце статьи.

После основного текста под наименованием «WORKS CITED» обязательно приложить латинскую версию использованной литературы в латинской транслитерации и в алфавитном порядке, в скобках [...] поместить переведенные на армянский язык название работы и место ее публикации, затем в скобках (...) обозначить язык оригинала, например:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. «Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, [«Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Транслитерацию можете осуществить, используя сайт www.translit.ru.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту **Аветику Арутюняну**, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(13), 2022

«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 4 անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The journal «Scientific Artsakh» is published four times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит четыре раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
Editor-in-Chief:
Главный редактор:

Ավետիգ Զարուբյունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Գլխավոր խմբագրի տեղակալ,
հայերենի պատասխանատու
Deputy Editor-in-Chief,
Responsible for Armenian
Заместитель главного редактора,
Ответственный за армянский язык

Թեհմինա Մարության

Tehmina Marutyan

Теймина Марутян

Անգլերենի պատասխանատու՝
Responsible for English
Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերենի պատասխանատու՝
Responsible for Russian
Ответственный за русский язык

Ռուզաննա Սարգսյան
Ruzanna Sargsyan
Рузанна Саркисян

Պատասխանատու քարտուղար՝
Executive Secretary
Ответственный секретарь

Միեր Շահինյան
Mher Shahinyan
Мгер Шагинян

Համակարգչային շարվածքը, ոճը,
տառաձևերը և էջադրումը՝
Computer set, style, font and layout
Компьютерный набор, стиль, шрифт
и верстка

«Արցախ» հրատարակչության
«Artsakh» Publishing House

Издательство «Арцах»

Շապիկի ձևավորումը՝
Cover design
Дизайн обложки

Արմինե Բոչարյանի
Armine Kocharyan
Армине Кочарян

Website: www.scientificartsakh.com;

www.aegmm.org, www.artsakhinstitute.org.

E-mail: scientific.artsakh@gmail.com, avetiq.hh@gmail.com.

Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 10.07.2022 թ.:

Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսետ:

Ծավալը՝ 18,25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Տպագրված է «ՄՅՍ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: